ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

№ 19 (628)
30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024Թ.

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am




## ՄԱՐԶԱԿԱՆ ՍՅՈՒՆԻՔ. անցյալն ու ներկան

**ԼԵՎՈՆ ԱՂԱՍՅԱՆ**
Ռիո դե Ժանեյրոյի 2016 թ. և Տոկիոյի 2020 թ. ամառային օլիմպիական խաղերի մասնակից

ISSN 1829-3468

# Օ՜ ՍՊՈՐՏ, ԴՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՍ

**ՎԱՐԱԶԴԱՏ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՐՄԱՐԵ ԿԻՍԱՆԴՐԻՆ**
Քանդակագործ Լևոն Թոքմաջյանի կողմից տեղադրվել է Հունաստանի Օլիմպիա քաղաքում 1998թ.

**ՊԱՆԿՐԱՏԻՈՆԻՍՏՆԵՐ**
Հունական օրիգինալից պատրաստված հռոմեական բրոնզե քանդակ, մ.թ.ա. 1-ին դար

**ՍԿԱՎԱՌԱԿԱՆԵՏՈՐԴ**
Հունական քանդակի հռոմեական պատճեն, մ.թ.ա. 5-րդ դար

ZCMC
ԶԱՆԳԵԶՈՒՐ
ՊԱՀՊԱՆԵԼՈՎ
ԱՐԺԵՔՆԵՐԸ

ՀԱՄԱՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐԸ՝
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱԲՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»
ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**Սյունյաց Երկիր**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի՝:

Գլխավոր խմբագիր՝
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք.
Կապան, Շահումյան 20/32:

(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
Գրանցման վկայական՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 15.5 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1000:
Ստորագրված է տպագրության 25.10.2024թ.:

# Համարի բովանդակությունը


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

6 Մարզական Սյունիք. իրավիճակը համապարփակ ներկայացնելու փորձ

**ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ**

7 Սյունիքյան սպորտը՝ Չանգեզուրի պղնձամոլիբդենայինի հոգածության ներքո

8 Հարցազրույց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի հետ

8 Չանգվածային սպորտը՝ առողջ ապրելակերպի գրավական

**ՄԱՐՏԱՐՎԵՍՏ**

9 Չանգեզուրի «Յան» մարտարվեստի ասոցիացիայի վստահ ընթացքը

10 «Սեփական ուժերով ինքնապաշտպանվելու անընդունակ ժողովուրդները պատժվում են մահվամբ»

**ԸՆԴՀՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

11 Տեղ համայնք

12 Մեղրի համայնք

13 Սիսիան համայնք

14 Քաջարան համայնք

15 Գորիս համայնք

16 Կապան համայնք

**ՎՈԼԵՅԲՈԼ**

42 Սպորտային Սյունիքի լեգենդ-մարդը. ԱՂՎԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

**ՖՈՒՏԲՈԼ**

32 Կապանցի մարզիկներ, ովքեր հանդես են եկել արտասահմանում



**ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԵՆ ԳԻԼՈՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՆ**

25 Կապանի մարզադաշտը կհամապատասխանեցվի միջազգային չափանիշներին

**ՖՈՒՏԲՈԼ**

26 Գրիշա Համբարձումյան կամ Գիլո. կյանք՝ ապրած մեծ ֆուտբոլում

28 Մի լուսանկարի պատմություն

29 Հետադարձ հայացք. մեղրեցի վետերան ֆուտբոլիստները Մոսկվայում

30 Այդ ինքնատիպ հարձակվողը՝ Միշա Մանուչարյան

32 Կապանցի մարզիկներ, ովքեր հանդես են եկել արտասահմանում

34 Կապանում ֆուտբոլային մրցաշար՝ լրագրողական թիմերի մասնակցությամբ

36 Մեղրիի տարածաշրջանի մանկապատանեկան ֆուտբոլը՝ վերընթաց ճանապարհով

38 Մարզական Գորիս. ֆուտբոլ. հետադարձ հայացք

40 Դրվագներ Մեղրիի ֆուտբոլի տարեգրությունից

**ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ**

56 Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց



**ՄԱՐԶԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ**

41 Էդիկ Ավետիսյանի պայծառ հիշատակին

42 Սպորտային Սյունիքի լեգենդ-մարդը. Աղվան Հակոբյան

46 Մարզաշխարհի նվիրյալը

48 Միջազգային համարում ունեցող մարզիչ-մանկավարժը

49 ԱՐԿԱԴԻ ՂԱՋԱՐՅԱՆ. մարզիչը և մանկավարժը

50 Բասկետբոլի նվիրյալը

51 ՌԱՖԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. «Ֆիզկուլտուրայի հանդեպ հակումս ձևավորվել է թիվ 1 դպրոցում»

52 ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ. «Հնարավոր չէ՝ հոգի դնես մի գործի մեջ, և ոչինչ դուրս չգա»

53 ԳԱՌՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ. վոլեյբոլի կապանցի երախտավորներից մեկը

54 Վոլեյբոլի տաղանդավոր մարզիչը

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ**

55 15-ամյա Ինեսա Ադամյանը

**ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ**

56 Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց

60 Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց

62 Մարզադպրոցը՝ դարձյալ տնվորի կարգավիճակով

64 «Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ը

66 Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի մարզահամալիրը

68 Սիսիանի մարզահամալիր-մասնաճյուղը՝ կայացման ճանապարհին

69 Բռնցքամարտի մասնագիտացված դպրոց Կապանում

70 «Կապանի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ

72 Առաջընթացի ճանապարհին

72 Ֆուտբոլը Սիսիանում ամուր արմատներ է ձգում

73 Լավագույն ավանդույթները շարունակվում են

**ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ**

74 Մարզաառողջարարական համալիր Կապանում

76 Առողջությունն ամրապնդելու ևս մի հասցե՝ «Իմպերիալ» համալիր

78 Առողջ ապրելակերպի մասսայականացման ջատագովը Քաջարանում՝ Վահե Իվանյան

**ԱԹԼԵՏԻԿԱ**

80 Եռացատկորդ Լևոն Աղասյանը

82 Մարզիկներ՝ հայր և որդի Վեզիրյաններ

**ՄԵՆԱՊԱՅՔԱՐԱՅԻՆ ՃԵՎԵՐ**

83 Կապանցի քիք բռնցքամարտիկները շարունակում են ավանդույթները

84 ԱՌՆՈՒՂ ԿՈՍՏԱՆՅԱՆ. «Ձգտում ենք խառը մենամարտերը զարգացնել Այունիքում»

86 Թաեքվոնդոն Քաջարանում

**ԸՄԲՇԱՄԱՐՏ**

88 Ընբշամարտի 83-ամյա չեմպիոն Ալբերտ Հայրապետյանը նորից շարքերում է

90 Ագարակցի ըմբիշները. դրվագներ

92 Արտակ Աղաբեկյանը՝ Եվրոպայի պատանիների առաջնության մրցանակակիր

**ԲՌՆՑԱՄԱՐՏ**

93 Բռնցքամարտի ակումբ՝ Ռազմիկ Աբելյանի նախաձեռնությամբ

94 ԱՇՈՏ ՍԱՂԽՅԱՆ. «Բռնցքամարտի ապագան նոր սերնդի ձեռքում է»

94 Սպորտի վարպետ Ռաֆայել (Սաքո) Շալունց

**ԾԱՆՐԱՄԱՐՏ**

96 Ճանաչենք մեր վարպետներին՝ Սեյրան Ղազարյան

97 «Մեդալի հակառակ կողմը». ֆիլմի պրեմիերա՝ Քաջարանում

**ԿԱՐԱՏԵ**

98 ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «Կարատեն մատաղ սերնդին տալիս է այն ամենը, ինչն անհրաժեշտ ու կենսական է»

100 Կարատեն Մեղրիում

101 Ճապոնական մարտարվեստի սիսիանցի վարպետը

**ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ**

101 Ժորա Հակոբի Ասատրյան. հրաձիգ

**ՁՐԱՅԻՆ ՍՊՈՐՏ**

102 Կապանյան արմատներով հանրաճանաչ ջրացատկորդը

**ՇԱԽՄԱՏ**

103 Ռաֆայել Վահանյան

103 Վանիկ Զաքարյան

104 Տիգրան Գրիգորյանը, ով քսան տարի գլխավորել է Գորիսի շախմատի դպրոցը

108 Համահայկական առաջին խաղերի շախմատի չեմպիոնը

109 Կապանն ունեցավ շախմատի առաջին միջազգային վարպետը

110 Շախմատի ակադեմիայի Մեղրու և Ագարակի մասնաճյուղերի նշանակալի արդյունքը

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ԴՐՎԱԳՆԵՐ**

111 Գորիսի սպորտի տարեգիրը

112 Ֆիզկուլտուրայի եվ սպորտի ղեկավարումը Զանգեզուրի գավառում

**ՍԹՐԻԹԲՈԼ**

114 «Սթրիթբոլը» Կապանում

**ՖՈՒՏԲՈԼ**

115 «Գանձասար» ֆուտբոլային ակումբ

116 «Սյունիք» ֆուտբոլային ակումբ

118 «Սյունիք» ֆուտբոլային ակումբի աղջիկների թիմը

**ԱԹԼԵՏԻԿԱ**

119 ՅԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ. «Պատրաստվում եմ 2028 թ. օլիմպիադային, որը տեղի կունենա Լոս Անջելեսում»

121 Աթլետ եղբայրների կայուն արդյունքները

**ԿԱՐԱՏԵ**

100 Կարատեն Մեղրիում

**ՇԱԽՄԱՏ**

104 Տիգրան Գրիգորյանը, ով քսան տարի գլխավորել է Գորիսի շախմատի դպրոցը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# Մարզական Սյունիք. իրավիճակը համապարփակ ներկայացնելու փորձ

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ Վարդան Ջհանյանի նախաձեռնությամբ է լույս տեսնում «Սյունյաց երկրի» այս համարը: Սյունիքի մարզաշխարհի անցյալն ու ներկան հնարավորինս ի մի հավաքելու և ընթերցողի սեղանին դնելու առաջին փորձն է սույն նախաձեռնությունը: Ուստի և կարող են որոշ թերություններ լինել: Բացթողումներ առկա են հատկապես 20-րդ հարյուրամյակի սյունիքյան մարզական իրողությունները ներկայացնելու առումով: Այդ և ավելի վաղ շրջանի տարեգրությունը կարող է երբևէ դառնալ առանձին ուսումնասիրության ու հրապարակման նյութ: Հնարավորինս ամբողջական է ներկայացվում Սյունիքի մարզաշխարհի ներկա պատկերը:**

**Մեզ համար դյուրին չէին այս թեմայի ուսումնասիրումը, լրագրողական նյութերի պատրաստումը, քանզի շատ դեպքերում մասնագիտական մոտեցում էր պահանջվում: Մոտ մեկ տարի համառ աշխատանքից հետո պարզ դարձավ իրողությունը՝ Սյունիքում սպորտային և մարզական ոլորտը մի ամբողջ աշխարհ է, չափազանց հարուստ և հետաքրքիր աշխարհ, որում ընդգրկված են հազարավոր կարող երեխաներ, պատանիներ ու աղջիկներ, շնորհալի մարզիչներ, կազմակերպիչներ, սրտացավ աջակիցներ:**

Սյունիքի մարզաշխարհը ներկայացնելուց առաջ խնդիր դրեցինք նախ՝ ծանոթանալ ֆիզկուլտուրայի և սպորտի դրվածքին՝ հանրապետության կտրվածքով, ծանոթանալ ոլորտում իրականացվող պետական քաղաքականությանը: Խնդիրը լուծեցինք ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի հետ հարցազրույցի միջոցով: Փոխնախարարի օգնությամբ որոշակիորեն ճշտեցինք ԿԳՄՍ նախարարության դիրքորոշումը Սյունիքին առնչվող մի շարք հարցերում:

Համարի սկզբնամասում ընդհանուր, բայց և համակողմանի պատկերացում ենք տալիս մարզի համայնքներում սպորտային ու մարզական գործի դրվածքի, եղած ռեսուրսների, առկա ներուժի մասին:

Նախապատրաստական աշխատանքների ընթացքում վերստին համոզվեցինք՝ Սյունիքի մարզական կյանքի կազմակերպման գործում անփոխարինելի դեր է խաղում «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը, ինչն արտացոլված է ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանի հարցազրույցում:

Իսկ թե մարզական ինչ ակտիվ կյանքով է ապրում հանքարդյունաբերական հսկան՝ իմանում ենք ՓԲ ընկերության արհեստակցական կազմակերպության նախագահ Տիգրան Սարգսյանի զրույցից:

* * *

Համարում Սյունիքի մարզաշխարհը ներկայացնում ենք ըստ մարզաձևերի՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, աթլետիկա, բռնցքամարտ, մենապայքարային ձևեր, շախմատ, կարատե, ջրային սպորտ, ծանրամարտ, ըմբշամարտ:

Ներկայացնում ենք մարզիչներին և ոլորտի մանկավարժներին, որոնցով պայմանավորված է Սյունիքի ներկայիս սպորտային առօրյան:

Ներկայացնում ենք մարզադպրոցներն ու մարզահամալիրները, մարզաառողջարարական համալիրները, նաև էջեր Սյունիքի սպորտային տարեգրությունից:

Սպորտի առանձին ձևերի սյունիքյան դրսևորումները ներկայացնելիս պարզորոշ երևում է, թե որքան ակտիվ են սյունեցի մարզիկները միջազգային ու հանրապետական մրցումներում: Առավել ուրախալի է, որ նրանցից շատերը մեծ սպորտում իրենց անունն են գրանցել՝ և՛ նախկինում, և՛ հիմա:

Նրանցից մի քանիսի անունը կուզենայինք վերստին հիշել:

Ահա՝ Գրիգոր Համբարձումյան (Գիլո), հանրաճանաչ ֆուտբոլիստ, ով կրել է ԽՍՀՄ ֆուտբոլի հավաքականի համազգեստը, Դավիթ Համբարձումյան (ջրացատկորդ, Մոսկովյան օլիմպիադայի բրոնզե մեդալակիր, Եվրոպայի կրկնակի չեմպիոն), Արկադի և Սուրեն Ղազարյաններ (Կապանի թեթև աթլետիկայի երախտավորներ), Լևոն Աղասյան (եռացատկորդ, երկու օլիմպիադայի մասնակից), Ալեքս Սահակյան (շախմատիստ, ՖԻԴԵ-ի վարպետ), Կարեն Սամսոնյան (մարզիչ, միջազգային կարգի մասնագետ, Հայաստանի «Ջեյ Քեյ Էս» ֆեդերացիայի նախագահ), Արտակ Աղաբեկյան (ըմբիշ, Եվրոպայի պատանիների 2024 թ. առաջնության 3-րդ տեղի մրցանակակիր), Աղվան Հակոբյան (վոլեյբոլի մարզիչ, Սիսիանի վոլեյբոլի թիմի ղեկավար, նախկին ԽՍՀՄ վոլեյբոլի բարձրագույն խմբի առաջնությունների մասնակից)...

Ուրախությամբ նկատեցինք, որ Սյունիքում կան կայացած մարզադպրոցներ, որոնք, առկա խնդիրները լուծելու դեպքում, ավելի լավ կիրականացնեն իրենց

*Շարունակությունը՝ էջ 17*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

# Սյունիքյան սպորտը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային հոգածության ներքո

**Զանգեզուրի պղնձամոլիբդենային նախաձեռնությամբ «Սյունյաց երկիրը» հրատարակում է հերթական հատուկ համարը, որով ներկայացվում է մարզական Սյունիքը: Մասնավորապես ներկայացվում են Սյունիքի անվանի մարզիկները, ովքեր մնայուն հետք են թողել հայրենի եզերքի սպորտային տարեգրության մեջ, նաև նրանք, ովքեր ներկայումս հանդես են գալիս մարզական արենաներում, ձգտում բարձր պահել ոչ միայն մարզի, այլև հանրապետության մարզական պատիվը:**
**Համարում տեղ են գտնում հրապարակումներ այն անձանց մասին, ովքեր նախանձախնդիր են Սյունիքում սպորտի զարգացմանը:**
**Այդպիսի անհատականություններից է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ Վարդան Ջհանյանը:**
**Մեր երկրամասի հոգևոր–մշակութային կյանքի հանդեպ առանձնահատուկ հոգատարություն տածող Վարդան Ջհանյանը նաև «Սյունիք» ֆուտբոլային ակումբի գործադիր տնօրենն է:**
**Սյունիքի մարզական կյանքին առնչվող մի քանի հարցի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար էլ զրուցեցինք Վարդան Ջհանյանի հետ:**

**– Պարոն Ջհանյան, նախ՝ շնորհակալություն՝ Սյունիքի մարզական կյանքին նվիրված «Սյունյաց երկիր» թերթի հատուկ համարի հրատարակումը նախաձեռնելու համար:**

**Դուք բավականին ակտիվ եք լրատվական դաշտում: Հաճախ ենք ընթերցում կամ դիտում Ձեր զրույցները երկրի տնտեսության և հատկապես հանքարյունաբերության վերաբերյալ:**

**Այսօր, սակայն, մեր զրույցը միանգամայն այլ ոլորտին առնչվող հարցեր արծարծելու նպատակ ունի: Խոսքը մարզական–սպորտային ոլորտի մասին է՝ Սյունիքի մարզի կտրվածքով:**

**Նախ՝ Սյունիքի մարզական կյանքի հանդեպ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության որդեգրած դրվատելի գործելակերպը կոմբինատի քաղաքականության օրինաչափ կամ տրամաբանական դրսևորո՞ւմ է, թե՞ պայմանավորված է Ձեր և ընկերության մյուս ղեկավարների նախասիրություններով:**

– Հնարավոր չէ այդ հարցին միանշանակ պատասխանել, նախասիրությունն էլ իր դերը կատարել է, քանի որ մեր ղեկավարությունը, այդ թվում՝ կոմբինատի կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը, մի թիմ ենք ու զբաղվում ենք սպորտով: Մյուս կողմից՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը համայնքի հանդեպ սոցիալական պատասխանատվության շրջանակում չի կարող ուշադրություն չդարձնել սպորտին, որովհետև այն սոցիալական պատասխանատվության կարևորագույն ոլորտներից է: Կոմբինատի համար առաջնահերթ է, որ ընկերության ազդակիր համայնքների բնակչությունը լինի առողջ. մեր աշխատակիցներն են, նրանց ընտանիքի անդամները, նրանց երեխաները: Եվ դա սոցիալական պատասխանատվության կարևորագույն ուղղություններից է: Պատմականորեն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն ուշադրություն է դարձրել սպորտին՝ դեռևս Մաքսիմ Հակոբյանի պաշտոնավարման ժամանակներից, բայց հիմա փորձում ենք ուշադրություն դարձնել մանկապատանեկան սպորտին, որը հնարավորություն կտա զարգացնել առողջ ապրելակերպն ազդակիր համայնքներում՝ Կապանում, Քաջարանում, մարզի մյուս համայնքներում, որովհետև մանկապատանեկան սպորտը մի քանի հարց է լուծում՝ մատաղ սերնդի բարոյահոգեբանական վիճակի, ֆիզիկական պատրաստության բարելավում, բացասական երևույթների հետ նրանց շփման նվազեցում:

Գաղտնիք չէ, որ մանուկները մեծ կախվածություն ունեն հեռախոսներից, սմարթֆոններից, և սպորտը մի միջոց է, որ թույլ է տալիս երեխաներին կտրել (նախկինում ասում էին փողոցի բացասական ազդեցությունից) վիրտուալ իրականությունից: Մի օրինակ բերեմ. «Սյունիք» ֆուտբոլային ակումբի մանկապատանեկան դպրոցում մարզի մասշտաբով ընդգրկված է մոտ 700 սան, որից 400-ը՝ Կապանում, նաև Քաջարանում, Սիսիանում, Մեղրիում, Ագարակում, Գորիսում (թեև այս վերջինում խաղադաշտը բարվոք վիճակում չէ): Եվ իսկապես, մեր ֆուտբոլային երկու-երեք խոշոր ակադեմիան դարձել է մարզային, ու այսօրվա դրությամբ ամենախոշոր մարզային դպրոցն է, եթե հաշվի չառնենք մայրաքաղաքի ֆուտբոլային ակադեմիաները, ինչպիսին, օրինակ, Ավանինն է: Եվ դա դեռ վերջը չէ: Մեր ֆուտբոլային դպրոցի պատասխանատուները որոշել են ֆուտ-

*Շարունակությունը՝ էջ 18*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

# Հարցազրույց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի հետ

**«Սյունիքի մարզաշխարհ. անցյալն ու ներկան» խորագրով «Սյունյաց երկիր» թերթի հատուկ համարի նախապատրաստության ընթացքում անհրաժեշտություն առաջացավ զրուցել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի հետ:**
**Մեր նպատակն էր՝ նախ՝ ընդհանուր գծերով ծանոթանալ ֆիզկուլտուրայի և սպորտի դրվածքին հանրապետությունում, ծանոթանալ ոլորտում իրականացվող պետական քաղաքականությանը:**
**Միևնույն ժամանակ՝ Սյունիքի մարզաշխարհում կուտակվել են բազմաթիվ հարցեր, որոնց լուծման ճանապարհին անհրաժեշտություն է առաջացել որոշակիացնել ԿԳՄՍ նախարարության դիրքորոշումը, որը կարևոր հանգամանք է մեր երկրամասում ֆիզկուլտուրայի և սպորտի հետագա զարգացումն ապահովելու համար:**
**Իսկ ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը մերօրյա Սյունիքի գլխավոր առաջնահերթություններից է: Խոսքը մարդկանց առողջության ամրապնդման մասին չէ սոսկ, այլ երկրի պաշտպանության գործին ակտիվ մասնակցել կարողացող սերնդի ձևավորման մասին:**

**– Պարոն Գիլոյան, «Սյունյաց երկիր» թերթը, որ հատուկ թողարկումների հարուստ փորձ և ավանդույթներ ունի, հերթական հատուկ համարը նվիրում է Սյունիքի մարզաշխարհին: Եվ, այդ կապակցությամբ, Ձեզ հետ զրուցելու անհրաժեշտություն է առաջացել:**

**Առաջին հարցով կուզենայինք իմանալ (ընդհանուր գծերով)՝ ի՞նչ պատկեր ունի ֆիզկուլտուրայի և սպորտի ոլորտը հանրապետությունում, որ օրենքներով է կարգավորվում ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը: Ո՞ր մարզաձևում եք առաջընթաց նկատում և որոնցո՞ւմ տակավին կան լուծման կարոտ հիմնախնդիրներ:**

– Ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը կարգավորվում է «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի

*Շարունակությունը՝ էջ 20*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

# Զանգվածային սպորտը՝ առողջ ապրելակերպի գրավական

**Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի որդեգրած սոցիալական քաղաքականության ուղղություններից են աշխատակիցների շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը, աշխատակիցների ֆիզիկական պատրաստության բարելավումը: Կարևորվում են նաև տարբեր մարզաձևերից ներկոմբինատային ամենամյա մարզական միջոցառումների կազմակերպումն ընկերությանը պատկանող մարզահամալիրում, որոնց մասնակցում են հարյուրավոր մարդիկ: Մարզական միջոցառումներին, լավագույն մարզիչներին և մարզիկներին սատարելը մշտապես ձեռնարկության ղեկավարության, ինչպես և արհկոմի տեսադաշտում է: Այս և խնդրո առարկա այլ հարցերի մասին է զրույցը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության արհեստակցական կազմակերպության նախագահ Տիգրան Սարգսյանի հետ:**

**– Պարոն Սարգսյան, «առողջ մարմնում՝ առողջ հոգի» կարգախոսն ինչպիսի՞ արտացոլում է ունենում կոմբինատի արհկոմի որդեգրած սոցիալական քաղաքականության մեջ:**

– Կոմբինատի արհեստակցական կազմակերպությունը կոմբինատի աշխատակիցների ազատ ժամանակը ձգտում է կազմակերպել նաև մարզական միջոցառումներ անցկացնելով, որոնց մասնակցում են ընկերության արտադրամասերի թիմերը, ինչպես և վարչական ոլորտի աշխատակիցները: Բավականին հաջողված միջոցառումներ են ստացվում, որոնց մասնակցում են բազմաթիվ երկրպագուներ: Ջանում ենք նաև կոմբինատի աշխատակիցների համար այնպիսի պայմաններ ստեղծել, որ կարողանան օգտվել կոմբինատի մարզահամալիրի ծառայություններից: Կոմբինատի աշխատակիցներն աշխատանքից հետո՝ ժամը 19-ից սկսած, լինում են մարզահամալիրում՝ կազմակերպելով իրենց ժամանցը, այդպիսով իմաստավորելով իրենց երեկոն, նաև ամրապնդելով առողջությունը:

– Կարելի՞ է իմանալ, թե տարեկան որքան գումար է հատկացվում մարզական միջոցառումների համար:

*Շարունակությունը՝ էջ 23*

ՄԱՐՏԱՐՎԵՍՏ

# Ձանգեզուրի «Յան» մարտարվեստի ասոցիացիայի վստահ ընթացքը

**Ասոցիացիան գործում է Կապանում՝ 2010 թվականից, հիմնադիր տնօրենն ու գլխավոր մարզիչը Յանեկ Առաքելյանն է՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի շրջանավարտ:**

Ներկայումս ասոցիացիայում ընդգրկված է մոտ 50 սան (6-ից 18 տարեկան և 18-ից բարձր տարիքի), որից 10-ը պրոֆեսիոնալ մարզիկ են, մյուսները՝ սիրողական:

Ասոցիացիայում ընդգրկված սաները մասնավորապես յուրացնում են ինքնապաշտպանության արվեստը, K-1 մարզաձևի հմտությունները: 16 և բարձր տարիքի սաները ստանում են ռազմական գիտելիքներ:

Ասոցիացիան պարբերաբար կազմակերպում է միջազգային պրոֆեսիոնալ և սիրողական մրցաշարեր: Վերջին մրցաշարը տեղի է ունեցել Կապանում 2024 թ. օգոստոսի 18-ին, որին մասնակցել են նաև Իրանի Իսլամական Հանրապետության և Վրաստանի թիմերը:

Ասոցիացիայի թիմը մասնակցել է մի շարք միջազգային և Եվրոպայի առաջնությունների՝ ՌԴ-ում, Ուկրաինայում, Վրաստանում և Թուրքիայում:

ՄԱՐՏԱՐՎԵՍՏ

# «Սեփական ուժերով ինքնապաշտպանվելու անընդունակ ժողովուրդները պատժվում են մահվամբ»

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

«Դավիթ-բեկյան խաղերը» Կապանում դառնում են ավանդական (2021 թվակա-նից) Հիմնադիրը Արմեն Ղազարյանն է

26 հուլիսի 2021 թ., Գորիսում կազմակերպ-վեց «Լազեր թագ» ռազմա-մարտական խաղ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Տեղ **համայնք**

2022 թ. համայնքի Տեղ բնակավայրում, սուբվենցիոն ծրագրի շրջանակում, կառուցվել է խաղահրապարակ, որն ապահովում է բնակավայրի երեխաների ցերեկային ակտիվ ժամանցը:

Խաղահրապարակներ են կառուցվել նաև Քարաշեն և Խնածախ բնակավայրերում:

Համայնքի երեխաները մարզական հաջողություններ են գրանցել:

2019 թ. հոկտեմբերի 17-ին Տեղի թիվ 1 դպրոցի սան Միքայել Միքայելյանը մասնակցել է Փոթիում կայացած միջազգային շախմատի մրցաշարին և գրավել երրորդ պատվավոր հորիզոնականը:

2021 թ. մարտի 23-ին ազատ ըմբշամարտի Սյունիքի բաց առաջնությունում պատվավոր առաջին հորիզոնականը զբաղեցրել են Տեղ համայնքի մարզիկներ Հայկ Խաչունցը, Ալեն Աղաբեկյանը և Էդիկ Մարտիրոսյանը:

Տեղի մշակույթի տանը գործում է շախմատի խմբակ՝ մի քանի տասնյակ երեխաների մասնակցությամբ:

Ընթացիկ տարում ազատ ոճի ըմբշամարտի մասնագետ է հրավիրվել Տեղ գյուղ, որի մշակույթի տան սպորտդահլիճում շաբաթական երեք պարապմունք է անցկացվում: Մասնակցում են 300 պատանի, որոնցից 40-ը՝ Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներն են:

ՄԵՂՐՈՒ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՆԳՆԱՀԱՏԵԼԻ ՆԵՐԴՐՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՄԱՐԶԻՉ ԸՆԴԱԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԸ, ՈՒՄ ԱՆՎԱՆ ՀԵՏ Է ԿԱՊՎԱԾ ՆԱԵ ՄԵՂՐՈՒ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ:

Համայնքի պատանիներն ակտիվ հաճախում են համայնքում գործող սպորտային խմբակներ: Համայնքում գործում են ըմբշամարտի, կարատեի, ֆուտբոլի, շախմատի խմբակներ: Սաները մասնակցում են տարբեր մրցումների, մարզական խաղերի: Մարզիկները վերոնշյալ սպորտաձևերում նշանակալի հաջողություններ են գրանցում:

- «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ում գործում է ազատ ոճի ըմբշամարտի խմբակը (մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ Յուրա Ավետիսյան): Տասը տարի է, ինչ խմբակը գործում է: Այժմ խմբակ է հաճախում 32 սան:

Հատկանշական են խմբակի 17-ամյա սան Տիգրան Բունիաթյանի հաղթանակները: 2023 թ. հունիսին պատանին դարձավ Եվրոպայի բրոնզե մեդալակիր: Տիգրանը մասնակցել է բազմաթիվ մրցաշարերի, տարել հաղթանակներ:

«Մեղրիի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ում գործում է ֆուտբոլի խմբակ, որը գործում է նաև Ագարակ քաղաքում:

- Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի երրորդ կուրսի ուսանող Սվետլանա Դանիելյանն ուսմանը զուգընթաց Մեղրի համայնքում հիմնել է կիոկուշին կարատեի խմբակ:

Խմբակի սաները մասնակցել են կիոկուշին կարատեի Հայաստանի գավաթի առաջնությանը և զբաղեցրել առաջին, երկրորդ հորիզոնականները: Այժմ պատրաստվում են միջազգային առաջնության:

- Մեղրի համայնքում գործում է նաև JKS ARMENIA շոտոկան կարատեի դպրոցը: Մարզումներն իրականացնում է ջիու-ջիթսու մարզաձևից՝ սև գոտի 1-ին դան, կարատեից՝ 3-րդ դան միջազգային կարգի մասնագետ Կարեն Սամսոնյանը: Բացի քաղաքային բնակավայրերից, մարզիչը պարապմունքներ է անցկացնում նաև Լեհվազ ու Կարճևան գյուղերում:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Մեղրի համայնք

*Ընդակ Մարգարյան*

2023 թ. ապրիլի 23-ին Մոսկվայում տեղի ունեցավ կարատեի Ռուսաստանի բաց առաջնություն, որտեղ Հայաստանը ներկայացնում էին Մեղրի համայնքի JKS ARMENIA շոտոկան կարատեի դպրոցի սաներ Գրիգորի Թումանյանը և Անդրանիկ Առաքելյանը: Պատանիները նվաճեցին 3-րդ մրցանակային տեղը կատա և կումիտե մրցաձևերում:

Դուբայում կայացած Ասիայի և Աֆրիկայի կարատեի միջազգային մրցաշարում մարզիչ Կարեն Սամսոնյանը նվաճել է ոսկե մեդալ, մարզիկ Գրիգորի Թումանյանը՝ մեկ ոսկե և մեկ արծաթե մեդալ, իսկ Անդրանիկ Առաքելյանը՝ բրոնզե մեդալ:

- 2007 թ. Հայաստանի շախմատի ակադեմիան իր մասնաճյուղերը բացեց Ագարակում և Մեղրիում (մարզիչ՝ Պետրոս Մանուկյան): Ակադեմիայի սաներից մեծ հաջողություններ է գրանցել Արտյոմ Մանուկյանը, ով բոլոր տարիքային խմբերում դարձել է Սյունիքի պատանիների չեմպիոն, մասնակցել է Անթալիայում, Արաբական Էմիրություններում, Հունաստանում կայացած աշխարհի առաջնություններին և այլ մրցաշարերի, արժանացել մեդալների, պատվոգրերի և գավաթների:

2023 թվականին Մեղրիի մասնաճյուղի սան Երվանդ Մելիքսեթյանը Սյունիքի մարզի շախմատի պատանիների 16-րդ առաջնությունում, մինչև 12 տարեկան պատանիների խմբում, զբաղեցրել է առաջին տեղը:

Մեղրի, Ագարակ, Ալվանք, Կարճևան բնակավայրերում կան խաղահրապարակներ:

//



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Սիսիան **համայնք**

- Համայնքում գործում է «Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ը. հիմնադիր տնօրենն է եղել Ամիրխանյան Մանվելը: Մարզադպրոցում գործում է վեց մարզաձև՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, շախմատ, ըմբշամարտ, ձյուդո:

Մարզաձևերից առանձնանում է վոլեյբոլը: 2023 թ. (2009-2010 թթ. ծնված տղաները) երկու անգամ անընդմեջ դարձել են ՀՀ չեմպիոն:

Վերջին տարիների արդյունքներով առանձնանում են նաև ձյուդոն և ըմբշամարտը, որոնք առաջադիմում են:

- «Սիսիան համայնքի շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ը գործունեությունը սկսել է 1998 թվականից (տնօրեն՝ Ս. Մկրտչյան): ՀՈԱԿ-ի սաներն ակտիվ մասնակցում են հանրապետական ու մարզային տարբեր մրցումների, ինչպես նաև հուշամրցաշարերի:

Տարիներ ի վեր դպրոցը ներկայացնող մասնակիցներն արժանացել են բազմաթիվ մրցանակների ու դարձել մրցանակակիրներ:

Դպրոցը տվել է համահայկական խաղերի հաղթողներ ու մրցանակակիրներ, պատանիների մրցաշարերի մրցանակակիրներ, Սյունիքի մարզի մեծահասակների ու պատանիների մրցաշարերի հաղթողներ ու մրցանակակիրներ:

- «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ-ը գործում է 2011 թ. նոյեմբերի 30-ից: Առկա է 3 մարզադաշտ և 2 շինություն: Մարզադաշտերը բաղկացած են 2 (20×40) մետր բնական դաշտերից և մեկ արհեստական դաշտից՝ 75×110 մետր միջազգային չափանիշներով: Դպրոց է հաճախում 120 երեխա՝ միավորված 7 խմբում, որից երեք տարիքային խումբ մասնակցում են ՀՀ մանկապատանեկան առաջնություններին:
- Համայնքում գործում է 51 խաղահրապարակ: //

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Քաջարան. համայնք

- 2003 թվականից Քաջարանում գործում է օլիմպիական WTF թաեքվոնդոյի «Քաջարան» ակումբը: Ակումբի ղեկավարը և մարզիչը Գարեգին Ստեփանյանն է՝ Հայաստանի թաեքվոնդոյի ֆեդերացիայի նախագահության անդամ, ով ունի սև գոտի 1-ին դան միջազգային որակավորում և 3-րդ դան ՀՀ որակավորում: Ակումբում մարզվում են տարբեր սեռի և տարիքի մարզիկներ, ովքեր մասնակցել են տարբեր մրցաշարերի ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս՝ միջազգային և Եվրոպական հարթակներում:

- **«ՀՊՄԿ» ՓԲԸ մարզահամալիր**

Պուշկին Թևանյան՝ ծանրամարտի երկարամյա մարզիչ, «ՀՊՄԿ» ՓԲԸ մարզահամալիրի վարիչ է աշխատում 2010 թվականից: Մարզահամալիրում գործում են հետևյալ մարզախմբերը՝ **ծանրամարտ** - մարզիչ՝ Պուշկին Թևանյան, **վոլեյբոլ** - մարզիչներ՝ Արմեն Հակոբյան, Ռոբերտ Շահնազարյան, **բասկետբոլ** - մարզիչ՝ Գոռ Առաքելյան, **ֆուտբոլ** - մարզիչ՝ Բենիկ Մանուչարյան, **բռնցքամարտ** - մարզիչ՝ Աշոտ Սադխյան, **շախմատ** - մարզիչ՝ Դավիթ Քաթանյան, **քիքբոքսինգ** - մարզիչ՝ Արա Սարգսյան, **կուդո** - մարզիչ՝ Առնոլդ Կոստանյան, կոմբինատի աշխատողների առողջարարական խումբ, թաեքվոնդոմարզիչ՝ Արմեն Ավետիսյան:

- **«Քաջարանի համալիր ՄՊՄԴ» ՊՈԱԿ**

ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայությամբ /30 դեկտեմբերի 2004 թ., որոշում N1878-Ն/:

Գրեթե մեկուկես տասնամյակ բացակայությունից հետո սպորտդպրոցը վերաբացվել է Քաջարանի ըմբշամարտի երկարամյա մարզիչ Մերուժան Աթայանի ջանքերով, ով ղեկավարել է այն 2004 թ. դեկտեմբերից մինչև 2021 թ. և կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո նշանակվել սպորտդպրոցի փոխտնօրեն ուսումնական գծով, իսկ տնօրեն է նշանակվել Անահիտ Հայրապետյանը:

Ստեղծման օրվանից գործել է 5 մարզաձև: 2023 թ. դրությամբ մարզադպրոցում գործում է 10 մարզաձև՝ ըմբշամարտ, ծանրամարտ, բռնցքամարտ, վոլեյբոլ, հանդբոլ, բասկետբոլ, շախմատ, աթլետիկա, գեղարվեստական մարմնամարզություն և սեղանի թենիս:

Այժմ մարզադպրոցում գործում է 38 խումբ:

- **«Ivanyan's» ֆիթնես ակումբ**

Գործում է 2020թ., ղեկավար և մարզիչ՝ Վահե Իվանյան: Ստեղծել է բացառապես իր միջոցներով, բայց համայնքի ղեկավարի և «ՀՊՄԿ» ՓԲԸ մշտական ուշադրության և աջակցության կենտրոնում է:

- Համայնքի ղեկավարը ժամանակին զբաղվել է ըմբշամարտով, գրանցել է շոշափելի արդյունքներ: Եվ նրա մարզչի՝ Քաջարանի ըմբշամարտի երկարամյա մարզիչ ու Քաջարանի պատվավոր քաղաքացի Մերուժան Աթայանի նախաձեռնությամբ ամեն տարի Քաջարանում կազմակերպվում է «Մանվել Փարամազյանի անվան ըմբշամարտի» առաջնություն, որին մասնակցում է 100-ից ավելի ըմբշամարտիկ տարբեր մարզերից:

//

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Գորիս **համայնք**

Գորիսի մանկապատանեկան մարզադպրոցը (նախկինում ֆիզկուլտ դպրոցը) հիմնվել է 1940-ական թթ.: Այդ տարիներին դպրոցի տնօրեններ են եղել Հայրապետ Գրիգորյանը, Գրիգոր Մանուչարյանը, Յուրիկ Յոլյանը, Երվանդ Մարտիրոսյանը, Արմենակ Մանգասարյանը, Միշա Իսունցը, իսկ մարզիչներն էին Իվան Իվանյանը, Արմենակ Քոչարյանը, Բորիս Հարությունյանը, Սերյոժա Միրզոյանը, Միշա Միրզոյանը:

Գորիսում մեծ մասսայականություն էր վայելում ֆուտբոլը, հարգանքի են արժանի 50-ական թթ. շատ ֆուտբոլիստներ: 60-ական թթ. Գորիսի հավաքականում հանդես էին գալիս Գորիսի քաղաքային մանկապատանեկան մարզադպրոցի շատ սաներ:

- 1976 թ. կառուցվել է Գորիսի քաղաքային մարզադաշտը: 1982 թ. Գորիսի ֆուտբոլի հավաքականն անվանվեց «Զանգեզուր»: Թիմը 15 տարի հանդես է եկել տարբեր առաջնություններում՝ 1982-1985 թթ. հանդես է եկել հանրապետության երկրորդ խմբում (մարզիչ՝ Սեյրան Պետրոսյան), 1987 թ.՝ առաջին խմբում (մարզիչ՝ Սեյրան Պետրոսյան), 1988-1989 թթ.՝ 2-րդ խմբում (մարզիչ՝ Վրեժ Դավթյան), 1990 թ. դարձել է Հայաստանի չեմպիոն, իրավունք ստացել մասնակցելու 1991 թ. ԽՍՀՄ 2-րդ խմբի Հայաստանի առաջնությանը (մարզիչ՝ Վրեժ Դավթյան): Անկախ Հայաստանի 1993 թ. մրցաշրջանում «Զանգեզուրը», մարզիչ Վրեժ Դավթյանի ղեկավարությամբ, հանդես է եկել 1-ին խմբի առաջնությունում, գրավել 1-ին տեղն ու նվաճել 1994 թ. ազգային առաջնության բարձրագույն խմբում հանդես գալու իրավունքը: 1994 թ. ստեղծվել է «Զանգեզուր» ֆուտբոլային ակումբը՝ նախագահ Սեյրան Ակլունց:
- 1999-2000 թթ. Գորիսի քաղաքային մարզադպրոցը դարձել է Գորիսի մարզաառողջարանային համալիր համայնքային հիմնարկ: 2010 թ. մարզաառողջարանային համալիրի վերակազմավորման արդյունքում դարձել է «Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ: Գործել են ֆուտբոլ, բասկետբոլ, ըմբշամարտ, ծանրամարտ, վոլեյբոլ, թեթև աթլետիկա մարզաձևերը:

Առողջ ապրելակերպի և սպորտի մասսայականացման, ինչպես նաև տարբեր տարիքի երեխաների սպորտով, մանկական խաղերով զբաղվելու համար Գորիս համայնքի տարբեր թաղամասերում, ինչպես նաև բնակավայրերում կառուցվել է 14 խաղահրապարակ և մարզահրապարակ:

- Գորիսի շախմատի դպրոցը հիմնվել է 2000 թ. դեկտեմբերին: 2010 թ. վերակազմավորվել է ՀՈԱԿ-ի՝ անվանակոչվելով «Գորիսի Ալբերտ Օրդյանի անվան շախմատի դպրոց»: Դպրոցի տնօրենն էր Տիգրան Գրիգորյանը: Դպրոցն ուներ երկու մարզիչ, գործող չորս խմբում հաճախում էին շուրջ 60 աշակերտ: 2021 թ. օգոստոսին Գորիսի Ա. Օրդյանի անվան շախմատի դպրոցը միացել է «Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ին:
- 1980-90-ականները Գորիս քաղաքում եղել են մենապայքարային և խաղային հետևյալ մարզաձևերը:

**Մենապայքարային** - սուսերամարտ, ծանրամարտ, բռնցքամարտ, ըմբշամարտ: **Խաղային** - ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, ձեռքի գնդակ:

**Գորիսի ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության ամբիոն** - Կրթահամալիրի ֆիզիկական դաստիարակության գործում մեծ աշխատանքներ է կատարել ֆիզդաստիարակության ամբիոնը, որը գործել է մասնաճյուղը ստեղծվելու 3-րդ տարվանից: Ամբիոնն ունի մարզադահլիճ, մարզական ակումբ, որտեղ 10 մարզաձևից մարզումներն է անցկացնում շուրջ 150 պատանի:

//

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Կապան **համայնք**

Կապանը հայտնի է մարզական ավանդույթներով: Մեր օրերում Կապանի համայնքապետարանը հովանավորում է տեղացի մարզիկների մասնակցությունը հանրապետական և միջազգային մրցումներին:

**Կապանում գործում են հետևյալ մարզօջախները՝**

- Կապանի աթլետիկայի մասնագիտացված մարզադպրոց (տնօրեն՝ Գագիկ Հարությունյան),
- Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց (տնօրեն՝ Թևան Գևորգյան),
- Կապանի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց (տնօրեն՝ Տիգրան Իվանյան):

**Կապանում գործում է ֆուտբոլային երկու ակումբ.**

- «Այունիք» ֆուտբոլային ակումբ (նախագահ՝ Վարդան Ջհանյան),
- «Գանձասար» ֆուտբոլային ակումբ (նախագահ՝ Վլադիկ Առաքելյան):

«Գանձասար»-ը հանդես է գալիս Հայաստանի ֆուտբոլի առաջնության բարձրագույն խմբում, իսկ «Այունիքը» հանդես է գալիս Հայաստանի ֆուտբոլի առաջնության 2-րդ խմբում:

- Կապանում է Այունիքի մարզի սիրողական և պրոֆեսիոնալ քիքբոքսինգի մարզական ակումբը (նախագահ՝ ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյան, պատվավոր նախագահ՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյան):

Կապանցի մարզիկները հաջողությամբ են հանդես եկել Համահայկական խաղերում: 2001 թ. Համահայկական երկրորդ խաղերում Մերուժան Սարգսյանը դարձել է կրկնակի հաղթող (100 մ արգելավազք և հեռացատկ): Հեռացատկի հատվածում երկրորդ արդյունքը ցույց տվեց նրա եղբայր Մարատ Սարգսյանը: 2015 թ. կայացած վեցերորդ համահայկական ամառային խաղերում կապանցիները վերադարձել են յոթ մեդալով: Այունիքի մարզկենտրոնից 22 մարզիկ մասնակցում էր միայն աթլետիկայի մարզաձևերի մրցումներին: Լևոն Աղասյանը եռացատկից ոսկե մեդալ է նվաճել, հեռացատկից՝ արծաթե: Կապան է բերել ևս երեք արծաթե, երկու բրոնզե մեդալ:

**Կապանում կան մի քանի ճանաչված մարզական գերդաստաններ.**

- Համբարձումյաններ (Գրիգոր-Գիլո, որդիներ՝ Մամիկոն (ֆուտբոլ), Դավիթ (ջրացատկի Եվրոպայի կրկնակի չեմպիոն)),
- Վեզիրյաններ (Արշամ և Մասիս (աթլետիկա)),
- Ղազարյաններ (Արկադի, Սուրեն (աթլետիկա)),
- Սարգսյաններ (Մերուժան և Մարատ եղբայրներ (աթլետիկա)),

**Նշանավոր մարզիկներ, ովքեր ճանաչված են հանրապետությունում.**

- Գրիգոր (Գիլո) Համբարձումյան (ֆուտբոլ)
- Դավիթ Համբարձումյան (ջրացատկորդ)
- Վարդան Ղազարյան (ֆուտբոլ, Լիբանանի հավաքականի խաղացող)
- Ալեն Սահակյան (ՖԻԴԵ-ի վարպետ)

//

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# Մարզական Սյունիք. իրավիճակը համապարփակ ներկայացնելու փորձ

*Սկիզբը՝ էջ 6*

առաքելությունն աճող սերնդի ֆիզիկական դաստիարակության և Սյունիքի մարզական առօրյան ակտիվացնելու ուղղությամբ:

Ահա՝ Գորիսի մանկապատանեկան մարզադպրոց, Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց, Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց, Կապանի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց, Կապանի բռնցքամարտի մասնագիտացված դպրոց, Մեղրիի կարատեի դպրոց, Հայաստանի շախմատի ակադեմիայի Մեղրիի և Ագարակի մասնաճյուղեր, Սիսիանի ֆուտբոլի դպրոց, Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց, Սիսիանի շախմատի դպրոց, Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց և այդ դպրոցի Սիսիանի մասնաճյուղ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մարզահամալիր:

Ուրախությամբ նկատեցինք նաև, որ Սյունիքում կան սպորտի բազմաթիվ նվիրյալ մարզիչներ, ովքեր իրենց պրոֆեսիոնալ հմտությունները փոխանցել և շարունակում են փոխանցել աճող սերնդին: Մի քանի մարզչի անուն՝ ահավասիկ. Տիգրան Աղաբեկյան (ԽՍՀՄ սպորտի վարպետ, ըմբշամարտ, Գորիս), Արսեն Պետրոսյան (ՀՀ վաստակավոր մարզիչ, աթլետիկա, Կապան), Մերուժան Աթայան (ՀՀ սպորտի վաստակավոր աշխատող, ըմբշամարտ, Քաջարան), Յուրի Ավետիսյան (ՀՀ վաստակավոր մարզիչ, ըմբշամարտ, Մեղրի), Վալերիկ Համբարձումյան (ԽՍՀՄ սպորտի վարպետ, ըմբշամարտ, Սիսիան)...

* * *

Համարը նախապատրաստելու ընթացքում բախվեցինք այն խնդիրներին, որոնք առկա են Սյունիքում, և դրանցից մի քանիսին կուզենայինք անդրադառնալ...

Հայաստանի ամենահին քաղաքներից մեկում՝ Գորիսում, չկա ու չի եղել լողավազան: Գրեթե ոչինչ չկա թեթև աթլետիկայի պատշաճ կազմակերպման համար: Տարիներ շարունակ չի հիմանորոգվում անմխիթար վիճակում հայտնված մարզադաշտը, թեև քաղաքն ունի ֆուտբոլային հարուստ ավանդույթներ:

Ոլորտի մասնագետները մեզ հարցնում են՝ ազգային մրցումների անցկացման վայր (ավանդաբար) ընտրվում է մայրաքաղաքը. իսկ ինչո՞ւ նման մրցումները նաև մարզերում (այդ թվում՝ Սյունիքում) չեն անցկացվում: Հավանաբար կպատասխանեն՝ համապատասխան պայմաններ չկան, բայց մինչև ե՞րբ:

Կապանում վաղուց զգացվում է աթլետիկական մանեժ կառուցելու անհրաժեշտությունը, և դա այն դեպքում, որ քաղաքում բավականին զարգացած է թեթև աթլետիկան:

«Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ը մինչև հիմա չունի շենք, և պարապմունքներն անց են կացվում տարբեր տեղերում: Բանվորական այդ խոշոր միջավայրում նույնիսկ լողավազան չկա:

Ծայրահեղ սուղ են Մեղրու մարզական հնարավորություններն ու հատկապես վատ վիճակում են Մեղրու և Ագարակի մարզադաշտերը:

Սիսիանում 2014-2016 թթ. կառուցած հիանալի մարզահամալիրը մինչև հիմա օդից կախված վիճակում է և, որպես գույք, հստակեցված չէ պատկանելությունը:

Կարելի է երկար շարունակել Սյունիքում ոլորտի խնդիրների թվարկումը, բայց բավարարվենք ասվածով:

* * *

Թեմայի ենթաբաժիններից մեկը կարող էր լինել աճող սերնդի ֆիզիկական դաստիարակության վիճակը մարզում՝ ուսումնական հաստատություններում, աշխատանքային կոլեկտիվներում՝ այդ ամենը դիտարկելով առողջ ապրելակերպի տեսակետից: Ընթացքում, սակայն, համոզվեցինք, որ դա բավականին լուրջ և տարողունակ խնդիր է, առանձին և բազմակողմանի ու հիմնավոր ներկայացնելու կարիք ունեցող թեմա, այլապես ամեն ինչ մակերեսային և նույնիսկ ձևական կլիներ:

Թեմայի մեկ այլ ենթաբաժին կարող էր լինել գյուղական բնակավայրերի մարզական կյանքի դրվածքը: Մանավանդ որ մարզի գյուղերի մեծ մասը տասնամյակներ շարունակ ակտիվ սպորտային-մարզական առօրյա է ունեցել՝ թիմեր, խմբակներ, սպորտի տարբեր ձևերից մրցումներ բնակավայրերի թիմերի միջև: Այդ ամենից շատ քիչ բան է պահպանվել, որը, այդուհանդերձ, առանձին ներկայացնելու կարիք ունի:

Առանձին հարց կարող էր լինել բնակավայրերում առկա մոտ 200 խաղահրապարակի վիճակը. դրանց զգալի մասը ձևական իրողություն է երեխաների կյանքում՝ անբարեկարգ վիճակ, նվազագույն գույքի բացակայություն, առկա գույքի մի մասի մաշված վիճակ:

Հարցերի հարցը, այդ բոլորով հանդերձ, ոլորտի կառավարումն է, որը, առնվազն մարզի կամ համայնքների կտրվածքով, մեծամասամբ ձախողված է: Բացակայում է միասնական մոտեցումը, ամեն ինչ, կարծեք, թողնված է տեղական իշխանությունների հայեցողությանը, իսկ տեղական իշխանությունների տվյալ ոլորտի պաշտոնյաները հաճախ չեն էլ պատկերացնում բնագավառի կարևորությունը, խնդիրները:

Ծանոթացեք, օրինակ, համայնքային բյուջեներին և ինքներդ կհամոզվեք՝ ֆիզկուլտուրան, սպորտը և մարզական կյանքն առհասարակ պատշաճ մակարդակով արտացոլված չեն ֆինանսական այդ փաստաթղթերում:

Ընթերցողին առաջարկվող թերթային սույն թողարկումը նպատակ ունի նաև պատկան մարմինների ուշադրությունը հրավիրել առկա խնդիրների վրա: Նպատակ ունի հիշեցնել բոլորին՝ առանց ֆիզիկական պատշաճ դաստիարակության խոսք չի կարող լինել մեր երեխաների, պատանիների ու աղջիկների ռազմահայրենասիրական դաստիարակության, ասել է՝ երկրի պաշտպանական կարողության հզորության մասին, որը մեր երկրի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է:

//

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

# Սյունիքյան սպորտը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի հոգածության ներքո

*Սկիզբը՝ էջ 7*

բոլ հաճախողների թիվը հասցնել 1000-ի: Այս տարվանից, կրկնեմ, «Սյունիք» ֆուտբոլային ակումբի մանկապատանեկան դպրոցն ընդլայնել է աշխարհագրությունը՝ ընդգրկելով մարզի բնակավայրերը:

**– Փորձեք փոքր-ինչ հանգամանալից ներկայացնել ընկերության քաղաքականությունը կամ կատարած աշխատանքները Սյունիքի սպորտային-մարզական կյանքում՝ վերջին երկու-երեք տարվա կտրվածքով:**

– Սպորտի ոլորտի շատ ուղղություններով ենք աշխատում՝ դա սիրողական և պրոֆեսիոնալ քիքբոքսինգն է, մի քանի մարզադպրոցներ ենք հովանավորում, կարատեն, բռնցքամարտը, ծանրամարտը: Եվ ոչ միայն մենապայքարային այդ ձևերը, այլև շախմատն ենք հովանավորում: Վերջերս Չեխիայի մայրաքաղաք Պրահայում կապանցի Ալեքս Սահակյանը դարձավ Եվրոպայի մինչև 18 տարեկանների արագ շախմատի հաղթող: Նորընծա չեմպիոնի հովանավորը ևս Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն էր: Քիքբոքսինգի կապանցի մարզիկները հաղթանակով վերադարձան Բուդապեշտում կայացած աշխարհի առաջնությունից: 32 կգ քաշային Սերժ Պապյանը դարձավ աշխարհի չեմպիոն, Տիգրան Դավթյանը՝ բրոնզե մեդալակիր, որում ներդրում ունի կոմբինատն իր հովանավորությամբ: Քաջարանի ծանրամարտի դպրոցը տվել է Հայաստանի չեմպիոն, Եվրոպայի առաջնության մասնակից: Ֆուտբոլի մասին նշեցի, որ ամենամասսայական մարզաձևն է աշխարհում, բայց մենք չենք սահմանափակվում միայն ֆուտբոլով, այլ հովանավորում ենք այն բոլոր մարզաձևերը, որոնք տարածում են ունեցել և հարգի են Քաջարանում, Կապանում:

**– Երեք տարուց ավելի Սյունիքում եք. ինչպե՞ս եք գնահատում Սյունիքի մարզական-սպորտային ներուժը, ուժեղ և թույլ կողմերը, հիմնախնդիրները:**

– Իրականում Սյունիքը սպորտային մեծ ներուժ ունի: Երբ «Սյունյաց երկրի» այս համարը լույս տեսնի, բնականաբար, ավելի հանգամանորեն կծանոթանանք Սյունիքի մարզական կյանքին, կիմանանք, թե պատմականորեն ինչ արդյունքներ է գրանցել մարզը: Միակ բանը, որ ուզում ենք շտկել՝ այն է, որ մանկապատանեկան ֆուտբոլից հետո պատանիները չեն կարողացել իրենց դրսևորել պրոֆեսիոնալ ասպարեզում: Ամեն ինչ անելու ենք, որ սյունեցի պատանիներն իրենց ապագան տեսնեն պրոֆեսիոնալ ֆուտբոլում, այլ մարզաձևերում: Այն շնորհալի տղաները և աղջիկները, ովքեր կարող են կատարելագործել իրենց հմտությունները, միանշանակ, դրա հնարավորությունը կունենան: «Սյունիք» ակումբի առջև հստակ խնդիր է դրված՝ կադրեր պատրաստել Հայաստանի տարբեր տարիքի հավաքականների համար, այսինքն՝ նրանք, ովքեր ուղին սկսելու են մանկապատանեկան ֆուտբոլից՝ և՛ տղաների, և՛ աղջիկների դեպքում, տեսնեն այն հորիզոնը, որին պիտի հասնեն:

**– Կապանը ֆուտբոլային հարուստ ավանդույթներ ունեցող քաղաք է: Եվ այդ ավանդույթների պահպանման, հարստացման գործում, անշուշտ, մեծ դեր է ունեցել և ունի քաղաքի «Լեռնագործ» մարզադաշտը: Մենք հաճույքով ենք նկատում, որ ՀՊՄԿ-ի կողմից մեծածավալ աշխատանքներ են կատարվել-կատարվում այնտեղ՝ մարզադաշտը ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Կուզենայինք միասին վերհիշել կատարված աշխատանքները:**

– Մարզադաշտի պատկանելության խնդիրը բոլորիդ հայտնի է: Այն չի պատկանում ոչ համայնքին, ոչ մարզին, այլ ֆիզիկական անձի: Նրան մենք հարգանքով ենք վերաբերվում, բայց, այնուամենայնիվ, չենք կարող լիարժեքորեն ֆինանսավորել մարզադաշտի վերակառուցման աշխատանքները, քանի որ այն պատկանում է մասնավոր անձի: Ինչ վերաբերում է մարզադաշտում արվածին՝ վերակառուցել ենք նստատեղերը: Այժմ յուրաքանչյուր հանդիսական ունի իր աթոռակը, որը ՖԻՖԱ-ի պահանջն է: Հաջորդ կարևոր խնդիրը, որ պիտի լուծվի, խոտածածկի բարելավումն է, որից հետո Կապանի մարզադաշտում հնարավոր կլինի ընդհուպ միջազգային խաղեր անցկացնել:

**– Մեր հաջորդ հարցը նույնպես Կապանի «Լեռնագործ» մարզադաշտին է առնչվում: 2024 թ. հունիսի 6-ին ՀՀ կառավարությունը հանրային գերակա շահ ճանաչեց Կապանի ֆուտբոլային մարզադաշտը՝ նպատակ ունենալով ներդրումներ կատարել այնտեղ և մարզադաշտի հիման վրա ու շրջակայքում մարզահամալիր հիմնել:**

**Մարզադաշտը պետական գույք դարձնելու ժամկետ է սահմանել մինչև ս.թ. հոկտեմբերի 1-ը:**

**Տարիներ շարունակ այդ մարզադաշտի և՛ հաջողությունները, և՛ անհաջողությունները փոխկապակցված են եղել (համենայն դեպս՝ հանրային ընկալման մեջ) ՀՊՄԿ-ի հետ:**

**Մարզադաշտի հետ կապված վերոհիշյալ պետական ծրագրերին արդյո՞ք ՀՊՄԿ-ն առնչություններ ունի:**

– Դա մեզանից դուրս հանգամանք է, բայց ուզում ենք շնորհակալություն հայտնել սեփականատիրոջը, ում ուժերով այս տարիներին պահպանվել է մարզադաշտի խոտածածկը: Եթե խաղադաշտը դառնա համայնքային կամ մարզային սեփականություն, արդեն ՀՊՄԿ-ն կարող է ազատորեն ներդրումներ կատարել: ՖԻՖԱ-ն էլ ունի մի ծրագիր՝ խաղադաշտի խոտածածկը փոխել, որից հետո այն պատրաստ կլինի Հայաստանի բարձրագույն խմբի կամ միջազգային մակարդակի խաղեր անցկացնելուն:

**– Սյունիքի մարզական կյանքին նվիրված համարի նախապատրաստման ընթացքում հարցազրույց ունեցանք ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի հետ, ով այդ նախարարությունում գլխավորում է մարզական ուղղությունը:**

**Ի պատասխան քաջարանյան մարզական հիմնախնդիրներին առնչվող մեր հարցի, փոխնախարարն ասել է՝ «Մենք քննարկումներ ենք ունեցել Քաջարանի համայնքապետարանի և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ղեկավարության հետ: Ասում են, որ շատ բարձր կարգի սպորտային համալիր են նախատեսում կառուցել, և հույս ունենք, որ այդ համալիրը կկառուցվի ու առկա խնդիրները կվերանան»:**

**Ի՞նչ ընթացքի մեջ է ԿԳՄՍ նախարարության հետ այդ պայմանավորվածությունը, եթե, իհարկե, կա նման պայմանավորվածություն:**

– Իրականում նման պայմանավորվածություն չկա ԿԳՄՍ նախարարության հետ, որովհետև դա կոմբինատի ու համայնքի հարցն է, և կան քննարկումներ Քաջարանի համայնքապետարանի, համայնքի ու մեր միջև, այդ մասին կարող է տեղեկացվել է նախարարությունը, բայց գործընթացին նախարարությունը

չի մասնակցում: Իհարկե, ուրախ ենք, որ իրենք անհանգստացած են և գիտեն այդ մասին, բայց ընդհանրապես չեն մասնակցում:

**– Ինչպե՞ս եղավ, որ ստանձնեցիք «Սյունիք» ֆուտբոլային ակումբի ղեկավարումը: Արդյո՞ք դա չի խանգարում Ձեր գործունեությանը՝ որպես կոմբինատի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ ու Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ:**

– Ստանձնեցի այն փուլում, երբ փոփոխություն կատարվեց կոմբինատի ղեկավար կազմում... Ինչ-որ մեկը դրանով պիտի զբաղվեր կոմբինատի ղեկավարությունից, որովհետև միշտ էլ կոմբինատի ղեկավարներից մեկը զբաղվել է ակումբի հարցերով: Ստացվեց այնպես, որ ինքս ստանձնեցի այդ ղեկավարությունը, որովհետև ֆուտբոլ շատ եմ սիրում: Երբ մենք եկանք, ֆուտբոլային ակումբը և դրա մանկապատանեկան դպրոցն անմխիթար վիճակում էին, մասնավորապես, պայմանավորված կորոնավիրուսի համավարակով և 44-օրյա պատերազմով: Ֆուտբոլով ոչ մեկը չէր զբաղվում և, եթե չեմ սխալվում, ընդամենը 50-60 երեխա էր հաճախում ֆուտբոլի պարապմունքներին: Առաջին թիմը փակվել էր, և պետք էր ինչ-որ բան փոխել:

Իհարկե, կուզեի ավելի շատ ժամանակ տրամադրել ֆուտբոլային ակումբին, բայց չի ստացվում, սակայն «Սյունիք» ակումբի ղեկավարությունը, տնօրենի տեղակալ Արթուր Մարգարյանը, ակումբի մյուս աշխատակիցները մեծ աշխատանք են տանում, իրենց գործին նվիրյալ մարդիկ են: Այն հաջողությունները, որ գրանցում է «Սյունիք» ֆուտբոլային ակումբը, նրանց շնորհիվ է: Լավ կլիներ, որ ավելի շատ ժամանակ տրամադրեի ակումբին, բայց իմ մյուս պարտականություններն այդ հնարավորությունը չեն ընձեռում: Այնուամենայնիվ, համոզված եմ՝ այնտեղ ամեն ինչ լավ է ընթանում, իմ ներգրավվածությունն ակումբի գործերին գուցե հաճելի կլիներ ինձ համար, բայց այդքան էլ կարևոր չէ, որովհետև ակումբի ղեկավարությունն իր պարտականությունը շատ լավ է կատարում:

**– Դուք, միևնույն ժամանակ, նախանձախնդիր եք ֆուտբոլը (նախևառաջ՝ մանկապատանեկան) Սյունիքի մարզում մասսայականացնել, նաև զարգացնել, նախևառաջ այդ ամենի համար նպաստավոր պայմաններ ստեղծել «Սյունիք» ֆուտբոլային ակումբի շրջանակում: Կարո՞ղ եք ասել, թե մարզում որքան պատանի և աղջիկ են ընդգրկված ֆուտբոլային մարզումների ոլորտում:**

– Նշեցի արդեն՝ մոտ 700 հոգի պարապում է ֆուտբոլ, փորձելու ենք այդ թիվը 1000-ի հասցնել: Մեր աշխատանքները կազմակերպում ենք այնպես, որ Սյունիքի մարզի յուրաքանչյուր համայնքում ապրող երեխա համոզված լինի՝ «Սյունիք» ակումբի դռները բաց են: Նա կարող է հաճախել մանկապատանեկան դպրոց և զարգացնել իր հմտությունները՝ թե աղջիկ և թե տղա: Ու այդ առումով հազվադեպ ակումբներից է, որտեղ ամեն ինչ անվճար է՝ և՛ պարապվելը, և՛ համազգեստը, որտեղ մարզումների համար ստեղծվել են բարեհարմար պայմաններ: Եվ տարբեր սոցիալական վիճակներում գտնվող ընտանիքների ծնողներ կարող են համոզված լինել՝ իրենց երեխան կարող է հաճախել մարզադպրոց: Մենք կազմակերպում ենք նաև տրանսպորտային փոխադրումը, քանի որ ակումբի պահեստային մարզադաշտերը քաղաքի կենտրոնից որոշակի հեռու են: Նպատակն այն է, որ գյուղական բնակավայրերի երեխաները ևս ընդգրկվեն մարզումների մեջ:

**– Որքան հայտնի է, կոմբինատի հովանավորությամբ աշխատանքներ են կատարվում «Սյունիք» պահեստային խաղադաշտում (նոր հանդերձարաններ, ժամանակակից լուսավորության համակարգ, այլ հարմարություններ), ֆուտբոլիստներին և մարզիչներին հատկացվում են փոխադրամիջոց, մայրաքաղաքում հյուրանոց և այլն, մի խոսքով՝ ֆուտբոլային ենթակառուցվածքներ են ստեղծվում (այս մասին՝ քիչ հանգամանորեն):**

– Այո, «Սյունիք» ֆուտբոլային ակումբն ունի մարզադաշտեր (պահեստային), որ պատկանում են կոմբինատին, դա Կապանի օդանավակայանին հարակից տարածքում է: Այդտեղ լուսավորության համակարգ ենք անցկացնում, քանզի հենց աշնանային այս օրերին մութն ավելի շուտ է ընկնում, իսկ մարզվել պետք է: Արևային համակարգեր ենք տեղադրել, որ տաք ջրի խնդիրը լուծենք, պարապմունքներից հետո լոգանք ընդունեն, խաղադաշտի վրա են աշխատանքներ կատարվում, հանդերձարաններն են կարգավորվել: Բացի դրանից, շուտով, ավելի ստույգ՝ մեկ ամսվա ընթացքում, կավարտենք աշխատանքները Քաջարանի մարզադաշտում, որը պատրաստ կլինի և՛ մարզումների, և՛ հանդիպումներ անցկացնելու համար: «Սյունիք» ֆուտբոլային ակումբի մի մասը կտեղափոխվի Քաջարան, որովհետև քաջարանցի շատ երեխաներ Քաջարանից են Կապան գալիս՝ պարապվելու համար: Այդ հարցն էլ կլուծենք ու կթեթևացնենք մարզադաշտերի ծանրաբեռնվածությունը: Բացի այդ՝ ֆուտբոլային հանդիպումներ ենք պլանավորում անցկացնել, որոնց մի մասը կլինի Քաջարանում: Դա նաև համայնքի կյանքում աշխուժություն կմտցնի, ծնողներն էլ կտեսնեն իրենց երեխաներին տեղում խաղալիս և շահագրգռված կլինեն նրանց ուղարկել ֆուտբոլի պարապմունքների:

**– Տեղյակ ենք, որ հնարավորինս աջակցում եք Հայաստանի ֆուտբոլի առաջնության առաջին խմբում հանդես եկող «Սյունիք» թիմին (համենայն դեպս մինչև նոր խաղաշրջանը սկսելը «Սյունիք» թիմն ուսումնամարզական հավաք է անցկացրել Կիպրոսում): Ի՞նչ կավելացնեիք ասվածին:**

– Թեպետ հիմնական շեշտը դնում ենք մանկապատանեկան սպորտի զարգացման վրա, առանց Հայաստանի ֆուտբոլի առաջնության առաջին խմբում հանդես եկող «Սյունիք» թիմի՝ պատանիները չեն ունենա ազդակ՝ աճելու, առաջ գնալու: Իրենք պիտի տեսնեն, որ հաջորդ իրենց քայլը կլինի պրոֆեսիոնալ թիմում խաղալը: Ասել է թե՝ «Սյունիք» թիմը երեխաների սպորտային ապագան ապահովելու գործառույթ է նաև կատարում: Հայաստանի ֆուտբոլի առաջնության առաջին խմբում հանդես եկող «Սյունիքը» յոթ տուրից հետո ընթանում է առաջին տեղում: Եթե կոմբինատի ֆինանսական ոլորտում խնդիրներ չառաջանան, ապա թիմը հաջորդ տարի հանդես կգա Հայաստանի ֆուտբոլի առաջնության բարձրագույն խմբում:

**– Որքան նկատել ենք՝ «Սյունիք» թիմը հիմնական շեշտը դնում է տեղացի ֆուտբոլիստների վրա: Մինչդեռ համաշխարհային ֆուտբոլում տարածված է տրանսֆերային քաղաքականությունը՝ ֆուտբոլիստներ ձեռք բերել այլ ակումբներից: Մի կողմից՝ դա լավ է, որ ավելի շատ տեղացի ֆուտբոլիստներ են հնարավորություններ ունենում հանդես գալ «Սյունիք» թիմում, մյուս կողմից՝ հրավիրված ֆուտբոլիստները նոր ձեռագիր են մտցնում տվյալ թիմի խաղում:**

– Դա շատ նուրբ հարց է, ակումբի գործադիր տնօրենն եմ, բայց միայն ես չեմ որոշումներ կայացնում, բնականաբար, հաշվի ենք առնում կոմբինատի մեր գործընկերների կարծիքն ու կոմբինատի հնարավորությունները, ինչպես նաև համայնքի ու համայնքապետի կարծիքը: Մարդիկ կան, որ կարծում են, թե «Սյունիք» թիմում միայն տեղացիներ պիտի լինեն, մի խումբն էլ կարծում է, թե թիմում պիտի լեգեոներներ լինեն, որ մրցակցություն լինի, տեղացիները նրանցից ինչ-որ բան սովորեն: Ես էլ եմ համարում, որ տեղացիներ պիտի լինեն: Բայց այդ երկու տեսակետի համադրություն պիտի լինի: Այնպես որ՝ հարցի երկու ասպեկտն էլ առողջ տարրեր ունեն իրենց մեջ: Լեգեոներները, կարծում եմ, սկզբնական փուլում են անհրաժեշտ, հետո, ըստ հս, նրանց կարիքը չի լինի: Դա ժա-

մանակի հարց է, պիտի համադրել այդ երկու մոտեցումը:

**– Ի՞նչ կմաղթեք հանրապետության ֆուտբոլի առաջնության առաջին խմբում հանդես եկող «Սյունիք» թիմին և այն պատանիներին ու աղջիկներին, ովքեր առաջին քայլերն են անում մեծ ֆուտբոլում:**

– Նախ՝ «Սյունիք» թիմին ցանկանանք, որ շարունակի իր հաղթարշավը և բարձրագույն խմբում հանդես գալու ուղեգիր նվաճի, իսկ պատանիներին՝ մեծ հաջողություններ, և համոզված եմ՝ մի քանի տարի հետո ձեռքբերումներ կունենան: Մանավանդ լիահույս եմ, որ «Սյունիք» ֆուտբոլային ակումբից դուրս կգան պատանիներ ու աղջիկներ, ովքեր կհամալրեն Հայաստանի տարբեր տարիքի հավաքականների կազմերը:

**– Մեզ հետաքրքրում են նաև ընկերության ներսում իրականացվող մարզական աշխատանքները: Այդ մասին, իհարկե, առանձին հրապարակում կլինի համարում, բայց, միևնույն ժամանակ, հետաքրքիր է Ձեր մոտեցումն ու գնահատականը:**

– Նախ՝ երախտապարտ ենք կոմբինատի արհեստակցական կազմակերպության նախագահ Տիգրան Սարգսյանին, ում նախաձեռնությամբ կոմբինատի միջարտադրամասային մրցումներ են անցկացվում մարզահամալիրում՝ մինի ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս և այլն: Կարծում եմ՝ Քաջարանի մարզադաշտի վերակառուցումից հետո՝ բնական պայմաններում, ֆուտբոլի առաջնություն էլ կանցկացնենք:

**– Մեր այս զրույցի ընթացքում վերստին համոզվում ենք՝ այն, ինչ արվում է Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի կողմից սպորտի ոլորտում, վեր է ամեն մի գնահատականից: Այդ բոլորով հանդերձ՝ ի՞նչ ծրագրեր կան առաջիկայում իրականացվելիք:**

– Ամեն ինչ կապված է ֆինանսների հետ, քանի որ կոմբինատն ամեն ինչ անում է բարեգործական հիմունքներով: Ընկերության բյուջեն քննարկելիս պիտի ապացուցենք, թե ինչ կարևոր գործի մեջ են ներդրվում այդ գումարները: Քննարկումների ժամանակ ես և կոմբինատի կայուն զարգացման տնօրեն Արմեն Ստեփանյանը հիմնավորումներ ենք ներկայացնում: Եվ մինչև հիմա կարողանում ենք ապահովել կարևոր ծրագրերի ֆինանսավորումը: Եթե կոմբինատն ավելի բարգավաճի և հզորանա, հնարավոր կլինի էլ ավելի շատ սպորտային ծրագրեր հովանավորել:

**– Եվ, իհարկե, անձնական հարց, որը չի կարող առնչություն չունենալ վերն արծարծված խնդիրների հանդեպ Ձեր ունեցած վերաբերմունքին:**

**Մարզական ի՞նչ նախասիրություններ ունեք, ի՞նչ տեղ է գրավում սպորտը Ձեր կյանքում, և արդյո՞ք ժամանակ գտնում եք սպորտով զբաղվելու համար:**

– Ամենադժվարինը Ձեր նշած վերջին հանգամանքն է՝ ժամանակ գտնել: Բայց հնարավորն անում եմ: Մանկապատանեկան տարիքում տարբեր մարզաձևերով եմ զբաղվել՝ ձյուդո, կարատե, թենիս, ֆուտբոլ: Այժմ Երևանում ժամանակ չի լինում սպորտով զբաղվելու, իսկ Քաջարանում շաբաթական երկու անգամ ֆուտբոլ եմ խաղում կոմբինատի աշխատակիցների հետ: Խոստովանեմ՝ դա ինձ գերագույն հաճույք է պատճառում:

**ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ և ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

# Հարցազրույց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի հետ

*Սկիզբը՝ էջ 8*

մասին» օրենքով: Հենակետային մարզաձևերը, ինչպիսիք են՝ ըմբշամարտը, ծանրամարտը, բռնցքամարտը, ինչպես և սպասվում էր ու մեր ցանկությունն է, զարգանում են: Իսկ մյուս մարզաձևերից աճը բասկետբոլում է ամենանկատելին: Իհարկե, կան մարզաձևեր, հատկապես ձմեռային մարզաձևերը, որոնց առումով դեռ կաղում ենք, դեռ այնքան էլ լավ չէ, բայց ունենք զարգացման ծրագրեր կամ ռազմավարություն, որի համաձայն կփորձենք իրավիճակը շտկել այդ մարզաձևերում նույնպես:

**– Ձեր գնահատականը հանրակրթական դպրոցներում և առհասարակ կրթական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման դրվածքի մասին:**

**Ցավոք, առանձին դեպքերում բախվում ենք իրավիճակների, երբ այդ առարկայի հանդեպ վերաբերմունքը հեռու է լրջությունից: Հաճախ էլ այդ առարկայի դասաժամերը տրվում են այլ առարկաների մասնագետների՝ նրանց ժամաքանակի պակասը լրացնելու նպատակով:**

**Մյուս կողմից՝ հանրակրթական դպրոցներում ֆիզկուլտուրայի դասաժամերը շաբաթական երեք ժամ են, տարրական դպրոցում՝ երկու ժամ, տարվա կտրվածքով՝ համապատասխանաբար 102 և 68 ժամ: Ժամերը բաշխվում են ըստ մարզաձևերի: Ընդ որում՝ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր լինում (տարբեր պատճառներով) դասապրոցեսն իրականացնել ըստ ծրագրի:**

**Ի՞նչ անել, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկան դասավանդվի ոչ ձևականորեն, ըստ պետական ծրագրի ու կարգի՝ նկատի ունենալով նաև, որ յուրաքանչյուր մարզաձև ունի իր առանձնահատկությունները:**

– Շատ բան է պետք փոխել, բայց ամենաառաջինը ենթակառուցվածքներն են, երբ նոր կառուցվող դպրոցներն ունենան միջոցներ, հնարավորություններ՝ սպորտը զարգացնելու, ֆիզիկուլտուրա առարկան նորմալ, պատշաճ դասավանդելու: Այն ժամանակ արդեն ավելի բազմազան կդարձնենք զարգացման ծրագրերը: Այս պահին, մասնավորապես, քննարկվում է բասկետբոլի Junior NBA ծրագրի ներդրումը դպրոցներում: Եվ միայն դա չէ, այլ մարզաձևերի առնչությամբ նույնպես քննարկումներ են արվում: Օրինակ, դահուկային սպորտ ունենք, լեռնամագլցում ունենք, ձյուդո ունենք, ֆուտբոլ ունենք և այլն: Դասի ժամանակ կիրականացնենք այդ ծրագրերը: Ենթադրենք ձյուդոն են դարձնում դասաժամի առարկան... Եվ դրանով ավելի լիարժեք ու հագեցած է դառնում դասաժամը:

**– Վերջերս մեր խորհրդարանը ոչ նպատակահարմար գտավ պատվավոր կոչումների հետագա շնորհումը:**

**Հետաքրքիր է՝ մարզական կոչումները նույնպե՞ս կվերացվեն. ՀՀ վաստակավոր մարզիչ, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ:**

**Միջազգային կոչումները, որոնք շնորհում են համապատասխան մարզական ֆեդերացիաները, թողնենք մի կողմ, քանզի դա հանրապետության իրավասությունից դուրս է:**

– Որոշ կոչումներ կվերացվեն, որոշ կոչումներ կմնան, մասնավորապես սպորտի վարպետ, միջազգային կարգի

սպորտի վարպետ, սպորտի վաստակավոր վարպետ, այդ կոչումները կմնան, բայց այն կոչումները, որոնք ներառված են այդ նույն որոշման մեջ, այսինքն՝ վաստակավոր մարզիչ, գործիչ, դրանք դուրս կգան: Եթե սա մի նախարարություն է, ուրեմն ծրագրերը նույնն են լինելու բոլորի համար: Այնպես որ՝ եթե մշակույթում, մյուս բնագավառներում դրանք հանվում են, հանվում են նաև սպորտում:

**– Վերջին տարիներին հանրապետությունում սահմանվել է նոր կարգ մանկավարժի, մարզչի որակավորման համար: Եվ այդ ատեստավորման արդյունքների հիման վրա էլ սահմանվում է յուրաքանչյուրի դրույքաչափը:**

**Մինչդեռ՝ կան վաստակավոր մարզիչներ, ովքեր իրենց գործունեության ընթացքում պատրաստել են սպորտի տասնյակ վարպետներ, Հայաստանի չեմպիոններ, միջազգային խաղերի, Եվրոպայի և աշխարհի մասշտաբով հաղթողներ, մրցանակակիրներ, ովքեր (տարիքի պատճառով) ի վիճակի չեն անգիր անել ատեստացիայի ընթացքում առաջադրվող հարցերի պատասխանները և հաղթահարել նվազագույն շեմը: Իսկ երիտասարդ մասնագետը, ով դեռևս վաստակ չունի, փորձ չունի, պատասխանում է հարցերին և, ի վերջո, ավելի բարձր աշխատավարձ ստանում: Ընդ որում՝ դա մեր նկատառումը չէ, այլ բազմաթիվ մարզիչների:**

**Ի՞նչ է ստացվում՝ այն մասնագետները, ովքեր այսօր էլ նպաստում են հավաքականների կազմի համալրմանը, հանրապետության մարզական վարկանիշն աշխարհում բարձր պահելուն, ավելի ցածր աշխատավարձ են ստանում, քան նրանք, ովքեր դեռևս որոշիչ դերակատարություն չունեն ոլորտում:**

**Արդյո՞ք ողջամիտ է այդ գործելակերպը: Իսկ միգուցե ատեստավորման ժամանակ հիմք ընդունվի յուրաքանչյուրի ավանդը մարզական ոլորտում:**

– Վստահեցնում եմ՝ անգիր անելու խնդիր չկա: Եթե մարզիչն իսկապես բազմափորձ է և ունի պրակտիկ գիտելիքներ, ատեստացիան կարող է անցնել: Ինչ վերաբերում է այս պահին, թե ինչպես է գնահատվում նրա վաստակը, ապա ասեմ, որ յուրաքանչյուր չեմպիոնի պատրաստելու համար նա առանձին վարձատրվում է զանազան պետական ծրագրերով: Այնպես որ՝ այդ վաստակը չի ուրացվում ու չի մոռացվում, ատեստացիան այլ բան է, պահանջվում են այլ որակներ, դրա համար անհրաժեշտ է, որ դրան նույնպես պատրաստ լինեն, որպեսզի ավելի շատ վարձատրվեն: Բայց այլ ծրագրերով արդեն ինքը, եթե լավ մարզիկ ունի պատրաստած, լավ մարզիչ է, շատ գումար է ստանում:

**– Հանրապետության գրեթե բոլոր մարզադաշտերը սեփականաշնորհվել են: Սակայն այդ թվում կան մարզադաշտեր, որտեղ տասնամյակներ ի վեր ներդրումներ չեն կատարվել, անմխիթար վիճակում են և վաղուց իրենց նպատակին չեն ծառայում: Ի՞նչ անել:**

– Այսօր, այս պահին պետական այդպիսի մարզադաշտ չկա: Եթե սեփականաշնորհված է՝ արդեն այդտեղ բան չենք կարող անել: Ինչ վերաբերում է մասնավորեցումից հետո ստեղծված իրավիճակին, ապա պետությունը չի կարող դրան միջամտել: Բայց հիմա մենք՝ ֆուտբոլի ֆեդերացիայի հետ, մշակում և իրագործում ենք որոշակի ծրագրեր՝ օժանդակելու նպատակով: Կառուցվելու են նոր մարզադահլիճներ, նոր մարզադաշտեր, եղածներին էլ՝ հնարավորության դեպքում, օգնելու ենք, որ կարողանան վերականգնել իրենց ներուժը:

**– Այունիքի մարզը (գրեթե ամբողջությամբ) սահմանամերձ է: Մենք ծանոթ ենք սահմանամերձի կարգավիճակ ունեցող համայնքների համար սահմանված արտոնություններին: Չե՞ք կարծում, որ սահմանված արտոնությունները պետք է լրացվեն մարզչին, մանկավարժին տրվելիք արտոնություններով:**

– Այդ հարցը քննարկման կարիք ունի, հուսամ՝ դրա պատասխանը շուտով կունենանք:

**– Մարզադպրոցների աշխատակիցների սոցիալական պաշտպանության մասին... Ե՛վ ՊՈԱԿ-ի կարգավիճակ ունեցող մարզադպրոցը, և՛ ՀՈԱԿ-ի կարգավիճակ ունեցող մարզադպրոցը նույն գործն են անում: Այդ դեպքում ինչու՞ պետք է ՊՈԱԿ-ի կարգավիճակ ունեցող մարզադպրոցի մարզիչն օգտվի պետական սոցիալական աջակցությունից, իսկ ՀՈԱԿ-ի մարզիչը՝ ոչ:**

– Ուրեմն, միանշանակ չէ այդ ամենը, ես ձեզ վստահեցնում եմ՝ կան ՀՈԱԿ-ներ, որոնք ՊՈԱԿ-ից էլ բարձր աշխատավարձ են տալիս: Մասնավորապես, Երևանի քաղաքապետարանի մարզադպրոցներում շատ բարձր աշխատավարձ է սահմանված, շատ լավ վաստակում են, այստեղ (այսպես ասած) տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ ծրագիրն է կարևոր: Կան, որ շատ լավ են անում այդ ամենը, որոշներն էլ լավ չեն անում, մենք ի՞նչ անենք:

**– Մարդկանց հետաքրքրում են ՀՀ զինված ուժերում գոյություն ունեցող սպորտային վաշտի ձևավորման գործող սկզբունքները, ինչը ոչ միանշանակ է ընդունվում: Գուցե լո՞ւյս սփռեք խնդրո առարկայի վրա:**

– Այսպես ասեմ՝ ամեն ինչ նորմալ է ընդունվում, եթե նորմալ է ներկայացվում: Այնպես որ՝ թող իզուր տեղը խնդիրներ չստեղծեն: Բանն այն է, թե ով ինչպես է փորձում վերարտադրել, հասկանալ այդ ամենը: Իրականում որևէ խնդիր չկա, եթե լավ նայեք՝ ամեն ինչ նորմալ է: Եվ մենք պարբերաբար ավելի ու ավելի անթերի ենք փորձում դարձնել: Եթե որևէ խնդիր նկատում ենք, արագորեն այն փոխում ենք:

**– Ֆիզիկական կուլտուրայի դասավանդման մասնագետների, սպորտի տարբեր ձևերի համար պրոֆեսիոնալ մարզիչների պատրաստման դրվածքը հանրապետությունում: Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտից բացի ի՞նչ ունենք հանրապետությունում:**

– Հանրապետությունում ունենք Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ, որը նույնպես պատրաստում է մարզիչներ, ֆիզկուլտուրա առարկայի ուսուցիչներ: Պետական քոլեջն այդ գործառույթն իրականացնում է և բավական լավ:

**– Մանկական սպորտի վիճակը հանրապետությունում, ի՞նչ ծրագրեր ունեք այն զարգացնելու ուղղությամբ:**

**Դպրոցական տարիքի երեխաների շրջանում ժամանակին ռազմամարզական, ռազմահայրենասիրական խաղեր էին կազմակերպվում հանրապետության մասշտաբով, տարածաշրջանների մասշտաբով:**

**Արդյո՞ք դրանց նոր շունչ տալու, վերականգնելու կարիք չկա:**

– Հիմա կան բազմաթիվ նոր ծրագրեր, մասնավորապես «Վարչապետի գավաթ» մի քանի մարզաձևից, որ մենք պարբերաբար անցկացրել ենք մեծահասակների համար: Հիմա, որպեսզի այն ավելի արդյունավետ դառնա, ընտրելու ենք նաև դպրոցականների միջավայրը: Եվ այդ դեպքում շատ ավելի վստահ ենք, որ լավ կլինեն սեղանի թենիսն ու հեծանիվը: Մինչ այդ էլ ունեինք դպրոցականների թիմային խճուղավազք, այնպես որ՝ բավական շատ են, և վստահ ենք, որ ինքն իր ազդեցությունը կունենա, իր դրական խոսքը կասի:

**– Մարզական բազայի և հնարավորությունների մասին... Գորիսի օրինակը. 150 տարվա քաղաքում չկա ու չի եղել լողավազան:**

**Գրեթե ոչինչ չկա աթլետիկայի համար:**

**Ֆուտբոլային հարուստ ավանդույթներ ունեցող քաղաքում տարիներ շարունակ չի հիմնանորոգվում անմխիթար վիճակում հայտնված մարզադաշտը:**

**Գործում է երկու մարզադպ-**

**Կրոց, երկուսն էլ՝ կարիքների մեջ խեղդված:**

**Ի՞նչ անել:**

– Վարչապետի անմիջական հրահանգով ենթակառուցվածքների ծրագիր ենք իրականացնում, Գորիսում նույնպես նախատեսել ենք կառուցել ֆիտնես կենտրոն ու լողավազան:

**– Մարզական մամուլ՝ ֆիզիկական կուլտուրան և սպորտը ներկայացնող լրատվամիջոցներ, սոցիալական հարթակներ...**

**Հետաքրքիր ավանդույթներ ունենք՝ «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթը, «Շախմատային Հայաստան» հանդեսը, այլ պարբերականներում գործող մարզական այունակները: Ի՞նչ ունենք այսօր:**

– Էլեկտրոնային հարթակում բազմաթիվ են այդ լրատվամիջոցները, նաև շատ են հեռուստաալիքները, որոնք իրենց հաղորդումների ցանցում ունեն մարզական լուրեր և զանազան սպորտային հաղորդումներ, այնպես որ՝ այս բացը համարում ենք լրացված:

**– Մարզական մրցումներն ազգային մասշտաբով, առավել ուշագրավ մրցումները հանրապետությունում, մեր մարզական օրացույցում տարվա ընթացքում նախատեսվող և անցկացվող մրցումները:**

**Մեզ հաճախ են հարցնում՝ մի՞թե հնարավոր չէ ազգային մրցումների անցկացման վայրն ընտրել ոչ միայն մայրաքաղաքը, այլև մարզերը, այդ թվում (բնականաբար) Այունիքը:**

**Պատասխանը (ենթադրում ենք) այսպես կլինի՝ համապատասխան պայմաններ չկան: Բայց մինչև ե՞րբ:**

– Ուրեմն, ինչպես գիտեք «ՀՀ վարչապետի գավաթ» շարքի բոլոր մրցումներն անցկացվում են մարզերում: Այունիքում առայժմ այդպիսի մրցում չկա, բայց շուտով նախատեսում ենք շատ լուրջ մրցում՝ «Tour the Armenia» հեծանվարշավը, որը համաշխարհային մակարդակի մրցում կլինի: Ինչ վերաբերում է այլ պրոֆեսիոնալ մրցումներին, ապա ասեմ, որ մենք օգնել ենք քաղաքապետարաններին: Մասնավորապես՝ Կապանում նվիրել ենք սպորտային մարմնամարզության թանկարժեք գորգ: Նախանշված ծրագրով էլի նոր գույքեր ենք հատկացնելու: Պետական ծրագրում ընդգրկված է նաև Կապանի քաղաքային մարզադաշտը սեփականատիրոջից հետ գնելու գործընթացը և այն համայնքին կամ ֆեդերացիային հատկացնելու նպատակով: Վարչապետի հրահանգով բազմաֆունկցիոնալ մարզադահլիճների կառուցումը հնարավորություն կտա Այունիքում նույնպես ունենալ ենթակառուցվածք և ապագայում այն օգտագործել հանրապետական ու միջազգային կարգի մրցումներ անցկացնելու համար:

**– Մարզադաշտ, մարզական կառույցներ՝ ներկայիս ընկալմամբ. Ի՞նչ ունենք Այունիքում:**

**Կուզենայինք ծանոթանալ ոլորտի ֆինանսավորման սկզբունքներին, այդ թվում՝ ըստ մարզերի, ասենք՝ Այունիքի օրինակով:**

– Ըստ մարզերի ֆինանսավորում չունենք, մենք ֆինանսավորում ենք ֆեդերացիաներին ու ծրագրերը, իսկ մարզերում ենթակառուցվածքներ ենք ստեղծելու, որին շուտով ականատես կլինեք:

**– Կապանում զարգացած է աթլետիկան, տեղի մարզադպրոցի սաները պարբերաբար մասնակցում են հանրապետական և միջազգային մրցումների: Մինչդեռ մարզումային պայմաններն անբավարար վիճակում են:**

**Արդյո՞ք ոլորտի զարգացման ծրագրերում կա նախատեսում՝ Կապանում աթլետիկական մանեժ կառուցելու վերաբերյալ:**

– Համագործակցում ենք Կապանի համայնքապետարանի հետ, օժանդակում ենք՝ մանեժ կառուցելու սուբվենցիոն ծրագրին: Այժմ այդ ծրագիրը պետգույքի կառավարման դաշտում է: Ամեն ինչ անում ենք, որ արագացնենք և սուբվենցիայի օգնությամբ Կապանում կառուցենք ձմեռային աթլետիկական մանեժ, որը կհամապատասխանի անգամ Եվրոպայի ձմեռային առաջնություն անցկացնելու պայմաններին:

**– Քաջարանում ԿԳՄՍ նախարարության ենթակայության ՊՈԱԿ-ն է գործում՝ «Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց»: Շենք չունի, պարապմունքներն անցկացվում են «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ համալիրում, հանրակրթական դպրոցների մարզադահլիճներում, Քաջարանի արհեստագործական ուսումնարանի մարզադահլիճում:**

**Միևնույն ժամանակ՝ քաղաքի Լեռնագործների փողոցի № 16 շենքի առաջին հարկում ծանրամարտի դահլիճն է՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում գտնվող: Տարիներ շարունակ փորձ է արվում այդ տարածքը հատկացնել մարզադպրոցին, բայց ոչինչ չի ստացվում:**

**Մյուս կողմից՝ բանվորական այդ խոշոր միջավայրում լողավազան չկա: Ձեր նկատառումները քաջարանյան հիմնախնդիրների վերաբերյալ:**

– Մենք քննարկումներ ենք ունեցել Քաջարանի համայնքապետարանի հետ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային ընկերության ղեկավարության հետ: Ասում էին, որ շատ բարձր կարգի սպորտային համալիր են նախատեսում կառուցել, և մենք հույս ունենք, որ այդ համալիրը կկառուցվի, ու նման խնդիրները կվերանան: Բայց այդ ծրագիրն առայժմ չի իրականացվում... Բայց էլի պետք է նշեմ՝ մեր ենթակառուցվածքների ստեղծման ծրագրով բազմաֆունկցիոնալ սպորտային համալիրների կառուցմամբ այդ հարցերը համայնքներում կկարգավորենք:

**– Որքան էլ տարօրինակ է, բայց ուզում ենք փաստել՝ պետական մակարդակով Մեղրիի տարածաշրջանում՝ մարզական առումով, ոչինչ չկա: Միևնույն ժամանակ՝ վերջին տարիներին այդ համայնքում պետական որևէ ծրագիր՝ ոլորտին առնչվող, չի իրագործվել:**

**Կա միայն համայնքային ենթակայության «Մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ՝ սպորտային խմբակներով՝ ֆուտբոլ, ըմբշամարտ: Մարզադաշտ կա և՛ Մեղրիում, և՛ Ագարակում (համայնքային ենթակայության), բայց երկուսն էլ ծայրահեղ անմխիթար վիճակում են:**

**Ըստ էության չկա նաև համագործակցություն ԿԳՄՍ նախարարության ու Մեղրու համայնքային իշխանության միջև՝ մարզական ոլորտում: Ինչպե՞ս եք պատկերացնում իրավիճակի շտկումը:**

– Ցավոք, այսօր պետական միջոցառումներ չեն անցկացվում ոչ միայն Մեղրիում, այլ նաև Ստեփանավանում, Գավառում, Վարդենիսում, Ամասիայում, Արմավիրում և մյուս քաղաքներում կամ խոշորացված համայնքներում: Ընդհանրապես սպորտը բազմակենտրոն չէ: Ցավոք՝ ենթակառուցվածքներ չունենալու, ավանդույթներ չլինելու, դպրոցներ չունենալու պատճառով: Վերը նշված հարցերը, եթե կարողանանք կյանքի կոչել, ապա կունենանք ենթակառուցվածքներ, ու այդ քաղաքներում նույնպես կանցկացնենք միջոցառումներ:

**– Սիսիանում համեմատաբար լավ վիճակում են մարզադաշտը, մարզադպրոցը, բայց... Հրաշալի մի կառույց կա՝ մոտ տասը տարի առաջ կառուցված՝ փակ մարզադաշտը, որն Ազգային օլիմպիական կոմիտեին է պատկանում, բայց անտերության է մատնված՝ կարգավիճակի առումով:**

**Համայնքային իշխանությունն ուզում է այդ մարզադահլիճի հիման վրա ՀՈԱԿ ստեղծել ու այդկերպ եղած հնարավորություններն օգտագործել ավելի արդյունավետ: Ինչո՞ւ է ձգձգվում խնդրի լուծումը:**

– Սիսիանի այդ կառույցը հանձնելու ենք համայնքին, օլիմպիական կոմիտեն պատրաստ է այն նվիրել պետությանը, պետությունն էլ համայնքին է տալու, այնպես որ այն կլինի համայնքային և իր նպատակին կծառայի:

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

# Զանգվածային սպորտը՝ առողջ ապրելակերպի գրավական

*Սկիզբը՝ էջ 8*

– Ինչ վերաբերում է գումարի տրամադրմանը, դա պայմանավորված է տվյալ մրցմանը մասնակցող թիմերի թվաքանակով: Օրինակ՝ ֆուտբոլային մրցաշարը, որպես ամենամասսայական մարզաձև, ավելի շատ մասնակիցներ է ունենում: Սահմանված է մրցանակային ֆոնդ, և մրցանակային տեղեր գրաված-ները ֆինանսապես խրախուսվում են, ինչպես նաև պարգևատրվում գավաթով, պատվոգրով ու մեդալներով: Մրցման մասնակիցներին ապահովում ենք մարզահագուստով, ինչպես նաև որոշակի վարձատրություն են ստանում մրցավարները: Օրինակ՝ 2024 թվականի փետրվարի 12-ից ապրիլի 10-ը «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության մարզահամալիրում անցկացվեց մինի ֆուտբոլի մրցաշար՝ ինը թիմի մասնակցությամբ: Հաղթող դարձավ կոմբինատի տեխնիկական տնօրենության թիմը՝ խրախուսվելով 300 հազար դրամ պարգևավճարով, հաղթողներին հանձնվեց գավաթ, մեդալ և պատվոգիր, 2-րդ տեղում հանքաքարի ջարդման և տեղափոխման արտադրամասի թիմն էր (250 հազար դրամ պարգևավճար), 3-րդ-ում՝ անվտանգության դեպարտամենտի թիմը՝ 200 հազար դրամ: Այս անգամ խրախուսվեց նաև 4-րդ տեղը զբաղեցրած հարստացուցիչ ֆաբրիկայի թիմը՝ 100 հազար դրամ գումարով:

Վոլեյբոլի առաջնությունն անցկացվեց ապրիլի 22-ից մայիսի 23-ը: Ուշագրավ է, որ առաջին անգամ մրցաշարին մասնակցող Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի թիմը, որի կազմում էր ձեռնարկության գլխավոր տնօրեն Ալեքսանդր Բելյաևը, գրավեց երկրորդը տեղը: Մրցաշարի ավարտից հետո կազմակերպվեց ցուցադրական հանդիպում Քաջարանի և Ագարակի կոմբինատների միջև: Հաղթել է Քաջարանի կոմբինատի թիմը, բայց այս դեպքում, կարծում եմ մարզական արդյունքը ոչ մի նշանակություն չունի, կարևորը երևույթն է և այն մարզական մթնոլորտը, որ հանդիպման ժամանակ տիրում էր մարզահամալիրում: Մտածում ենք նաև խաղային մարզաձևերի՝ ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի մրցաշարեր կազմակերպելու մասին, որին մասնակցություն կունենան այլ հիմնարկ-ձեռնարկությունների թիմեր՝ նաև մայրաքաղաքից: Նման ձևաչափով մրցաշար չենք անցկացրել, միայն մեր շախմատիստներն են դրսում հանդես եկել: Ասեմ, որ կոմբինատի մինի ֆուտբոլի թիմը բավականին ուժեղ կազմ ունի, խաղացողներ կան, ովքեր նախկինում հանդես են եկել Կապանի «Գանձասար»-ում: Պարզապես ակտիվ սպորտը թողնելուց հետո աշխատանքի են անցել կոմբինատում: Շախմատիստներ ունենք, ովքեր ՖԻԴԵ-ի բարձր գործակից ունեն: Այս ամենի մեջ ինձ ուրախացնում է այն, որ երբ մի արտադրամաս հանդես է գալիս, նույն արտադրամասից 50-60 հոգի տրիբունայում տեղ են զբաղեցնում և ջերմեռանդորեն երկրպագում իրենց գործընկերներին: Համալիրում մարզական մթնոլորտ է տիրում, տրիբունաները լցված են լինում հանդիսականներով: Կառանձնացնեի կոմբինատի հանքաքարի ջարդման և տեղափոխման արտադրամասը, որտեղ երիտասարդները մեծ թիվ են կազմում և մարզական ավյունով լեցուն են:

**– «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության աշ-**

Այդ գործընթացը ձգվում է միայն տեղական ինքնակառավարման մարմնի՝ այսպես ասած ոչ հետևողականության պատճառով: Իրենք երկար ժամանակ չէին կարողանում ավագանու նիստ հրավիրել, վերջապես ավագանին ձևավորվել է, և այդ հարցը, կարծում եմ, շուտով կկարգավորվի:

**– Մարզի ֆուտբոլային ակումբներից երկուսը՝ «Սյունիք» և «Գանձասար», խաղում են հանրապետության ֆուտբոլային առաջնության առաջին խմբում և մրցաշարային աղյուսակի առաջատարներն են:**

**Սյունիքից ուրիշ ի՞նչ թիմ կամ ակումբ (այլ մարզաձևերից) կարող եք վկայակոչել:**

– Տպավորիչ է Սյունիքի քիքբոքսինգի դպրոցը, որը լավ արդյունքներ է ցույց տալիս, տպավորիչ է աթլետիկան, բավականին լավ արդյունքներ ունի, մյուս ասպարեզներում, ցավոք, ուշագրավ ոչինչ չունենք:

**– Մեր հանրապետության ներգրավվածությունը միջազգային ֆեդերացիաներում և կազմակերպություններում:**

– Սպորտի ռազմավարության մեջ, որ ընդունվեց 2023 թ. դեկտեմբերին, հստակ նշված է, որ ամեն ինչ արվելու է միջազգային ֆեդերացիաներում ու սպորտային կազմակերպություններում մեր ներկայությունն ամրապնդելու և ավելացնելու համար: Այդ ուղղությամբ փորձում ենք խթանել միջազգային մրցավարների աճը, ովքեր իրենց ֆեդերացիաների կողմից կսպասարկեն ամենաբարձր կարգի մրցումներ: Որոշ ֆեդերացիաներում անգամ գործկոմի անդամ ունենք, զանազան հանձնաժողովների անդամներ: Բավական լավ ենք ներկայացված ՎԱԴԱ-ում՝ հակադոպինգային գործակալությունում, իսկ ընդհանուր առմամբ, այո, ամեն ինչ անելու ենք ավելի ներկայացված լինելու համար:

**ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝**
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ**

**խատակիցների առողջ ապրելակերպին նպաստում է կոմբինատի մարզահամալիրը: Համառոտ ներկայացրեք մարզահամալիրի գործունեությունը: Որքան տեղյակ ենք, այնտեղ ծանրամարտի պարապմունքներն արդյունավետ դարձնելու համար վերակառուցում պիտի արվի:**

– Նախ նշեմ, որ մարզահամալիրը վերջին անգամ նորոգվել է 2011 թվականին, առաջիկայում նորից նորոգման աշխատանքներ են նախատեսված: Կուզեի նշել, որ արդիականացման խնդիր ունի ծանրամարտի հարթակը, և դա կլինի առաջիկայում: Ասեմ, որ մարզահամալիրում պարապում է ինը խմբակ՝ ծանրամարտ, շախմատ, վոլեյբոլ, բասկետբոլ, թաեքվոնդո, կուդո: Մենք ընդհանրապես աջակցող դերում ենք:

**– Որքան տեղյակ ենք, քաղաքային մարզադաշտում էլ լուրջ աշխատանքներ են կատարվում:**

– Դրանք ավարտական փուլում են, ասեմ՝ այդտեղ ընդամենը դաշտ էր: Բայց հիմա կլինեն հանդերձարաններ, մրցավարների համար՝ սենյակ, այլ ենթակառուցվածքներ: Պարզապես այդ խաղադաշտի չափերը միջազգային մասշտաբի չեն: Շատ հնարավոր է՝ եկող գարնանը լրիվ պատրաստ լինի: Վերանորոգման ավարտից հետո նախատեսել ենք մեծ ֆուտբոլային մրցաշար կազմակերպել:

**– Պարոն Սարգսյան, զգացվո՞ւմ է հետաքրքրությունը դեպի մասսայական սպորտը, հետևո՞ւմ են մարդիկ իրենց առողջ ապրելակերպին:**

– Երբ սկսեցինք առաջնություններ անցկացնել, որոշ մարզաձևերից մրցմանը մասնակցում էր չորս թիմ: Վերջին երեք

տարվա կտրվածքով մասնակցությունն էականորեն աճել է: Կոմբինատի վարչությունը, որ տարիներ ի վեր չէր մասնակցում, հիմա ոչ միայն մասնակցում է, այլև առաջին տեղ է գրավում: Մասսայական ապորտի հանդեպ հետաքրքրություն միանշանակ կա: Ամենամեծ արդյունքը, ինչպես արդեն նշեցի, մեր երկրպագուներն են: Մարզադահլիճում նստելու տեղ չի լինում: Բուռն երկրպագում են, նույնիսկ «հայհոյում» են մրցավարներին: Մեկն ասում է ճիշտ որոշում է կայացրել, մյուսը՝ չի համաձայնվում: Բայց դա է սպորտը, և այդ ամենն ինձ ուրախացնում է: Եթե մարդը սկսում է «հայհոյել», ուրեմն կլանված է խաղադաշտում տեղի ունեցող իրադարձություններով: Համենայն դեպս առաջընթացի միտում տեսնում եմ: Որքան շատ երիտասարդներ գան մարզադահլիճ, այնքան բոլորս շահելու ենք: Մարդ կա, ով մեկ ժամվա ընթացքում ծխում է ութ գլանակ: Կամ՝ երբ գալիս է մարզադահլիճ, միայն հանդիպման ընդմիջմանն է դուրս գալիս, մի գլանակ ծխում և շարունակում դիտել խաղը...

**– Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս մրցումների մասնակցությունը հնարավոր չէ առանց ֆինանսական աջակցության: Կոմբինատի արիկոմին նման հարցերով դիմո՞ւմ են:**

– Նման հարցերով զբաղվում է հիմնադրամը: Հարցին ստույգ կպատասխանեն կոմբինատի հիմնադրամի պատասխանատուները:

**– Պարոն Սարգսյան, քանի որ Դուք լավ տիրապետում եք թեմային, ի՞նչ կավելացնեիք ասվածին, ի՞նչ լրացումներ ունեք:**

– Առանձնապես ավելացնելու բան չունեմ: Շնորհակալ եմ արիկոմի գործունեությամբ հետաքրքրվելու և Սյունիքի մարզաշխարհին թերթի հատուկ համար նվիրելու համար:

**ՀԱՐՈՒՅՑԸ՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

## ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԵՆ ԳԻԼՈՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՆ

**Երկօրյա այցով Այունիքի մարզում էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը, նախարարության սպորտի քաղաքականության վարչության պետ Նարինե Շահբազյանը, նրա տեղակալ Դավիթ Բաղումյանը:**

# Կապանի մարզադաշտը կհամապատասխանեցվի միջազգային չափանիշներին

Դրանք նախ եղան Կապանի մարզադաշտում, որ կառավարության որոշմամբ ճանաչվել է հանրության նկատմամբ գերակա շահ, այնուհետև մարզկենտրոնի սպորտի պատասխանատուների հետ քննարկեցին Կապանի մարզադաշտի հետագա ճակատագրի հարցը:

Կարեն Գիլոյանը փոխանցեց, որ Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանի և ՀՊՄԿ կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանի հետ քննարկումներ է ունեցել, և հանգել են եզրակացության, որ մարզադաշտը լավագույնս կտնօրինի «Այունիք» ֆուտբոլային ակումբը: Բանախոսը նաև նշեց, որ պարտադիր պայման է լինելու Կապանի աթլետիկայի դպրոցի պահպանումը: Այդ առումով Կարեն Գիլոյանը նկատեց, որ ֆուտբոլային ակումբները սիրում են, որ ունենան զուտ ֆուտբոլային ստադիոն: Բայց կառավարության որոշմամբ ամրագրված է, որ աթլետիկայի մարզադպրոցն իր պարապմունքներն անցկացնելու է մարզադաշտում և օգտվելու է ակումբի որոշակի աջակցությունից:

Կապանում ֆուտբոլային մարզադաշտը կվերակառուցվի և կբերվի պատշաճ տեսքի՝ համապատասխանեցնելով միջազգային մրցումային չափանիշներին: Նշվեց նաև, որ Կապանի մարզադաշտի ենթակառուցվածքները ևս (տրիբունա, հանդերձարաններ, սանհանգույցներ) ունեն հիմնանորոգման կարիք: Եթե այն պատկանի «Այունիք» ֆուտբոլային ակումբին, որոշակի ներդրումների հնարավորություններ կլինի միջազգային ֆուտբոլային կազմակերպությունների՝ ՖԻՖԱ-ի կամ ՈՒԵՖԱ-ի կողմից, մոտավորապես 100 հազար եվրոյի աջակցություն կլինի, ինչը կուղղվի խաղադաշտի՝ բոլորովին նոր խոտածածկ ունենալուն:

Այս ամենով հանդերձ՝ մարզադաշտը կծառայի նաև համայնքապետարանին՝ մարզադաշտում սպորտային միջոցառումներ անցկացնելու համար: Բայց պայմանով, որ դրանցից խաղադաշտի խոտածածկը չտուժի:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՖՈՒՏԲՈԼ

Կապանյան ֆուտբոլի վառ ներկայացուցիչներից է Գրիշա Համբարձումյանը, նույն ինքը՝ Գրիգորի Դավիդիչը, կամ պարզապես՝ Գիլոն: Հայկական ֆուտբոլի երախտավոր, ԽՍՀՄ սպորտի վարպետ, ՀՀ վաստակավոր մարզիչ, Կապան քաղաքի պատվավոր քաղաքացի:

# Գրիշա Համբարձումյան կամ Գիլո. կյանք՝ ապրած մեծ ֆուտբոլում

Ֆուտբոլ սկսեց խաղալ ծննդավայր Կապանում, 1949 թ. (առաջին մարզիչը՝ Մարլեն Ծատրյան), այնուհետև տեղափոխվեց Երևան՝ հանդես գալով տեղի «Իսկրա» թիմում: Հաջորդ տարում հանդես էր գալիս հանրապետության պատանեկան հավաքականում և «Աշխատանքային ռեզերվներ» կամավոր ընկերության թիմում:

Նրա երբեմնի խաղընկերներն ասում էին, որ Գրիշա Համբարձումյանի նման ֆուտբոլիստի՝ խաղադաշտում անցկացրած յուրաքանչյուր հանդիպում մի ուսումնական դաս էր երիտասարդ ֆուտբոլիստների համար: Միջին և ներկայիս սերնդի ֆուտբոլիստները, ավմ, չեն տեսել նրա խաղը, բայց Գիլոյի խաղընկերները և կաշվե գնդակի տարեց սիրահարները նրա ֆուտբոլային մենամարտերը բնորոշում էին մի մակդիրով՝ անթերի: Նաև հավելում էին, որ նրա ներկայությունը խաղադաշտում թիմակիցներին ինքնավստահություն էր ներշնչում, հավատ՝ սեփական ուժերի հանդեպ և ոգևորություն:

1959-ին նրան շնորհել են ԽՍՀՄ սպորտի վարպետի, իսկ 1961-ին՝ Խորհրդային Միության ֆուտբոլի «Լավագույն աջ պաշտպան» պատվավոր կոչումները: 1966-ին արժանացել է Հայաստանի վաստակավոր մարզչի կոչման:

Գիլոյի մարզական կյանքում շրջադարձային էր 1962 թվականը, երբ հրավիրեցին հանդես գալու ԽՍՀՄ հավաքականում: Ի դեպ, հայ ֆուտբոլիստներից առաջինն էր, որ հագավ երկրի ուժեղագույն թիմի մարզաշապիկը: Բարեբախտություն ունեցավ մարզվելու, շփվելու, խաղալու հանրաճանաչ ֆուտբոլիստներ Լև Յաշինի, Վիկտոր Պոնեդելնիկի, Վալերի Վորոնինի, Իգոր Չիսլենկոյի, Սլավա Մետրևելու, Միխայիլ Մեսխու և ուրշների հետ: Թիմը նախապատրաստվում էր մասնակցել 1962թ. Չիլիում կայանալիք ֆուտբոլի առաջնությանը: Վերջին պահին նրան չընդգրկեցին հավաքականի կազմում: Պատճառն ավելի քան պարզ էր: Ֆուտբոլում ևս հովանավորչությունը տեղ ուներ: Հավաքականում ընդգրկեցին երրորդ դարպասապահ վրացի Կոտրիկաձեին: Աստված չներեց անարդարությունը: Աջ պաշտպան Դուբինսկին հենց առաջին խաղում ջարդեց ոտքը: Պաշտպանությունում կատարված վերադասավորությունն ավելի շատ վնասեց գործին:

***«Գրիշան կյանքում շատ համեստ էր, իսկ խաղադաշտում անզիջում, ճարպիկ ու ճկուն ֆուտբոլիստ: Հաճախ, երբ վտանգը չեզոքացնելու համար դուրս էի գալիս դարպասից, Գրիշան իսկույն զբաղեցնում էր իմ տեղը, փրկում վերահաս գոլից՝ թռիչք հիշեցնող աներևակայելի ցատկի շնորհիվ: Գրիշան ոտքը հասցնում էր դարպասի վերին ձողին: Ոչ ոք չէր կարող Գրիշայի հետ մրցել երկրորդ հարկում», – ժամանակին նման կարծիք է հայտնել հայկական ֆուտբոլի ևս մեկ լեգենդ, սպորտի վաստակավոր վարպետ Հարություն Քեհեյանը:***

Ի վերջո ԽՍՀՄ հավաքականը, պարտություն պարտության հետևից կրելով, դուրս մնաց պայքարի առաջին իսկ փուլից: Հետագայում հավաքականի մարզիչները խոստովանեցին, որ մեծագույն սխալ են թույլ տվել՝ Գրիշա Համբարձումյանին չընդգրկելով հավաքականում:

**«Գրիշան կյանքում շատ համեստ էր, իսկ խաղադաշտում անզիջում, ճարպիկ ու ճկուն ֆուտբոլիստ: Հաճախ, երբ վտանգը չեզոքացնելու համար դուրս էի գալիս դարպասից, Գրիշան իսկույն զբաղեցնում էր իմ տեղը, փրկում վերահաս գոլից՝ թռիչք հիշեցնող աներևակայելի ցատկի շնորհիվ: Գրիշան ոտքը հասցնում էր դարպասի վերին ձողին: Ոչ ոք չէր կարող Գրիշայի հետ մրցել երկրորդ հարկում», –** ժամանակին նման կարծիք է հայտնել հայկական ֆուտբոլի ևս մեկ լեգենդ, սպորտի վաստակավոր վարպետ Հարություն Քեհեյանը:

1963 թվականին նրա տաղանդի շնորհիվ «Լեռնագործ»-ը նվաճեց ֆուտբոլի Հայաստանի գավաթը (որպես խաղացող և մարզիչ):

Մարզաձևին հրաժեշտ տվեց, երբ արդեն խաղում էր հայրենի «Լեռնագործ» թիմում: Իսկ 1964-ին անցավ մարզչական աշխատանքի: Կյանքի վերջին տարիներին, թեև պատկառելի տարիքին, նրան վստահվել էր «Գանձասար» ակումբի գլխավոր գործադիր տնօրենի խորհրդականի պաշտոնը:

«Ֆուտբոլ +» թերթի հարցման արդյունքներով՝ Գրիգոր Համբարձումյանը ներառվել է 20-րդ դարի հայկական ֆուտբոլի 10 լավագույն ֆուտբոլիստների թվում:

Մեր հայրենակիցն ընդգրկվել է նաև 20-րդ դարի Հայաստանի խորհրդանշական հավաքականի կազմում, որը հետևյալ պատկերն է ներկայացնում՝ Սերգեյ Զատիկյան, Մանուկ Սեմերջյան, Ալեքսանդր Կովալենկո, Գրիգոր Համբարձումյան, Արկադի Անդրեասյան, Խորեն Հովհաննիսյան, Հովհաննես Զանազանյան, Հարություն Քեհեյան, Նիկոլայ Ղազարյան, Էդուարդ Մարգարով, Սարգիս Հովիվյան:



2001 թվականին «Այունյաց աշխարհ» թերթում ակնարկ էի գրել Գրիշա Համբարձումյանի մասին «Կյանք՝ ապրած մեծ ֆուտբոլում» վերնագրով: Հայկական ֆուտբոլի երախտավորից փորձում էի ճշտել, թե հանրապետությունում ֆուտբոլը կարո՞ղ է վերածնունդ ապրել, կկրկնվի, արդյո՞ք, «Արարատ-73»-ի ֆուտբոլային տրիումֆը:

**– Մեծ կասկած ունեմ, ֆուտբոլային գործի գլխին պիտի կանգնեն նրանք, ովքեր կյանքը ֆուտբոլում են անցկացրել,** – կարճ կապեց նա:

Ցավոք, երկու տասնամյակ անց երևույթը հրատապությունը չի կորցրել նաև մեր ժամանակներում:

Համբարձումյանները մարզական գերդաստան են: Առանձին ներկայացնելու թեմա է Գրիգոր Դավիդիչի որդու կենսագրությունը: Զրացատկի Եվրոպայի կրկնակի չեմպիոն, երեք օլիմպիադայի մասնակից, Մոսկվայի օլիմպիադայի (1980 թ.) բրոնզե մեդալակիր Դավիթ Համբարձումյանը, ցավոք վաղ հեռացավ՝ (35 տարեկանում) երկրային կյանքից:

Գրիգոր Դավիթի Համբարձումյանը երկրային կյանքին հրաժեշտ է տվել 2014 թվականին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՖՈՒՏԲՈԼ

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

*1966 թվական, «Լեռնագործ», Կապան*

# Մի լուսանկարի պատմություն

Լուսանկարը, անկասկած, կապանցի տարեց ֆուտբոլասերների հոգում հուշեր կարթնացնի: Այստեղ 1960-ական թվականների կապանյան ֆուտբոլի նվիրյալներն են՝ ավագի թևկապով Ռազմիկ Սահակյանն է, նրա աջ կողմում Ֆելիքս Ավետիսյանը, կանգնած են Էռնեստ Հովսեփյանը, Համլետ Լիսակը (Չախո մականունով), Ռուդիկ Ավանեսյանը, ով հետագայում հաջողությամբ ֆուտբոլիստի կարիերան շարունակեց հանրապետության գլխավոր թիմում՝ Երևանի «Արարատում»: Ոչ բոլորի անձը հնարավոր եղավ պարզել:

Լուսանկարը թվագրված է՝ 1966 թվական: Նաև հիշենք, որ առաջին լուրջ հաջողությանը Ղափանի «Լեռնագործ»-ը հասել է 1963 թվականին, երբ Հայաստանի ֆուտբոլի գավաթի խաղարկության եզրափակչում հաղթեց Լենինականի «Տեքստիլին»՝ նվաճելով ոչ միայն պատվավոր ավարը, այլև իրավունք ստացավ մասնակցել Խորհրդային Միության ֆուտբոլի «Բ» խմբի առաջնությանը:

Հետո մի այլ հաջողություն եղավ. «Բ» խմբի առաջնությունում թիմը գրավեց մրցանակային երկրորդ տեղը, ինչի համար բոլոր ֆուտբոլիստներն արժանացան «ԽՍՀՄ սպորտի վարպետ»-ի կոչմանը: Ի դեպ, լուսանկարի ներքևի հատվածում Ֆելիքս Ավետիսյանի «Սպորտի վարպետ»-ի վկայականն է՝ տրված 1967 թվականի նոյեմբերին: Կնշանակի, որ հենց այդ թվականին է թիմը մրցանակային տեղ գրավել:

Անցյալ դարի 1960-70-ական թվականների կապանյան ֆուտբոլի հաջողություններից միայն հուշեր են մնացել, և այն փաստը, որ երբ «Լեռնագործ»-ը հանդես էր գալիս սեփական հարկի տակ, տրիբունաները (այն ժամանակ երկու տրիբունա կար) լեփ-լեցուն էին հանդիսականներով: Լեռնագործների քաղաքում ֆուտբոլային յուրաքանչյուր հանդիպում, իրոք, տոն էր դառնում:

Վերջերս «Մի լուսանկարի պատմություն» գրառմանս հետ Ղափանի «Լեռնագործ»-ի (1966 թվական) լուսանկարն էր: Նաև նշել էի, որ լուսանկարում պատկերված ոչ բոլոր ֆուտբոլիստների անձը հնարավոր եղավ ճշտել: Եվ ահա ֆեյսբուքյան էջիս գրառում եկավ. նկարում կանգնածների մեջտեղում հայրս է՝ Ռուբեն Հովսեփյանը: Իսկ հայտնողը ոչ այլ ոք էր, եթե ոչ Հայաստանի հավաքականի լավագույն ֆուտբոլիստներից Սարգիս Հովսեփյանը, ով հավաքականի ստեղծման օրվանից խաղացել է ազգային հավաքականում, յոթ-ութ տարի կրել Հայաստանի գլխավոր թիմի ավագի թևկապը:

Ի դեպ, երկարատև ֆուտբոլային կարիերիայի ընթացքում հաջողությամբ հանդես է եկել նաև Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» կազմում, նվաճել Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքի ֆուտբոլային ֆանատների համակրանքը:

Հաճելի էր իմանալ, որ Հայաստանի հավաքականում ամենաշատ խաղեր անցկացրած ֆուտբոլիստի հայրը ժամանակին խաղացել է Ղափանի «Լեռնագործ»-ում:

Ցավոք, Ռուբեն Հովսեփյանն արդեն հրաժեշտ է տվել երկրային կյանքին, հետաքրքիր կլիներ լսել և գրառել նրա հուշերը կապանյան թիմում նրա անցկացրած տարիներից:

"

ՖՈՒՏԲՈԼ

# **Հետադարձ հայացք.** մեղրեցի վետերան ֆուտբոլիստները Մոսկվայում

**Յուրաքանչյուր բարեկամական հանդիպում, երբ այն դառնում է ավանդական, վերածվում է տոնի, գեղեցիկի ու բարու հաղթանակի: Անցած տարի էր, (1990 թվականին, խմբ.) երբ Մեղրիում հյուրընկալվեցին Մոսկվայի Լենինի անվան կենտրոնական մարզադաշտի «Լուժնիկի» ֆուտբոլային թիմի մարզիկները՝ մեր հայրենակից Ռաֆիկ Օհանյանի գլխավորությամբ: Նա այդ մարզադաշտի փոքր համալիրի բաժնի վարիչն է: Ֆուտբոլին անմնացորդ նվիրված, նրանով ապրող, գոյությունն իմաստավորող մի մարդ, ով մշտական կապի մեջ է իր ծննդավայրի հետ:**

Եվ ահա, պատասխան այցով 1990 թ. հուլիսի 23-31-ը Մոսկվայում հյուրընկալվեցին Մեղրիի վետերան ֆուտբոլիստները: Միջոցառումը կազմակերպել էր քաղաքի ֆուտբոլի ֆեդերացիան: Պատմում է պատվիրակության ղեկավար, քաղաքային խորհրդի գործկոմի նախագահ, վետերան ֆուտբոլիստ Թ. Պապիկյանը:

– Մոսկվա հասանք հուլիսի 23-ին: Պատվիրակության կազմում ընդգրկված էին տարբեր մասնագիտությունների, զբաղմունքների (շինարարներ, կոլտնտեսականներ, ղեկավար աշխատողներ և այլն) տեր մարդիկ (19 հոգի), որոնք անցած տարիներին խաղացել էին մեր քաղաքային թիմերում, ինչպես նաև շրջանի հավաքականի կազմում: Նպատակը մեկն էր՝ ավանդական դարձնել ֆուտբոլային ընկերական հանդիպումները Մոսկվայի Լուժնիկի մարզադաշտի համանուն թիմի հետ: Մեր հայրենակից Ռաֆիկ Օհանյանի ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ երկկողմանի խաղ անցկացնել «Լուժնիկիի» մեծ մարզադաշտում: Ասեմ, որ դա բավականին դժվար խնդիր է, անմիջապես գտնվում է վերադասի տնօրինության տակ: Նույնիսկ պրոֆեսիոնալ թիմերին չի թույլատրվում այստեղ մարզումներ անցկացնել: Հանդիպումն այդ թիմի հետ կայացավ հուլիսի 25-ին: Թեպետ անձրև էր մաղում, խաղադաշտը թաց էր, սակայն խաղը դիտարժան անցավ: Տղաները խաղում էին խանդավառված, աշխատում կարելվույն չափով ցույց տալ տեխնիկական գրագետ խաղ: Այն ավարտվեց մոսկվացիների հաղթանակով (4:2): Նշեմ, որ «Լուժնիկի» թիմում են խաղում Աթենքի «Օլիմպիակոս» ակումբի նախկին խաղացող Ա. Գալոսը/ և ԲԿՄԱ-ի նախկին պաշտպան Ս. Շարապովը:

Այստեղ ուզում եմ նշել, որ շրջանային «Սևան» կամավոր մարզական ընկերության նախկին նախագահ Ռաֆիկ Օհանյանը, ով մարդկային բարձր հատկանիշներով օժտված մի անձնավորություն է, և նրա գործընկերները, Լուժնիկիի արհմիության կոմիտեի նախագահ Սապունովը, թիմի բժիշկ Յուրովը, մարզադաշտի էլեկտրացանցի պետ Կուրինսկին, բանվոր Գրոմովը, մեծ խաղադաշտի պարետ Տյուտինն ամեն ինչ արեցին, որպեսզի մեր մոսկովյան օրերն անցնեն բովանդակալից, հետաքրքիր: Էքսկուրսիաներ կազմակերպվեցին, ծանոթացանք քաղաքի տեսարժան վայրերին: Այցելեցինք խորհրդային սպորտի թանգարան: Համապատասխան ցուցատեղերում տեղ էին զբաղեցրել հանրահայտ հոկեյիստ Վ. Խառլամովի անձնական իրերը, մականը, մեծ ֆուտբոլիստ Լ. Յաշինի «Ոսկե գնդակը»: Եղանք Նովովագանկովյան գերեզմանոցում և մեր հարգանքի տուրքը մատուցեցինք մեծ մարզիկներին: Ծաղիկներ դրեցինք նաև Վ. Վիսոցկու և Ս. Եսենինի գերեզմաններին: Մի խոսքով, մեզ համար այդ օրերը վերածվեցին մեծ տոնի:

Ասեմ նաև, որ ընդունելություն կազմակերպվեց Լուժնիկի մարզադաշտի գլխավոր տնօրեն Վ. Այյոշինի մոտ: Նա հուշանվերներ հանձնեց մեզ, հետաքրքրվեց Հայաստանի ներկա իրավիճակով, մասնավորապես Մեղրիի ու նրա մարզական կյանքով: Նշեց, որ նման հանդիպումները պետք է դառնան ավանդական: Մեր կողմից նույնպես հուշանվերներ հանձնվեցին նրան, մյուս աշխատակիցներին, հանդես եկանք շնորհակալական խոսքով:

Տեղին եմ համարում պատմել մի ուրախ միջադեպի մասին, որը տեղի ունեցավ «Սպարտակ» - «Դնեպր» հանդիպման ժամանակ (մեզ հրավիրել էին դիտելու այդ խաղը): Մեր խմբին մոտեցավ մի մարզասեր և Սուրեն Տեր-Զաքարյանից (շփոթելով նրան Խորեն Հովհաննիսյանի հետ) խնդրեց ինքնագիր: Մարդը շփոթվել էր նմանությունից: Այստեղ էլ հենց հանդիպեցինք մեր հայրենակից, «Արարատի» նախկին գլխավոր մարզիչ Ն. Սիմոնյանին՝ Լ. Օզերովի, նախկին հանրահայտ ֆուտբոլիստ Ի. Նետտոյի հետ:

Նրանք ևս հետաքրքրվեցին Հայաստանով ու մեր գողտրիկ անկյունով:

Վերջում ցանկանում եմ ավելացնել, որ շրջանային մարզական կոմիտեն պետք է մեծ ուշադրություն դարձնի, որպեսզի տեղում ունենանք գործող ֆուտբոլային թիմ, որը հնարավորություն ունենա շրջանը ներկայացնելու հանրապետության առաջնություններում: Ունենք քաղաքային լավ մարզադաշտ: Պարտավոր ենք ունենալու նաև լավ ֆուտբոլային թիմ: Սրա վրա եմ հրավիրում համապատասխան մարմինների ուշադրությունը:

Վերջացնեմ մեր սիրելի Ռաֆիկի խոսքերով՝ *«Իմ երազանքն էր, որ Մեղրիի թիմը խաղար Լուժնիկիի մեծ մարզադաշտում: Այսօր իրականացավ իմ ցանկությունը, և դրա համար շատ երջանիկ եմ»*:

**Ն. ԱՂԱԲԵԿՅԱՆ**
**«ԱՐԱՔՍ»**
**11 ՕԳՈՍՏՈՍԻ 1990 Թ.**

ՖՈՒՏԲՈԼ

# Այդ ինքնատիպ հարձակվողը՝ Միշա Մանուչարյան

**Ֆուտբոլիստներ կան, որոնց նաև մարզաշապիկի համարով են ճանաչում: Ֆուտբոլի արքա Պելեն 10-համարի մարզաշապիկով էր հանդես գալիս, Մարադոնան՝ նույնպես: Իսպանական «Ռեալի» լեգենդ Ռաուլը «7» համարի մարզաշապիկով, և թիմին հրաժեշտ տալուց հետո ակումբը որոշել է՝ այդ համարով թիմում այլևս ոչ մեկը հանդես չի գալու:**

Կապանյան ֆուտբոլի վառ անհատականություններից մեկը՝ Միշա Մանուչարյանը, միշտ եղել է կենտրոնական հարձակվող և ֆուտբոլային ողջ կարիերայի ընթացքում կրել է «9» համարի մարզաշապիկ: Այդ առումով հիշում էր. *««9» համարի համազգեստն ինձ տվել է առաջին մարզիչս՝ Ալբերտ Ստեփանյանը: 40 տարեկանում թողել եմ ֆուտբոլը և այդ համազգեստը հանձնել Վարդան Ղազարյանին, ով Լիբանանի քաղաքացիություն ուներ և խաղում էր Լիբանանի հավաքականում: Դրանից հետո «9» համարի համազգեստն իմ տղան էր հագնում, երբ հանդես էր գալիս «Գանձասարում»: Ուզում եմ, որ «9» համարի համազգեստը հագնի իմ թոռնիկը, իհարկե, եթե ցանկություն ունենա ֆուտբոլ խաղալ: «9» համարի համազգեստը մոգական ուժ ունի»:*

Կապանցի հանդիսականն էլ հստակ գիտեր, որ այդ համարի համազգեստով հանդես է գալիս Միշա Մանուչարյանը, ով երկրպագության պակաս չուներ...

Խորհրդային տարիներին հիմնարկձեռնարկություններում ֆուտբոլային թիմեր էին ձևավորվում, Միշա Մանուչարյանն ընդգրկվեց կահույքի ֆաբրիկայի թիմում, որը մասնակցում էր քաղաքի առաջնությանը: Հետո հանդես եկավ Ղափանի պղնձահանքային կոմբինատի թիմում, որ նախապատրաստվում էր մասնակցելու հանրապետության մետալուրգիական ձեռնարկությունների առաջնությանը: Երևանի «Նաիրի» ստադիոնում խոշոր հաշվով՝ 4:1 հաղթեցին «Նաիրի» թիմին, գոլերից մեկն ինքը հեղինակեց: Հաղթանակով վերադարձան,

մի քանի պարապմունք հետո նրան նկատեցին և հրավիրեցին Ղափանի երկրորդ թիմ՝ «Սյունիք»:

Շնորհաշատ ֆուտբոլիստի մարզիչները՝ Ալբերտ Ստեփանյան, Գրիգոր Համբարձումյան միշտ գովեստի խոսքեր են շռայլել Միշա Մանուչարյանի հասցեին, ասելով, որ Միշան հստակ գիտեր իր պարտականությունները խաղադաշտում, իսկ երբ նրանից գնդակը խլում էին, պիտի անպայման պայքարեր և հետ վերցներ կորցրած գնդակը...

Խորհրդային բանակում էլ ծառայելիս անբաժան էր ֆուտբոլից, հանդես էր գալիս «Աստղ» թիմում, մի խաղաշրջանում խփել է 42 գնդակ: Իսկ երբ հարցնում էին, դժվարանում էր պատասխանել, թե իր կարիերայի ընթացքում քանի՞ գոլ է խփել: Բայց մեկը հստակ հիշում է, երբ անկյունային նշակետից գրավեց մրցակցի դարպասը: Միշան միշտ առջևի գծի խաղացողներին ասում էր, որ հարձակվողի գործը գոլ խփելն է. *«Եթե ամեն խաղի մի գոլ չես խփում, բանի նման չէ»*: Հանդիպումներ կային, որոնց ընթացքում երկու-երեք գոլ էր խփում: Իսկական գոլահար էր՝ ռմբարկու՝ նուրբ տեխնիկայով, գոլային հոտառությամբ:

«Եթե գրող լինեի, նրա մասին գիրք կգրեի», – նրա մասին ասել է կապանյան ֆուտբոլի լեգենդ Գիլոն՝ Գրիգոր Համբարձումյանը:

Մանուչարյանը պիտի հանդես գար հանրապետության վարպետների թիմում՝ Երևանի «Արարատում»: Բայց ընտանեկան հանգամանքները խոչընդոտ

եղան այդ երազանքի ճանապարհին: Մնաց իր հայրենի քաղաքում և մանավանդ հանրապետությունն անկախություն ձեռք բերելուց հետո դժվարին ու հեղհեղուկ ժամանակներում ծառայեց մի նպատակի՝ կապանյան ֆուտբոլի ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը:

Ակտիվ ֆուտբոլը թողնելուց հետո անցավ մարզչական աշխատանքի: Միշա Մանուչարյանն առանձնահատուկ խանդաղատանքով էր պարապում կրտսեր տարիքի ֆուտբոլիստներին՝ նրանց սովորեցնելով ամենամասսայական մարզաձևի նրբությունները... Հարգված էր թե՛ պատանի ֆուտբոլիստների (և ոչ միայն), թե՛ նրանց ծնողների կողմից:

Կապանյան ֆուտբոլի նվիրյալն անժամանակ հեռացավ երկրային կյանքից՝ 2019 թվականին, բայց անջնջելի հետագիծ թողեց և մնայուն հետք:

Այժմ նրա կիսատ թողած գործը շարունակում են որդիները՝ Աշոտ և Բենիամին Մանուչարյանները: Աշոտը «Սյունիք» ֆուտբոլային ակումբի մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի ղեկավարն է, Բենիամինը «Սյունիք-09» (2009 թ. ծնված երեխաների) գլխավոր մարզիչը:

Նման դեպքում են ասում՝ ընտանեկան ավանդույթները շարունակվում են...

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**



ՖՈՒՏԲՈԼ

# Կապանցի մարզիկներ, ովքեր հանդես են եկել արտասահմանում

Կապանցի Վարդան Ղազարյանը մարզիկի, ֆուտբոլիստի հետաքրքրական ուղի է անցել: Կապանյան ֆուտբոլի պատմության մեջ առաջինը հանդես եկավ արտասահմանում (1992 թվականից՝ Լիբանան), իսկ 1995 թվականից հագել է Լիբանանի ֆուտբոլի ազգային հավաքականի մարզազգեստը՝ խաղալով մինչև 2001 թվականը, անցկացնելով 66 հանդիպում և դառնալով 21 գոլի հեղինակ:

Կապանցի ֆուտբոլասերի հիշողության մեջ տակավին թարմ են Վարդանի արագաշարժությունը և կարգապահությունը դաշտում, գեղեցիկ խաբբեր տալը, հեռահար հարվածները, որոնք մեկ անգամ չէ, որ ավարտվել են դարպասի գրավումով: 1991-ին Վարդանը Կապանի «Այունիքի» կազմում դարձավ Հայաստանի ֆուտբոլի չեմպիոն: Այն ժամանակ թիմի դարպասը պաշտպանում էր Ռոման Բերեզովսկին, ով հետագայում դարձավ նախկին Խորհրդային Միությունում և աշխարհում ճանաչված դարպասապահ՝ ընդսմին կրելով Հայաստանի հավաքականի դարպասապահի համազգեստը:

Այլ կերպ դասավորվեց Վարդանի մարզական ճակատագիրը. ընդունելով Լիբանանի քաղաքացիություն և հանդես գալով այդ երկրի հավաքականում՝ ՖԻՖԱ-ի կանոնադրության համաձայն նա այլևս չէր կարող հանդես գալ Հայաստանի հավաքականում:

Երբ հայկական ֆուտբոլի առաջատար խաղացող Հովհաննես Չանազանյանին 1996 թվականին հարցրել են, թե Լիբանանում հանդես եկող հայաստանցի ֆուտբոլիստներից ո՞վ է իրականում արժանի խաղալու Հայաստանի հավաքականում, առանց վարանելու պատասխանել է՝ իհարկե, Վարդան Ղազարյանը:

Վարդանը մարզական մկրտությունը ստացել է Կապանի մանկապատանեկան մարզադպրոցում (մարզիչներ՝ Վլադիմիր Պետրոսյան, Միշա Մանուչարյան): «Սյունիքի» չեմպիոնական տարում թիմի մարզիչը Ֆելիքս Վերանյանն էր, ում շնորհալի ֆուտբոլիստը, իր խոսքերով, շատ է պարտական: Լիբանան տեղափոխվելով՝ հանդես եկավ Բեյրութի ՀՄԸՄ-ի թիմում, որից հետո պայմանագրով խաղում էր «Սաժես» ակումբում: 1996 թ. հունվարին լավագույնն է ճանաչվել Ասիայում: 1996-97 թթ., 1997-98 թթ. մրցաշրջաններում ճանաչվել է Լիբանանի ֆուտբոլի առաջնության լավագույն ֆուտբոլիստ: Լիբանանի առաջնություններում դարձել է 131 գոլի հեղինակ: Անգերազանցելի արդյունք: Գործնական ֆուտբոլին հրաժեշտ է տվել 2009 թվականին՝ 39 տարեկանում:

Վերադարձել է Հայաստան, մեկ տարի հետո կրկին տեղափոխվել Բեյրութ՝ այս անգամ մարզական աշխատանքի «Սաժես» ֆուտբոլային ակումբում՝ մարզչի օգնական, այնուհետև Լիբանանի մեծությամբ երկրորդ քաղաք Տրիպոլիի թիմի գլխավոր մարզիչ: Ի դեպ, այդ մրցաշրջանում թիմը դարձավ Լիբանանի գավաթակիր, այնուհետև իր հարազատ «Սաժես» թիմում էր որպես գլխավոր մարզիչ:

2023 թ. հուլիսից Վարդան Ղազարյանը միացել է Կապանի *«Գանձասարի» մարզական շտաբին: «Նա մարզական մեծ ապագա ունի»,*– այդ կարծիքին են ակումբում:

Իսկ «Գանձասարը» շարունակում է իր հաղթական ելույթը Հայաստանի ֆուտբոլի առաջնության բարձրագույն խմբում: Առաջնությունը վերջանալուց երկու տուր առաջ նվաճեց բարձրագույն խմբի ուղեգիր, ինչի մեջ համեստ ավանդ ունի թիմի մարզական շտաբի անդամ Վարդան Ղազարյանը: Ըստ ամենայնի վերականգնվում են կապանյան ֆուտբոլի լավագույն ավանդույթները, և դրանում, անշուշտ, դերակատարություն կունենա ֆուտբոլային աշխարհում ու խաղադաշտում մեծ փորձ կուտակած կապանյան ֆուտբոլի երևելի ներկայացուցիչը:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՖՈՒՏԲՈԼ

# Կապանում ֆուտբոլային մրցաշար՝ լրագրողական թիմերի մասնակցությամբ

**2023թ. հոկտեմբերի 21-ի աշնանային արևոտ օրը ֆուտբոլային տոն պարգևեց կապանցի հանդիսականին: Ժամը 10-ից անսովոր աշխուժություն էր «Լեռնագործ» մարզադաշտում, որտեղ անցկացվեց «Սյունիքի գավաթ-2023 թ.» լրագրողների ֆուտբոլային սիրողական մրցաշար՝ ութ թիմի մասնակցությամբ՝ Գերմանիա, Ռումինիա, Մոլդովա, Եգիպտոս, Լիտվա, Վրաստան, Երևան, Կապան:**

*19 միավորով մրցաշարի հաղթող դարձավ Մոլդովայի թիմը, երկրորդ տեղում Ռումինիան էր, երրորդ հորիզոնականը զբաղեցրին տանտերերը՝ Կապանի թիմը:*

Մրցաշարի բացման արարողությանը հանդիսականներին և հյուրերին բարեմաղթանքի խոսքեր հղեցին և միջոցառման անհրաժեշտությունը կարևորեցին Հ-1 հեռուստատեսության մեկնաբան, Երևանի թիմի ավագ Էդուարդ Քալանթարյանը, ՀՊՄԿ-ի տրանսպորտի դեպարտամենտի ղեկավար Ալեքսանդր Ալավերդյանը, Կապանի համայնքապետարանի սպորտի ոլորտի պատասխանատու Արշամ Սարգսյանը, Կապանի «Սյունիք» թիմի ավագ մարզիչ Արամ Ոսկանյանը: Ելույթներում մասնավորապես ընդգծվեց, որ Կապանը ֆուտբոլային հարուստ ավանդույթներ ունեցող քաղաք է:

Մրցաշարն առաջնության սկզբունքով էր կազմակերպվել. բոլոր թիմերը մրցեցին միմյանց հետ՝ ընդհանուր առմամբ խաղադաշտում անցկացնելով յոթ հանդիպում՝ 20 րոպե տևողությամբ: Ընդ որում՝ կարճ դադարից հետո թիմերի մրցակիցները փոխվում էին:

Մինչ կամփոփվեին արդյունքները՝ տեղի ունեցավ վիճակախաղ, որի անցկացմանն ավելի շահագրգռված էին փոքրիկ հանդիսականները: Հաջողակները հեծանիվի, հեռախոսի, մարզական համազգեստի, այլ շահումների տեր դարձան:

Երբ ամփոփվեցին արդյունքները,

մրցանակակիր թիմերը դասավորվեցին հետևյալ հերթականությամբ. 19 միավորով մրցաշարի հաղթող դարձավ Մոլդովայի թիմը, երկրորդ տեղում Ռումինիան էր, երրորդ հորիզոնականը զբաղեցրին տանտերերը՝ Կապանի թիմը:

Մրցանակները հանձնվեցին երեկոյան՝ «Իմպերիալ» հյուրանոցային համալիրի հանդիսությունների սրահում: Մրցանակակիրները պարգևատրվեցին գավաթներով և մեդալներով: Տոնական մթնոլորտ էր, որ ստեղծեցին լրագրող ֆուտբոլիստները, ովքեր ապացուցեցին, որ կարող են ոչ միայն ֆուտբոլ խաղալ, այլ կարգին քեֆ անել և ուրախանալ:

Հաճախ ենք խոսում լրագրողական համերաշխության և լրագրողների՝ միմյանց հանդեպ հանդուրժող լինելու մասին: Նման միջոցառումն այդ նպատակին հասնելու ամենակարճ ուղին է: Իսկ մրցաշարը լավագույնս անցկացնելու համար արժանին պիտի մատուցել հայկական օնլայն լրատվամիջոցների և լրագրողների ասոցիացիայի նախագահ, «Մեդիամաքս մեդիա» ընկերության գլխավոր խմբագիր Դավիթ Ալավերդյանին, իսկ երախտագիտության առյուծի բաժինը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենությանը՝ մրցաշարը հովանավորելու համար:

Օտարերկրացի լրագրողների համար Սյունիքում շրջագայելու ծրագիր էր կազմվել, նրանք մասնավորապես եղան Տաթևի վանական համալիրում, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: Այցը Սյունիք նաև պատեհ առիթ էր՝ ծանոթանալու Սյունիքի ազգային խոհանոցին, մարդկանց, դիտարժան վայրերի:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՖՈՒՏԲՈԼ

# Մեղրիի տարածաշրջանի մանկապատանեկան ֆուտբոլը՝ վերընթաց ճանապարհով

«Այունիք» ֆուտբոլային ակումբի (նախագահ՝ «ՀՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյան) հովանու ներքո 50-ական երեխա է պարապում Մեղրիում և Ագարակում:

Մեղրիում պատանի ֆուտբոլիստներին մարզում է Հարություն Բաղդասարյանը, ում փոխանցմամբ՝ «Այունիք» ակումբն իրենց տրամադրել է մարզահագուստ, գնդակներ, այլ պարագաներ:

Մեղրիի քաղաքային մարզադաշտը Մեղրիի համայնքապետարանի և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի համագործակցությամբ նորոգվում է: Խաղադաշտը համապատասխանեցվելու է մանկապատանեկան ֆուտբոլի թիմերի հանդիպումներ անցկացնելու պայմաններին: Նաև վերակառուցվելու են մարզադաշտի հանդերձարանները, սանհանգույցները, բարելավվելու է մարզադաշտի խոտածածկը: Ըստ նորոգման նախագծի՝ խաղադաշտը նախկինից ավելի մեծ չափեր պետք է ունենա:

Արվում է հնարավորը, որ Մեղրիի տարածաշրջանից մի թիմ հանդես գա Հայաստանի ֆուտբոլի մանկապատանեկան առաջնությունում:

Մեղրիի մանկապատանեկան երկու թիմերն օգոստոսին ընկերական հանդիպումներ են անցկացրել «Այունիք» ֆուտբոլային ակումբի պահեստային մարզադաշտում (արհեստական խոտածածկի

վրա): Մի խոսքով՝ Մեղրիի տարածաշրջանի մանկապատանեկան ֆուտբոլը զարգացնելու հիմքերն արդեն դրված են:

Ագարակ քաղաքում ակումբի մարզիչներն են Սաշա Առաքելյանը և Աշոտ Մկրտչյանը: Մարզումներն անցկացվում են Ագարակի քաղաքային մարզադաշտում՝ շուրջ 50 երեխա՝ 6-ից 16 տարեկան:

Ագարակցի պատանի ֆուտբոլիստները ևս ընկերական հանդիպումներ են անցկացրել կապանցի հասակակիցների հետ: //

ՖՈՒՏԲՈԼ

# Մարզական Գորիս. Ֆուտբոլ. հետադարձ հայացք

**Խերունց-Իվանյան Իվան: Հեղինակ է «Մարզական տարեգրություն» գրքի: ՀՀ վաստակավոր մարզիչը գրքի երեք հատորում ամփոփում է Զանգեզուրի, Արցախի և Վայոց ձորի մարզական պատմությունը՝ սկսած 1920-ական թվականներից: Իվան Խերունց-Իվանյանը ծնվել է 1922թ. Գորիս քաղաքում: Ավարտել է Երևանի Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը (1960 թ.): 17 տարի աշխատել է Գորիսի ֆիզկուլտուրայի շրջանային կոմիտեի նախագահ: Եղել է հիանալի մարզիկ, հանրապետական առաջնություններին մասնակցել է մի շարք մարզաձևերից: Ստորև ներկայացվող հոդվածը մի հատված է 1-ին հատորից:**

Ֆուտբոլը Զանգեզուրի գավառի կենտրոն մուտք է գործել մինչև հեղափոխությունը: Նույնը կարելի է ասել նաև Կապանի մասին, որն արդյունաբերական զարգացած շրջան էր:

Գավառի մյուս շրջկենտրոններում՝ Մեղրի, Սիսիան, Վայք, Եղեգնաձոր՝ մի քանի տարի ուշ:

Ֆուտբոլը մոլորակի վրա առաջին անգամ ձևավորվեց Անգլիայում, այնուհետև բուռն թափով զարգացավ եվրոպական և հարավամերիկյան մի շարք առաջադեմ երկրներում:

Մի քանի տարի առաջ Լոնդոնում նշվեց մարզաձևի ծննդյան 100-ամյակը, որտեղ հարյուր-հազարավոր մարզասերների առաջ հանդիպեցին ֆուտբոլի աշխարհի և Անգլիայի հավաքականները:

Աշխարհի հավաքականի դարպասապահը Լև Յաշինն էր /ԽՍՀՄ-ից/:

Աշխարհի զարգացած շատ պետությունների կառավարություններ լուրջ ուշադրություն են դարձնում և զգալի միջոցներ տրամադրում ֆուտբոլին: Այսպես, օրինակ, Բրազիլիայի «Մարականա» մարզադաշտում ֆուտբոլի մրցախաղ լինելու դեպքում պառլամենտի կամ կառավարության նիստը հետաձգվում է, իսկ անդամները մեկնում են խաղը դիտելու:

Մեր հայրենակից Ակսել Բակունցի եղբայր Վահան Բակունցն իր հուշերում գրում է. *«Գորիսի մի քանի հարուստներ տղաներ փող են հավաքել, ուղարկել Թբիլիսի, թոփ առել, բերել Գորիսի բուվարումը քցըքացի արել»:* Դա 1910-15 թվականներին էր:

Գորիս քաղաքի այգու հարավային մասի ազատ տարածությունում որոշ աշխատանքներ կատարելով՝ պատրաստում են ֆուտբոլի, վոլեյբոլի, թեթև ատլետիկայի հրապարակներ և սկսում մարզումները: Ժամանակաշրջանն այնպիսին էր, որ Գորիսում չկային խոշոր ձեռնարկություններ, կազմակերպություններ ու ֆաբրիկաներ, որտեղ կազմավորվեին սպորտային ընկերություններ և թիմեր:

Գորիսի ֆուտբոլիստներն ինքնամարզումներ էին կատարում, ով ինչպես կարող էր: Չկային կանոններ, գրականություն՝ խաղացողների տեխնիկատակտիկական կարողությունները մշակելու, բարելավելու համար: Իսկ տրանսպորտի ու փոխադրամիջոցների մասին խոսք անգամ լինել չէր կարող: Տրակտորը նոր էր մուտք գործել շրջան:

Գորիսի ղեկավարությունը Ղափանի ընկերների հետ հեռախոսով բանակցություններ վարեց ֆուտբոլի ընկերական հանդիպում անցկացնելու համար: Համաձայնվեցին հանդիպումն անցկացնել Ղափանում՝ 1930թ. սեպտեմբերին: Գորիսի ղեկավարությունը թիմին հատկացնում է մեկ տրակտոր՝ որպես փոխադրամիջոց:

Մեր ֆուտբոլիստները տրակտորով մեկնում են Ղափան, խաղում և հետ վերադառնում: Մասնակիցներից ողջ մնացածները պատմում են, որ Ղափանի ֆուտբոլի դաշտը գտնվում էր Օխչի գետի ափին, ավելի հարմար տեղ չկար, խաղի ժամանակ գնդակը հաճախակի ընկնում էր գետը, դրա համար հատուկ նշանակված սպաները մինչև գնդակը ջրից հանում-բերում էին, ժամանակ էր կորչում, տաք խաղը սառչում էր:

Ճիշտ է, մարզասերները գետափին շղթա էին կազմում՝ գնդակը պաշտպանելու, բայց բարձր գնդակները միշտ ջուրն էին ընկնում, և դրանց «մեղավորները» հիմնականում պաշտպաններն էին:

Դա առաջին ֆուտբոլային մրցույթն էր Զանգեզուրի գավառի սպորտային պատմության մեջ:

Թիմը մարզումներ էր կատարում, բարելավում կարողությունները և ցանկություն ուներ հանդիպելու ավելի ուժեղ թիմերի հետ:

Հանրապետության մայրաքաղաք Երևանում, Գյումրիում և Ղարաքիլիսայում կային սպորտային ընկերություններ և ֆուտբոլային թիմեր՝ «Կոլոս», «Սպարտակ» և այլն:

Շրջանի ղեկավարությունը Երևանի ընկերների հետ պայմանավորվեց ֆուտբոլի ընկերական հանդիպում անցկացնել մայրաքաղաքում:

1939 թ. օգոստոս ամսին Գորիսի ֆուտբոլիստները պետք է Երևան մեկնեին երկու երթուղով: Առաջին երթուղով թիմի հիմնական կազմը հետիոտն պետք է մեկներ Նախիջևան, այնտեղից գնացքով՝ Երևան:

Երկրորդ երթուղով Գորիս քաղաքի լավագույն հեծանվորդները և այն ֆուտբոլիստները, ովքեր ունեին հեծանիվներ, պետք է Երևան հասնեին հեծանիվներով:

Առաջին երթուղին ղեկավարում էր Միքայել Բաղրամյանը, իսկ երկրորդը՝ ռադիոհանգույցի Համոն, նրա հետ՝ ֆուտբոլիստ հեծանվորդներ Գրիգոր Մանուչարյանը, Հակոբ Միրաքյանը, Ռաֆիկ Միրաքյանը և այլք:

Երրորդ օրը երկու երթուղիների մարզիկները հասնում են Երևան, հաջորդ օրը մասնակցում մրցումներին և նույն կարգով վերադառնում:

Այստեղ խաղը շահելու-պարտվելու մեջ չէր, այլ խաղացողների իղձերի իրականացումը, դժվարությունները հաղթահարելու, հակառակորդից տեխնիկա, տակտիկական նոր հնարքներ սովորելու, փորձ ձեռք բերելու նպատակը:

Ցանկանում եմ նշել նրանց անուն-

ները, ովքեր մասնակցել են երևանյան այդ խաղին՝ Հովակիմյան Արտավազդ Գևորգի, Ասլանյան Արտավազդ Ղազարի, Մանուչարյան Գրիգոր Մանուչարի, Խուրշուդյան Վաղարշակ Առաքելի, Յոլյան Միշա Աղալոյի, Գիչունց Ցական Եգորի, Օհանյան Համո Կարապետի, Կարապետյան Գուրգեն Սարգսի, Բաղրամյան Միքայել Ավանեսի, Բաղրամյան Ներսիկ Ավանեսի, Գրիգորյան Մուշեղ Բոգիի, Շահգելդյան Արամ Ղուկասի, Խերունց Արտաշես Վաղարշակի, Միրաքյան Հակոբ Մնացականի, Ղազարյան Համո, Բժիշկ Ներսիկ, Հայրապետյան Իշխան:

Վերը նշված մարզիկներից շատերը մեկնեցին պատերազմ, քչերը վերադարձան, մյուսներն իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքին:

Մեր փողոցի պատանիներս մանկուց հետևում էինք մեծերի օրինակին, մարզվում, որոշ դեպքերում խաղում նրանց հետ, մրցում փողոցային թիմերի հետ, հետագայում արդեն հանդես եկանք դպրոցական թիմերում:

Լավ հիշում եմ, երբ տարիներ առաջ Ստեփանակերտի և Ղափանի ֆուտբոլի հավաքականները գալիս էին Գորիս՝ ընկերական հանդիպումների, որոշ խաղացողների անուններն ու մականունները մինչև այժմ չեն մոռացվել՝ Կապանից «շեկո» Եղիշն ու «էշի» բժիշկը, Ստեփանակերտից երկու վարորդ եղբայրները, որոնք հագնում էին միատեսակ երկարաճիտ կոշիկներ, սև գույնի կաշվե համազգեստ, խաղում էին հարձակման աջ և ձախ եզրերում:

Մինչև 1940-41 թվականները չկային հանրապետության օրացուցային առաջնություններ և գավաթային մրցումներ, և մեր հավաքականը տարեկան մեկ-երկու ընկերական հանդիպումներ էր անցկացնում Ղափանի, Ղարաբաղի թիմերի հետ: Դա շատ քիչ էր, չէին բավարարում մարզիկների լիարժեք պահանջները, իսկ տեղում չկային այլ թիմեր հանդիպումների համար:

Գորիսում ֆուտբոլի զարգացմանը նպաստեցին երեսնական թվականների սկզբին բացված գյուղատնտեսական տեխնիկումը, քույրական, հետագայում նաև՝ մանկավարժական ուսումնարանները: Տեխնիկումում և ուսումնարաններում սովորելու գալիս էին ոչ միայն Գորիսից, այլ նաև հանրապետության տարբեր շրջաններից՝ Արարատից, Արտաշատից, Եղեգնաձորից, Վայքից, Մեղրիից, Սիսիանից և Լեռնային Ղարաբաղի մարզից:

Այդ ուսումնական հաստատությունների սովորող երիտասարդության մեջ սեր առաջացավ դեպի ֆիզկուլտուրան և սպորտը, մասնավորապես ֆուտբոլը: Եվ կարճ ժամանակում արդեն երեք ուսումնական հաստատություններում՝ առաջին միջնակարգում, մանկավարժական ուսումնարանում և գյուղատնտեսական տեխնիկումում, ստեղծվեցին ֆուտբոլի թիմեր: Հավաքականի և նորաստեղծ այդ երեք թիմերի միջև անց էին կացվում մրցումներ և ընկերական հանդիպումներ: Դրանց լավագույն խաղացողները համալրեցին շրջանի հավաքականը:

Մինչև 1941 թվականը խաղացին և Գորիսի սպորտային պատիվը բարձր պահեցին հետևյալ ֆուտբոլիստները՝ Մարդյան ժորա, Հովհաննիսյան Մեսրոպ, Բալասանյան Վազգեն, Խշտոյան Վազգեն, Աբրահամյան Արամ, Տոռոզյան Արամ, նկարիչ Աշոտ, Մկրտչյան Խաչիկ, Կարապետյան Գրիգոր, Դադալյան Արշավիր, Յոլյան Գուրգեն, Միրաքյան Գուրգեն, Մինասյան Սաշիկ, Բաղրամյան Վարդան, Խանզադյան Պետրոս, Գրիգոր Մանուչարյան, Վաղարշակ Խուրշուդյան, Ցական Գիչունց, Միքայել Բաղրամյան, Գուրգեն Կարապետյան, Մուշեղ Գրիգորյան և ուրիշներ:

Ութից տասներորդ դասարանի աշակերտներ էինք, խաղում էինք դպրոցի հավաքականում, հաճախակի մրցում

*Էդուարդ Չոհրաբյան, ԽՍՀՄ սպորտի վարպետ (ֆուտբոլ, 1957թ.)*

գյուղտեխնիկումի և մանկուսումնարանի ֆուտբոլի թիմերի հետ: Տեխնիկումում և միջնակարգ դպրոցում կային շնորհալի լավ պատանիներ, որոնք հետագայում կդառնային անվանի ֆուտբոլիստներ, բայց պատերազմը խանգարեց, նրանց իղձերը չիրականացան, շատերը իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքին: Նրանցից են՝ եղբայրներ Շահեն և Բենիկ Մինասյանները, Վազգեն Բոլյանը, Երեմ Շալունցը, Գուրգեն Կարապետյանը, Ռուբիկ Դոլունցը, Ցական Գիչունցը, Գրիգոր Մանուչարյանը, Միքայել Բաղրամյանը, Արամ Տոռոզյանը, Խաչիկ Մկրտչյանը և շատ ուրիշներ:

Այստեղ պարտքս եմ համարում մեկ անգամ ևս հիշել այն ժամանակվա ֆիզկուլտուրայի ու սպորտի գործերի կոմիտեի նախագահին և միջնակարգ դպրոցի իմ ֆիզկուլտուրայի դասատու, մարզիչ Գրիգոր Մանուչարյանին, իմ երախտագիտության խոսքն ասել, ճերմակած գլուխս խոնարհել օտար հողերում մնացած նրանց անհայտ գերեզմաններին:

Հավանական է՝ իմ զոհված ուսուցիչների նվիրված աշխատանքի արդյունքն էր, որ ես ծանր վիրավոր կենդանի մնացի այդ արհավիրքից, և այս հուշերը նվիրում եմ նրանց:

1940 թվականի ամռանը Գորիսի ֆուտբոլի հավաքականը, համալրված շնորհալի նոր երիտասարդ խաղացողներով, մեկնեց Կիրովական՝ ընկերական հանդիպման: Մեր ֆուտբոլիստները հաղթեցին 2:1 հաշվով: Խաղին մասնակցում էին պատանի ֆուտբոլիստներ Սուրիկ Յոլյանը, Գրիշա Յոլյանը, Կոլյա Արզումանյանը:

Գրիշա Յոլյանը մեկնեց հայրենիքը պաշտպանելու, բարեհաջող վերադարձավ, ավարտեց գյուղինստիտուտի մեխբաժինը, պաշտպանեց գիտական թեզ, երկար տարիներ աշխատեց նույն ինստիտուտում:

Սուրիկ Յոլյանն իմ մանկության և պատանեկության տարիների ընկերներից է: Ավարտել է բժշկական ինստիտուտը, դարձել բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, սրտաբանական ինստիտուտի կարդիոլոգիայի բաժնի վարիչ: Նրա որդի Լևոն Յոլյանը շախմատի գծով սպորտի վարպետ է, բազում հաղթանակներ է ունեցել հանրապետական, միջազգային մրցումներում:

1941 թ. հունիսի 20-ին հանձնեցինք միջնակարգ դպրոցի վերջին ավարտական քննությունները, 22-ի կիրակի առավոտյան սկսվեց պատերազմը, ողջ երիտասարդությունը, մարզիկները, տասներորդ դասարանն ավարտած պատանիներս, ավարտական ատեստատներ դեռ չստացած, մեկնեցինք պատերազմ...

**«ՄԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ», 1-ԻՆ ԳԻՐՔ, 1999 Թ.**

ՖՈՒՏԲՈԼ

# Դիպվածներ Մեղրիի ֆուտբոլի տարեգրությունից

ՄԱՐԶԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

# Էդիկ Ավետիսյանի պայծառ հիշատակին



**ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ (ԳՐԻԳՈՐՅԱՆ)**

Ամեն մի ապրած կյանքը մեծ ու ինքնատիպ խորհուրդ ունի: Կյանքի կարոտաբաղձ թելը վայրկյանների, րոպեների, ժամերի, օրերի ու տարիների երանական շարանն է՝ իր հազարան կողմերով: Մարդու կենաց ճանապարհը ծննդյան օրվանից չի սկսում, որովհետև անցած-գնացածն էլ ողջերի համար կյանք է, ուրախության ու մաքառումի, սիրո ու կարոտի աղբյուր:

Ամեն մեկն իր ծննդով դույզն-ինչ կրկնում է նախորդներին, ամեն մեկի կյանքն իր ընթացքով չապրածների ու թերապրածների ողջության անուշիկ հատիկն ունի:

Կյանքից հեռացած ամեն մեկը մեզ օգնում է ապրել հենց իր կատարած ու ձեռնարկած բազմաթիվ գործերով: Նրանք, ովքեր աշակերտ են եղել Էդիկին, միշտ ձգտելու են նրա պես մարդամոտ լինել, նրա պես քայլել առյուծաբար, նրա պես ուրախանալ անկաշկանդ, լինել հոգու ծով ու մարմնով գեղեցիկ:

Ով աշխատել է Էդիկի հետ, անտես ժպտալու է նրան հիշելիս, ուրախ հպարտության ավիշը համակելու է Նրան, հաճելի էր Էդիկի հետ աշխատելը և հետաքրքիր ու զարմանալի էր նրա պես գործընկեր ունենալը:

Ով չգիտեր հպարտ ու մեծահոգի լինելու գաղտնիքը, դրան տիրում էր Էդիկի մեջ այդ գյուտը գտնելով: Այսպես է կյանքը՝ ամեն մեկն իր մտերիմից ակամա կենաց մի կարմիր թել է վերցնում, և դա խոստովանելու համար ամեն մեկն է դժվարանում: Մարդն ումի՞ց է սովորում հարգանք, արժանապատվություն, հայրենասիրություն, հումանիզմ... Իհարկե, մարդկանցից: Եվ սովորում է ամբողջ կյանքում, ամեն օր ու ժամ: Էդիկն այնպիսի ընկեր էր, որից կարելի էր սովորել ամեն օր, ամեն ժամ: Ընկեր լինելով, նա գիտակցաբար ու անգիտակցաբար հազար անգամ փոխարինում էր մոտ բարեկամին ու եղբորը:

Էդիկն արդար էր:

**Ֆիզկուլտուրան նրա տարերքն էր**

Ակամա միշտ փնտրել եմ լավ մարդուն, առավել ևս՝ լավ ուսուցչին: Ում հետ ծանոթացել եմ ձեռք սեղմումով, որոշ ժամանակ անց մոռացել եմ կամ մտաբերել դժվարությամբ: Էդիկի հետ իմ ծանոթությունը պատահական չէր ու պաշտոնական չէր: Խոստումնալից մարդուն ծանոթանալը, կարծես, հրամայական անհրաժեշտություն է: ...Աշխատանքի անցնելու օրվանից Քաջարանի Ստ. Շահումյանի անվան դպրոցում ուսուցիչ Էդիկն աչքի ընկավ ուսուցչական բնատուր շնորհքով: Հետո, շաբաթ առ շաբաթ նա հայտնի դարձավ հարևան դպրոցներում, և նրան շատ սիրեցին սովորողների ծնողները:

Խստապահանջությունը նրա մանկավարժական տակտի հենքը եղավ. Էդիկը չէր ցանկանում, որ իր սաները մեծանային անուժեղ, անհամարձակ ու թուլակազմ: Այդ ամենի համար անհրաժեշտ էր նորացնել ու կատարելագործել ֆիզկուլտուրայի դասը: Եվ դա նրան հաջողվեց:

– Չեղավ,– իրեն հատուկ արձագանքող ձայնով ասում էր նա, – ապա տես, թե ինչպես եմ պահում իմ մատները գնդակի հետդարձի ժամանակ... Ու անշտապ, տրամադրող հանգով ցուցադրում էր վարժությունը:

– Մարմինդ ուղիղ չես պահում...

– Քայլում ես կրունկներդ չափից ավելի մոտ...

– Մի ամաչիր, հավաքիր քեզ և կստացվի...

Այս ու նման շատ դիտողություններ նա ասում էր կամ սովորողին առանձին, կամ անհատական զրույցի ժամանակ, կամ էլ՝ հրապարակավ: Անկարելի է պատկերացնել, որ նրա դիտողությունն առմիշտ չհիշի աշակերտը:

Կարճ ժամանակում Էդիկ Ավետիսյանը դարձավ առաջավոր փորձի ղեկավար: Նրա մասին շատ ակնարկներ տպագրվեցին տարբեր թերթերում:

Եղավ Էդիկը, և Քաջարանի հմ. 2-ում եղան շատ գավաթներ, պատվոգրեր: Երեխայի պես ուրախանում էր այդ «ավարով» և ավելի էր հավատում իր սաներին, որոնք ամենուրեք միշտ բարձր պահեցին խանդավառ ուսուցչի անունը:

...Պիոներական ճամբարում, ուր տարիներ շարունակ աշխատել եմ Էդիկի հետ, պիոներներն ազատ ժամին ինչպես քայլերգ էին երգում Հունան Ավետիսյանին նվիրված երգը: Մի օր պարզվեց, որ երեխաները կարծում են, թե այդ երգը նվիրված է Էդիկ Ավետիսյանին: Այ քեզ զարմանալի բան... Իհարկե, ես պարզաբանեցի, որ երգը ոչ թե ընկ. Ավետիսյանին է վերաբերվում, այլ՝ Սովետական Միության հերոս Հունան Ավետիսյանին: Իսկ պիոներներից մեկը հարցրեց.

– Իսկ մեր ֆիզղեկ ընկ. Ավետիսյանի մասին երգ չկա՞...

Հուզվեցի, ինչպե՞ս են մանուկները սիրում երիտասարդ ուսուցչին, ինչպե՞ս են հավատում... Հավատում եմ, որ նրա շնորհալի սաներից մեկը մի օր երգ պիտի գրի սիրելի ուսուցչի հիշատակին, և նա իրավամբ արժանի է:

Ֆիզկուլտուրան նրա տարերքն էր: Եվ ամենուրեք: Դպրոցում, ճամբարում, արտադպրոցական հիմնարկներում նա բազմաթիվ մրցություններ է նախաձեռնել, ազնվաբար փնտրել շնորհալիներին, ապագա լավագույն մարզիկներին: Բազմաթիվ առիթներով փառաբանել է սպորտը, սիրել տվել շատերին: ...Ճամբարում, ամռան տապին, Էդիկը քայլում էր բոբիկ: Այլ կերպ կարելի՞ է սովորեցնել բոլորին, որ ամռանը բոբիկ քայլելը առողջության գրավականն է...

Նա ու իր պատանի տուրիստները շրջել են ողջ քաջարանյան լեռնաշխարհում:

//

## ՄԱՐԶԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

**Վոլեյբոլը Սիսիանում սիրված և մասսայական մարզաձև էր, մարզադպրոցը համալրված էր լավագույն և բարձրագույն կրթությամբ մասնագետներով: Պատահական չէ, որ համահայկական բոլոր խաղերին վոլեյբոլի աղջիկների թիմը մեծ հաջողություններ է ունեցել՝ գրավելով պատվավոր տեղեր:Սիսիանի վոլեյբոլի հավաքականը մեկն էր այն թիմերից, որ միշտ մասնակցում էր հանրապետության բարձրագույն խմբի կանանց առաջնությանը՝ գրանցելով բարձր արդյունքներ:**
**Աղվան Հակոբյանը եղել է սկզբում՝ Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն, այնուհետև, երկար տարիներ՝ մարզիչ: Մերօրյա լեգենդար մարդ է, իր ողջ ընտանիքով սպորտի վաստակավոր աշխատողներ են: Նա մեզ կպատմի Սիսիանի մանկապատանեկան սպորտդպրոցի անցած պատվավոր ուղու, նրա ձեռքբերումների և նվաճումների մասին:**

# Սպորտային Սյունիքի լեգենդ-մարդը. ԱՂՎԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

**– Պարոն Հակոբյան, ձեր ընտանիքը համարվում է սպորտային ընտանիք, ինչպե՞ս է դա եղել. զուգադիպությո՞ւն էր, թե՞ արյան կանչ:**

– Աշխարհում ոչինչ պատահական չի լինում, ամեն ինչ սկսվեց նրանից, որ ինստիտուտում սովորելու տարիներին հանդիպեցի ապագա կնոջս, ով նույնպես վոլեյբոլի բաժնում էր սովորում, աղջիկների թիմում լավագույն վոլեյբոլիստուհիներից էր: Ավարտելուց հետո վերադարձանք Սիսիան, ամուսնացանք, երկուսով աշխատանքի անցանք մարզադպրոցում:

Տարիների ընթացքում ծնվեցին մեր չորս զավակները, ովքեր հետագայում

*Ծնվել է 1943 թվականին, Գորիսի Բարձրավան գյուղում:*
*Երկար տարիներ հայրը, որպես դարբին, աշխատել է Գորիսի Շուռնուխ գյուղի երբեմնի փայտամշակման գործարանում:*
*1951 թվականին ընտանիքը տեղափոխվել է Սիսիանի Դաստակերտ, որտեղ նա սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:*
*1966-ին ավարտել է Երևանի ֆիզկուլտուրայի ինստիտուտի վոլեյբոլի բաժինը, վերադարձել և աշխատանքի է նշանակվել Սիսիանի սպորտդպրոցում՝ տնօրեն, որտեղ աշխատել է 1966-72 թթ.:*
*Մարզական կենսագրության ամենանշանավոր դրվագներից մեկն էլ այն է, որ տասը տարի համատեղությամբ՝ 1963-73թթ., խաղացել է վոլեյբոլի Հայաստանի տղամարդկանց հավաքականում, այդ ընթացքում մասնակցել նախկին ԽՍՀՄ վոլեյբոլի բարձրագույն խմբի*

գնացին մեր ճանապարհով, դարձան վոլեյբոլիստներ, գերդաստան-թիմ: Այ, սա արդեն արյան կանչ էր:

Ես ու կինս սպորտի վաստակավոր աշխատողներ ենք, որդիս սպորտի վարպետ է, Արցախում ուսանած դուստրս խաղում էր տարածաշրջանի վոլեյբոլի թիմում:

Տղաս ու կինս երկար տարիներ խաղացել են ազգային հավաքականում, որդիս ընդգրկվել է նաև նախկին ԽՍՀՄ հավաքականում, աղջիկներս էլ ընդգրկվել են դպրոցական հավաքականներում:

Ես ինքս գլխավորել եմ Հայաստանի վոլեյբոլի հավաքական թիմը՝ ապրելով Սիսիանում, եղել եմ ազգային հավաքական մարզիչ:

Վոլեյբոլի թիմիս անդամները հիմնականում եղել են Սիսիանի հավաքականի աղջիկները, մասնակցել ենք նախկին ԽՍՀՄ և բալթյան երկրների մրցումներին, ինչի հիման վրա էլ ՀՀ սպորտի ֆեդերացիան վստահել և ինձ նշանակել է հանրապետության վոլեյբոլի հավաքական թիմի մարզիչ:

Երեք տարի շարունակ ԱՊՀ երկրների վոլեյբոլի հավաքականների հետ խաղալով՝ միշտ էլ գրանցել ենք մեծ արդյունքներ, գրավել պատվավոր տեղեր:

1968-ին մասնակցել եմ Մոսկվայում անցկացված «Ոսկե գնդակ» սպարտակիադային, նորից գրավել ենք պատվավոր տեղ: Մասնակցել ենք նաև աշխարհի առաջնությանը, Բաթումիում կայացած ծովափնյա վոլեյբոլի մրցումներին, երկու հոգով խաղացել ավազի վրա ու պատվավոր տեղ գրավել: Այդ ժամանակ թիմի մարզիչը ես էի, ԱՊՀ հավաքականի կազմում մեկնել ենք նաև Պորտուգալիա և Չեխոսլովակիա:

**– Սիսիանում ինչպե՞ս սկսեց նվազել վոլեյբոլի տասնամյակների փառքը... Կխնդրեինք՝ մի քիչ անդրադառնալ անցյալի փառավոր էջերին...**

– Ասեմ, որ Սիսիանում՝ ինձանից առաջ էլ, միշտ բարձր հիմքերի վրա է եղել սպորտը, հատկապես՝ վոլեյբոլի հավաքական թիմը, որը փառք ու պատիվ է բերել ոչ միայն քաղաքին, նաև հայտնի ենք եղել Սյունիքում, ողջ հանրապետությունում, նրա սահմաններից դուրս:

Մանկապատանեկան սպորտն ինձնից առաջ էլ ունեցել է հրաշալի մարզիչ՝ Մանվել Ամիրխանյանը, ով եղել է նաև իմ մարզիչը, ում գլխավորությամբ տասնամյակներ շարունակ սպորտային առողջ և հաղթանակող սերունդ է մեծացել, պարբերաբար մասնացել հանրապետական մրցումների: Հետո եկավ իմ սերունդն ու շարունակեց Սիսիանում սպորտի բարի ավանդույթները:

Ինչպես այն ժամանակ, այսօր էլ մարզադպրոցը կա՝ ավելի լավ հարմարություններով, կան գործող խմբակներ՝ ֆուտբոլի, բասկետբոլի, շախմատի, բայց, ցավով եմ ասում՝ Սիսիանը հիմա վոլեյբոլի կայացած թիմ չունի՝ որպես այդպիսին:

Քառասուն տարի շարունակ մրցումների մասնակցող երբեմնի մեր հզոր թիմն այսօր չունենք:

Փաստորեն, այն գործել և հռչակված է եղել՝ շնորհիվ կոնկրետ պրոֆեսիոնալ մարդկանց նվիրական աշխատանքի:

Մեր գործունեությունն ու փառքը սկսեցին խամրել դեռ այն օրից, երբ ֆինանսական խնդիրներ առաջացան, համայնքի ու մարզային իշխանությունները սկսեցին փող խնայել ...

Այն ժամանակ թերթերից մեկում ասել էի, հիմա էլ նույնն ասեմ՝ մեծ սպորտում ամեն ինչ կախված է համայնքի կողմից տրամադրվող ֆինանսական միջոցներից: Այլապես, տպավորություն էր ստեղծվում, թե միայն վոլեյբոլի աղջիկների թիմն է հաջողություններ ունենում, բայց ունեինք նաև լավ խաղացող տղաների թիմ:

*առաջնություններին՝ միութենական տարբեր քաղաքներում:*
*1967-ին թիմը մասնակցել է Մոսկվայում կայացած սպարտակիադային, գրավել պատվավոր տեղեր:*
*1972-82 թթ. Սիսիանի սպորտկոմիտեի նախագահն էր, այնուհետև՝ մարզիչ, մինչև 2018-ը:*
*Որտեղ էլ աշխատել է՝ միշտ գրանցել է սպորտային մեծ հաջողություններ, բազմիցս (իր թիմով) նվաճել հանրապետության վոլեյբոլի չեմպիոնի տիտղոսը, իր տարբեր տարիքային թիմերով խաղացել Հայաստանի բարձրագույն խմբում, մասնակցել հանրապետական մրցումների:*
*Աղվան Հակոբյանն ամուսնացած է, ունի չորս զավակ՝ երեք աղջիկ և մեկ տղա:*
*Նրանք բոլորն էլ խաղացել են վոլեյբոլի ազգային հավաքականում:*

Գումարի պակասի պատճառով մրցումներին չէինք կարողանում մեկ թիմից ավելի ուղարկել, ինչն աստիճանաբար դարձավ վատ սովորություն, որի մեղավորը սպորտդպրոցը չէր, ոչ էլ՝ նրա մարզիչը:

Ֆուտբոլն էլ լավ մարզավիճակում էր, բայց հանրապետական փուլին չէինք կարողանում մասնակցել, որովհետև ֆինանսավորում չունեինք:

Եթե տղաների թիմն էլ հաճախակի մասնակցեր մրցումներին, հաղթանակներն ավելի շատ կլինեին:

Այսօրվա պայմաններում ճիշտ կլինի, որ դպրոցները մասնագիտացվեն՝ յուրաքանչյուր համայնքում զարգացնելով մեկ մարզաձև:

Մարզչի տարիքն այստեղ կապ չունի, ես այս պահին էլ՝ լինելով 81 տարեկան, լավ մարզավիճակում եմ, ի զորու եմ թիմ պահելու, մարզելու և նորից ազգային հավաքականի մրցումներին պատվով ներկայանալու:

Մի՞թե կարևորը դա չէ, մանավանդ, որ այդ մասին, թեպետ ուշացումով, կա նաև օրենսդրական լուծում՝ պրոֆեսիոնալ, կարող ուժերին (անկախ տարիքից), աշխատանքից չազատելու մասին:

Դեռ 2018 թվականին ազատվեցի մարզչի պաշտոնից: Խնդրեցի ինձ պահել գոնե մարզչի կարգավիճակով՝ հանուն թիմի գոյության ու մեր քաղաքի, մարզի, ինչու ոչ՝ նաև երկրի սպորտային պատվի, բայց խնդրանքս չլսեցին, զուր եղավ:

**– Ցավոք, Դուք ճիշտ եք, 2018-ից այս կողմ երկիրը շատ դեպքերում զրկվեց իր պրոֆեսիոնալ, լավագույն մասնագետ կադրերից՝ հաճախ 40-50 տարեկան, դեռ կենսաթոշակի չանցած անձինք, և նրանց փոխարինելու եկան անփորձ, ոչ պրոֆեսիոնալ կադրեր:**

**Կոտայքի մարզում սպորտը, օրինակ, հանձին գործարար Գագիկ Ծառուկյանի, ունի հովանավոր:**

**Չէի՞ք կամենա, որ մեր մարզն էլ այդպիսի սպորտասեր, սրտացավ հովանավոր ունենար:**

**Թույլ տվեք իմանալ՝ ինչո՞վ է այսօր զբաղվում սպորտի բնագավառում երբեմնի լեգենդար մարդը:**

– Ինչ խոսք, շատ կուզեի, որ մեր մարզն էլ ունենար Գագիկ Ծառուկյանի պես սպորտասեր մարդ:

Ի դեպ, հենց Գագիկ Ծառուկյանի միջոցներով ու նախաձեռնությամբ է կառուցվել Սիսիանի սպորտդահլիճը, որտեղ տասը տարի է՝ Սիսիանի ու նրա գյուղերի մանուկների ու պատանիների հետ անվճար պարապմունքներ են անցկացվում մի շարք սպորտաձևերից՝ ձյուդո,

ծանրամարտ, բռնցքամարտ, բայց նորից այդ երեխաները չեն կարողանում դուրս գալ մեծ սպորտ, հավանաբար՝ պրոֆեսիոնալիզմի և ֆինանսների պակասի պատճառով:

Իսկ երեխաները միշտ ցանկանում են արդյունքներ տեսնել իրենց սիրելի մարզաձևից...

Այժմ Վաղուդիի սեփական հողատարածքում զբաղվում եմ գյուղատնտեսությամբ:

**– Դժվար չէ՞ Ձեզ համար այսօր ապրել առանց սպորտի:**

– Շատ դժվար է, բայց էլի կասեմ՝ իմ այս տարիքում էլ նորից կաշխատեի թիմերի հետ, հիմա էլ աշխատում եմ՝ պահպանելով սպորտային կեցվածքս:

**– Որո՞նք են վոլեյբոլի առանձնահատկությունները, մարդուն ի՞նչ հատկանիշներ են պետք մեծ սպորտ մտնելու համար: Ձեր սաների մեջ կա՞ն սպորտի ճանաչված վարպետներ, և, արդյոք, պահպանու՞մ եք կապերը նրանց հետ:**

– Վոլեյբոլի մեջ շատ կարևոր է բարձր հասակը, գիշեր-ցերեկ պարապելն ու նախընտրած սպորտաձևով աշխատելը, նրա գաղտնիքներին տիրապետելն ու անընդհատ նոր բան սովորելը:

Ունեցել ենք ոչ միայն լավագույն խաղացող աղջիկներ և տղաներ, նաև՝ սպորտի յոթ վարպետ: Նրանք են՝ Մարի Հովհաննիսյանը, Նարե Հովհաննիսյանը, Սոնա Սաղեղյանը, որդիս, մյուսները...

Բոլորն էլ մեծ փառք ու նվաճումներ են բերել Հայաստանի հավաքականին, դարձել չեմպիոններ՝ մեծ աշխատանքի շնորհիվ:

Առանց աշխատանքի արդյունք չկա, չի էլ կարող լինել:

Իսկ սաներիս հետ, անշուշտ, կապերը պահպանում եմ, հաճախ ենք հեռախոսով խոսում, շնորհավորում իրար՝ այս կամ այն առիթով:

**– Պարոն Հակոբյան, եղբայրս՝ նախկին վոլեյբոլիստ Կամո Բաբաջանյանը՝ Գորիսի վոլեյբոլի հավաքականի թիմից, իմանալով, որ պետք է այցելենք Ձեզ և հարցազրույց վարենք, ջերմ բարևներ հղեց մարզիչ, միաժամանակ խաղացող ընկերոջը՝ Սլավիկին:**

**Ի դեպ, նրա ձայնում չթաքցրած կարոտ զգացի վոլեյբոլի ու երբեմնի ձեր սպորտային ընդհատված ընկերությանը... Գուցե ափսոսաց, որ հետո զորակոչվել է ԽՍՀՄ բանակ, այնուհետ՝ Սանկտ-Պետերբուրգ՝**

**մշակույթի և կինեմատոգրաֆիայի ինստիտուտում սովորելու, և այդպես հեռացել է սպորտից...**

**Ինչո՞ւ ոմանց համար Դուք Սլավիկ եք, ոմանց համար՝ Աղվան:**

– Անչափ շնորհակալ եմ Կամոյին, իհարկե, հիշում եմ նրան՝ Գորիսի վոլեյբոլի թիմից, ում հետ շատ ենք խաղացել, ու ասեմ՝ բավականին լուրջ, պատրաստված թիմ էր, ճանաչված մարզիչ Ռաֆիկ Դադալյանն էր ղեկավարում:

Կամոն էլ ինձ պես բարձրահասակ է, սպորտային մեծ նախասիրությամբ, շարունակելու դեպքում՝ կարող էր մեծ հաջողությունների հասնել:

Ափսոսում եմ, որ Գորիսի վոլեյբոլի թիմն էլ այսօր չկա, շատ լավ խաղացողներ ուներ: Այն ավելի շուտ կազմալուծվեց՝ 1991 թվականից:

Իսկ թե ինչո՞ւ եմ ոմանց համար Սլավիկ, ոմանց համար՝ Աղվան, ասեմ, որ ծննդյան վկայականով Աղվան եմ, մոտիկներիս համար, ում հետ խաղացել կամ շփվել եմ, Սլավիկ:

Դեռ մանկուց այդպես է եղել, այդպես էլ մնում է:

**– Ո՞րն է ամենամեծ գնահատականը, որ Ձեզ տվել են...**

**Չենք հոգնի կրկնել, որ Դուք Սյունիքի սպորտը տասնամյակներ շարունակ աշխարհին ներկայացրած լեգենդար մարդ եք՝ Ձեր անունը սպորտի ֆեդերացիայի հանրագիտարանում գրանցած, և, թվում է, վաղուց պետք է արժանանայիք սպորտի վարպետի կոչման...**

**Ահա այս փոքրիկ, ցուրտ, մետաղե կառուցվածքով կացարանում տեսնում ենք տասնյակ մեդալներ, պատվոգրեր, գավաթներ, որոնց հետևում քաղաքի ու Ձեր կյանքն է՝ լի մեծագույն նվաճումներով և անդուլ աշխատանքով: Չե՞ք կարծում, որ այս անգնահատելի հարստության տեղը կարող էր լինել սպորտի թանգարանը՝ սերունդներին՝ ի տես և ի պահ, իբրև՝ Սիսիան քաղաքի, Սյունիքի մարզի սպորտային փառահեղ կենսագրություն:**

– Այո, կարծում եմ, բայց դրանից ինչ օգուտ, եթե այն շարունակություն չունի:

Ինձ համար այս պատերին ամրացված ամեն մի պատվոգիր, մեդալ ու շնորհակալագիր, գավաթ՝ արդեն իսկ մեծ պարգև է: Ամենամեծ պարգևն իմ վաստակն է, մարդկանց գնահատականն ու ամենօրյա ջերմ բարևները, որ հղում են՝ անունս լսելիս, քաղաքի սպորտային պատիվն է, որ տասնամյակներով բարձր եմ պահել: Սա մեծ գնահատական է...

Ինչ վերաբերում է սպորտի վարպետ կոչմանը, ասեմ՝ այն ժամանակ, երբ մեր թիմը սպորտային պիկեր էր նվաճում, շատ դժվար էր սպորտի վարպետի կոչման արժանանալը:

Սակայն, ես դարձա սպորտի վարպետության թեկնածու, և դրանից հետո մի երկար ժամանակ հասարակարգի ու նրա կառույցների փլուզման ծանր հետևանքների մեջ էինք. երկրաշարժ, Սումգայիթում, Բաքվում՝ ցեղասպանություն, պատերազմներ...

Իսկ երբ համեմատաբար նորմալ հունի մեջ ընկանք, ես արդեն մտածում էի իմ սաների մասին, նրանց համար էի ճանապարհ հարթում՝ դեպի մեծ սպորտ, սպորտի վարպետություն...

Սա էլ մեծ պարգև էր:

**– Այնուամենայնիվ, կարողացել եք ձևավորել վոլեյբոլի գերդաստան, ինչը նույնպես մեծ պարգև էր մեր հասարակությանը:**

– Այո, կարելի է և այդպես ասել:

**– Իբրև սպորտային Սյունիքում լեգենդ-մարդ, ի՞նչ կմաղթեիք մեր հասարակությանը:**

– Կմաղթեի՝ մանկապատանեկան տարիքից երեխաները պարտադիր զբաղվեն սպորտով, ուսումնական և մարզական հաստատությունները կրթեն ու դաստիարակեն առողջ սերունդ, դպրոցներում սպորտը դրվեր բարձր հիմքերի վրա:

Եվ ընդհանրապես, անկախ տարիքից ու սեռից, հասարակությունը պետք է լինի առողջ և կոփված:

Ընդունված է ասել՝ առողջ մարմնում՝ առողջ հոգի:

Սա ոչ միայն Սյունիքի հասարակությանն է պետք, այլ նաև՝ ողջ հայ ազգին:

Ինչո՞ւ ժխտել, որ Արցախյան առաջին պատերազմի մեր հաղթանակը մեծ չափով պայմանավորված էր նաև սերնդի կոփվածությամբ ու առողջ լինելով:

Եվ կրթությունն ու դաստիարակությունն էին ամուր հիմքերի վրա...

Մեզ ուժեղ, ֆիզիկապես և հոգեպես առողջ սերունդ ու հասարակություն է պետք՝ կյանքի բոլոր փորձություններին դիմագրավող:

Դրանից է նաև կախված թե՛ բանակի և թե՛ մեր երկրի հզորացումը:

**ՀԱՐՈՒՅՑԸ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ**

ՄԱՐԶԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

# Մարզաշխարհի նվիրյալը

**ԱՐՇԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ**
*Կապանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ, Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիայի նախագահ*

«Սպորտն ինձ համար մի ամբողջ կյանք է», – այս կարգախոսով է ապրել և աշխատել ՀՀ վաստակավոր մարզիչ Արսեն Պետրոսյանը:

Շրջապատում հարգված, հոգատար, կարգապահ, լավ ամուսին և ծնող. այսպես են բնութագրում նրան ճանաչողները: Հայաստանի սպորտի, մասնավորապես աթլետիկայի պատմության մեջ իր հետքը թողած Արսեն Պետրոսյանը կարողացել է վայելել շրջապատի սերն ու հարգանքը:

Ծնվել է Սյունյաց աշխարհի գյուղերից մեկում՝ Ձորաստանում, բանվորի ընտանիքում: 1976թ. ավարտել է Կապանի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցը: Խորհրդային բանակում պարտադիր զինծառայությունն անցնելուց հետո՝ 1986թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Սովորելուն զուգընթաց դպրոցում դասավանդել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկան:

Մանկուց զբաղվել է թեթև աթլետիկայով և պատանեկան հասակում արդեն իսկ ցուցաբերած լուրջ արդյունքների շնորհիվ ընդգրկվել ՀՀ աթլետիկայի պատանիների, ապա երիտասարդների ու մեծահասակների հավաքականների կազմում: Բազմիցս եղել է ՀՀ աթլետիկայի պատանիների, երիտասարդների և մեծահասակների առաջնությունների հաղթող և մրցանակակիր, մասնակցել համամիութենական մրցումների և գրավել մրցանակային տեղեր:

1984 թվականից անցել է մարզչական գործունեության և աշխատում է առայսօր:

2004 թվականից «Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենն էր, 2022 թ. փետրվարից՝ ավագ մարզիչ:

Հավասարակշռված, զուսպ, լրջախոհ, ազնիվ ու անկաշառ անձնավորություն է Արսեն Պետրոսյանը: Նրա՝ մարդ տեսակը հեռու է սնապարծությունից և մեծամտությունից: Չի սիրում ցուցադրել իր հաջողությունները, պարզապես աշխատում է նվիրումով, պատասխանատվությամբ, աշխատում անդադրում այնքան, որ իր մասին խոսեն գործերը: Իսկ գործերը փաստում են ծանրակշիռ ու շոշափելի արդյունքները: Ահա նրա լավագույն սաների արդյունքները.

**ՄԱՐԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ.** սպորտի վարպետ (հեռացատկ, լավագույն արդյունքը՝ 7.60 մ)՝ 1991 թ. Խորհրդային Միության պատանիների առաջնության չեմպիոն (ՈԴ, քբ. Ձերժինսկ) 7.29 մ արդյունքով:

**ՄԵՐՈՒԺԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ.** սպորտի վարպետ (հեռացատկ, լավագույն արդյունքը՝ 7.92 մ)՝ 1995 թ. ԱՊՀ ժողովուրդների սպարտակիադայի չեմպիոն (քբ. Սանկտ-Պետերբուրգ), 2002 թ. Եվրոպայի 2-րդ լիգայի առաջնություն՝ 3-րդ տեղ (Սերբիա, քբ. Բելգրադ), 2001 թ. Համահայկական խաղերի կրկնակի չեմպիոն, ՀՀ չեմպիոն:

**ԷՐԻԿ ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ.** սպորտի վարպետ (եռացատկ, լավագույն արդյունքը՝ 16.56 մ)՝ 1998 թ. Համաշխարհային պատանեկան խաղերի եզրափակիչ փուլի մասնակից (ՈԴ, քբ. Մոսկվա), 2001 թ. աշխարհի մինչև 20 տարեկանների առաջնության մասնակից (Չիլի, Սանտյագո), Եվրոպայի գավաթի խաղարկություն՝ 4-րդ տեղ, (քբ. Ռիգա), 2005 թ. Եվրոպայի ձմեռային առաջնության մասնակից (Իսպանիա, քբ. Մադրիդ), Համահայկական խաղերի արծաթե մեդալակիր, ՀՀ չեմպիոն:

**ՀԱՅԿԱՆՈՒՇ ԲԵԿԼԱՐՅԱՆ.** սպորտի վարպետի թեկնածու (հեռացատկ, եռացատկ, լավագույն արդյունքը՝ 6.01 մ, 13.15 մ)՝ 2004 թ. Միջազգային պատանեկան խաղերի չեմպիոն հեռացատկ մարզաձևից՝ 5.52 մ արդյունքով (ԱՄՆ, քբ. Քլիվլենդ), 2005 թ. Համաեվրոպական պատանեկան խաղեր՝ 3-րդ տեղ, եռա-

ցատկ, 12.78 մ արդյունքով (Իտալիա, ք. Լիգնանո), Աշխարհի մինչև 18 տարեկանների առաջնություն՝ 4-րդ տեղ, եռացատկ, 13.06 մ արդյունքով (Մարոկկո, ք. Մարաքեշ), Աշխարհի՝ մինչև 20 տարեկանների առաջնության մասնակից (Չինաստան, ք. Պեկին), 2007 թ. Համահայկական խաղերի չեմպիոն:

**ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.** սպորտի վարպետի թեկնածու (եռացատկ, լավագույն արդյունքը՝ 15.96 մ), 2006 թ. Եվրոպայի գավաթի խաղարկության մասնակից, 4-րդ տեղ (Սերբիա, Նովի Սադ), մի շարք միջազգային մրցումների մասնակից:

**ԼԵՎՈՆ ԱՂԱՍՅԱՆ.** միջազգային կարգի սպորտի վարպետ (եռացատկ, լավագույն արդյունքը՝ 17.16 մ)՝ 2013 թ. Եվրոպայի՝ ավագ տարիքի պատանիների առաջնության չեմպիոն (Իտալիա, ք. Ռիեթի), 2014 թ. Աշխարհի՝ մինչև 20 տարեկանների առաջնություն՝ 5-րդ տեղ՝ 16.28 (ԱՄՆ, Յուջին), 2016 թ. Ռիո դե Ժանեյրոյի, 2021 թ. Տոկիոյի օլիմպիական խաղերի մասնակից: Բալկանյան երկրների առաջնությունների յոթակի չեմպիոն: ՀՀ և Համահայկական խաղերի բազմակի չեմպիոն:

**ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ.** (եռացատկ՝ լավագույն արդյունքը՝ 15.94 մ, հեռացատկ՝ լավագույն արդյունքը՝ 7.37 մ), սպորտի վարպետ: 2016 թ. Եվրոպայի՝ մինչև 18 տարեկանների առաջնության եզրափակիչ փուլի մասնակից՝ 15.56 մ արդյունքով (Վրաստան, ք. Թբիլիսի), 2017 թ. Եվրոպայի մինչև 20 տարեկանների առաջնության եզրափակիչ փուլի մասնակից՝ 15.56 մ արդյունքով (Իտալիա, ք. Գրոսետո), 2018 թ. Աշխարհի՝ ավագ տարիքի պատանիների առաջնություն՝ 4-րդ տեղ՝ 15.94 մ արդյունքով (Ֆինլանդիա, ք. Տամպերե), 2016 թ. Բալկանյան երկրների մինչև 18 տարեկանների առաջնության բրոնզե մեդալակիր՝ 14.87 մ արդյունքով (Սերբիա, ք. Կրուշեվաց), Բալկանյան երկրների մինչև 20 տարեկանների առաջնության բրոնզե մեդալակիր՝ 15.60 մ արդյունքով (Թուրքիա, ք. Ստամբուլ): Մի շարք միջազգային մրցումների հաղթող և մրցանակակիր, ՀՀ և Համահայկական խաղերի չեմպիոն:

**ՅԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ.** 2020 թ. ամուսնանալով և տեղափոխվելով Կապան՝ սկսեց մարզվել ՀՀ վաստակավոր մարզիչ Արսեն Պետրոսյանի մոտ: Համահայկական խաղերի բազմակի չեմպիոն է, ՀՀ բազմակի չեմպիոն, ՀՀ ռեկորդակիր: Լավագույն արդյունքը՝ եռացատկ՝ 13.62 մետր, հեռացատկ՝ 6.30 մ: Բալկանյան խաղերի մինչև 20 տարեկանների ձմեռային առաջնությունում 12.30 մ արդյունքով գրավել է 3-րդ տեղ: 2017 թ. Աշխարհի՝ մինչև 18 տարեկանների առաջնությունում եզրափակիչ փուլի մասնակից՝ 12.65 մ արդյունքով:

Արսեն Պետրոսյանն իր կյանքը գնահատում է ոչ թե ապրած տարիներով, այլ այն գործերով, որ հասցրել է կատարել:

Որպես մարզիչ՝ նա իր սաների ձեռք բերած հաջողություններով ուրույն հետք է թողել ՀՀ աթլետիկայի զարգացման գործում:

Արսեն Պետրոսյանը սիրված մարզիչ է սաների կողմից, եղել է հարգված տնօրեն և այս պահին ավագ մարզիչ է: Մասնագիտական հմտությունները և կարողությունները նա կիրառում է նաև ի շահ պատանիների արժեհամակարգի դաստիարակության. մարզադաշտում և մարզասրահում նրա տված դասերը պատանի մարզիկներին, որպես կանոն, կյանքում էլ են օգնում:

Վաստակավոր մարզիչը համոզված է, որ մարդիկ, որոնք անցնում են մարզական քուրայով, հրաժարվում են վատ սովորություններից, հավատ ու կամք են ձեռք բերում սեփական ուժերի և հնարավորությունների նկատմամբ, սովորում զոհողությունների գնալ նպատակին հասնելու համար:

Արսեն Պետրոսյանը օպտիմիստ է: **«Առանց լավատեսության, –** ասում է նա, **– կյանքում բոլոր հնարավորությունները աչքիցդ կվրիպեն»:** Բայց և մերկ օպտիմիզմը սխալ համարելով՝ ռեալիստ լինելու կողմնակից է: **«Լավատեսությունը պետք է իր հիմքերը ունենա, –** շարունակում է մարզիչը: **– Կարելի է ասել, որ ես օպտիմիստ – ռեալիստ եմ»**: Նրա կարծիքով՝ հաղթանակներին պետք է շատ զգույշ վերաբերվել, գլխապտույտ չունենալ դրանցից ու չտարվել «աստղային» հիվանդությամբ: Սկզբում ստանալ բավականություն, իսկ հետո՝ եզրակացության հանգել: **«Հաղթանակը պետք է նոր հաղթանակներ ծնի»,** – ամփոփում է նա:

ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման գործում ունեցած վաստակի և ներդրած ավանդի, երկարամյա մարզչական գործունեության համար Արսեն Պետրոսյանը պարգևատրվել է տարբեր կարգի պատվոգրերով, շնորհակալագրերով և մեդալներով: Ծննդյան 60-ամյա տարեդարձի կապակցությամբ Սյունիքի մարզպետ Հ.Պողոսյանի կողմից արժանացել է շնորհակալագրի:

Բազմիցս ճանաչվել է ՀՀ աթլետիկայի տարվա լավագույն մարզիչ:

2002 թվականին նրան շնորհվել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզչի կոչում:

2013 թվականին Կապան քաղաքի 75-ամյակի առթիվ նրան շնորհվեց «Կապան» ոսկե մեդալ:

2018 թվականին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի կողմից շնորհվել է «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող» կոչում:

Վաստակավոր մարզիչը խոստովանել է, որ նման գնահատանքները պարտավորեցնում են և մղում նորանոր հաջողությունների:

Արսեն Պետրոսյանի համոզմամբ, ինչքան էլ մարդ հաջողակ լինի գործում ու հարգված շրջապատում, նրա ամենամեծ ձեռքբերումը երջանիկ ընտանիք ստեղծելն է: Եվ այսօր երջանիկ է Արսեն Պետրոսյանը, որովհետև ունի ամուր ընտանիք՝ 2 արժանավոր զավակ՝ ուստր և դուստր, 2 սիրասուն թոռնիկ:

Տարիների ընթացքում մարդը տիրապետում է այն բանին, ինչի վրա խարսխվում են ճշմարիտ նվաճումները, ձեռք է բերում այն, ինչ կարելի է տալ ուրիշներին, ճանաչում այն, ինչ կարելի է սովորեցնել, հարթում այն, ինչի վրա կարելի է կառուցել: //

ՄԱՐԶԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

# Միջազգային համարում ունեցող մարզիչ-մանկավարժը

**Մասնագիտական կողմնորոշումը դյուրին էր Սուրեն Ղազարյանի համար. հասակ է առել աթլետիկայի նվիրյալ, Հայաստանի վաստակավոր մարզիչ Արկադի Ղազարյանի ընտանիքում: Այլընտրանքի խնդիր չի ծագել: Միջին դասարաններից սկսած աթլետիկայով է զբաղվել Կապանի մանկապատանեկան մարզադպրոցում: Միջնակարգն ավարտելուց հետո ուսումնառությունը շարունակել է Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում: Բուհական տարիներին նրա մասնագիտական աշխատանքն ուսանողական գիտաժողովում արժանացել է երկրորդ մրցանակի:**

1982-ին սկսել է մարզչամանկավարժական գործունեությունը Կապանում, որը ձգվեց մինչև 2004 թվականը: Մարզչական աշխատանքին զուգընթաց ֆիզիկական կուլտուրա է դասավանդել Կապանի հանրակրթական դպրոցներում: 1989-ից 2004-ը ղեկավարել է Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցը: Ութ տարի Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիայի նախագահն էր, նաև եղել է Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի նախագահության անդամ (1992-2004 թթ.): 1989-2004 թթ. ղեկավարել է Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցը՝ շարունակել է մարզչական գործունեությունը, մարզել է Հայաստանի աթլետիկայի հավաքական թիմերը:

Այդ ժամանակամիջոցում նրա սանները դարձել են Հայաստանի աթլետիկայի, Համահայկական խաղերի չեմպիոններ ու մեդալակիրներ, աթլետիկայի համամիութենական (ԽՍՀՄ) և ԱՊՀ մրցումների ու Աթլետիկայի միջազգային մրցումների մրցանակակիրներ: Գործունեության ընթացքում դրսևորել է կազմակերպչին հատուկ ունակություններ. ձեռնամուխ էր եղել Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցի մասնաշենքի (աթլետիկական մարզասրահ) կառուցմանը, որի նախագիծն ու հողահատկացումը հաստատվել էին սպորտի նախարարության, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և Կապանի քաղխորհրդի գործկոմի կողմից: Ավմ, գործը կիսատ մնաց Խորհրդային Միության փլուզման և հայ-ադրբեջանական հակամարտության հետևանքով սկսված պատերազմի պատճառով...

2004 թվականը բեկումնային է եղել նրա մարզչական կարիերայում, որոշել է անցնել միջազգային մարզչական գործունեության և տարբեր երկրների աթլետիկայի ֆեդերացիաների և Ազգային օլիմպիական կոմիտեների հրավերով, պայմանագրային հիմունքներով աշխատել է արտերկրում: Առաջին երկիրն Իրանն էր, որտեղ մարզել է այդ երկրի ազգային հավաքականը, այնուհետև Հարավային Կորեան, որտեղ ազգային հավաքականի ցատկերի գլխավոր մարզիչն էր, նույն գործունեությունը շարունակել է Բահրեյնի Թագավորությունում և Ֆինլանդիայում: Տարբեր մարզական միջոցառումներ է կազմակերպել Ֆինլանդիայում, Հարավային Կորեայում, Բահրեյնում, Իտալիայում, Պորտուգալիայում, Հարավային Աֆրիկայի Հանրապետությունում և այլուր:

Սուրեն Ղազարյանն աթլետիկա մարզաձևից ճանաչվել է Հարավային Կորեայի (2008 թ.) և Ֆինլանդիայի (2016 թ.) տարվա լավագույն մարզիչ, արժանացել է Հարավային Կորեայի նախագահի շնորհակալագրին, Միջազգային օլիմպիական կոմիտեի և Աթլետիկայի միջազգային ասոցիացիայի գնահատանքի և ճանաչ-

ՄԱՐԶԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

# ԱՐԿԱԴԻ ՂԱԶԱՐՅԱՆ. **մարզիչը և մանկավարժը**

Կապանում աթլետիկա մարզաձևի զարգացումը մեծապես կապվում է մարզիչ-մանկավարժ, Հայաստանի վաստակավոր մարզիչ (արժանացել է 1990 թ.) Արկադի Ղազարյանի հետ: 15 տարեկանից հայրենի քաղաքում զբաղվել է աթլետիկայով և այլ մարզաձևերով: Հեռավոր 1959-ին է սկսել մարզչամանկավարժական գործունեությունը, երբ ավարտեց Երևանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը: Երեք տասնամյակ աթլետիկայի ավագ մարզիչ է աշխատել Կապանի մանկապատանեկան մարզադպրոցում, որին զուգընթաց ֆիզիկական կուլտուրա է դասավանդել Կապանի հանրակրթական դպրոցներում: Որտեղ դասավանդել է, մատաղ սերնդի մարմնակրթության գործը ամուր հիմքերի վրա է եղել: Ականատեսն եմ այդ ամենին թիվ 2 միջնակարգ դպրոցում, որի շրջանավարտն եմ: Արկադի Ղազարյանը սևեռուն հետևում էր հատկապես տղաների ֆիզիկական պատրաստությանը՝ իբրև հայրենիքի ապագա պաշտպանների:

Արկադի Ղազարյանի սաներից շատերը, բարձրագույն կրթություն ստանալով, գործունեություն են

Սուրեն Ղազարյանը ոչ միայն շարունակել է ընտանեկան լավագույն ավանդույթները, այլև ստեղծել է մարզական ընտանիք: Կինը՝ Նարինե Ղազարյանը, գեղարվեստական մարմնամարզուհի է, սպորտի վարպետության թեկնածու: Կապանի մարմնամարզության մարզադպրոցի առաջին սաներից է՝ Հայաստանի առաջնության հաղթող, բազմաթիվ մրցումների մրցանակակիր: Որպես մարզիչ աշխատել է Կապանի մարմնամարզության և աթլետիկայի մարզադպրոցներում: Աշխատել է նաև հարավկորեացի գեղասահորդների հետ՝ ֆիզպատրաստության մարզիչ, և Բահրեյնում՝ աղջիկների աթլետիկայի մարզիչ: Ֆինլանդիայում բարձրագույն կրթություն է ստացել, նախադպրոցական հաստատությունում կազմակերպում է մարզական ժամանցներ, տարաբնույթ միջոցառումներ:

Սուրեն Ղազարյանի որդիները մանկուց զբաղվել են աթլետիկայով: Երկուսն էլ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտի շրջանավարտ են, ավագը՝ Դավիթ Ղազարյանը, ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մարզչի կոչում ունի, իսկ կրտսերը՝ Վանը, ընտրել է կինեզիոլոգի մասնագիտությունը: Դավիթը ֆիզկուլտուրայի ուսուցիչ էր Կապանի շրջանի դպրոցներում, իսկ Վանը Ֆինլանդիայում հայտնի կինեզիոթերապևտ է, «Delgado Body» մարմնի շտկման ստուդիայի հիմնադիր:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ման հավաստագրերին:

Աթլետիկայի մարզումների վերաբերյալ բազմաթիվ մարզչական դասընթացներ է վարել Ֆինլանդիայում և Հարավային Կորեայում: Վերջինս աթլետիկայի ֆեդերացիայի առաջարկությամբ ու հովանավորությամբ աթլետիկայի մարզումների վերաբերյալ գիրք է գրել և նկարահանել ուսումնամեթոդական տեսաֆիլմ: Գիրքն իր հեղինակային իրավունքով 2009 թ. հրատարակվել է Սեուլում, բացի այդ իր ուսումնամեթոդական ձեռնարկն ու տեսաֆիլմը, որպես աթլետիկայի մարզումների մեթոդիկայի այլընտրանքային մոտեցումների ուղեցույց, Հարավային Կորեայի աթլետիկայի ֆեդերացիան մատուցել է հարավկորեական մարզակումբներին և մարզական կրթօջախներին:

Նրա սաները մասնակցել են երեք օլիմպիական խաղերի, որից երկուսը՝ եզրափակիչ մրցումներում՝ Պեկին՝ 2008 թ., Ռիո դե Ժանեյրո՝ 2016 թ., Տոկիո՝ 2000 թ.: Ինքն անձամբ մասնակցել է երկու օլիմպիական խաղերի և այլ բարձրակարգ մրցումների:

Սուրեն Ղազարյանն այժմ էլ Ֆինլանդիայում շարունակում է մասնագիտական գործունեությունը՝ որպես աթլետիկայի մարզիչ-խորհրդատու՝ բարձրակարգ աթլետների մարզումների և մրցելույթների վերլուծաբան:

Ապրելով հազարավոր կիլոմետրեր հայրենիքից հեռու՝ չի կտրել կապն իր ծննդավայրից: Կապանի աթլետիկայի մարզադպրոցի գործունեությունը և կապանցի մարզիկների մրցելույթները միշտ նրա տեսադաշտում են: Կապանի մարզադաշտի հեռացատկի (եռացատկի) հատվածն արդիականացնելու, ինչպես նաև հարազատ մարզադպրոցի սաների մարզումները և հարազատ քաղաքում անցկացվող մրցումները լավագույնս կազմակերպելու նպատակով Կապանին նվիրաբերել է միջազգային չափանիշներին համապատասխանող 60 մետր երկարությամբ «Մոնդո» ֆիրմայի ռետինե ծածկույթ, որը միակն է Հայաստանում:

Սերելով մարզական ընտանիքից

ՄԱՐԶԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

# Բասկետբոլի նվիրյալը

**ԱՐՇԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ**
*Կապանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ, Այունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիայի նախագահ*



Կապանում բասկետբոլ մարզաձևի զարգացումն իրավամբ կապվում է Լյուդվիգ Ավագյան մարզչի անվան հետ, ում ողջ կյանքը մարզաշխարհում է անցել: Համոզվելու համար բավական է հպանցիկ թերթել նրա կյանքի տարեգրության էջերը: Ծնվել է 1946 թ-ի փետրվարի 26-ին Կապան քաղաքում բանվորի ընտանիքում: 1965 ուստարում ավարտել է Կապանի 1-ին միջնակարգ դպրոցը: Դպրոցական տարիներին զբաղվել է բասկետբոլով, մասնակցելով քաղաքային, փնջային և հանրապետական մասշտաբի մրցումների: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հեռակա բաժինը, ավարտել 1972 թվականին: Ուսմանը զուգահեռ 1966 թվականին Կապանի այն ժամանակվա քաղժողկրթբաժնին կից մանկապատանեկան մարզադպրոցում՝ բասկետբոլի մարզիչ:

1968 թ. Կավարտի և Բարաբաթումի ութամյա դպրոցներում մարմնակրթության դասեր է տվել մատաղ սերնդին: 1969 թվականի նոյեմբերից տեղափոխվել է քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոց, իսկ 1971թվականի սեպտեմբերից նորից աշխատանքի անցել մարզադպրոցում՝ բասկետբոլի մարզիչ, այնուհետև՝ ավագ հրահանգիչ: 1978 թ. ստացել է հանրապետական կարգի մրցավարի կոչում: 1994 թվականի նոյեմբերից մինչև 2016 թվականի օգոստոսի 1-ը պաշտոնավարել՝ որպես մարզադպրոցի տնօրեն, այնուհետև անցել է կենսաթոշակի: Եղան նաև այլ հաջողություններ:

Մարզադպրոցում աշխատած տարիներին բասկետբոլի թիմը մասնակցել է մի շարք հանրապետական մրցումների՝ հիմնականում եզրափակիչ փուլում և ունեցել հաջողություններ թե պատանիների ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հեռակա բաժինը, ավարտել 1972 թվականին: Ուսմանը զուգահեռ 1966 թվականին Կապանի այն ժամանակվա քաղժողկրթբաժնին կից մանկապատանեկան մարզադպրոցում՝ բասկետբոլի մարզիչ:

1968 թ. Կավարտի և Բարաբաթումի ութամյա դպրոցներում մարմնակրթության դասեր է տվել մատաղ սերնդին: 1969 թվականի նոյեմբերից տեղափոխվել է քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոց, իսկ 1971թվականի սեպտեմբերից նորից աշխատանքի անցել մարզադպրոցում՝ բասկետբոլի մարզիչ, այնուհետև՝ ավագ հրահանգիչ: 1978 թ. ստացել է հանրապետական կարգի մրցավարի կոչում: 1994 թվականի նոյեմբերից մինչև 2016 թվականի օգոստոսի 1-ը պաշտոնավարել՝ որպես մարզադպրոցի տնօրեն, այնուհետև անցել է կենսաթոշակի: Եղան նաև այլ հաջողություններ:

Մարզադպրոցում աշխատած տարիներին բասկետբոլի թիմը մասնակցել է մի շարք հանրապետական մրցումների՝ հիմնականում եզրափակիչ փուլում և ունեցել հաջողություններ թե պատանիների ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի հեռակա բաժինը, ավարտել 1972 թվականին: Ուսմանը զուգահեռ 1966 թվականին Կապանի այն ժամանակվա քաղժողկրթբաժնին կից մանկապատանեկան մարզադպրոցում՝ բասկետբոլի մարզիչ:

1968 թ. Կավարտի և Բարաբաթումի ութամյա դպրոցներում մարմնակրթության դասեր է տվել մատաղ սերնդին: 1969 թվականի նոյեմբերից տեղափոխվել է քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոց, իսկ 1971թվականի սեպտեմբերից նորից աշխատանքի անցել մարզադպրոցում՝ բասկետբոլի մարզիչ, այնուհետև՝ ավագ հրահանգիչ: 1978 թ. ստացել է հանրապետական կարգի մրցավարի կոչում: 1994 թվականի նոյեմբերից մինչև 2016 թվականի օգոստոսի 1-ը պաշտոնավարել՝ որպես մարզադպրոցի տնօրեն, այնուհետև անցել է կենսաթոշակի: Եղան նաև այլ հաջողություններ:

Մարզադպրոցում աշխատած տարիներին բասկետբոլի թիմը մասնակցել է մի շարք հանրապետական մրցումների՝ հիմնականում եզրափակիչ փուլում և ունեցել հաջողություններ թե պատանի-

ծավալել հայրենի քաղաքում, շարունակելով մարզաձևի բարի ավանդույթները, իսկ ոմանք հաջողությամբ արտերկրում են մարզչական գործունեությամբ զբաղվում՝ արժանապատվորեն ներկայացնելով Հայաստանը՝ այդպիսով ճանաչելի դարձնելով այն և Կապան քաղաքը աշխարհին:

Արկադի Ղազարյանի սաները սահմանել են Հայաստանի աթլետիկայի ազգային (մեծահասակների, երիտասարդների և պատանիների) տասը ռեկորդ, որից կարելի է առանձնացնել՝ Վաչե Մովսիսյան՝ հեռացատկ՝ 7.96 մ (Կիսլովոդսկ, Ռուսաստան 1981 թ.) և 7.92 մ (Երևան 1981 թ.), Ռուդիկ Մաթևոսյան՝ 400 մ արգելավազք, 50.79 վրկ (Մոսկվա, Ռուսաստան 1984 թ.) և պատանիների՝ 54.58 վրկ (Դնեպրոպետրովսկ, Ուկրաինա 1979 թ.), Էդուարդ Մեսրոպյան բարձրացատկ՝ 2.16 մ (Երևան 1985 թ.): Ի դեպ, Ռուդիկի և Էդուարդի ցուցանիշները չեն գերազանցվել մինչև այսօր: Հայաստանի ռեկորդներ են սահմանել նաև Արմեն Բաղդասարյանը (2000 մ խոչընդոտավազք), Ավետիք Հովհաննիսյանը (գնդի հրում), Ռաֆիկ Աբրահամյանը (2000 մ խոչընդոտավազք), Ռիտա Աբրահամյանը (վազք 1500 մետր), Դիանա Պետրոսյանը (110 մետր արգելավազք), Մարինե Հարությունյանը (եռացատկ):

Հայաստանի ռեկորդներ են սահմանել նաև Վալերի Հովհաննիսյանը (սկավառակի նետում), Կոստյա Կալիևը (հեռացատկ), Լուսիկ Ներսիսյանը (հեռացատկ), Ֆլորա Հակոբյանը (հեռացատկ) և կապանցի այլ աթլետներ:

Նրա մարզչական գործունեությունը չի պարփակվել սոսկ Կապանի տարածաշրջանով:

Որպես Հայաստանի աթլետիկայի հավաքական թիմերի մարզիչ, կազմակերպել է բազմաթիվ մրցումներ և ուսումնամարզական հավաքներ՝ Հայաստանում և Խորհրդային Միության հանրապետություններում: Հանդես է եկել Հայաստանի աթլետիկայի հավաքական թիմերի մարզիչ, մասնակցել Աթլետիկայի երիտասարդական առաջնությանը, մի շարք միջազգային մրցումների, ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների, աթլետիկայի ԽՍՀՄ առաջնությունների և այլ կարևորագույն մրցումների:

Ղազարյանի սաները բարձր արդյունքներով սահմանել են աթլետիկայի մրցումների յուրահատուկ ռեկորդներ: Ընդամենը չորս հոգուց բաղկացած Կապան քաղաքի հավաքականը Հայաստանի թիմային առաջնությունում հաղթեց մի քանի տասնյակ մարզիկներից բաղկա-

ների և թե մեծահասակների պայքարում:

1989-1990-ական թվականներին մարզադպրոցի բասկետբոլի տղամարդկանց թիմը դարձավ Ա խմբի չեմպիոն, առաջին անգամ իրավունք նվաճեց հանդես գալու բարձրագույն խմբում:

1994 թվականի հոկտեմբերին Կապանի տղամարդկանց և կանանց բասկետբոլի թիմերը դարձան Սյունիք- Զանգեզուր մարզական խաղերի հաղթող: Հաջողությունը կրկնվեց 1995 թվականին, դարձան Սյունիք-Արցախ հանդիպման հաղթող:

2004 թվականի հունիս ամսին Դիլիջանում մարզադպրոցի պատանիների բասկետբոլի թիմը դարձել է հանրապետության դպրոցականների մարզական խաղերի չեմպիոն:

Գնահատանքը չի ուշացել. 2002 թվականին արժանացել է ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատողի կոչման: 2022 թ. օգոստոսի 9-ին Կապան քաղաքի օրվա կապակցությամբ պարգևատրվել է համայնքի ղեկավարի պատվոգրով՝ մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության գործում ներդրած ավանդի, համայնքում սպորտի մասսայականացման և զարգացման գործում ունեցած հաջողությունների, երկարամյա և արդյունավետ մարզական գործունեության համար:

Թեպետ վաստակած հանգստի է անցել և չնայած առաջացած տարիքին՝ ծառայողական հիմունքներով աշխատում է Կապանի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցում, բասկետբոլի մարզչի իր գիտելիքները և հարուստ մարզական փորձը հաղորդելով կրտսեր սերնդին:

//

ցած հանրապետության մյուս քաղաքների թիմերին (միավորները հաշվարկվում էին արդյունքների գնահատման աղյուսակով): Դժվար է թվարկել Արկադի Ղազարյան մարզիչ-մանկավարժի՝ հաջողության հասած մարզիկներին, այնուամենայնիվ նշենք, որ նա պատրաստել է աթլետիկայի համամիութենական (ԽՍՀՄ) մրցումների ավելի քան 30 չեմպիոն և մեդալակիր, իսկ Հայաստանի աթլետիկայի առաջնություններում նրա 100-ից ավելի սան դարձել են հաղթող ու մեդալակիր:

1989-ին հիմնադրվել է (նրա նախաձեռնությամբ) Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցը, ինչպես նաև, դարձյալ նրա նախաձեռնությամբ Հայաստանում առաջինը Կապանի մարզադաշտի աթլետիկական վազքուղիները և ցատկահատվածները ռետինապատվեցին ժամանակակից վազքուղիներով, արդիականացվեցին աթլետիկական հատվածները, որը հնարավորություն տվեց հավուր պատշաճի կազմակերպել Կապանի աթլետների մարզումները, նաև տարիներ ի վեր անցկացնել հանրապետական մասշտաբի մրցումներ, մարզական խաղեր, ուսումնամարզական հավաքներ: Ռետինապատվեց նաև Կապանի մանկապատանեկան մարզադպրոցի մարզադահլիճը:

Արկադի Ղազարյանի ընտանիքը մարզական է. ավագ որդին՝ Սուրենը աթլետիկայի ճանաչված մարզիչ է, Կապանի աթլետիկայի մարզադպրոցի առաջին տնօրենը, Հարավային Կորեայի, Բահրեյնի և Իրանի աթլետիկայի ազգային հավաքականների մարզիչն է եղել: Կրտսեր որդին՝ Արմեն Ղազարյանը, աթլետիկայի Հայաստանի պատանիների չեմպիոն է եղել (նիզակ): Երկուսն էլ Երևանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտի շրջանավարտներ են: Թոռները՝ Դավիթ և Վան Ղազարյանները ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտի շրջանավարտներ են, սպորտային աշխարհի մարդիկ: Ղազարյաններն այժմ բնակվում են Ֆինլանդիայում, որտեղ նույնպես մարզական արդյունավետ գործունեություն են ծավալել:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

## ՄԱՐԶԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

# ՌԱՖԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. «Ֆիզկուլտուրայի հանդեպ հակումս ձևավորվել է թիվ 1 դպրոցում»

**Ռաֆիկ Հարությունյանի գիտակցական կյանքն անցել է մի ոլորտում՝ մանկավարժության, այն է՝ դեռահասների ֆիզիկական դաստիարակություն: 1955 թ. խորհրդային բանակից զորացրվելուց հետո շարունակեց ուսումը գյուղմեխանիզացիայի տեխնիկումում, որը համատեղում էր աշխատանքի հետ Երևանի էլեկտրալամպերի գործարանում:**

Բայց Ռաֆիկ Հարությունյանի տարերքը սպորտն էր, շրջապատում նրան առավելապես ճանաչում էին որպես սպորտսմեն, և պատահական չէ, որ հրավիրեցին խաղալու այն ժամանակվա «Աշխատանքային ռեզերվներ» կամավոր ընկերության ֆուտբոլային թիմում: Երկու տարի հետո նշանակեցին Կապանի սպորտկոմիտեի նախագահ, հեռակա կարգով ընդունվեց և ավարտեց Երևանի ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտը: Ընդունվեց նաև Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը (հեռակա ուսուցում), բայց ընտանեկան պայմաններից ելնելով՝ թերի թողեց ուսումը: Դարձավ մարզադպրոցի տնտեսական մասի վարիչը, այնուհետև՝ տնօրեն, 1970-ին տեղափոխվեց Կապանի թիվ 1 դպրոց: «Ֆիզկուլտուրայի նկատմամբ սերն իմ մեջ ձևավորվեց թիվ մեկ դպրոցում, որտեղ բախտ վիճակվեց աշակերտել Արշամ Վեզիրյանին (Ամի)», – վերհիշում է Ռաֆիկ Հարությունյանը: Այնուհետև աշխատել է թիվ 6 դպրոցում:

1991-ին անցավ կենսաթոշակի, սակայն շարունակեց ֆիզկուլտուրա դասավանդել Օխտարի, Շիկահողի, Նորաշենիկի միջնակարգ դպրոցներում (վերջինում նաև դպրոցի տնօրեն): Տեղափոխվելով Կապան՝ անցավ հասարակական աշխատանքի՝ հայրենական մեծ պատերազմի և աշխատանքի վետերանների խորհրդի նախագահի տեղակալ: 2013-ին ընտրվեց Կապանի տարածաշրջանային վետերանների խորհրդի նախագահ, որի պարտականությունները կատարում էր մինչև կյանքի վերջին օրերը: //

ՄԱՐԶԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

# ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ. «Հնարավոր չէ՝ հոգի դնես մի գործի մեջ, և ոչինչ դուրս չգա»

Սա կապանյան ֆուտբոլում մնայուն հետք ու բարի հուշեր թողած Վլադիմիր՝ նույն ինքը Իլյա Պետրոսյանի արտահայտած դիպուկ մտքերից մեկն է: Կապանյան ֆուտբոլի երախտավորի, ով այլևս մեզ հետ չէ, անցած ուղին ուշագրավ և ուսանելի շատ դրվագներ ունի:

Եվ ընդհանրապես ուսուցողական և հետաքրքրական էին նրա դիտարկումները ոչ միայն ֆուտբոլի, այլև հանապազօրյա կյանքի շատ ու շատ կողմերի մասին:

Ավարտել է Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Երևանի ֆիզկուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, ծառայել խորհրդային բանակի՝ ԳԴՀ-ում տեղակայված սահմանափակ կոնտիգենտի կազմում, բանակում էլ անբաժան է եղել ֆուտբոլից: Զորացրվելուց հետո հայրենի քաղաքում մանկավարժական-մարզչական բեղուն գործունեություն է ծավալել: Եղել է նաև վարչական աշխատանքի ոլորտում՝ Կապան քաղաքի սպորտկոմիտեի նախագահ, Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մասնագետ:

Բայց նրա տարերքը ֆուտբոլն էր և միայն ֆուտբոլը: Ֆուտբոլի հանդեպ սերը նրան կապեց այդ մարզաձևին, այլ կերպ ասած՝ «հիվանդացավ» ֆուտբոլով: Հատկապես հաճույքով էր աշխատում պատանի ֆուտբոլիստների հետ: Նրա անձնական արխիվից մեզ հասավ մի լուսանկար, որին կից գրությունը տեղեկացնում էր, որ Ղափան քաղաքի «Նաիրի» թիմի պատանի ֆուտբոլիստները (մարզիչ՝ Վլադիմիր Պետրոսյան) «Կաշվե գնդակի» հանրապետության փնջային մրցումներում գրավել են առաջին տեղը: Ափսոս, հնարավոր չեղավ ճշտել տարեթիվը: Տարեց ֆուտբոլասերները հիշում են, թե այդ մրցումներն ինչպիսի մասսայականություն էին

ՄԱՐԶԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

վայելում: Պետրոսյանն այն հաստատ համոզումն ուներ, և այդպես էլ կա, որ մանկապատանեկան ֆուտբոլը երբեք չպիտի վրիպի ֆուտբոլային չինովնիկների տեսադաշտից:

Կապանցի ստաժավոր ֆուտբոլասերի հիշողության մեջ տակավին թարմ է նրա հուսալի խաղը թիկունքում: Հիշում եմ՝ խաղադաշտ էր մտնում ավագի թևկապով, ասել է թե՝ ինքն էր խաղի կազմակերպիչը, թիմակիցներին ոգեշնչողը, գրոհի տանողը: Իսկ այն տարիներին Կապանը հյուրընկալում էր թիմերի՝ ՌԴ մարզերից, Հյուսիսային Կովկասից, Ադրբեջանից և Վրաստանից:

Մի քանի տասնամյակ նա կապանյան ֆուտբոլի ակունքներում էր կանգնած և տեսել է հաղթանակներ, վերելքներ ու վայրէջքներ: Առաջին անգամ քաղաքի պատմության մեջ (1989 թ.) «Կապան» ֆուտբոլային թիմը նվաճեց հանրապետության չեմպիոնի կոչումը, իսկ 1991 թ. դարձավ անկախ Հայաստանի չեմպիոն (գլխավոր մարզիչ՝ Ֆելիքս Վերանյան, մարզչի օգնական՝ Վլադիմիր Պետրոսյան): Ընդհանրապես նա եղել է Կապանի «Սյունիք» թիմի պետ, «Գանձասար» թիմի ավագ մարզիչ: Ակտիվ ֆուտբոլին հրաժեշտ տալուց հետո էլ կապերը չի խզել ամենամասսայական մարզաձևից: Դաշտ էր մտնում վետերանների թիմի կազմում, որը փաստող մի լուսանկար կա, որում նաև ֆուտբոլի մեծ երկրպագու, Սյունիքի առաջին մարզպետ Սուրեն Աբրահամյանն է, կապանյան ֆուտբոլի տարբեր սերունդների ներկայացուցիչներ:

Տարիներ առաջ՝ 2009 թվականին («Սյունյաց երկիր», 15 հունվարի 2009 թ.), հարցազրույց էի ունեցել Վլադիմիր Պետրոսյանի հետ մանկապատանեկան ֆուտբոլի (և ոչ միայն) առջև ծառացած հիմնախնդիրների շուրջ: Վերջում ընդհանրական հարց էի ուղղել նրան, թե ինչպե՞ս կարելի է վերականգնել հայկական ֆուտբոլի սասանված հեղինակությունը: Պատասխանել էր՝ ֆուտբոլում վաստակ ունեցած մարդիկ պիտի մնան ֆուտբոլի աշխարհում և նպաստեն մարզաձևի զարգացմանը, հետո ավելացրել՝ մեր ֆուտբոլի հեղինակությունը պիտի վերականգնենք ազգովի, ամենքի ավանդը պիտի ներդրվի հայկական ֆուտբոլը ճգնաժամից հանելու համար...

Ցավոք, մեկուկես տասնամյակ առաջ Վլադիմիր Պետրոսյանի բարձրաձայնած մտքերը այժմեական և հրատապ են նաև մեր օրերում...

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# ԳԱՌՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ. **Վոլեյբոլի կապանցի երախտավորներից մեկը**



**Վոլեյբոլ մարզաձևը Կապանում սկսել է զարգանալ 1920-30-ական թվականներին՝ ֆուտբոլի հետ զուգահեռ: Արդեն հետպատերազմյան շրջանում՝ 1945-50-ական թվականներին, Կապանն ուներ վոլեյբոլի տղամարդկանց ու կանանց առաջատար հավաքականներ: Եթե համեմատելու լինենք Գորիսի վոլեյբոլի հավաքականների հետ, երկու կողմերն էլ ունենում էին հաջողություններ և պարտություններ:**

1960-70-ական թվականների մրցումների ժամանակ Կապանի հավաքականում առանձնանում էր սևաչյա մի պատանի, ով ցուցադրում էր տեխնիկատակտիկական գեղեցիկ խաղ ու հնարքներ, ով հետագայում՝ երկու տասնամյակից ավելի, մարզում էր Կապանի տղամարդկանց և կանանց հավաքականները...

Խոսքը Գառնիկ Արմենակի Հակոբյանի մասին է՝ Գուլամ մականունով:

Նրա մարզիչը եղել է Արկադի Աբրահամյանը:

Գուլամը ծնվել է 1942 թվականին՝ Կապանում, մանկությունից զբաղվել վոլեյբոլ մարզաձևով, մարզվել դպրոցական թիմերում, մասնակցել քաղաքի, շրջանի, հանրապետության առաջնություններին: Կապանի հավաքականում խաղացել է 1965 թվականից մինչև 1985 թվականը՝ երկու տասնամյակ:

1966 թվականին Կապանի տղամարդկանց վոլեյբոլի հավաքականը՝ մասնակցելով հանրապետական սպարտակիադայի եզրափակչին, գրավում է առաջին տեղը, պարգևատրվում ոսկե մեդալներով և առաջին կարգի դիպլոմներով:

1972-1978 թվականներին Գառնիկը խաղացել է Զանգեզուրի փնջի վոլեյբոլի հավաքականում: Այն ժամանակ այդպիսի հնարավորություններ էին տալիս՝ կազմել փնջի հավաքական՝ տարբեր շրջաններից:

1984 թվականին մարզելով Կապանի վոլեյբոլի տղամարդկանց թիմերից մեկը, և մասնակցելով քաղաքի գավաթի մրցումներին, նվաճում է գավաթը, մասնակցում հանրապետության եզրափակիչ խաղերին:

1972-1982 թվականներին նա մարզել է Կապանի լեռնամետալուրգիական տեխնիկումի վոլեյբոլի կանանց և տղամարդկանց թիմերը, որոնք մասնակցել են տեխնիկումների հանրապետության առաջնություններին: 1978 թվականին կանանց թիմը գրավեց առաջին տեղ:

Գառնիկ Հակոբյանն է հիմնադրել «Գանձասար» ֆուտբոլային ակումբը, որը Հայաստանի մարզաշխարհում ժամանակին մեծ հռչակ է ունեցել: Նա մեծ հեղինակություն էր վայելում Կապանում և տարածաշրջանում:

Գառնիկ Հակոբյանը մարզական Կապանի երախտավորներից էր, քանզի մեծ ներդրում ունի սպորտի բնագավառում, նաև արել է հնարավորը մարզական Կապանը Հայաստանում՝ ճանաչելի դարձնելու համար:

Վաղամեռիկ որդու՝ ֆուտբոլիստ Արթուր Հակոբյանի հիշատակին տասը տարի շարունակ ֆուտբոլային մրցաշար է կազմակերպել:

//

ՄԱՐԶԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

# Վոլեյբոլի տաղանդավոր մարզիչը

**Հայաստանի վոլեյբոլի պատմության մեջ իրենց ակնառու տեղն ունեն նաև Սիսիանի մարզիկները:**

Այս մարզաձևում սիսիանցիների գրանցած հաջողությունների ավելի քան վաթսունամյա պատվաբեր ավանդույթի սկզբնավորումը կապված է վոլեյբոլի մարզիչ Մանվել (Մուշեղ) Ամիրխանյանի գործունեության հետ:

Ծնվել է 1932 թվականին, Ղարաքիլիսա գյուղում: 1949 թվականին ավարտել է Սիսիանի միջնակարգ դպրոցը: 1951-1955 թվականներին սովորել է Երևանի ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտում: Բուհն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Շաքի գյուղի դպրոցում որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ:

1955 թվականից Մանվել Ամիրխանյանը մարզել է վոլեյբոլ մարզաձևի Սիսիանի պատանիների ու աղջիկների, կանանց ու տղամարդկանց հավաքականները: Որպես հմուտ կազմակերպիչ, երկար տարիներ մասնակցել է վոլեյբոլի շրջանային և հանրապետական առաջնություններին:

1960 թվականին նշանակվել է Սիսիանի նորաստեղծ մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն: Այստեղ սկսել են պարապմունքներ անցկացնել տարբեր մարզաձևերի առաջին մանկապատանեկան խմբերը: Տարիների ընթացքում մարզադպրոցի գործունեությունն ընդարձակվում էր, աճում էր սպորտի հանդեպ սիսիանցիների հետաքրքրությունը:

Մանվել Ամիրխանյանի եռանդուն մարզչական գործունեության շնորհիվ Սիսիանի շրջանում հատկապես զարգացավ վոլեյբոլ մարզաձևը: 1960-1970-ական թվականներին տաղանդավոր մարզիչը Հայաստանի հավաքականին տվեց մեկ տասնյակ լավագույն սան: Նրանց թվում են՝ Էդիկ Վարդանյանը («Վարազ Էդո»-ն), Աղվան Հակոբյանը, Ռիմա Ստեփանյանը, Էլիդա Հակոբյանը, Լաուրա Խուդավերդյանը, Զեմֆիրա Դովլաթյանը, Ստյոպա Մկրտումյանը և Լիդա Հակոբյանը: Աղվան Հակոբյանը 1962-1971 թվականներին անընդմեջ եղել է Հայաստանի վոլեյբոլի հավաքականի առաջատար խաղացողներից մեկը:

Մանվել Ամիրխանյանը մահացել է 1998 թվականին:

Արդեն հինգ տարի է, ինչ Սիսիանի մարզադպրոցը Մանվել Ամիրխանյանին նվիրված մինի ֆուտբոլի հուշամրցաշար է անցկացնում, որի հովանավորը նրա որդին է՝ Աշոտ Ամիրխանյանը:

**Ն. ԱԴՈՆՑԻ ԱՆՎԱՆ ՍԻՍԻԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋԻՑ**
**16 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 Թ.**

*Լուսանկարում (1967թ.) պատկերված է Սիսիանի մարզադպրոցի վոլեյբոլի աղջիկների հավաքականը՝ մարզիչ Մանվել Ամիրխանյանի հետ: Ձախից աջ կանգնած են՝ Գայանե Սողոմոնյանը, Արդա Գրիգորյանը, Արդա Գալստյանը, Նորվարդ Մելիքսեթյանը, Գայանե Բաղդասարյանը, Անահիտ Մովսեսյանը, Անահիտ Խաչատրյանը, Ազնիվը, Սոնա Ղազարյանը, Անուշ Նազարյանը, Մարիետա Միրզախանյանը և Մելանյան:*

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

# 15-ամյա Ինեսա Ադամյանը

Գեղարվեստական մարմնամարզությունը Սյունիքում աստիճանաբար որոշակի տեղ է զբաղեցնում: Այդ մասին վկայող բազմաթիվ օրինակներից մեկը 15-ամյա Ինեսա Ադամյանի մարզական կարիերան է...

Ծնվել է 2009 թ. հունիսի 15-ին Կապան քաղաքում: Սովորում է Սյունիքի միջնակարգ դպրոցում, սիրում է մաթեմատիկա, հայոց լեզու և հայ գրականություն առարկաները:

Միևնույն ժամանակ սիրում է գեղարվեստական մարմնամարզությունը, որով և զբաղվում է հինգ տարեկանից, իսկ ներկայումս հաճախում է Կապանի մանկապատանեկան մարմնամարզության մարզադպրոց:

Ինեսան հասցրել է մասնակցել մի շարք մրցումների՝ նաև հանրապետության սահմաններից դուրս:

Այսպես՝ 2024 թ. հունիսի 28-ից հուլիսի 1-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղի է ունեցել գեղարվեստական մարմնամարզության առանձին գործիքների և բազմամարտի «Նելի Սալաձեի» մրցաշարը, որին մասնակցում էր նաև Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության թիմը (ավագ մարզիչ՝ Օլգա Դունաևսկայա): Թիմի կազմում էր նաև Ինեսա Ադամյանը: Կապանցի մարզիկներն այնտեղից վերադարձել են տարբեր գործիքներից ու բազմամարտից մի քանի մրցանակային տեղ նվաճած:

Այնուհետև՝ 2024 թ. հոկտեմբերի 4-7-ը Երևանում անցկացվեց «Քայլ դեպի երազանք» առաջնությունը, որին նույնպես մասնակցեց Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցի թիմը, որի կազմում էին Ինեսա Ադամյանը, Էլիզա Լաչինյանը, Ռիտա Շահվալադյանը, Էլիզա Համբարձումյանը: Այդ առաջնությունում ևս կապանցի մարզիկները հաջողություններ գրանցեցին:

Ընթացիկ տարում, այդ ամենով հանդերձ, Ինեսայի կյանքում տեղի ունեցած ամենամեծ իրադարձությունը մասնակցությունն էր գեղարվեստական մարմնամարզության Եվրոպայի 40-րդ առաջնությանը, որը տեղի ունեցավ մայիսի 22-26-ը Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում: Ի դեպ, նա կապանցի առաջին մարզուհին է, ով մասնակցության իրավունք ստացավ նման պատասխանատու մրցմանը:

Ինեսայի մարզական կենսագրությունն իրադարձություններով հարուստ էր նաև նախորդ տարիներին: Նա մասնակցել է նաև 2021, 2022, 2023 թվականներին անցկացված մի շարք առաջնությունների ու միշտ էլ զբաղեցրել պատվավոր տեղեր:

Այդ ամենի շնորհիվ Ինեսա Ադամյանը 2024 թ. հոկտեմբերի 5-ին արժանացել է սպորտի վարպետի թեկնածուի կոչման՝ գեղարվեստական մարմնամարզությունից:

Ներկայումս նա պատրաստվում է նոր մրցումների: Առաջիկայում կմասնակցի Գյումրիում և Վրաստանում կայանալիք առաջնություններին:

Օրեր առաջ հանդիպեցինք Ինեսային. պատմում էր, թե մրցումներին մասնակցելուց հետո ինչ փոփոխություններ և զարգացումներ են տեղի ունենում իր մոտ. **«Նախկինում լարված էի, այժմ՝ ոչ: Մրցումների ընթացքում մյուս մասնակիցներից էլ որոշ հնարքներ կամ էլեմենտներ եմ սովորում–ընդօրինակում, որն էլ կիրառում եմ հետագա մեր պարապմունքներում»:**

Պատմում է նաև, որ ամեն անգամ՝ մրցումներից վերադառնալիս, իրեն ուրախությամբ և հպարտությամբ են դիմավորում ոչ միայն ծնողները, այլև դասընկերները, ինչն իրեն ավելի է պարտավորեցնում:

Ինեսան հիացած է իր մարզչի՝ Օլգա Դունաևսկայայի գործունեությամբ, նշում է, որ հենց նա է գեղարվեստական մարմնամարզության հիմնադիրը Կապանում: Ու շաբաթական վեց օր մասնակցելով մարզադպրոցի պարապմունքներին՝ ինքն ավելի վստահ է դառնում, ավելի վարպետացած...

Ինեսա Ադամյանին և նրա մարզիչ Օլգա Դունաևսկայային՝ մեր լավագույն մաղթանքները, չէ՞ որ պատրաստվում են նոր մրցումների:

**ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց

**Կապանի մարզադաշտին կից այս մարզօջախը սկսել է գործել 1977 թվականի մայիսից: Մարզօջախի հիմնադրման շուրջ բանակցությունները սկսվել էին դեռևս 1975-ից՝ հանրապետության «Աշխատանքային ռեզերվներ» մարզական ընկերության և Կապանի կուսշրջկոմի միջև: Ձեռք բերված պայմանավորվածությամբ՝ մարմնամարզության մասնագետներ ժամանեցին Կապան, իսկ մարզօջախի տնօրենը մարմնամարզության մասնագետ, կապանցի Էդիկ Ծատրյանն էր:**

Տարբեր տարիների մարմնամարզության և ակրոբատիկայի մանկապատանեկան դպրոցը ղեկավարել են Էդիկ Ծատրյանը, Աշոտ Ամիրխանյանը, Արթուր Բաղդասարյանը, Նորայր Սահակյանը, 2021 թվականից՝ Թևան Գևորգյանը: Վերջինս մարզադպրոցի սան էր, ավարտել է ֆիզկուլտուրայի ինստիտուտը, 2011 թվականից մարզիչ էր մարզադպրոցում: Սկզբնական շրջանում մարզադպրոցում մարզիչներ ընդգրկվեցին այլ քաղաքներից՝ Գառնիկ Սարոյան, Օլգա Դունաևսկայա, Արթուր Ծատրյան, Գևորգ Ավետիսյան, Միխայել Հակոբյան, Եղիշե Թումանյան, Սմբատ Պետրոսյան, Աշոտ Մերդինյան, Ռուբիկ Օհանյան, ովքեր նշանակալի ավանդ ունեցան մարզադպրոցի հիմնադրման և կայացման գործում:

Մարզադպրոցի ստեղծման ակունքների մոտ կանգնած անձնավորություն է ԽՍՀՄ սպորտի վարպետ Գառնիկ Սարոյանը, ով ժամանակին եղել է հանրապետության սպորտային մարմնամարզության ֆեդերացիայի քարտուղար: Մտերիմ հարաբերություններ է ունեցել օլիմպիական չեմպիոն, օղակների արքա Ալբերտ Ազարյանի հետ, մինչև վերջինիս մահը եղել է նրա կողքին: Գառնիկը ևս առաջին հրավիրյալ մասնագետների շարքում էր: Նա հիշում է. *«Ակրոբատիկայի արմատավորմանը մեծ ներդրում ունեցավ Ռուբիկ Օհանյանը, ով Կապան եկավ մարզադպրոցի հիմնադրումից մեկ տարի հետո: 1979-ին մարզադպրոցն առաջին սպորտի վարպետ տվեց՝ Ռուզաննա Սարգսյան, ով ավտովթարի զոհ դարձավ: Ժամանակին մտածում էինք նրան նվիրված հուշամրցաշար անցկացնել, բայց չստացվեց: 1978-ին մարզիչներին միացավ Օլգա Դունաևսկայան, ով հիմնադրեց գեղարվեստական մարմնամարզությունը: Մարզադահլիճում արդեն պարապում էին երեք մարզաձևի ներկայացուցիչներ՝ գեղարվեստական մարմնամարզություն, սպորտային ակրոբատիկա և սպորտային մարմնամարզություն, և այդ բոլոր սպորտաձևերում ունեցանք հաջողություններ: Կապանում անցկացրեցինք «Օլիմպիական հույսեր» պատանեկան առաջնությունը, որտեղ մարզադպրոցի սաներ՝ Արմեն Վարդանյանը դարձավ մրցումների բացարձակ հաղթող, իսկ Ահարոն Պետրոսյանը՝ իրեն հավասարը չուներ նժույգաթափերի վրա»:*

Մարզադպրոցի կյանքում հիշարժան տարեթիվ է 1996 թվականը, երբ մարզադպրոցի դահլիճում անցկացվեց հանրապետության սպորտային մարմնամարզության ռահվիրա, նոր ժամանակների առաջին հայ օլիմպիական չեմպիոն Հրանտ Շահինյանի անվան հուշամրցաշարը, որը նախաձեռնել էր հանրապետության սպորտային մարմնամարզության ֆեդերացիան: Երկօրյա պայքարում տարիքային երկու խմբով հարաբերություններ պարզեցին Հայաստանի, Իրանի և Սիրիայի մարմնամարզիկները: Հուշամրցաշարին մասնակցում էր օլիմպիական եռակի չեմպիոն Ալբերտ Ազարյանը, ով հուշամրցաշարի գլխավոր մրցավարն էր:

*– Հուշամրցաշարը նպատակ է հետապնդում բարեկամական կապեր հաստատել մեր դրացի երկրների հետ,* – մրցումների փակման արարողության ժամանակ ասաց հանրաճանաչ մարմնամարզիկը, – քանզի ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ հայ սպորտային մարմնամարզության դպրոցը մասնակից երկրներից ավելի բարձր մակարդակ և ավանդույթ-

ներ ունի:

Առանձնապես գնահատելի է Օլգա Դունաևսկայայի ավանդը, ով մարզադպրոցի հիմնադրման օրվանից ցայսօր մարզադպրոցում է, գեղարվեստական մարմնամարզության նվիրյալ: Սաների մի մասը մարզչական աշխատանքով է զբաղված Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Պատրաստել է բազմաթիվ սպորտի վարպետներ, ովքեր բարձր են պահել հարազատ քաղաքի պատիվը հանրապետական և միութենական մրցումներում:

Հատկանշական է Համլետ Համբարձումյան – Հասմիկ Գրիգորյան ակրոբատիկական ձևերի խառը զույգի զբաղեցրած մրցանակային տեղը միութենական մրցումների ժամանակ:

Հայաստանն անկախություն ձեռք բերելուց հետո ուղիղ կապեր հաստատվեցին աշխարհի երկրների հետ, նաև Հայաստանի դրոշի ներքո հանդես գալ միջազգային մրցումներում: Նման մրցմանը Գերմանիայի Դաշնությունում առաջինը մասնակցել է մարզադպրոցի առաջին սաներից մարզիկ-մարզիչ Նորայր Սահակյանը (սպորտային ակրոբատիկա):

*«Կապանում մարմնամարզության և սպորտային ակրոբատիկայի զարգացման ի՞նչ հեռանկարներ կան» հարցին, զրուցակիցս՝ Գառնիկ Սարոյանը, ասում է. «Կարծում եմ, որ առաջիկայում Կապանը կդառնա մարմնամարզության կենտրոն, մանավանդ սպորտային ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության գծով նպաստավոր նախադրյալներ են ստեղծվել: Բայց սպորտային մարմնամարզության զարգացման համար տակավին աշխատանքներ պիտի տարվեն: Որքանով տեղյակ եմ՝ Հայաստանի սպորտային մարմնամարզության գլխավոր մարզիչ Հակոբ Սերոբյանի հետ զրուցելով պարզեցի, որ մտադիր են մարզագույք տրամադրել Կապանին»:*

Վերջին ժամանակներս մարզադպրոցում բարեփոխումներ են կատարվել. համայնքի բյուջեի միջոցով 2019 թվականին հիմնովին նորոգվել է մարզադպրոցի տանիքը, 10 մլն 800 հազար դրամ նախագծային արժեքով:

Համայնքների 2021 թ. տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակում նո-

ոոգվել է Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցը: Շիննորոգման աշխատանքների պայմանագրային արժեքը 77,4 մլն դրամ էր: Գումարի կեսը հատկացրել է հանրապետության կառավարությունը, մյուս կեսը՝ համայնքը: Աշխատանքներն իրականացրել է Կապանի «Նորոգշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Բարերարների շնորհիվ որոշ հարցեր լուծում են ստացել: Փարսյանների ընտանիքի կողմից մարզադպրոցը նվեր է ստացել միջազգային չափանիշներին համապատասխանող ակրոբատիկական ցատկուղի՝ 22,8 մ երկարությամբ, ինչը հնարավորություն է տալիս մարզադպրոցի դահլիճում անցկացնել մարզաձևի հանրապետական մասշտաբի մրցումներ: Մարզադպրոցի դահլիճը ջեռուցվում է գազի «տուրբո» վառարաններով, որոնք նվիրաբերել է Գրիգորի Փարսյանը:

Ինչպես տեղեկացանք, մարզադպրոց է հաճախում 186 սան, որից 80-ը հմտանում է գեղարվեստական մարմնամարզության, 106-ը ՝ սպորտային ակրոբատիկայի մեջ: Նրանց մարզական մակարդակը բարձրացնելուն կոչված է հինգ մարզիչ սպորտային ակրոբատիկայի, չորսը՝ գեղարվեստական մարմնամարզության գծով: Մարզադպրոցի տնօրեն Թևան Գևորգյանի փոխանցմամբ՝ 2023-ից իրենց մոտ մտցվել է ստուգարքային համակարգ: Երեք ամսվա պարբերականությամբ ստուգարք է անցկացվում, որը նպատակ ունի հայտնաբերել դեռատի մարմնամարզուհիների և ակրոբատների կարողությունները և նրանց ճիշտ ուղու վրա դնել:

*«Մրցումներ քիչ են լինում, տարվա ընթացքում երեխան 7-8 մրցման պիտի մասնակցի, որ աճ ունենա, մրցափորձ ձեռք բերի: Բայց քանի որ դա չի լինում, ուստի մարզադպրոցում ստուգարքներ ենք մտցրել, որոնք ինչ-որ չափով փոխարինում են մրցումներին»,* – մանրամասնում է մեր զրուցակիցը: Այս համատեքստում Թ. Գևորգյանը նշում է, որ մարզադպրոցի ցատկուղին հնարավորություն է ընձեռում միջազգային կարգի մրցումներ անցկացնել մեզանում:

2023-ին հաջողություններ ունեցան, Վրաստանում մասնակցեցին միջազգային մրցման, մարզադպրոցից մասնակցեցին երեք սան, որոնցից մեկը մրցանակային տեղ զբաղեցրեց: Տպավորիչ արդյունքներ ունեցան մայրաքաղաքում անցկացված Կրեմլինա Մկրտչյանի անվան հուշամրցաշարում՝ չորս առաջին մրցանակ, հինգ երկրորդ, երկու երրորդ տեղ:

2024 թ. մարտի 2-ից 3-ը Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցում, Կապանի համայնքապետարանի նախաձեռնությամբ, առաջին անգամ անցկացվեց գեղարվեստական մարմնամարզության բաց առաջ-

նություն: Առաջնությանը մասնակցում էին 70-ից ավելի մարմնամարզուհի Երևանից, Գյումրիից, Քաջարանից և Կապանից՝ տարբեր տարիքային խմբերում:

Բացման հանդիսավոր արարողությանը ներկա էր Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Սահակ Անտոնյանը: Իր ելույթում նա նշեց, որ նման առաջնությունների անցկացումը նպաստում է մարզաձևի զարգացմանը և մասսայականացմանը: Նաև հավելեց, որ Կապանը հանրապետությունում այն եզակի քաղաքներից է, որ ունի միջազգային չափորոշիչներին համապատասխան մարզադպրոց, ինչը թույլ է տալիս առաջնությունը կազմակերպել բարձր մակարդակով:

Մրցանակային տեղեր զբաղեցրած մարմնամարզուհիները պարգևատրվեցին հավաստագրերով և մեդալներով, իսկ պատվավոր հյուրերը Կապանի համայնքապետարանի կողմից արժանացան բյուրեղապակյա գավաթների:

Կապանում նման մրցույթ, մեր ունեցած տվյալներով, չի կազմակերպվել...

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

***Հ.Գ.*** *Երկու օր շարունակ՝ 2024 թ. մարտի 28-ին և 29-ին, Կապանը մարզական կյանքով էր ապրում. անցկացվեց Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցի սպորտային ակրոբատիկայի բաց առաջնություն, որն անցավ Կապանի համայնքապետի հովանու ներքո, իսկ ծախսերը հոգացել էր «Կապան» բարեգործական հիմնադրամը: Մրցապայքարին մասնակցում էին Երևանի և Գյումրու ներկայացուցչական պատվիրակությունները: Մարզադպրոցի մարմնամարզական հարթակի վրա իրենց հարաբերությունները պարզեցին մոտ 100 պատանի մարզիկներ, ովքեր մրցեցին հինգ մրցակարգով, ինչպես լինում է միջազգային մրցումներում՝ տղաների քառյակ, աղջիկների եռյակ, աղջիկների զույգ, տղաների զույգ և խառը՝ տղա ու աղջիկ: Հընթացս ցատկուղու վրա իրենց վարպետությունն էին ցուցադրում ցատկորդները: Մրցումների ավարտին հանդիսավոր պայմաններում աչքի ընկածներին պարգևներ հանձնեց Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը:*

*Ըստ ամենայնի՝ բաց առաջնությունը փոքրիկ տոն պարգևեց մարզաձևի սիրահարներին և ոչ միայն:*

ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց

ՀՀ սպորտի վարպետ, հեռացատկորդ՝ Գոռ Բեգլարյանը մինչև 20 տարեկանների աշխարհի առաջնությունում գրավել է 6-րդ տեղը

### Կապանի աթլետիկայի պատմությունը

Կապան աշխարհի մարզական այցեքարտերից է աթլետիկան, որ տասնյակ տարիների բարի ավանդույթ ունի: 1927 թվականին վաստակավոր մանկավարժ, կապանյան սպորտի երախտավոր Արշամ Վեզիրյանի շնորհիվ Կապան քաղաքում սկզբնավորվեց թեթև ատլետիկա մարզաձևը (այսուհետ աթլետիկա): Այնուհետև այն շարունակեց ՀՀ վաստակավոր մարզիչ Արկադի Ղազարյանը, երբ 1959-ին սկսեց մարզչական աշխատանքը, և կարճ ժամանակ անց կապանցի թեթև աթլետները դուրս եկան հանրապետական մրցասպարեզ և պայքար մղեցին ուժեղագույնների հետ: Աթլետիկա մարզաձևը 1973-1974 թվականներից սկսած վերելք ապրեց, երբ Կապանի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն նշանակվեց Սամվել Դավթյանը: 1989 թվականի հոկտեմբերի 2-ից բացվեց աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցը, որը մարզաձևի զարգացման ազդակ դարձավ Սյունիքի մարզում: Մարզադպրոցը գործունեության ընթացքում տվել է Եվրոպայի, ԽՍՀՄ պատանիների առաջնությունների, ԱՊՀ երկրների և ժողովուրդների սպարտակիադայի չեմպիոններ: Նրա սաները մասնակցել են աշխարհի 60 պետության՝ 160 և ավելի քաղաքներում կայացած առաջնությունների:

1982-1994 թթ. Կապան քաղաքի համար պատերազմական ծանր ու դժվարին օրերին մարզադպրոցը չդադարեցրեց ուսումնամարզական աշխատանքները, համախմբված ու եռանդուն շարունակեցին մարզումները: Աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցի առաջին տնօրեն է նշանակվել Սուրեն Ղազարյանը: 2004 թվականի հոկտեմբերի 1-ից մարզադպրոցի տնօրեն նշանակվեց ՀՀ վաստակավոր մարզիչ Արսեն Պետրոսյանը: 2022 թվականի փետրվարի 1-ից մարզադպրոցի տնօրենը Գագիկ Հարությունյանն է:

2023-2024 ուստարում Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցում աշխատում են 11 մարզիչ-մանկավարժ՝ բարձրագույն մասնագիտական կրթությամբ: Մարզադպրոցում գործում է 17 մարզական խումբ՝ 169 սանով:

### Կապանի աթլետների նվաճումները

1960 թվականից սկսած Կապանի աթլետները հասել են նշանակալի նվաճումների՝ դառնալով ՀՀ չեմպիոն և ռեկորդակիր: ՀՀ հավաքականի կազմում ընդգրկված էին Կոստյա Կալիևը, Ռաֆայել Պողոսյանը, Արմենակ Ծատրյանը, Մասիս Վեզիրյանը, Սամվել Դավթյանը, Դավիթ Հարությունյանը, Վալերիկ Հովհաննիսյանը և այլք: Աթլետիկա մարզաձևի վերելքը ՀՀ վաստակավոր մարզիչ

Արկադի Ղազարյանի և այն ժամանակվա մարզադպրոցի տնօրեն Սամվել Դավթյանի շնորհիվ Կապանում սկսվեց 1973-1974 թվականներից: Արկադի Ղազարյանի ներքոհիշյալ սաները հասել են հետևյալ հաջողությունների՝

**Վաչե Մովսիսյան** - հեռացատկ, սպորտի վարպետ, ՀՀ նախկին ռեկորդակիր,

**Էդուարդ Մեսրոպյան** - բարձրացատկ, սպորտի վարպետ, ՀՀ ռեկորդակիր,

**Ռուդիկ Մաթևոսյան** - 400 մ արգելավազք, սպորտի վարպետ, 1984թ-ից մինչ այսօր ՀՀ ռեկորդակիր,

**Գագիկ Հարությունյան** - հեռացատկ, սպորտի վարպետի թեկնածու, ՀՀ երիտասարդների նախկին ռեկորդակիր,

**Արսեն Պետրոսյան** - եռացատկ, սպորտի վարպետի թեկնածու:

**Ինչպես նաև՝ Արմեն Բաղդասարյան, Ռաֆիկ և Ռիտա Աբրահամյաններ, Ավետիք Հովհաննիսյան և ուրիշներ:**

Մեծ հաջողությունների են հասել նաև ՀՀ վաստակավոր մարզիչ Արսեն Պետրոսյանի ներքոհիշյալ սաները:

**Մարատ Սարգսյան** - հեռացատկ, ՀՀ սպորտի վարպետ, ԽՍՀՄ պատանիների չեմպիոն,

**Մերուժան Սարգսյան** - հեռացատկ, ՀՀ սպորտի վարպետ, ԱՊՀ ժողովուրդների սպարտակիադայի չեմպիոն, Եվրոպայի թիմային առաջնության 3-րդ մրցանակակիր,

**Էրիկ Նուրիջանյան** - եռացատկ, ՀՀ սպորտի վարպետ,

**Լևոն Աղասյան** - եռացատկ, ՀՀ միջազգային կարգի սպորտի վարպետ, երկու օլիմպիադաների մասնակից, Եվրոպայի մինչև 20 տարեկանների չեմպիոն, Եվրոպայի թիմային առաջնության հաղթող, ֆրանկոֆոնիայի խաղերի 3-րդ մրցանակակիր,

**Յանա Սարգսյան** - հեռացատկ, եռացատկ, ՀՀ եռացատկի ռեկորդակիր,

**Հայկանուշ Բեկլարյան** - եռացատկ, ՀՀ սպորտի վարպետի թեկնածու, Եվրոպայի պատանեկան խաղերի 3-րդ մրցանակակիր, ՀՀ նախկին ռեկորդակիր,

**Արամայիս Սարգսյան** - եռացատկ, ՀՀ սպորտի վարպետի թեկնածու, մինչև 20 տարեկանների աշխարհի առաջնությունում գրավել է 4-րդ տեղը,

**Մարիետա Մինասյան** - եռացատկ, հեռացատկ, սպորտի վարպետի թեկնածու,

**Դավիթ Հովհաննիսյան** - 100 մ, վազք՝ սպորտի վարպետի թեկնածու:

Մարզիչ Արտյոմ Պողոսյանի սան, ՀՀ սպորտի վարպետ, հեռացատկորդ՝ Գոռ Բեգլարյանը մինչև 20 տարեկանների աշխարհի առաջնությունում գրավել է 6-րդ տեղը: Մարզադպրոցի սաներից՝ Գարիկ Ումուրշատյանը, Իրինա Գրիգորյանը, Վալյա Ավագյանը (մարզիչ՝ Քրիստաֆոր Գաբրիելյան) և հեռացատկորդ՝ Հրաչ Ամիրջանյանը (մարզիչներ՝ Արմեն Ղուկասյան, Սասուն Օվչյան) ընդգրկված են եղել ՀՀ աթլետիկայի հավաքականի կազմում և մասնակցել են մի շարք միջազգային մրցումների: 2023 թվականի օգոստոս ամսին կայացած համահայկական 8-րդ խաղերում, մարզադպրոցի սաները գրավել են չորս 1-ին տեղ, երկու 2-րդ և չորս 3-րդ տեղեր: Աթլետիկայի զարգացման գործում ուրույն տեղ ունի Սյունիքի մարզի նորընտիր աթլետիկայի ֆեդերացիայի նախագահ Արշամ Սարգսյանը:

### Աթլետիկայի մարզադպրոցի արդի խնդիրները

Մարզադպրոցի սաների պարապմունքները հիմնականում կազմակերպվում են Կապանի քաղաքային մարզադաշտում: Անբարենպաստ եղանակի ժամանակ մարզումները անցկացվում են Կապանի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցում, որտեղ մարզումների ծանրաբեռնվածության պատճառով, պարապմունքներն ընթանում են ոչ լիարժեք ռեժիմով: Առկա դժվարություններով հանդերձ մարզադպրոցը շարունակում է գործունեությունը, սպասումով, որ մի օր կունենա իր սեփական մարզաբազան: Կապանի համայնքապետարանը՝ Գևորգ Փարսյանի գլխավորությամբ, նախատեսում է Կապանում կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխան աթլետիկայի ժամանակակից ձմեռային մարզադահլիճ, որը կկպաստի ավելի արդյունավետ կազմակերպել մարզումները, նաև տարբեր մասշտաբի մրցումներ անցկացնել, ինչը հնարավորություն կտա բարելավել տեղացի մարզիկների որակական ցուցանիշները: //

ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# Մարզադպրոցը՝ դարձյալ տնվորի կարգավիճակով

Խորհրդային տարիներին Քաջարանում մանկապատանեկան սպորտը որոշակի զարգացում ապրեց: Բայց Հայաստանի անկախության առաջին տարիներին հետընթաց գրանցվեց: Եթե չասենք տնտեսական դժվարությունների և պատերազմական իրավիճակով պայմանավորված, հետին պլան մղվեց, դեռ ավելին շրջանային ժողկրթբաժնին կից մարզադպրոցը փակվեց: Վիճակը շտկվեց 2005 թվականին, երբ նաև ըմբշամարտի մարզիչ, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր մարզիչ Մերուժան Աթայանի ջանքերով բացվեց «Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ը՝ հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հովանու ներքո:

Բայց Քաջարանի մանկապատանեկան սպորտի զարգացմանը միտված այս մարզօջախին դյուրին ճակատագիր բաժին չընկավ: Նախորդ իմ հրապարակումը կրթօջախի մասին («Այունյաց երկիր», 10 դեկտեմբերի 2008 թ.) վերնագրել էի՝ «Մարզօջախը՝ տնվորի կարգավիճակով»: Ցավոք, 14 տարի հետո նույն ջուրն է, նույն ջրաղացը, ավելի ստույգ՝ նախկին կարգավիճակն է: Մասնավորապես, մարզադպրոցի հիմնադիր տնօրեն Մերուժան Աթայանը պատկերավոր է ներկայացնում առկա վիճակը. «Քաջարանում ըմբշամարտով զբաղվելը քարով մահակ կտրել է նշանակում»: Այնուհետև հավելում, որ 18 տարվա ընթացքում Քաջարանում չունեցան սեփական շենք-շինությունը, կամ որ միևնույնն է՝ մարզադահլիճ. «Գոնե մի տարածք հատկացնեն, որ ըմբշամարտի գորգը տեղադրենք ու չհավաքենք»:

Մարզադպրոցի գործունեության վիճակագրությունը հետևյալ պատկերն է ներկայացնում 38 խմբերում պարապում է 432 սան, գործում է 10 մարզաձև, դեռահասների մարմնակրթությամբ զբաղվում է 20 մարզիչ: Մարզադպրոցի հիմնախնդիրների մասին զրուցում ենք կրթօջախի տնօրեն Անահիտ Հայրապետյանի և մարզադպրոցի հիմնադիր տնօրեն, Քաջարան քաղաքի պատվավոր քաղաքացի Մերուժան Աթայանի հետ: Միմյանց լրացնելով՝ ամբողջական տեղեկատվություն ենք ստանում այդ մարզօջախի մասին:

2021-ից կրթօջախը ղեկավարում է Անահիտ Հայրապետյանը: Ծնվել է Երևանում, միջնակարգ կրթություն է ստացել,

այնուհետև ավարտել Երևանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, աշխատել սուսերամարտի մարզիչ, հրահանգիչ-մեթոդիստ: 1988-ին ամուսնանալով տեղափոխվել է Քաջարան: 1994-2009 թթ. աշխատել է Քաջարանի թիվ 1 դպրոցում՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչ: 2005 թ. մարտից Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոցի փոխտնօրենն էր համատեղության կարգով: Սուսերամարտի գծով վարպետության թեկնածու է, սուսերամարտի Հայաստանի չեմպիոն, նաև մասնակցել է հանդբոլ մարզաձևի վերապատրաստման դասընթացներին, հետո հանդբոլ պարապել, Հայաստանի գավաթակիր պատրաստել:

Մարզադպրոցում պարապում են արդեն փորձառու և նրանց կողքին մարզչական առաջին քայլերն անող մարզիչներ, ահավասիկ՝ վաստակավոր մարզիչ, սպորտի վարպետ Յուրի Ավետիսյան, ում սաներից մրցանակակիրներ կան միջազգային մրցումներում: Նման հաջողությունների են հասել փոքրիկ մարմնամարզուհիներին պարապող մարզիչներ Ինգա Փարսադանյանը և Լիլիթ Աբգարյանը (գեղարվեստական մարմնամարզություն): Մարզադպրոցում սեղանի թենիս է պարապում Կարեն Բեգլարյանը, ում մասին ասում են՝ նվիրյալ է՝ ինքն է ու իր սեղանի թենիսը: Գովեստի խոսքեր լսեցինք շախմատի մարզիչ Արտաշես Գրիգորյանի հասցեին, ով մարզադպրոցի հնաբնակներից է:

Պարապմունքների մարզադահլիճները տարբեր հասցեներ ունեն: Քաջարանի արհեստագործական ուսումնարանի դահլիճում հանդբոլ են պարապում (մարզիչ՝ Վահե Իվանյան), Քաջարանի թիվ 2 դպրոցի մարզադահլիճում՝ բասկետբոլ (մարզիչ՝ Արման Հովսեփյան): Մյուս մասնաճյուղերի հասցեները Քաջարանից դուրս են. Սիսիանում՝ բռնցքամարտ, Անգեղակոթում ձյուդո, Ագարակում, ինչպես արդեն նշեցինք՝ ազատ ոճի ըմբշամարտ, Կապանում՝ աթլետիկա՝ Արամայիս Սարգսյան, ծանրամարտ՝ Կարեն Հարությունյան:

Ավելի «հյուրընկալ» է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մարզահամալիրը, որտեղ Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոցի սաները պարապում են բռնցքամարտ, սեղանի թենիս, վոլեյբոլ, ըմբշամարտ, գեղարվեստական մարմնամարզության հմտություններն են յուրացնում փոքրիկները: Այցելելով կոմբինատի մարզահամալիր՝ ականատես եղանք փոքրիկ նազելիների պարապմունքներին: Շուտով պիտի սկսվեր վոլեյբոլիստների պարապմունքները:

Նվաճումները երկար սպասել չեն տվել: Մարզադպրոցն ունեցել է միջազգային մրցասպարեզներում մրցանակակիրներ: Հայաստանի առաջնության չեմպիոն, Եվրոպայի երիտասարդական առաջնության մրցանակակիր, իսկ տարբեր մրցաշարերից գեղարվեստական մարմնամարզության խմբի սաներն առանց մրցանակի չեն վերադառնում: Բռնցքամարտից նաև Հայաստանի պատանիների առաջնության, միջազգային պատանիների մրցաշարի բրոնզե մեդալակիր ունեցան՝ Վահագն Աթայան (մարզիչ՝ Աշոտ Սադիյան), ազատ ոճի ըմբշամարտում Եվրոպայի պատանիների 2023 թ. բրոնզե մեդալակիր՝ Տիգրան Բունիաթյան (մարզիչ՝ Յուրի Ավետիսյան): Որքանով տեղեկացանք, մարզագույքի խնդիր չկա, նախարարությունը մարզագորգեր ու ռինգ է հատկացրել և այլ պարագաներ՝ բռնցքամարտի ձեռնոցներ, ծանրաձող, գնդակներ՝ հանդբոլի, բասկետբոլի և այլն:

**«Սաներս և նրանց ծնողները, մարզիչներս անկեղծ երախտագիտություն ենք հայտնում կոմբինատի տնօրենությանը՝ տարբեր մրցումներին մեր սաների ու մարզիչների մասնակցությունը հովանավորելու համար»,** – մեր զրույցի ավարտին փոխանցեցին Ա. Հայրապետյանն ու Մ. Աթայանը:

Չմոռանանք, որ օլիմպիական բարձունքների հասած շատ մարզիկներ առաջին քայլերը սկսել են անել հենց մարզադպրոցներում:

2024 թվականի մարզական տարուց մարզադպրոցն ակնկալիքներ ունի մանավանդ մենապայքարային մարզաձևերից՝ բռնցքամարտ, ծանրամարտ, ըմբշամարտ: Իսկ մինչ այդ ամենօրյա համառ ու տքնաջան պարապմունքներն են:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# «Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ը

1985 թվականին ստեղծված մարզադպրոցում գործում են վեց մարզաձևից խմբակներ՝ ըմբշամարտ, վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ, շախմատ և թեթև աթլետիկա: Բոլոր մարզաձևերից ընդհանուր առմամբ պարապում են 312 սան:



Ըմբշամարտ մարզաձևը ամուր հիմքերի վրա է դրված: Տարվա կտրվածքով մարզադպրոցը մասնակցում է արտերկրում կազմակերպված ըմբշամարտի ուսումնամարզական հավաքների և միջազգային մրցաշարերի: Այսօր արդեն ունենք բավականին խոստումնալից մարզիկներ, ովքեր բարձր են պահում մարզի և Գորիս քաղաքի պատիվը՝ գրավելով 1-ին հորիզոնականները: Այդ կարևոր գործում իրենց ավանդն են ներդրել մարզադպրոցի ըմբշամարտի մարզիչ-մանկավարժներ Տիգրան Աղաբեկյանը, Ալբերտ Հայրապետյանը, Կարեն Հովսեփյանը: Մարզադպրոցի պատանի ըմբիշներ Արտակ Աղաբեկյանը, Ալեն Միրզոյանը, Սուրեն Հովհաննիսյանը, Արտյոմ Մուսայելյանը, Արտյոմ Մարգարյանը միջազգային մրցաշարերի հաղթողներ և մրցանակակիրներ են:

Մարզադպրոցում նաև գործում են վոլեյբոլի խմբակներ, որոնք ներկայաց-

նում են սահմանամերձ Տեղ համայնքի Կոռնիձոր և Խնածախ գյուղերը՝ մարզիչ-մանկավարժներ Մայիս Բաղդասարյանի և Վարդան Բաղդասարյանի ջանքերով: Այդ մարզաձևը ևս դրված է ամուր հիմքերի վրա:

Սահմանամերձ Տեղ համայնքի Խոզնավար գյուղում գործում են մեր մարզադպրոցի աթլետիկայի խմբերը՝ մարզիչ-մանկավարժ Անժելա Չաքյանի գլխավորությամբ, ով նաև ԽՍՀՄ սպորտի վարպետի թեկնածու է:

Մարզադպրոցում գործում են նաև բասկետբոլի խմբակներ: Մարզաձևի հիմքերն են դրվում Տաթև համայնքի Հալիձոր գյուղում ևս: Բասկետբոլի զարգացմանը ջանքեր են ներդնում մարզիչ-մանկավարժներ Աննա Աբգարյանն ու Վիգեն Ավետիսյանը:

Մարզադպրոցն ունի աղջիկների ֆուտբոլի խմբակներ, մարզիչ-մանկավարժ՝ Արմեն Ղազարյան:

Մարզադպրոցում գործում են նաև շախմատի խմբակներ, մարզիչ-մանկավարժ՝ Անուշավան Ղազարյան:

«Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենն է ԽՍՀՄ սպորտի վարպետ Տիգրան Աղաբեկյանը: Ավելի վաղ դպրոցը ղեկավարում էին Ռուբիկ Բակունցը, Գագիկ Դավթյանը, Արթուր Ասլանյանը:

Մարզադպրոցը գտնվում է նախկին պիոներ պալատի հարևանությամբ՝ Ավանգարդի 3/1 հասցեում:

**ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# Զանգեզուրի պղնձամոլիբդենային մարզահամալիրը

Տարվա բոլոր եղանակներին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մարզահամալիրը լիարժեք կյանքով է ապրում: 2010 թվականին, երբ հիմնանորոգումից հետո մարզօջախը կոմբինատի մարզահամալիրի կարգավիճակ ստացավ, նրա գործունեությունը նոր իմաստ և բովանդակություն ունեցավ:

Երբ մարզահամալիրի դահլիճ մտա, այնտեղ արդեն ծանրամարտի պարապմունքներ էին անցկացնում մարզիչներ՝ սպորտի վարպետ, ՀՀ վաստակավոր մարզիչ Պուշկին Թևանյանը և Վալենտինա Մովսիսյանը: Անցնող տարում Թևանյանի սաներից մինչև 89 կգ քաշում հանդես եկող Անդրանիկ Հարությունյանը Գյումրիում անցկացված հուշամրցաշարում հաղթող է ճանաչվել՝ պոկում վարժությունում բարձրացնելով 100 կգ ծանրաձողը, հրում վարժությունում՝ 120 կգ: 11 տարեկան Իշխան Մաթևոսյանը 55 կգ քաշային կարգում դարձել է երկրորդ մրցանակակիր: Հուշամրցաշարին մասնակցում էր մոտ 140 ծանրամարտիկ, ինչով ավելի ծանրակշիռ է դառնում քաջարանցի ծանրամարտիկների հաջողությունը: Այդ ծանրամարտիկներին մարզիչը հեռանկարային մարզիկներ է համարում և հույսեր կապում նրանց հետ:

*Վալենտինա Մովսիսյանը հաջողություններ ունի հանրապետական մրցումներում, մասնավորապես՝ ծանրամարտի Հայաստանի առաջնությունում 64 կգ քաշային կարգում հռչակվել է ՀՀ չեմպիոն*

*«Պիտի ձգտենք, որ Անդրանիկը ծանրամարտի Հայաստանի չեմպիոն դառնա, որից հետո նրա համար կանաչ ճանապարհ պիտի բացվի դեպի միջազգային մրցահարթակներ: Հայաստանում ծանրամարտի մակարդակը բավականին բարձր է, մեզ մոտ չեմպիոն դարձար, կնշանակի առնվազն Եվրոպայի առաջնությունում երկրորդ տեղը ապահովել ես»,* - մանրամասնում է Պուշկին Թևանյանը՝ հավելելով, որ Հայաստանի ծանրամարտի առաջիկա առաջնությունը շատ հարցերի պատասխան կտա:

Բայց ահա ծանրամարտիկների մարզման պայմանները հեռու են բավարար լինելուց: Ծանրամարտի պարապմունքներին մի սենյակ է հատկացված՝ մի մրցահարթակով: Պուշկին Թևանյանը տեղեկացնում է, որ նախատեսվում են մարզահամալիրում վերակառուցումներ, արդեն պատրաստ են նախահաշվային փաստաթղթերը: Վերակառուցումից հետո կունենան երեք մրցահարթակ, ինչը հնարավորություն կընձեռի մարզահամալիրում նաև մրցումներ կազմակերպել՝ ընդհուպ հանրապետական մասշտաբի. ինչ վերաբերում է մարզվողների թվին, այն կարող են հասցնել 15-ի:

Վալենտինա Մովսիսյանը հաջողություններ ունի հանրապետական մրցումներում, մասնավորապես ծանրամար-

տի Հայաստանի առաջնությունում 64 կգ քաշային կարգում հռչակվել է ՀՀ չեմպիոն, բայց վնասվածք ստանալուց հետո անցել է մարզչական աշխատանքի: Ավաղ, սպորտում ոչ մի մարզիկ ապահովագրված չէ վնասվածքներից, ինչը շատ հաճախ ակտիվ սպորտը թողնելու պատճառ է դառնում: *«Սպորտում քո առաջ կոնկրետ նպատակ պիտի դնես և համառ մարզումների շնորհիվ հասնես դրան, բայց այդ ճանապարհին լինում են նաև տհաճ անակնկալներ՝ երբեմն ծանր վնասվածքներով,* – սա Վալենտինան ըստ ամենայնի ասում է անձնական փորձից ելնելով...

*«Ժամը 15-ից հետո «կատաստրոֆիկ» վիճակ է մարզահամալիրում»*, - այսպես պատկերավոր է ներկայացնում պարապմունքների սկսվելը մարզօջախում Պուշկին Թևանյանը: Նրանից, մասնավորապես, տեղեկանում ենք, որ մարզահամալիր է հաճախում 300-350 սան: Բացի դրանից՝ երեկոյան ժամերին կոմբինատի երիտասարդ աշխատակիցները մարզադահլիճում զբաղվում են խաղային մարզաձևերով (ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ)՝ 30-40 հոգի մշտապես հաճախում են մարզահամալիր՝ կենսական լիցքեր ստանալով և իմաստավորելով իրենց ազատ ժամանակը:

Ի դեպ, մեր՝ մարզահամալիրում գտնվելու ժամանակ նախավարժանք սկսեցին պատանի ֆուտբոլիստները. անցկացվում էր Քաջարանի համայնքապետի ֆուտբոլի գավաթի առաջնություն, որին մասնակցում են Քաջարանի թիվ 1 և 2, Լեռնաձորի, Ձագեձորի դպրոցների, Քաջարանի արհեստագործական ուսումնարանի թիմերը:

Հարկ է նշել մարզահամալիրում գործունեություն ծավալող մարզիչներին՝ շախմատ՝ Դավիթ Քաթանյան, կուդո Առնոլդ Կոստանյան, բռնցքամարտ՝ Աշոտ Սադիխյան, ֆուտբոլ՝ Բենիամին Մանուչարյան, վոլեյբոլ՝ Ռոբերտ Շահնազարյան և Արմեն Հակոբյան, բասկետբոլ՝ Գոռ Առաքելյան, քիք բոքսինգ՝ ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյան, ծանրամարտ՝ Պուշկին Թևանյան և Վալենտինա Մովսիսյան: Մարզահամալիրում 28 աշխատակից է աշխատում, որոնց միավորում է նվիրումն աշխատանքի հանդեպ:

Մարզահամալիրի տնօրենի փոխանցմամբ՝ սպասելիքներ ունեն կուդո մարզաձևից, աշխարհի պատանեկան առաջնությունում Արմեն Կոստանյանը երրորդ մրցանակային տեղ է գրավել: Սա հույս է ներշնչում, որ այդ մարզաձևից հաջողությունները սարերի հետևում չեն: Դե իսկ ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյանի սանները 2023 թվականին Եվրոպայի գավաթի խաղարկությունից (Խորվարթիա) և Եվրոպայի առաջնությունից (Թուրքիա) վերադարձրել են տարբեր փայլի մեդալներով: Կրթօջախում վերելք է ապրում վոլեյբոլը, համենայն դեպս՝ այդ մարզաձևով զբաղվում է 60-ից ավելի սան: Սպասելիքներ կան ֆուտբոլից: Քաջարանցի պատանի ֆուտբոլիստներից 12-ը արդեն պարապում են «Այունիք» ֆուտբոլային ակումբում:

*«Կոմբինատն ավտոբուս է հատկացրել, ամեն օր պատանի ֆուտբոլիստներին տեղափոխում է Կապան, մարզումներից հետ է բերում Քաջարան: Կոմբինատի տնօրենությունն ամեն ինչ անում է, ինչ հարցով դիմում ենք՝ մերժել չկա: Որպես մարզահամալիրի տնօրեն՝ երախտապարտ եմ կոմբինատի ղեկավարությանը՝ սպորտի հանդեպ սրտացավ վերաբերմունքի համար: Ձեռնարկության ղեկավարության հովանավորությամբ բռնցքամարտի գույք ենք ստացել, վոլեյբոլի, բասկետբոլի գնդակներ: Ամենակարևորը՝ կոմբինատի հովանավորությամբ օլիմպիական ծանրաձող ենք ստացել, որ ծանրամարտի սանները մրցումների ժամանակ անհարմարություն չզգան»*, – մանրամասնում է մեր զրուցակիցը և հավելում, որ էականորեն բարձրացել է մարզիչների աշխատավարձը:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# Սիսիանի մարզահամալիր-մասնաճյուղը՝ կայացման ճանապարհին

**Սիսիան քաղաքում 2014-16 թթ. ծնվեց մի նոր և ակնահաճո կառույց, որը նոր տեսք ու բովանդակություն հաղորդեց տարածաշրջանի մարզաշխարհին: Խոսքը նորաշեն մարզահամալիրի մասին է:**

Այն կառուցվեց «Ծառուկյան» հիմնադրամի միջոցներով, բայց նախաձեռնության գաղափարը երջանկահիշատակ Աղասի Հակոբջանյանինն էր: Ինքն էլ գլխավորում էր կառուցման և կահավորման ամբողջ գործընթացը:

2016 թ. սեպտեմբերին, երբ շահագործման հանձնվեց մարզահամալիրի շենքը, այնտեղ ստեղծվեց ԿԳՄՍ նախարարության «Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ–ի մասնաճյուղը:

Սյունիքի մարզաշխարհում ճանաչված Մերուժան Աթայանը, ով այդ ժամանակ ՊՈԱԿ–ի տնօրենն էր, ով այդ մասնաճյուղի երախտավորներից է, բարձր է գնահատում մասնաճյուղի և հատկապես մասնաճյուղի ղեկավար Բենիկ Հակոբջանյանի և մարզիչների գործունեությունը՝ մարզիչներին բնութագրելով որպես իրենց գործի նվիրյալներ:

Մարզահամալիր–մասնաճյուղի պատասխանատու Բենիկ Հակոբջանյանի փոխանցմամբ՝ ՊՈԱԿ–ից վեց հաստիք է տրամադրվել մասնաճյուղին, որը, իհարկե, բավարար չէ, սակայն հնարավորություն է ընձեռում համալիրը ծառայեցնել իր նպատակին:

Ներկայումս 100-ից ավելի երեխա է հաճախում մարզահամալիր–մասնաճյուղ: Աշխատանքներ են տարվում երեք մարզաձևի ուղղությամբ՝ ըմբշամարտ, բռնցքամարտ և ձյուդո: Խմբերում հիմնականում ընդգրկված են դպրոցահասակ երեխաներ:

Մասնաճյուղը նպատակ ունի խմբեր կազմակերպել նաև Սիսիան համայնքի գյուղերում. այդ գաղափարն արդեն իսկ իրականություն է դարձել Անգեղակոթ գյուղում: Մինչ այդ մերձակա գյուղերից նույնպես երեխաներ են հաճախում մարզահամալիր–մասնաճյուղ:

Սիսիանի մարզահամալիր–մասնաճյուղն անցած տարիների ընթացքում հասցրել է մասնակցել նաև հանրապետական նշանակության միջոցառումների, իսկ մասնաճյուղի 10-ից ավելի երեխա (հանրակրթական դպրոցն ավարտելուց հետո) կրթությունը շարունակել և շարունակում է ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտում կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, որտեղ գործում են ֆիզկուլտուրայի բաժիններ:

Այդ բոլորով հանդերձ՝ կա մի հարց, որը խոչընդոտում է մարզահամալիրի առջև ծառացած հատկապես տնտեսական խնդիրների լուծմանը: Դա մարզահամալիրի շենքի կարգավիճակի հարցն է, որը մինչև հիմա անորոշ է և օդից կախված:

Նման անորոշությունն առանձնապես պրոբլեմներ է ստեղծում պահպանման ոլորտում ծագող հարցերը լուծելիս: Ի վերջո դյուրին չէ 750 քմ մակերես ունեցող կառույցի պահպանումը մասնավորի հովանավորությամբ կամ աջակցությամբ:

Այդ պատճառով է նաև, որ մինչև հիմա լուծված չէ համալիրի ջեռուցման խնդիրը: Ճիշտ է, տարբեր միջոցներով տարածքը շատ թե քիչ ձմռանը տաքացվում է, որպեսզի պարապմունքները չընդհատվեն, սակայն այդկերպ դժվար է ձմռան ցրտերին ապահովել մարզահամալիրի կայուն աշխատանքը:

Ըստ Բենիկ Հակոբջանյանի՝ կան բազմաթիվ երեխաներ, ովքեր ցանկանում են զբաղվել ծանրամարտով, մանավանդ որ տվյալ մարզաձևով զբաղվելու համար կան անհրաժեշտ բոլոր պայմանները, մինչդեռ մարզչի հարցը չի լուծվում:

Խոսելով մարզահամալիր–մասնաճյուղի կադրային ներուժի մասին, Բենիկ Հակոբջանյանը ցանկալի է համարում լուծված տեսնել նաև բուժքրոջ հաստիքի հարցը, ում կարիքը մշտապես զգացվում է համալիր–մասնաճյուղում:

**ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# Բռնցքամարտի մասնագիտացված դպրոց Կապանում

**2024 թ. օգոստոսի 17-ին Կապան քաղաքի օրը նշանավորվել է «Կապանի բռնցքամարտի մասնագիտացված դպրոց» ՀՈԱԿ-ի բացման հանդիսավոր արարողությամբ:**

Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը, «ՀՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին և դպրոցի տնօրեն Աշոտ Սադխյանը կտրելով խորհրդանշական կարմիր ժապավենը՝ ազդարարել են դպրոցի պաշտոնական բացումը:

Ամբողջովին նոր ստեղծված և կառուցված դպրոցը հագեցած է ժամանակակից մարզագույքով, տեղադրված է պրոֆեսիոնալ ռինգ, ինչպես նաև ստեղծված են հարմարավետ պայմաններ, որտեղ մարզումներն արդյունավետ անցկացնելու հնարավորություն կունենան 8-18 տարեկան աղջիկներն ու տղաները՝ բացառապես անվճար հիմունքներով:

Ինչպես տեղեկացրեց դպրոցի տնօրեն Աշոտ Սադխյանը, մոտ 100 երեխա կարող են մարզվել օրվա ընթացքում: Նաև համոզմունք հայտնեց, որ մի քանի տարի հետո կունենան հանրապետությունում և նրա սահմաններից դուրս հայտնի մարզիկներ:

Կապանում նոր բռնցքամարտի դպրոց ունենալու նախաձեռնությունը համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանինն էր, որը կյանքի է կոչվել համայնքի բյուջեի միջոցներով՝ շուրջ 40 մլն ՀՀ դրամ: Դպրոցի կահավորման և մարզագույքի ձեռքբերման գործում համայնքին աջակցել է «ՀՊՄԿ» ՓԲ ընկերությունը՝ շուրջ 16 մլն ՀՀ դրամի ներդրմամբ:

Դպրոցի հիմնադրումով՝ ըստ ամենայնի մի նոր մարզաձևի՝ բռնցքամարտի կայուն հիմքեր են դրվում մարզկենտրոնում:

ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# «Կապանի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ

1941 թվականին Ղափանում ստեղծվեց մանկապատանեկան մարզադպրոց, որը սակայն Հայրենական մեծ պատերազմը սկսվելու պատճառով դադարեցրեց գործունեությունը: Այն նորովի վերաբացվեց 1949 թվականին և գործում է մինչև օրս: Մինչև 1960-ական թվականները մարզադպրոցի աշխատանքները զանգվածային բնույթ էին կրում: 1960-ականներից սկսած մարզադպրոցի պատանի մարզիկները սկսեցին մասնակցել ինչպես հանրապետական, այնպես էլ միութենական մրցումների: 1965 թվականին մարզադպրոցի սան Վլադիմիր Պետրոսյանը (այնուհետև՝ մարզիչ) ֆուտբոլի ՀՀ պատանիների հավաքականի կազմում մասնակցեց Մինսկում ԽՍՀՄ դպրոցականների սպարտակիադային:

Սկսած 1970-ական թվականներից, երբ մարզադպրոցին հատկացվեց նոր տիպային մասնաշենք, նոր եռանդով սկսեցին գործել մարզադպրոցի խմբերը: Հանրապետական առաջնություններում սկսեցին փայլել վոլեյբոլի, բասկետբոլի, ֆուտբոլի և աթլետիկայի թիմերը, մարզիչներ Հուսիկ Դավթյանի, Սուրիկ Մանուչարյանի, Վլադիմիր Պետրոսյանի, Միշա Մանուչարյանի, Լյուդվիգ Ավագյանի և Արկադի Ղազարյանի նվիրումի շնորհիվ: Մարզադպրոցի սաներով շարունակաբար համալրվել են հանրապետության դպրոցական հավաքականները, հատկապես՝ աթլետիկա, ֆուտբոլ և ծանրամարտ մարզաձևերում:

Այդ տարիներին մարզադպրոցի աթլետիկայի սաները՝ մարզիչ Արկադի Ղազարյանի գլխավորությամբ տոն էին տալիս թե հանրապետական, թե միութենական մրցումներին: Ի հայտ եկան առաջին բարձրակարգ մարզիկները աթլետիկա մարզաձևից սպորտի վարպետներ՝ Վաչե Մովսիսյան, Էդիկ Մեսրոպյան, Ռուդիկ Մաթևոսյան և այլ շնորհալի մարզիկներ՝ Արսեն Պետրոսյան, Գագիկ Հարությունյան, Արմեն Բաղդասարյան, Քրիստափոր Գաբրիելյան, Ռաֆիկ և Ռիտա Աբրահամյաններ: Նշենք նաև մարզադպրոցի սան, դարպասապահ Ալյոշա Անտոնյանի հաջող ելույթները, ում շնորհիվ նա ընդգրկվել է ԽՍՀՄ պատանիների հավաքականի կազմում և մասնակցել աշխարհի առաջնության ընտրական մրցաշարին, այնուհետև երկար տարիներ պաշտպանել է Աբովյանի «Կոտայքի» և Երևանի «Արարատի» դարպասը: Այդ տարիներին տարբեր ժամանակահատվածներում նշված թիմերի («Կոտայք», «Արարատ») կազմում, հաջողությամբ հանդես էր գալիս մարզադպրոցի մեկ ուրիշ սան Գագիկ Հովհաննիսյանը: Մարզադպրոցի սան Վարդան Ջավադյանը հանդես է եկել ֆուտբոլի ԽՍՀՄ երկրորդ խմբի առաջնության «Ղարաբաղ» թիմում, իսկ Վարդան Ղազարյանը 1991 թվականին ՀՀ բարձրագույն խմբի առաջնությունում դարձավ առաջնության ռմբարկու և տեղափոխվեց Լիբանանի ՀՄԸՄ թիմ, որի կազմում ճանաչվեց 1996 թվականի հունվար ամսվա Ասիայի լավագույն ֆուտբոլիստ:

Այդ տարիներին ելույթներով առանձնանում էր մարզադպրոցի շախմատի թիմը, մարզիչ Գրիգոր Գևորգյանի գլխավորությամբ, պատրաստելով մի շարք շնորհալի շախմատիստներ՝ Կամո Գևորգյան, Արթուր և Մերուժան Նազարեթյաններ, Վարդան և Մարատ Հարությունյաններ, ովքեր հետագայում պահպանեցին մեր քաղաքի մարզական պատիվը տարբեր մրցաշարերում:

1989 թվականին փայլուն հանդես եկավ մարզադպրոցի բասկետբոլի տղաների թիմը, որը գրավելով առաջին տեղը՝ հռչակվեց հանրապետության Ա խմբի չեմպիոն, որից հետո թիմը ձեռք բերեց ՀՀ բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցելու իրավունք: Առաջնությունն ավարտեցին 5-րդ հորիզոնականում: Թիմի ճանաչված խաղացողներն էին Արամ Կարապետյանը, Մարատ Պետրոսյանը, Վարդան Համբարձումյանը, Արամ Ղուկասյանը, Լևոն Բաղդասարյանը:

1994 թվականից մարզադպրոցի սաները մասնակցում էին ՀՀ և Եվրոպայի

պատանեկան առաջնությունների, ինչպես նաև տարբեր միջազգային մրցաշարերի: 1997 թվականին մարզադպրոցի պատանի ֆուտբոլիստները մասնակցեցին Եվրոպայի և աշխարհի առաջնությունների ընտրական մրցաշարերին: Արմեն Տատինցյանը, Արթուր Նադարյանը և Դավիթ Եսայանը Հունգարիայում և Ֆրանսիայում, իսկ Բենիամին Մանուչարյանը Մոսկովյան միջազգային մրցաշարերում հանդես եկան ՀՀ պատանիների հավաքականների կազմում:

1998 թվականին ՀՀ «Մինի-ֆուտբոլի» կրտսեր տարիքի պատանիների առաջնությունում մարզադպրոցի սաները՝ մարզիչ Միշա Մանուչարյանի գլխավորությամբ գրավեցին առաջին տեղը: Մրցումներում լավագույն խաղացող ճանաչված մեր մարզադպրոցի սան Ռաֆայել Ղազարյանը «Կոկա-Կոլա» ֆիրմայի կողմից իրավունք նվաճեց դիտելու Ֆրանսիայում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնության խաղերը:

ՀՀ դպրոցականների 7-րդ մարզական խաղերում մեր մարզադպրոցի վոլեյբոլի և սեղանի թենիսի թիմերի հաջող ելույթների շնորհիվ Այունիքի մարզը, որը ներկայացնում էր մեր մարզադպրոցը, ընդհանուր հաշվարկով գրավեց երկրորդ տեղը, մարզիչներ՝ Սուրիկ Մանուչարյան և Կարեն Բեգլարյան:

2004 թվականին մարզադպրոցի պատանի բասկետբոլիստները ՀՀ դպրոցականների 13-րդ մարզական խաղերում գրավեցին առաջին տեղը և ճանաչվեցին մարզական խաղերի չեմպիոն, մարզիչ՝ Արթուր Օհանջանյան: Իսկ 2005 թվականին բասկետբոլի տղաների թիմը ՀՀ մեծահասակների 5-րդ մարզական խաղերում դարձավ բրոնզե մեդալակիր:

2008 թվականին մարզադպրոցի ծանրամարտիկ Ռոման Հարությունյանը, դառնալով հանրապետության պատանիների կրկնակի չեմպիոն, իր քաշային կարգում Ֆրանսիայում մասնակցեց Եվրոպայի պատանիների առաջնությանը և գրավեց 7-րդ պատվավոր տեղը (մարզիչ՝ Կարեն Հարությունյան):

2010 թվականից մարզադպրոցը վերանվանվեց ծննդով կապանցի, ջրացատկորդ, Մոսկովյան օլիմպիադայի (1980) բրոնզե մեդալակիր, Եվրոպայի կրկնակի չեմպիոն ու գավաթակիր, նախկին ԽՍՀՄ-ի բազմակի չեմպիոն և գավաթակիր, բազմաթիվ միջազգային մրցաշարերի հաղթող Դավիթ Համբարձումյանի անունով:

Վոլեյբոլի տղաների և աղջիկների պատանիների թիմերը հաղթող են ճանաչվել ՀՀ առաջնության փնջային փուլերում և մասնակցել եզրափակիչ մրցումներին: 2014-2015-ին մարզադպրոցի վոլեյբոլի պատանիների թիմը հարավային գոտում գրավել է առաջին մրցանակային տեղը և իրավունք ստացել մասնակցելու մայրաքաղաքում կայացած եզրափակչին, որտեղ համապատասխանաբար զբաղեցրել են 3-րդ և 4-րդ տեղերը: Աշխեն Ղուկասյանը, Սյուզաննա Բաղալյանը, Վահան Ստեփանյանը, Նարեկ Խոսրովյանը, Նարեկ Մովսիսյանը այդ տարիներին ընդգրկվել են Այունիքի հավաքականի կազմում և մասնակցել հանրապետության եզրափակիչ առաջնություններին: Աշխեն Ղուկասյանը հանդես գալով Սիսիանի թիմի կազմում, որը այդ տարիներին Հայաստանի հավաքականի կորիզն էր, 2014-2015 թթ. մասնակցել է Երևան քաղաքում անցկացված եզրափակիչ առաջնություններին և արժանացել ոսկե, արծաթե և բրոնզե մեդալների:

2016-2017 թթ. Հայաստանի ծանրամարտի պատանիների և աղջիկների առաջնությունում մեր սաները գրավեցին հետևյալ մրցանակային տեղերը. Մովսիսյան Վալենտինա՝ 1-ին տեղ, Բաբայան Անի՝ 2-րդ տեղ, Գրիգորյան Արթուր՝ 2-րդ տեղ, Մարտիրոսյան Վերոնիկա՝ 2-րդ տեղ, Ներսիսյան Էրիկ՝ 3-րդ տեղ: Մովսիսյան Վալենտինան ընդգրկվել է աղջիկների Հայաստանի հավաքականի կազմում:

2019 թվականին ծանրամարտի երիտասարդների և աղջիկների ՀՀ առաջնությունում Անի Բաբայանը գրավեց 3-րդ տեղը:

Բռնցքամարտի ավագ տարիքի պատանիների 2020 թ. ՀՀ առաջնությունում Կամունի Աբրահամյանը գրավեց 3-րդ տեղը:

Մարզադպրոցի առաջին տնօրենը եղել է Մամիկոն Համբարձումյանը, ում հաջորդել են Լենդրուշ Ղազարյանը, Արշամ Վեզիրյանը, Ալբերտ Ծատրյանը, Գրիշա Կարապետյանը, Սամվել Դավթյանը (ում ջանքերով մարզադպրոցում բացվեց ծանրամարտի և ըմբշամարտի խմբեր), Սասուն Թևանյանը: Սկսած 1994 թվականի նոյեմբերից մինչև 2016 թվականը մարզադպրոցի տնօրենն էր հանրապետական կարգի մրցավար, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող Լյուդվիգ Ավագյանը: 2016 թվականին տնօրեն նշանակվեց Ջանիկ Գրիգորյանը, 2017 թվականին՝ Մհեր Եգանյանը: 2024 թվականից դպրոցի տնօրենը Տիգրան Իվանյանն է:

//

ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# Առաջընթացի ճանապարհին

**ՀՀ Սյունիքի մարզի «Սիսիան համայնքի շախմատի դպրոց» ՀՈԱԿԻ-ը հիմնադրվել է 1998 թ.: Արդեն մեկ տարի անց դպրոցը հասել է հաջողությունների:**

1999 թ-ին. նոր էջ է բացվել դպրոցի տարեգրության մեջ՝ գրանցելով առաջին հաղթանակները: Կարճ ժամանակում մարզիչների շնորհիվ ձևավորվեց մի մարտունակ թիմ, որը դարձել էր I համահայկական խաղերի չեմպիոն, զբաղեցնելով I և II տեղերը (մարզիչ՝ Ալիկ Հարությունյան, շախմատիստներ Վարդան Մովսիսյան և Ցողիկ Դանիելյան):

Հիմնադրման օրվանից մինչև այսօր մեր սաները մշտապես մասնակցություն են ունենում համահայկական խաղերին, մարզային և հանրապետական առաջնություններին, ցույց տալով բարձր արդյունքներ (Ալբերտ Հակոբյանը, Մանվել և Ռուբեն Հարությունյանները, Հայկ Մինասյանը, Սուրեն Գեսյանը, Արթուր և Վահե

ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# Ֆուտբոլը Սիսիանում ամուր արմատներ է ձգում

Հակիրճ տեղեկություն «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ-ի վերաբերյալ

«Սիսիանի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ-ը հիմնադրվել է 2011 թ. նոյեմբերի 30-ին: Հիմնադրման պահից ի վեր դպրոցը գրանցել է բազմաթիվ հաջողություններ՝ տարբեր տարիքային մանկապատանեկան խմբերի առաջնություններում:

Ունի բարձրակարգ լիցենզավորված մարզիչ-մանկավարժներ և մինչև այժմ հանրապետության մանկապատանեկան առաջնություններին ցուցադրում է բարձրակարգ ֆուտբոլ: 2016-2018 թթ.-ին դպրոցի վերակառուցումից հետո ՀՈԱԿ-ն ունի միջազգային չափորոշիչներին համապատասխան արհեստական բարձրակարգ մեկ մարզադաշտ և երկու մինի

Սուքիասյանները, Արմեն և Տարոն Մկրտումյանները, Երվանդ Խաչատրյանը, Սմբատ Խաչատրյանը և շատ-շատերը) :

Դպրոցն ունի հեռագնա նպատակներ, շատ կարևոր է էլ ավելի բարձրացնել սաների մակարդակը և մարտականորեն տրամադրվածությամբ մասնակցել բոլոր մրցաշարերին: Մարզիչների խելամիտ հրահանգների շնորհիվ, կիրառված տակտիկական նրբություններով, սաները հաղթահարում են իրենց առջև դրված խնդիրները՝ հասնելով փայլուն հաղթանակների:

Մարզիչները առաջնորդվում են հեռանկարային առաջադրանքներով:

Ուրախալի է, որ կրտսեր խմբերի սաները առաջին իսկ օրվանից ձգտում են ցույց տալ իրենց սերը դեպի շախմատը, ինչն էլ շատ է ոգևորում բոլորին:

Դպրոցում կազմակերպված մրցաշարերը անցնում են մրցակցության պայմաններում ու անչափ հետաքրքիր: Իսկ շախմատի պատմության դասավանդումը երեխաների մեջ առաջացնում են սեր և ձգտում շախմատի նկատմամբ: //

ֆուտբոլի համար նախատեսված բնական մարզադաշտ: «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ–ը համագործակցում է «Այունիք» ֆուտբոլային ակումբի հետ, և Հայաստանի մանկապատանեկան առաջնություններին ներկայացնում է 3 տարբեր տարիքային խմբեր, որը դիտարկվում է շատ արդյունավետ: Մոտ ապագայում «Այունիք» ֆուտբոլային ակումբի հետ համատեղ ուժերով պլանավորվում է Սիսիանը ներկայացնել ՀՀ առաջին խմբում: //

## ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# Լավագույն ավանդույթները շարունակվում են

**1960 թ. Մանվել Ամիրխանյանը նշանակվել է Սիսիանի նորաստեղծ մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն: Նրա ղեկավարման տարիներին մարզադպրոցում գործել է վոլեյբոլ, ֆուտբոլ, ծանրամարտ, բասկետբոլ, ըմբշամարտ մարզաձևերը:**

2002 թվականից Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոցը եղել է ՊՈԱԿ: Բավականին երկար տարիներ՝ 2002 թ.-ից մինչև 2018 թ. մարզադպրոցի տնօրեն աշխատել է Աղվան Հակոբյանը: Նրա պաշտոնավարման օրոք մարզադպրոցում գործել են հետևյալ մարզաձևերը՝ վոլեյբոլ, ֆուտբոլ, բասկետբոլ, շախմատ:

Պետք է առանձնացնել վոլեյբոլ մարզաձևը, որը մինչ օրս Սիսիանը ՀՀ տարբեր տարիքային խմբերում ունենում է մրցանակային տեղեր, ընդհուպ՝ ՀՀ չեմպիոններ:

2018 թ. մարզադպրոցում գործում է հետևյալ մարզաձևերը՝ վոլեյբոլ, ֆուտբոլ, բասկետբոլ, շախմատ, ազատ ոճի ըմբշամարտ, ձյուդո և սեղանի թենիս: Ինչպես նշեցի վոլեյբոլ մարզաձևից մշտապես ունենում ենք մրցանակային տեղեր, հատկապես առանձնացնեմ 2022 թվականին՝ 2008-2009 թթ. ծնվածները դարձան ՀՀ չեմպիոն, 2023 թվականին 2009-2010 թթ. ծնվածները կրկնեցին նույն հաջողությունը:

2019 թ. սկսած ձյուդո մարզաձևից մասնակցեցինք մի շարք առաջնությունների և ունեցանք կրկին մրցանակային տեղեր՝ ընդհուպ ՀՀ-ում կայանալիք միջազգային առաջնություններում 2008 թ. ծնված Կոլյա Ստեփանյանը I մրցանակի արժանացավ:

Ներկայումս մեծ ուշադրություն ենք դարձնում ազատ ոճի ըմբշամարտ մարզաձևի զարգացմանը: Շնորհիվ ՌԴ-ում սիսիանցի մեր հայրենակիցների հովանավորության շաբաթական մեկ պարապմունք անց ենք կացնում Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոցում:

**ՌԱՖԱՅԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ**
**ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ**

ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# Մարզաառողջարարական համալիր Կապանում

**Մեկուկես տարուց ավելի է՝ Կապանում բացվել է «ԻնՍպորտ-Սյունիք» մարզաառողջարարական բազմաֆունկցիոնալ համալիրը՝ մարզկենտրոնում զանգվածային սպորտի զարգացման և առողջ ապրելակերպի արմատավորման մի մարզօջախ: Մի խոսքով, «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» ձևակերպումը Կապանում կյանքի կոչելու առավել քան նպաստավոր պայմաններ են ստեղծվել:**

Համալիրի թողունակությունը մեկ ժամում 200 մարդ է, գործում են լողավազաններ (մեծահասակների և մանուկների համար), որոնք հագեցած են ֆիլտրման գերժամանակակից քառաստիճան համակարգով, ժամանակակից մարզասարքերով կահավորված ֆիտնեսի սրահ, բռնցքամարտի ու արևելյան մարտարվեստի սրահներ և այլն: Մեծահասակների լողավազանի երկարությունը 38 մ է և հարմարեցված է ինչպես ակտիվ լողի, այնպես էլ հանգստի համար:

Մարզական բաղադրիչից զատ կարևոր է նաև սոցիալականը: Մարզահամալիրի գործարկմամբ ստեղծվել է 42 մշտական աշխատատեղ, և սա ներդրումային ծրագրի առաջին փուլն է: Ասել է թե՝ լուծվում է նաև զբաղվածության խնդիրը:

Այս տարվա հունվարի 14-ին լրացավ մարզահամալիրի գործունեության մեկ տարին: Ներկաներին ողջունեցին «ԻնՍպորտ- Սյունիք»-ի տնօրեն Աշոտ Հայրապետյանը, ինչպես նաև «ԻնՍպորտ»-ի խորհրդի գործադիր տնօրեն Դավիթ Հայրապետյանը: Երախտագիտություն հայտնվեց համալիրի աշխատակիցներին, որոնց ջանքերով առողջ ապրելակերպ է սերմանվում՝ մանավանդ դեռահասների շրջանում: Ա. Հայրապետյանը համոզմունք հայտնեց, որ առաջիկայում սպասարկման որակն էլ ավելի կբարելավվի: Այնուհետև Երևանից ժամանած հյուրերը հանդես եկան ցուցադրական ելույթներով: Համալիրի լողավազանում մանուկների համար մրցույթ կազմակերպվեց, առաջին երեք տեղերը գրավածները պարգևատրվեցին մեդալներով, հաղթող ճանաչվածները՝ նաև հուշանվերներով:

*«ԻնՍպորտ-Սյունիք»-ի գլխամասային կառույցի մարզիչ-մասնագետները ժամանակ առ ժամանակ մեթոդական օգնություն են ցուցաբերում տեղացի մարզիչներին: Միով բանիվ, այս փուլում մարզահամալիրում նաև աշխատում են սեփական կադրեր ձևավորելու խնդրի վրա:*

Մինչև երեկո տարբեր սրահներում միջոցառումներ անցկացվեցին, և համալիրում իշխում էր տոնական տրամադրություն:

Անցած մեկուկես տարում ձևավորվել են մարզաառողջարարական խմբեր, որոնցում ընդգրկվածներին պարապում են Կատերինա Գաբրիելյանը (ակտիվ յոգա և պասիվ (բուժական) յոգա), Մերի Մովսիսյանը (ակտիվ ֆիտնես): Այս երկու խմբեր են այցելում մեծ թվով կանայք: Գործում է պարային խումբ, որը բարերար ազդեցություն է ունենում այցելողների կազմվածքի վրա (պարուսույց՝ Լիա Եփրեմյան): Մյուս խմբերը մարզում են Կարեն Ստեփանյանը (ինքնապաշտպանություն), Արտյոմ Գրիգորյանը (քիքբոքսինգ), Հայկ Մայիլյանը (ֆունկցիոնալ մարզումներ):

Տեղեկացանք, որ Կապանի հայտնի մարզիկ-մարզուհիները՝ Լևոն Աղասյանը, Արամայիս Սարգսյանը, Յանա Սարգսյանն անվճար օգտվում են մարզահամալիրի ծառայություններից: Այս առումով կարելի է նշել, որ համալիրի տնօրենությունը պատրաստ է մարզօջախում պարապելու հնարավորություն տալ կապանցի հեռանկարային մարզիկ-մարզուհիներին:

Աշոտ Հայրապետյանի փոխանցմամբ՝ Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ծրագիր է մշակվում դպրոցահասակ երեխաների շրջանում լողը մասսայականացնելու ուղղությամբ: Համալիրը ևս հայտ է ներկայացրել այդ ծրագրին մասնակցելու համար՝ ներկայացնելով իր

հնարավորությունները:

**«Որոշակի ժամանակ է պահանջվում, որ ավանդույթներ ձևավորվեն, շատ դժվարությամբ անհրաժեշտ կադրեր հավաքագրեցինք,** – պատմում է համալիրի տնօրեն Աշոտ Հայրապետյանը: **– Կապանում գործազրկության ցուցանիշը նկատի ունենալով, թվում էր, թե կադրերի առումով խնդիր չէր ծագի: Բայց լողի, ֆիտնեսի, մյուս մարզաձևերի համար տվյալ ոլորտի մասնագետներ են անհրաժեշտ, հատկապես՝ լողի մասնագետ: Այժմ, երբ որոշակի բազա ունենք, դրա վրա աճեցնելու ենք կադրեր»:**

Բացի այդ, «ԻնՍպորտ-Սյունիք»-ի գլխամասային կառույցի մարզիչ-մասնագետները ժամանակ առ ժամանակ մեթոդական օգնություն են ցուցաբերում տեղացի մարզիչներին: Միով բանիվ, այս փուլում մարզահամալիրում նաև աշխատում են սեփական կադրեր ձևավորելու խնդրի վրա: Օրինակ, երկու սկսնակ կադրերը անցկացնում են ջրային աերոբիկայի պարապմունք, որին տասից ավելի կին է մասնակցում:

Եվս մի ավանդույթ է ձևավորվում: Մի քանի ամիս է՝ Կապանի մանկապարտեզի սաներն այցելում են մարզահամալիր. Կապանի համայնքապետարանի հետ համագործակցության շնորհիվ հնարավորություն է ընձեռվել շաբաթական երկու անգամ՝ 20 փոքրիկներով, այցելել մարզահամալիր և չորս-հինգ տարեկանից սերտել լողի այբուբենը: Երեխաներ կան, որ երբևէ լողավազան չեն մտել, և սա լավ առիթ է մանուկներին լողալ սովորեցնել հենց վաղ տարիքից: Բոլոր պարապմունքներին մասնակից են լինում համալիրի մենեջերը (Ջուլիա Անդրեասյան) և բուժքույրը (Ալիսա Խերունց):

Միով բանիվ, օրվա բոլոր ժամերին «ԻնՍպորտ-Սյունիք» մարզաառողջարարական համալիրն ապրում է լիարժեք կյանքով:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**



ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# Առողջությունն ամրապնդելու ևս մի հասցե՝ «Իմպերիալ» համալիր

«Իմպերիալ» համալիրը (Կապանի Արամ Մանուկյան 1-ին նրբանցք, թիվ 8 շենք հասցեում գտնվող) ներառում է մարզասրահ և լողավազան:

Նախկին համալիրը «Ֆենիքս» է կոչվել և սկսել է գործել 2015 թվականից: Կորոնավիրուսի համավարակի, 44-օրյա պատերազմով պայմանավորված՝ համալիրը որոշ ժամանակով դադարեցրել է գործունեությունը: Մարզասրահը «Ջիմ զոնե» անվամբ վերսկսել է գործել 2021 թ. մայիսի 5-ից և հագեցած է բազմաֆունկցիոնալ վարժասարքերով, մարզիչները երեքն են՝ Լավրենտ Ստեփանյան, Արթուր Հայրապետյան, Սյունե Թումանյան (ֆիտնես է պարապում): Լավրենտ Ստեփանյանի փոխանցմամբ՝ մարզասրահում պարապմունքներից զատ՝ այլ միջոցառումներ են անցկացնում՝ մարզասրահ հաճախողների առողջության բարելավմանը միտված՝ հեծանվարշավներ, կրոսավազքեր: Մարզասրահ հիմնականում հաճախում են 12-18 տարեկաններ և դա սպորտով զբաղվելու և առողջությունն ամրապնդելու լավագույն ժամանակաշրջանն է:

Լավրենտը նաև հավելում է, որ իրենց նպատակը բազկամարտը սիրողականից դեպի պրոֆեսիոնալ հարթություն տանելն է: Քաջարանի կոմբինատի հովանավորությամբ մասնակցում են մրցումների, նաև իրենք կազմակերպում մրցումներ: Դեկտեմբերի 27-ին Կապանում անցկացվել է Սյունիքի մարզի պատանիների բազկամարտի առաջնություն: Բազկամարտի սիրահարներից է դպրոցական

Գագիկ Աթաջանյանը, ով մասնակցել է հանրապետական մրցումների, բարձր տեղ գրավել:

Մարզասրահ են հաճախում նաև աղջիկներ: Նրանցից Աննա Սեմերջյանը, ով նշում է, որ «Ջիմ զոնե» մարզասրահը իր համար հարազատ ու ջերմացնող միջավայր է. *«Իսկ ինչ վերաբերում է սպորտին, այն ինձ համար նախևառաջ կարգապահություն է: Ի վերջո ոչ բոլորը կարող են նպատակասլաց լինել և պարբերաբար մարզվել, ինչի շնորհիվ ձեռք ենք բերում ամուր բնավորություն և հաստատակամություն՝ դառնալով ինքնավստահ ու կարգապահ կյանքի բոլոր ոլորտներում: Նաև չմոռանանք, որ սպորտի հետ անհրաժեշտ է համատեղել առողջ սնունդ»*:

«Իմպերիալ» համալիրի լողավազանում հանդիպեցինք մարզիչ Տանյա Ազատյանին: Մանկուց զբաղվում է լողով, հանրապետության հավաքականի կազմում Տաշքենդում մասնակցել է համամիութենական առաջնության: Աշակերտել է 1970-1980-ականներին հայտնի լողի մասնագետ Օլեգ Գրաբովսկուն: Տասը տարի է՝ հիմնադրման օրվանից այս համալիրում լող է պարապում: Կան երեխաներ, ովքեր լողալ գիտեն, նրանց մարզաձևի հմտություններ է ուսուցանում, իսկ շատերին սովորեցնում է լողի այբուբենը: Տանյան ասում է, որ շնորհալի երեխաներ կան, որ լրջորեն կարող են զբաղվել լողով: Տանյան բոլոր դեռահասներին խորհուրդ է տալիս զբաղվել լողով, քանզի լողալիս մարդու համարյա ողջ մկանային համակարգը «գործում» է: Լողով պարապելը նաև փողոցի բացասական ազդեցությունից կտրվելու ամենակարճ ճանապարհն է: Նրա համոզմունքն այն է, որ երեխաները ոչ միայն լողալ սովորեն, այլև լրջորեն զբաղվեն լողով՝ որպես օլիմպիական մարզաձև և մասնակցեն մրցումների, դառնան չեմպիոններ և մրցանակակիրներ, ոչ միայն Հայաստանի, այլ միջազգային մասշտաբով:

Ինչպես տեղեկացանք, ամռանը 100-ից ավելի դպրոցական, 30-40 մեծահասակ է մասնակցում լողի պարապմունքներին: Մեր այցելության օրը ևս լողավազանում աշխուժություն էր…

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ

# Առողջ ապրելակերպի մասսայականացման ջատագովը Քաջարանում՝ Վահե Իվանյան

2020 թ. մայիսին Քաջարանում բացվել է ֆիտնես մարզասրահ՝ «Իվանյանս ֆիթնես»: Մարզասրահ են այցելում թե տղամարդիկ, թե կանայք: Մոտ 50 և ավելի մարզվող՝ 14-ից 65 տարեկան:

Վահե Իվանյանը ծնվել է 1995 թ. Քաջարանում: Հաճախել է Երևանի Եղիշե Չարենցի անվան թիվ 1 դպրոցը, վաղ տարիքից զբաղվել է սպորտով՝ ըմբշամարտով: Դպրոցն ավարտելուց հետո սովորել է Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում՝ հանդբոլի բաժնում, ավարտել է Գիտությունների ազգային ակադեմիայի մագիստրատուրան՝ կառավարում մասնագիտությամբ: Ուսանողական տարիներին զբաղվել է աթլետիկայով, Հայաստանի քառակի չեմպիոն է՝ 800 մ, 400 մ վազքատարածություններից, մասնակցել է մարաթոնյան վազքի, 1-ին կարգային մարզիկ է աթլետիկա մարզաձևից:

Երկու տարի աշխատել է Երևանի Ստ. Զորյանի անվան թիվ 56 դպրոցում՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչ: 2019 թ. տեղափոխվել է Քաջարան, սկզբնական շրջանում աշխատել է մանկապատանեկան մարզադպրոցում, հետո՝ 2020-ին համատեղությամբ նաև «ՀՊՄԿ» ՓԲ ընկերության հարստացուցիչ ֆաբրիկայում՝ փականագործ:

2020 թ. մայիսին Քաջարանում բացել է ֆիտնես մարզասրահ՝ «Իվանյանս ֆիթնես»: Քանի որ Քաջարանում առաջին մարզասրահն էր, մարդկանց մեջ որոշակի բարդույթներ և ոչ ճիշտ ընկալում կար: Բայց որոշ ժամանակ անց հաջողվեց այդ կարծրատիպը կոտրել: Հիմա մարզասրահ են այցելում թե տղամարդիկ, թե կանայք: 50 և ավելի մարզվող կան՝ 14-ից 65 տարեկան: Կան դրական արդյունքներ և՛ մարդկանց ֆիզիկական տեսքի հետ կապված՝ մկանային զանգված, և՛ քաշի հետ կապված: Կան հաճախողներ, որոք երեք ամսում մոտ 20 կգ նիհարել են, միայն ճիշտ մարզումների և առողջ սննդակարգին հետևելու շնորհիվ:

«**Ձեր ակումբում պարապելու հաճախողները կազմվածքի ի՞նչ խնդիրներ են հիմնականում ունենում»,** – հարցնում ենք մեր զրուցակցին:

*«Ամենաառաջնայինը, որ մարդկանց նստակյաց կյանքն է, աշխատանքը համակարգչի առջև՝ ծույլ են դառնում և ունենում են ողնաշարի խնդիր՝ կողերի թեքվածություն, նստաներվի բորբոքում, գլխացավեր և այլն:*

*Այդ ամենին հակազդում ենք առողջ ապրելակերպով, շարժվելով, մարզում-*

***Ֆիթնես-ակումբը համագործակցում է նաև «Կոստանյան ֆայթ» ակումբի հետ, նրա սաներին մարզում են, ֆիզիկական պատրաստվածությունը էլ ավելի բարձր մակարդակի հասցնում, որպեսզի ռինգում էլ ավելի դիմացկուն լինեն:***

*ներով: Մարդիկ առողջությանը չեն հետևում: Լինելով այդ գործի մեջ, մի վատ բան եմ նկատել, որ մարդիկ հիմնականում գալիս են նիհարելու և ոչ թե առողջ ապրելակերպի համար: Խոսք է շրջանառվում, թե նիհար ես, ի՞նչու ես ֆիթնեսի գնում, դա այդպես չէ:*

*Այնպիսի տղաներ են հաճախում, որոնց ֆիզիկական պատրաստվածությունը հեռու է բավարար լինելուց, որոշ ժամանակ անց կարողանում են բարելավել ֆիզիկական տեսքը, հավաքել մկանային զանգված: Մի տղա ունեինք, ում հետ պարապել էինք, զինվորական հավաքական մտնելով, նրան միանգամից ընդունեցին որպես հետախույզ՝ տեսնելով ֆիզիկական լավ տվյալները:*

*Վերջերս էլ մեկն էր եկել, ուսի հետևի երկու ջիլն էին վիրահատել, ձեռքի շարժումներն սահմանափակ էին, երեք ամսում լրիվ վերականգնել ենք»:*

Ֆիթնես-ակումբը համագործակցում է նաև «Կոստանյան ֆայթ» ակումբի հետ, նրա սաներին մարզում են, ֆիզիկական պատրաստվածությունը էլ ավելի բարձր մակարդակի հասցնում, որպեսզի ռինգում էլ ավելի դիմացկուն լինեն:

Վերջերս էլ Կապանից Աննա Աղագուլյանն է գալիս և պարի պարապմունքներ անցկացնում մեզ մոտ, հինգ-ինը տարեկան երեխաներից խումբ ունի:

Սկզբնական շրջանում Վահե Իվանյանը փոքր տարածք էր վերցրել, մարզագույքը ձեռք էր բերել վարկով՝ ամենաանհրաժեշտը: Մեկ տարի հետո զգալով, որ պահանջարկ կա, ավելի մեծ տարածք վարձակալեց և ավելացրեց գույքը: Այս պահի դրությամբ մարզասրահում առկա է 13-14 մլն-ի գույք: ԶՊՄԿ ընկերությունից ամենամյա աջակցություն է ստանում՝ 75 հազար դրամ, կարողանում է այդ գումարով էլ ինչ-որ բան ձեռք բերել:

Այս պահին գույքի անհրաժեշտություն չունեն, տարածք է անհրաժեշտ, այն գումարը, որ տալիս է վարձակալությանը, կարող է ավելի նպատակաուղղված օգտագործել:

Վահե Իվանյանը մարզումներից զատ Քաջարանի արհեստագործական ուսումնարանի դահլիճում հանդբոլ է պարապում: *«Թիմը ձևավորվել է, երեխաները ակտիվ են, շաբաթական երկու օր ենք պարապում, մեկնել ենք մրցումների»:*

Հեռանկարում ավելի մեծ տարածք ձեռք բերելն է, գույքն ավելացնելը, ցնցուղներ տեղադրելը, բայց Քաջարանում դեռևս նման տարածք չի գտնվել, որի չափերը մեծ լինելուց բացի, նաև պետք է հարմար լինի հաճախելու համար:

Քաջարան քաղաքի տոնին Վահե Իվանյանը համայնքապետարանի կողմից պարգևատրվել է դրամական պարգևով և շնորհակալագրով՝ քաղաքում առողջ ապրելակերպը մասսայականացման համար: //

ԱԹԼԵՏԻԿԱ

# Եռացատկորդ Լևոն Աղասյանը

**Կապանցի եզակի մարզիկն է, ով երկու անգամ մասնակցել է Օլիմպիական խաղերի՝ 2016-ին Ռիո դե Ժանեյրոյում և 2020-ին՝ Տոկիոյում: Ուշագրավն այն է, որ մարզական ուղին սկսել է Կապանում, պարապվել քաղաքի մարզադաշտում: Կապանի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոցի սան է (առաջին մարզիչը, ՀՀ վաստակավոր մարզիչ՝ Արսեն Պետրոսյան), այժմ հայտնի է հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:**

Դժվարին է եղել նրա մարզական ուղին, Կապանում աթլետիկայով զբաղվելու պայմանները հեռու էին բավարար լինելուց, եթե չասենք նախնադարյան էին: Պատահել է, որ ասֆալտի վրա է պարապել, բայց երբեք չի վհատվել: Առաջին անգամ մարզադաշտ ոտք դրեց 2005 թ. ապրիլի 7-ին, երբ հաստատապես որոշեց աթլետիկայով զբաղվել: Միշտ ջերմությամբ է արտահայտվել առաջին մարզչի մասին: «Նրանից չհանձնվել եմ սովորել, կարգապահություն և անկոտրում հավատ սիրված գործի հանդեպ: Իսկ այդ հատկանիշները շատ կարևոր են կյանքի բոլոր բնագավառներում: Նա բարի, պատրաստակամ, հումորով, բազմակողմանի զարգացած, կիրթ, համեստ, հասկացող ու դրական մարդ է: Իրականում մենք շատ տարբեր ենք, բայց մարզումներին մոտենում ենք նույն պատրաստակամությամբ ու եռանդով»:

Լևոնն առաջնակարգ մարզիկ լինելուց զատ՝ նախասիրություններ ունի առօրյա կյանքում, նաև գրագետ է շարադրում իր մտքերը, հաճելի զրուցակից է, ուստի չենք զլանում նրան հարցեր ուղղել:

Ինչպե՞ս նախընտրեց եռացատկը. «Կապանում ցատկերի շատ լավ դպրոց կա: Դա նաև իմ մարզչի շնորհքն է: 2007-ին առաջին անգամ հանդես եկա հեռացատկով և եռացատկով, տարիքիս համեմատ շատ բարձր արդյունք ցույց տվեցի: Սակայն մարզիչս դեռ չէր թողնում, որ եռացատկով զբաղվեմ, միշտ ասում էր, որ ֆիզիկապես կոփվեմ, ցատկերս նորմալ կատարեմ ու մրցումների մասնակցեմ: Բայց չգրված օրենք է, երբ մի բան չի թույլատրվում, այն ավելի է ձգում: Եռացատկն իմ երազանքն էր, երբ սկսեցի արդեն ամբողջովին դրանով զբաղվել,



անսահման երջանիկ էի»:

Լինո՞ւմ են հոգեբանական ծանր պահեր. «Եռացատկում ամեն պահ քեզնից պահանջվող առավելագույնը պետք է անես, որովհետև աննշան սխալի դեպքում լուրջ վնասվածքներ կարող ես ստանալ: Դրա հետևանքով հոգեբանական խնդիրներ առաջանալուց բացի, երկար ժամանակ կարող է չզգաս, թե ինչպես պետք է կատարես տեխնիկական վարժությունը: Իսկ եթե դա չկարողանաս, ապա մեծ արդյունքի չես հասնի»:

Ո՞րն է այն կարևոր խորհուրդը, որ ստացել ես մարզիչից. «Քո խնդիրը քեզնից բացի ոչ մեկը չի լուծելու: Սա է ամենակարևորը»: Նա նաև պատգամում էր. «Կյանքում լինելու են շատ խոչընդոտներ, դժվարություններ և մարդիկ, ովքեր կամա թե ակամա կխանգարեն քեզ: Արդար աշխատիր, նպատակդ մի մոռացիր, և ամեն ինչ տեղը կընկնի»:

Ի՞նչ զգացողություններ է ունենում, երբ կանգնում է պատվո պատվանդանի առաջին հարթակին. «Մեր ազգի համար յուրաքանչյուր հաղթանակ ոգեշնչող է: Մենք պետք է առավելագույնս անենք, որ հաղթանակներ գրանցենք: Սա հոգեբանորեն մեծ խթան ու հիմք կստեղծի կյանքի որակը բարելավելու համար»:

Ի՞նչ է աթլետիկան Լևոն Աղասյան մարզիկի համար. «Անչափ սիրում եմ աթլետիկան, այն իմ ապրելակերպն է, իմ երջանկությունը: Աթլետիկան աշխարհում ամենամասսայական սպորտաձևն է, մարզաձևերի հիմքը: Այն երկրներում, որտեղ զարգացած աթլետիկա չկա, մյուս մարզաձևերն էլ դանդաղ առաջ կգնան»:

Նորամուտը միջազգային ասպարեզ

2010 թ. ամռանն էր. Ստամբուլում կայացած աթլետիկայի միջազգային մրցումների ժամանակ հեռացատկում առաջին տեղ գրավեց: Մարզիչը հետո խոստովանեց, որ մտքում ասել է, որ եթե այդտեղ լավ հանդես գա, ուրեմն կարող է մարզիկ դառնալ:

Նրա մարզական կարիերայում բեկումնային պահն այն է եղել, որ 2013 թվականի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում (18-19 տարեկաններ) հաղթող է դարձել 16,0.1մ արդյունքով (այն ժամանակ Երևանի տնտեսագիտական համալսարանում էր սովորում): Ուրախություն պարգևեց ոչ միայն առաջին մարզիչ Արսեն Պետրոսյանին, այլև Երևանի օլիմպիական հերթափոխի մարզադպրոցի կոլեկտիվին, որտեղ շարունակում էր մարզումները, դե, իհարկե, նաև կապանցի իր երկրպագուներին. «Այդ ժամանակ ես առաջին կուրս էի ընդունվել, չգիտեի՝ ԲԿՄԱ-ում կծառայե՞մ, թե՞ ոչ: Բազմաթիվ չկարգավորված հարցեր կային: Բայց հաղթանակից հետո ամեն ինչ տեղն ընկավ, շարունակեցի մարզվել ու նաև ծառայել»:

Հաջորդ տպավորիչ հաղթանակը 2020 թ. մարտին էր: Լեհաստանի Տորուն քաղաքում տեղի ունեցած մեծահասակների Եվրոպայի առաջնությունում (ձմեռային) 16,55 մ արդյունքով զբաղեցրել է հինգերորդ տեղը: 25 տարվա դադարից հետո Աղասյանը հայկական աթլետիկայում առաջին մարզիկն է, ով դուրս եկավ Եվրոպայի առաջնության եզրափակիչ:

Սրան հավելենք, որ ճանաչված եռացատկորդը Բալկանյան խաղերի վեցակի չեմպիոն է:

Մրցաշրջան 2024-ը Լևոնը հաջողությամբ է մեկնարկել, հունվարի 20-ին Ղազախստանում անցկացված օլիմպիական չեմպիոն Օլգա Ռիբակովայի 9-րդ միջազգային մրցմանը ցատկել է 16,25 մ և արժանացել արծաթե մեդալի: Մրցաշարին մասնակցել է ութ երկրի ավելի քան 70 մարզիկ:

2024-ը օլիմպիական էր: Ամռանը Փարիզում կայացավ 33-րդ օլիմպիական խաղերը: Եվ, բնականաբար, Լևոնը միայն մի նպատակ ուներ՝ օլիմպիադայի ուղեգիր նվաճել:

Ցավոք, այս անգամ նպատակն իրականություն չդարձավ: Լիահույս ենք, որ համառ մարզումների շնորհիվ Լևոնը կասի դեռ իր ծանրակշիռ խոսքը...

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ԱԹԼԵՏԻԿԱ

# Մարզիկներ՝ հայր և որդի Վեզիրյաններ



*Արշամ Վեզիրյան (Ամի)*



*Մասիս Վեզիրյան*

**Առողջ մարմնում՝ առողջ հոգի... Այս ճշմարտությունն է իր կյանքում միշտ դավանել ֆիզիկական դաստիարակության գործի նվիրյալ Արշամ Վեզիրյանը: Յոթնամյա կրթություն ստանալուց հետո դարբնի աշակերտ էր, բայց նրա տարերքը սպորտն էր. ջլապինդ ու ամրակազմ պատանին պարբերաբար մասնակցում էր շրջանային մրցումներին, հաղթող ու մրցանակակիր դառնում տարբեր մարզաձևերից: Առաջին մարզական հաջողության բերկրանքը ճաշակել է հեռավոր 1928 թվականին:**

1930-ական թվականներին Ղափանում երիտասարդությանը մեծ սպորտի մասնակից դարձնելու հնարավորություններ տակավին չէին ստեղծվել, բայց Արշամի մեջ ձգտումը երբեք չմարեց, գնաց իր նախընտրած ուղիով: 1939-ին գերազանցությամբ ավարտելով Երևանի ֆիզկուլտտեխնիկումը, նշանակվել է շրջանի ֆիզկուլտկոմիտեի նախագահ: Նրա մարզական հաջողությունների մասին տեղյակ լինելու համար բնավ պետք չէ այստեղ-այնտեղ ընկնել, մարդկանց հարց ու փորձ անել: Ընտանեկան ալբոմում խնամքով պահպանված են համամիութենական և հանրապետական լրագրերում նրա մարզական նվաճումների մասին պատմող հոդվածներ, թղթակցություններ, լուրեր՝ «Советский спорт», «Комсомолец», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Սովետական դպրոց», «Պիոներ կանչ» և հանրապետական ու շրջանային այլ թերթեր: Իսկ «Симферопольская газета» թերթում տպագրված են բարձրացատկորդ Վեզիրյանի մասին չափածո տողեր.

Прыгуну Везиряну
Толчок и взлет… послушно тело…
Гордятся им и те, и те,
Прыгун, не любит он предела
И как физорг на высоте.

Կապանը նրան մեծարում էր փաղաքուշ մականունով Ամի, որ հորինվել է ստույգ եղելությունից. միակ եղբայրը՝ Ժորան, զոհվել է Մեծ հայրենականում: Լսելով եղբոր զոհվելու բոթը, լացուկոծ է դրել, վշտահար ասել. «Էլ ինձ Ամի ասող չի լինելու»: Ի պատիվ նրա նկատմամբ տածած մեծ սիրո՝ կապանցիները նրան մկրտել են Ամի հորջորջումով, այսինքն՝ բոլորի հորեղբայր:

Մեծ հայրենականի ժամանակների մի լուսանկարում պատկերված է գրասեղանի մոտ նստած, որի մոտ մեծ հերթ է գոյացել. պատերազմ մեկնողների անձնական տվյալներն է գրառում: Հետո եկավ նաև իր՝ ռազմաճակատ մեկնելու ժամանակը: 1942-1945 թթ. մասնակցել է երկրորդ աշխարհամարտին՝ մարտնչել Երրորդ բելառուսական, Առաջին ուկրաինական ռազմաճակատներում, երկու անգամ վիրավորվել, Կովկասյան նախալեռներից մարտերով հասել մինչև Պրահա ու Դրեզդեն, շարքային զինվորից հասել ավագ լեյտենանտի կոչման: Լավ կռվելու արգասիքը Կարմիր աստղի երկու շքանշանն են ու բազմաթիվ մեդալները: Գործող բանակում գտնվելով՝ երեք տարում շատ-շատ բան է տեսել. մի անգամ ուղարկել են «լեզու» բերելու, մի գերմանացի է գերեվարել, երբ շտաբում հարցաքննել են, պարզվել է՝ ճանաչված ֆուտբոլիստ է, ով խաղացել է նաև Գերմանիայի ֆուտբոլի հավաքականի կազմում...

Միշտ էլ անբաժան է եղել մեծ սպորտից: Ընտանեկան ալբոմում պահվող արդեն խունացած մի թերթից տեղեկանում ենք, որ գվարդիայի լեյտենանտ Արշամ Վեզիրյանը 1945 թվականի սեպտեմբերի 10-ին Վիեննայում մասնակցել է ռազմաճակատային սպարտակիադային՝ 100 մետր արագավազքում դարձել հաղթող, բարձրացատկում գրավել երկրորդ, իսկ հեռացատկում՝ երրորդ տեղերը: Մի այլ մրցման ժամանակ թեթև աթլետիկայի մի քանի ձևերից առաջնությունը շահելու համար 1946 թվականին Խորհրդային Միության մարշալ Իվան Կոնևը գվարդիայի լեյտենանտ Արշամ Վեզիրյանին պարգևատրել է անվանական ժամացույցով:

Զորացրվելուց հետո աշխատել է Կապանի թիվ 3 (ռուսական) դպրոցում, լեռնամետալուրգիական տեխնիկումում, վաստակած հանգստի անցնելուց հետո՝ Եղվարդի միջնակարգ դպրոցում: Դպրոցում դասավանդելու տարիներին հեռակա կարգով ավարտել է Երևանի ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտը: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով 1965 թվականին նրան շնորհվել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում: Եղվարդի միջնակարգ դպրոցում նրա ստեղծած մարզահրապարակն արժանացել է Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի բրոնզե մեդալի: Դասավանդելով գյուղական կրթօջախում՝ երկու տարվա ընթացքում չորս առաջին կարգային մարզիկ է պատրաստել, ինչի համար նման պատվի է արժանացել:

Հինգ զավակ է ունեցել Ամին. երկու որդի՝ Մասիս և Ալիկ, երեք դուստր՝ Դոնարա, Մագդա, Դարիկո:

Ավագ որդին՝ Մասիսը, գնացել է հոր հետքերով, դեռ ավելին՝ միասին ֆիզկուլտուրա են դասավանդել Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումում: Իսկ մինչ այդ խորհրդային բանակում ծառայելիս դիվիզիայի չեմպիոն է դարձել գնդի հրում ձևից, Անդրկովկասյան զինվորական օկրուգի առաջնության եռամարտում գրավել մրցակցային տեղ:

Մասիս Վեզիրյանը մասնակցել է բազում թեթևատլետիկական մրցումների, նիզակի նետում մարզաձևից դարձել «Սպարտակ» մարզական ընկերության չեմպիոն: Մասիսը դաստիարակել է կարգային մի շարք մարզիկներ, որոնք մասնակցել են ամենատարբեր մրցումների:

Արշամ Վեզիրյանի հիշատակն անկատ չի մնացել: Կապանում 2009 թվականից ավանդաբար անցկացվում է կապանյան սպորտի նվիրյալ, ՀՀ վաստակավոր մարզիչ Արշամ Վեզիրյանին նվիրված կրոսավազքի հուշամրցաշար, որը վերջին տարիներիս հանրապետական ընդգրկում ունի և ներառված է Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի օրացուցային պլանում:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՄԵՆԱՊԱՅՔԱՐԱՅԻՆ ՁԵՎԵՐ

# Կապանցի քիք բռնցքամարտիկները շարունակում են ավանդույթները

**Արդեն ավանդույթ է դարձել, որ քիքբոքսինգի Սյունիքի մարզի սիրողական և պրոֆեսիոնալ ակումբի սաները միջազգային մրցումներից վերադառնում են տարբեր փայլի մեդալներով: Մանավանդ 2024 թ. մարզական տարին հաջողությամբ են մեկնարկել:**

ՀՀ վաստակավոր մարզիչ Արա Սարգսյանի և քիքբոքսինգի Հայաստանի ֆեդերացիայի փոխնախագահ Վիկտոր Խաչատրյանի սաները 2024թ. փետրվարի 16-ից 18-ը մասնակցել են մարզաձևի Եվրոպայի գավաթի խաղարկությանը, որ կայացել է Խորվաթիայի Զագրեբ քաղաքում: Հայաստանի հանրապետությունը ներկայացնում էր միայն քիքբոքսինգի սյունիքյան ակումբը, որի սաները հանդես եկան քաշային վեց կարգում: Հեղինակավոր այդ մրցումներին մասնակցում էր մոտ 40 երկրի ներկայացուցիչ, ուստի ամեն մի նվաճված մեդալը շատ ավելի մեծ գին ուներ:

Կապանցի մարզիկները հուսախաբ չարեցին. Սերժ Պապյանը և Տիգրան Դավթյանը դարձել են հաղթողներ, Մարկ Միքայելյանը և Սամվել Արզումանյանը կանգնել են պատվո պատվանդանի երկրորդ հարթակին, իսկ Ռոման Գրիգորյանը, Արթուր Գրիգորյանը, Նարեկ Մեսրոպյանը, Տիգրան Մուշկամբարյանը և Արթուր Հովհաննիսյանը դարձել են երրորդ մրցանակակիրներ:

Մարտի 21-ից-24-ը Իտալիայի Եզոլո Լիդո քաղաքում անցկացվեց WAKO վարկածով քիք-բոքսինգի աշխարհի գավաթի խաղարկությունը, որին յոթ մարզիկով մասնակցեց Սյունիքի մարզի սիրողական և պրոֆեսիոնալ քիքբոքսինգի ակումբը՝ գլխավորությամբ ՀՀ վաստակավոր մարզիչ Արա Սարգսյանի և մարզիչ, ՀՀ քիք-բոքսինգի ֆեդերացիայի նախագահի տեղակալ Վիկտոր Խաչատրյանի: Նրանց սաները նվաճեցին տասը մեդալ՝ 4 ոսկե, 4 արծաթե, 2 բրոնզե: Ի դեպ, Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում էին կապանցի մարզիկները:

Առաջինը հաջողության հասավ և պատվո պատվանդանի ամենավերին հարթակին կանգնեց Տիգրան Մուշկամբարյանը՝ լայթ մրցաձևով: Այնուհետև հաղթող և մրցանակակիրներ դարձան Սերժ Պապյանը լայթ (1-ին տեղ), քիք լայթ (2-րդ տեղ), Մարկ Միքայելյանը՝ լայթ (2-րդ տեղ), քիք լայթ (1-ին տեղ), Տիգրան Դավթյանը քիք լայթ (1-ին տեղ), Սամվել Արզումանյանը՝ լայթ (2-րդ տեղ), քիք լայթ 2-րդ տեղ, Ռոման Գրիգորյանը՝ քիք լայթ (3-րդ տեղ), Արթուր Հովհաննիսյանը քիք լայթ (3-րդ տեղ):

Ակումբի պատվավոր նախագահ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայուն զարգաց-

Կման տնօրեն Արմեն Ստեփանյանը մրցավայր էր մեկնել և իր ներկայությամբ ոգևորել պատանի մարզիկներին:

Ակումբի սաներն ու նրանց ծնողները, մարզիչները երախտագիտություն են հայտնում ՀՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիյին՝ բարի կամեցողության և այս անգամվա մրցման մասնակցությունը հովանավորելու համար:

Մարզաձևի զարգացումը Կապանում կապվում է ՀՀ վաստակավոր մարզիչ Արա Սարգսյանի անվան հետ, ում գլխավորությամբ կապանցի քիք բռնցքամարտիկները հաջողությամբ են հանդես եկել հանրապետական և միջազգային մրցումներում, նաև անհրաժեշտ ֆիզիկական պատրաստականություն ստանալով՝ համալրել հայոց բանակի շարքերը:

2024 թ. օգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 1-ը Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում կայացավ քիքբոքսինգի աշխարհի առաջնությունը, որին մասնակցության հրավեր էր ստացել նաև Հայաստանի քիքբոքսինգի ազգային հավաքականը: Հանրապետության դրոշի ներքո հանդես եկան Հայաստանի տարբեր մարզերի ուժեղագույն, այդ թվում Սյունիքի մարզի քիքբոքսինքի պատանի մարզիկները: Սյունիքի մարզի «Գարեգին Նժդեհ» ակումբը (գլխավոր մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ՝ Արա Սարգսյան, մարզիչ ՀՀ քիքբոքսինգի ֆեդերացիայի փոխնախագահ Վիկտոր Խաչատրյան) այդ կարևոր մրցմանը ներկայացել էր յոթ մարզիկով: Նրանցից երկուսը հայրենի քաղաք վերադարձան մեդալներով և գավաթով: Սերժ Պապյանը (մինչև 32 կգ քաշային կարգ) քիք լայթ մարզաձևում հաղթող դարձավ, իսկ լայթ մրցաձևում արժանացավ արծաթե մեդալի, Տիգրան Դավթյանը (մինչև 37 կգ քաշային կարգ) լայթ մրցաձևում կանգնեց պատվո պատվանդանի երրորդ հարթակին՝ ստանալով բրոնզե մեդալ:

Սեպտեմբերի 2-ին Կապանի մշակույթի կենտրոնի մերձակա հրապարակում փոքրիկ տոնախմբություն էր: Ծափողջույններով և գոտեպնդող բացականչություններով կապանցիները դիմավորեցին Սերժին և Տիգրանին, նրանց մարզիչներին: Տոնական սեղան էր բացվել. հնչեցին շնորհավորանքներ, բարեմաղթանքի խոսքեր մարզիկների և մարզիչների հասցեին: Երախտագիտություն հայտնվեց ակումբի պատվավոր նախագահ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանին և ընդհանրապես կոմբինատի ղեկավարությանը՝ մարզիկների և մարզիչների կողքին լինելու, միջազգային մրցաշարերի մասնակցությունը հովանավորելու համար:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՄԵՆԱՊԱՅՔԱՐԱՅԻՆ ՁԵՎԵՐ

# ԱՌՆՈԼԴ ԿՈՍՏԱՆՅԱՆ. «Ձգտում ենք խառը մենամարտերը զարգացնել Սյունիքում»

**Առնոլդ Կոստանյանը «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության մարզահամալիրում խառը մենամարտերի գծով փոխտնօրենն է, «Կոստանյան ֆայթ» ակումբի գլխավոր մարզիչը և ղեկավարը:**

Մարզումները սկսել է 2008 թ., 2023 թվականից ակումբն արդեն պետական կարգավիճակ է ստացել՝ «Կոստանյան ֆայթ» մարտական ակումբ հասարակական կազմակերպություն: Ակումբում ընթանում են պրոֆեսիոնալ խառը մարտարվեստի մարզումներ: Այն օլիմպիական մարզաձև չէ և իր մեջ ներառում է ըմբշամարտի, բռնցքամարտի, կարատեի, ձյուդոյի տարրեր: Սյունիքի մարզի Ռիո գրեփլինգի, բրազիլական ջիու-ջիթսուի մարզաձևերի ներկայացուցիչն է: Այս պահի դրությամբ ակումբն ունի 100 սան, ըստ տարիքային խմբերի՝ 5-7, 8-10, 11-13 տարեկաններ և մեծահասակներ: Ակումբի պատվավոր նախագահն է ՀՀ բրազիլական ջիու-ջիթսու ֆեդերացիայի հիմնադիր, Ռիո գրեփլինգի միջազգային ակումբի հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Վահան Թադևոսյանը, ով սև գոտի երկրորդ դան կարգ ունի (ջիու-ջիթսու):

Պատմում է Առնոլդ Կոստանյանը. «Մեր սաները մենամարտում են թե MMA, թե ջիու-ջիթսու մարզաձևերում: Սաներից, օրինակ, Նարեկ Առուսխանյանը, ով 44-օրյա պատերազմի մասնակից է, կուդոյի Ռուսաստանի չեմպիոն է, Հայաստանի եռակի ուշու-սանդայի չեմպիոն: Վեց տարի դադարից հետո նրա առաջին մենամարտը տեղի ունեցավ Իրանի Իսլամական Հանրապետությունում, որտեղ գրավեց առաջին տեղը: Արմեն Կոստանյանը 2023 թ. Աբու Դաբիում կայացած պատանիների MMA աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր է: 2024 թ. փետրվարի 17-ին մասնակցեցինք Հայաստանի բաց առաջնությանը՝ գրեփլինգ մարզաձևից, մեր տղաները զբաղեցրին պատվավոր երկրորդ և երրորդ հորիզոնականները: MIX FIGHT և GAMMA Armenia կազմակերպությունների կողմից փետրվարի 23-24-ը Երևանում անցկացվեց MMA և K-1 միջազգային առաջնություն, մեր ակումբի մարզիկներից վեց հոգի զբաղեցրեցին առաջին մրցանակային տեղ, յոթ հոգի՝ երկրորդ մրցանակային տեղ և մեկը՝ երրորդ մրցանակային տեղ:

Մասնակցեցինք աշխարհի առաջնությանը Սերբիայի Բելգրադ քաղաքում: Տղաները, ցավոք, չկարողացան մրցանակային տեղեր զբաղեցնել՝ Արմենը վնասվածք ստացավ և երկրորդ մենամարտին չկարողացավ մասնակցել, Նարեկն առաջին մենամարտում հաղթեց, մյուսում, ցավոք, պարտվեց:

2023 թ. հունիսի 10-13-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում անցկացվեց K-1-ի միջազգային մրցաշար: Մասնակ-

ցեցինք ինը հոգով, որոնցից ութը զբաղեցրին մրցանակային տեղեր, մասնավորապես՝ Ալեքս Հայրապետյան K-1՝ I տեղ, Դավիթ Հարությունյան K-1՝ I տեղ, Արեն Մաղաքյան K-1՝ I տեղ:

2024 թ. հունվարի 27-ին Իրանի Իսլամական Հանրապետության Լահիջան քաղաքում անցկացվեց K-1 միջազգային մրցաշար, ունեցանք հաղթանակներ՝ Նարեկ Առուսխանյան K-1՝ I տեղ, Շանթ Բաբայան K-1՝ I տեղ, Ալեքս Հայրապետյան K-1՝ I տեղ, Դավիթ Հարությունյան K-1՝ I տեղ, Արեն Մարգարյան K-1՝ I տեղ:

2024 թ. սեպտեմբերի 14-15-ը տեղի ունեցավ Գոքոր Չիվիչյանի անվան գրեփլինգի միջազգային մրցաշարը: Մրցաշարին մասնակցեցին մոտ 200 մարզիկ Հայաստանի տարբեր մարզերից, Իրանի Իսլամական Հանրապետությունից և Ռուսաստանի Դաշնությունից: Ակումբից մասնակցեց երկու մարզիկ: Արմեն Կոստանյանը գրավեց առաջին, Նարեկ Առուսխանյանը՝ երկրորդ տեղ:

Ակումբի հիմնական աջակիցը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է, ամեն հարցում մեր կողքին է...

Տարբեր սեմինարների անցկացումը շատ կարևոր է մարզիկների համար: Մեր սաներին ուղարկում ենք սեմինարների, նրանք մարզվում են մենամարտերի ֆեդերացիաների տարբեր երեխաների հետ, փորձի փոխանակում է իրականացվում, որի շնորհիվ զգալի աճ է նկատվում:

Համազգեստը ջիու-ջիթսուի դեպքում սպիտակ, կապույտ կիմանոներն են, գրեփլինգի, խառը մենամարտերի դեպքում՝ կիսավարտիքներ, կարճաթև շապիկներ: Համազգեստի խնդիրը հոգում է ծնողը, բայց «ՀՊՄԿ» ՓԲ ընկերության ղեկավարությունն էլ պատրաստակամություն է հայտնել՝ օգնելու:

Հեռանկարային մարզիկներ ունեմ՝ Արմենը, Նարեկը, փոքրերն են՝ հիմնականում 7-8, 8-9 տարեկան, առաջադիմում են, ուզում եմ կամաց-կամաց տանել դեպի պրոֆեսիոնալ ռինգեր:

Մեզ մոտ ստեղծվել է ամեն պայման, որ մարզիկները մարզվեն, կոփվեն և՛ տեխնիկապես, և՛ ֆիզիկապես: Եթե ֆիզիկապես երեխաները թույլ լինեն, չեն կարող առաջադիմել: Մարզագույք ունենք, մարզումներն ընթանում են «ՀՊՄԿ» ՓԲԸ մարզահամալիրում: Գալիս են սաներ այլ մարզաձևերից, բայց նախկին այդ մարզաձևերի ոճը դեռ երկար մնում է նրանց գիտակցության մեջ, դժվար է լինում կարծրատիպը ջարդել: Ճիշտ կլինի, որ երեխան ի սկզբանե զբաղվի խառը մենամարտերով: Երբ երեխաներին առաջին անգամ տանում ենք մրցաշարերի, լինում են դեպքեր, երբ հուզմունքից շփոթվում են, խառնվում, որը վերջում ցանկալի արդյունք չի տալիս:

Մարզաձևը զարգացած է ամբողջ աշխարհում, մայրաքաղաքում ևս, մարզերում էլ ենք փորձում զարգացնել, մրցաշարեր ենք անցկացնում: Ուզում ենք խառը մենամարտերը զարգացնել Այունիքի մարզում»:

**– Տարվա կտրվածքով քանի՞ մրցման պետք է մասնակցեն մարզիկները, որ անհրաժեշտ մարզավիճակում լինեն և լավ փորձ ձեռք բերեն,**– հարցնում ենք մեր զրուցակցին:

– Սահմանված քանակ չկա, ինչքան շատ մրցաշարերի մասնակցեն, այնքան արդյունքն ավելի դրական կլինի: Խառը մենամարտերի և K-1-ի մրցաշարերը հստակ ժամանակացույց չունեն, ամեն ամիս կարող է մրցում լինել:

Ջիու-ջիթսու մարզաձևով 2023 թ. հոկտեմբերին ունեցանք սեմինար, որակավորման քննություն, այդ ժամանակ ստացա մանուշակագույն գոտու որակավորում: Տարբեր երկրներից հրավիրում են՝ մարզչական որակավորումների: Ես բազմիցս անցել եմ վերապատրաստման կուրսեր, ինչը միշտ բարերար ազդեցություն է ունենում:

2024 թ. տարվա վերջին նախատեսվում է ևս մեկ վերապատրաստման դասընթաց՝ ջիու-ջիթսու գոտու որակավորում ստանալու համար:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՄԵՆԱՊԱՅՔԱՐԱՅԻՆ ՁԵՎԵՐ

# Թաեքվոնդոն Քաջարանում

**Մենապայքարային արևելյան մարզաձևերից Քաջարանում տարածում ունի թաեքվոնդոն, որ ընդգրկված է օլիմպիական խաղերի ծրագրում: Թաեքվոնդոյի արմատավորումը լեռնագործների քաղաքում կապվում է Գարեգին Ստեփանյանի անվան հետ:**

Մարզաձևի նվիրյալն ավարտել է Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցը, ծառայել ՀՀ զինված ուժերում՝ հատուկ նշանակության գնդում: Մեկ տարի սովորել է արևելյան մարտարվեստների ակադեմիայում՝ ֆիզկուլտուրայի ինստիտուտին կից: Բանակն ավարտելուց հետո աշխատել է թաեքվոնդոյի ֆեդերացիայում՝ որպես մարզիչ: Թաեքվոնդոյի մարզչի գործունեությունը սկսել է 2002 թվականից, ստացել է սև գոտի 1-ին դան:

Աշխատել է Երևանում թաեքվոնդոյի մարզիչ, 2002 թվականից հետո տեղափոխվել է Քաջարան և բացել խումբ, որը տարիներ հետո դարձավ Քաջարանի թաեքվոնդոյի ակումբ: 2004 թվականից հետո ակտիվ մասնակցել են Հայաստանի մասշտաբով տարբեր մրցաշարերի՝ ակումբային, ընկերական, հետո եկավ միջազգային մրցումներին մասնակցելու ժամանակը: 2019 թվականին Հայաստանի երիտասարդների չեմպիոն է տվել՝ Նիկոլայ Մանուկյան: Նա նաև մասնակցել է Իսպանիայի Մարինա Դ՚Օր քաղաքում անցկացված երիտասարդական առաջնությանը, մենամարտել է դանիացու հետ, միավորներով է պարտվել: Սա պատմական պահ էր ակումբի համար, որովհետև քաջարանյան թաեքվոնդոյի պատմության մեջ չի եղել նման դեպք, երբ մարզիկը միջազգային ասպարեզ դուրս գա: Վերջերս պատանիների մրցաշարում հաղթող են ունեցել, պիտի գնային Եվրոպայի առաջնությանը մասնակցելու, սակայն կանոններ փոխվեցին, տեխնիկական խնդիրներ առաջացան, քաջարանցի մարզիկը չմասնակցեց:

Մարզաձևում շատ հայտնի են նաև աղջիկները՝ Արսինե Գրիգորյան, ով Հայաստանի առաջնությունում հաղթել է: Ընդհանրապես արևելյան մարզաձևերում աղջիկներին հնարավորություն քիչ է տրվում մարզումներին մասնակցել և լրջորեն զբաղվել այդ սպորտաձևով: Քչերն են ցանկանում, վնասվածքներից են խուսափում, ծնողները չեն թույլատրում: Արսինե Գրիգորյանը բացառիկներից էր, ով կարողացավ հաղթահարել այդ խոչընդոտը:

Մեր զրուցակիցը հետաքրքրական տվյալներ ներկայացրեց արևելյան այդ մարզաձևի մասին. «Թաեքվոնդոյի հագուստը կոչվում է դոբոկ: Մարզիկները, ովքեր նախապես գալիս են պարապմունքների, վեց ամիսը մեկ փորձում են ստանալ գոտու որակավորում, քննություն են հանձնում և ստանում գոտիներ՝ սպիտակ, դեղին, կանաչ, կապույտ, կարմիր, սև: Գոտու ամեն գույնն իր խորհուրդն ունի, օրինակ՝ սպիտակը մաքրություն է խորհրդանշում: Եվ այդպես տարին երկու անգամ մեր Քաջարանի մարզիկները մասնակցում են գոտու որակավորման քննություններին, յուրաքանչյուր մարզիկ իր ֆիզիկական տվյալների միջոցով փորձում է որակավորման գոտի ստանել, այսինքն, երբ նա ըստ այդ թեստերի ծրագրին պատրաստ է լինում, հանձնում է «քննություն» դեղին գոտու համար, հետո կանաչ, կապույտ, կարմիր և ապա սև: Սև գոտի ստանում են մինչև չորրորդ դան Հայաստանի շրջանակում, այնուհետև պայքարում են միջազգային գոտի ստանալու համար: Մարզիկները, երբ հասնում և ստանում են սև գոտի և իրավունք են ստանում մասնակցելու կամ Եվրոպայի, կամ աշխարհի մրցումների, պարտադիր պետք է ունենան միջազգային գոտիներ, այսինքն՝ միջազգային որակավորում: Դա արդեն մարզիկները ստանում են համաշխարհային թաեքվոնդոյի ֆեդերացիայի՝ կուկկիվոնի կողմից»:

Մի տխուր երևույթ է նկատվում. Քաջարանում, ընդհանրապես, Այունիքի մարզում երեխաները հասնում են բարձր դասարաններ՝ չգիտես ինչու, թողնում են սպորտը և հաճախում են այլ առարկաների պարապմունքների՝ մաթեմատիկա, հայոց լեզու և այլն: Բայց ունենք հեռանկարային երեխաներ, փորձում ենք ծնողների միջոցով պահել, որպեսզի մարզչի աշխատանքն էլ չզրոյանա:

Արևելյան մարզաձևերի դեպքում

ընդունված կարգ է՝ վճարովի են պարապմունքները: Վճարը շատ չէ, դրանք հավաքելով՝ մարզագույք ենք ձեռք բերում, երեխաներին ենք նվերներ տալիս: Ինքնանպատակ չէ, որ սպորտով բիզնես դնենք, ես կոնկրետ այդպես եմ ընդունում, չգիտեմ՝ մնացածները ոնց: Սպորտը հեռակա բիզնես է, մարդիկ եթե բիզնես են անում, որ շատ արագ եկամուտ ստանան, սպորտում էլ «եկամուտը» այն մարզիկներն են, ովքեր աշխարհի չեմպիոն պիտի դառնան:

«Ինչպիսի՞ն են մարզումային պայմանները»,– հարցնում ենք Գարեգին Ստեփանյանին: «Կոմբինատի օգնությամբ, մարզագույք ենք ձեռք բերել՝ պտտաձող ենք դրել «շվեդական» պատին, տատամի ունենք, հատուկ գորգ է, որի վրա երեխաները պարապում են: Օր օրի սպորտը արագ է զարգանում, պահանջները շատ են: Մի կարևոր խնդիր կա, թաեքվոնդոյում մարզիկները պարտադիր պաշտպանվում են, կան ոտքի, ձեռքի, փորի պաշտպանիչներ և գլխարկ: Մարմնի այս բոլոր պաշտպանիչները էլեկտրոնային են, այսինքն՝ մարզիկի հարվածի ուժգնությունը համակարգչում արձանագրվում է: Ընդհանուր պաշտպանիչները շատ թանկ են, Եվրոպայում, աշխարհում մարզիկները դրանցով են պարապում, մենք այն չունենք: Բացի այդ Երևանում սպորտը ավելի արագ է զարգանում, տեղեկատվություն ավելի արագ են ստանում, քան Սյունիքում, գույքի մասով կա թերություն: Մարզիկը պետք է հագնի, ոտքի չափսը տեսնի, դրանով պարապվի, հարմարվի, մրցումների գնալիս լրիվ անտեղյակ չլինի: Կոմբինատի ղեկավարությունը իր չափով, համայնքապետը իր չափով աջակցում են, մարզիկներին, ծնողներին դա մեծ օգնություն է»:

– Յուրաքանչյուր մարզաձևում հույժ կարևոր է մրցափորձ ձեռք բերելը,– ինչպե՞ս է դա հաջողվում քաջարանցի թաեքվոնդոիստներին:

«Մրցափորձ ձեռք բերելու խնդիր չկա, անընդհատ գնում ենք մրցումների: Մեր մարզիկներին գոտու որակավորման քննությունների համար թաեքվոնդոյի ֆեդերացիայի նախագահին և քարտուղարին հրավիրել ենք Քաջարան, քանի որ դժվար է 30-40 սան տեղափոխել մայրաքաղաք: Նրանց ներկայությամբ մեր սաները կարողացան հանդիսավոր պայմաններում ստանալ գոտիներ, ընդ որում 4-5 հոգի ստացել են սև գոտի, 1-ին դան: Հայաստանի Հանրապետության՝ ՀԹՖ թաեքվոնդոյի պատանիների առաջնություն 1-ին տեղ՝ ոսկե մեդալ՝ Ալեքս Ստեփանյանը 2023 թվականին հաղթող ճանաչվեց, Նիկոլայ Մանուկյան, Արսինե Գրիգորյան և Ալեքս Ստեփանյան, այս երեք մարզիկը Քաջարանի թաեքվոնդոյի պատմության մեջ արդեն գրել են իրենց անունները»:

Ակումբի սաները մասնակցել են նաև միջազգային մրցումների՝ Դոնի Ռոստովում՝ «Դոնի գավաթ» մրցաշարին՝ երկու մարզիկով, Թբիլիսիում՝ դարձյալ երկու մարզիկով (արծաթե մեդալ են նվաճել):

ՀՀ թաեքվոնդոյի ֆեդերացիայի հովանու ներքո տասից ավելի ակումբ է գործում: Գարեգին Ստեփանյանը 2008 թվականից ընտրվել է ՀՀ թաեքվոնդոյի ֆեդերացիայի նախագահության անդամ: Ֆեդերացիայի պատվավոր նախագահը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն է, ով կազմակերպչական հարցերով օգտակար է լինում ֆեդերացիային:

Հրույցի ավարտին Գարեգին Ստեփանյանը նշեց, որ առաջարկել են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ղեկավարությանը թաեքվոնդոյի մի տարիքային խմբի Հայաստանի առաջնությունը Քաջարանում անցկացնել: Որպեսզի մարզասերին հասկանալի լինի այդ մարզաձևը, ընդհանրապես այն Սյունիքում մասսայականանա:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ԸՄԲՇԱՄԱՐՏ

# Ըմբշամարտի 83-ամյա չեմպիոն Ալբերտ Հայրապետյանը նորից շարքերում է

Ալբերտ Հայրապետյանը ծնվել է 1942 թ. Երևանում: Հայրը՝ Աշոտ Հայրապետյանը Գորիսի մանկավարժական տեխնիկումն ավարտելուց հետո տեղափոխվել և ընդունվել է Երևանի մանկավարժական ինստիտուտ, դարձել պատմաբան:

Ալբերտն ավարտել է Գորիսի 2-րդ միջնակարգ դպրոցը, որը եռում էր մարզական կյանքով: Այն ժամանակների համեմատ լավ կահավորված մարզադահլիճ ու հանդերձարաններ կային: Դասաժամերին մարզադահլիճը ծառայում էր դպրոցի ֆիզկուլտուրայի դասերի համար, իսկ օրվա մնացած ժամերին՝ Հայաստանի ըմբշամարտի չեմպիոն, սպորտի վարպետ, խնձորեսկցի նշանավոր մարզիչը և գորիսեցի հայտնի ըմբշամարտիկ, մարզիչ Ռուբիկ Բակունցը մարզադահլիճում Գորիսի երիտասարդների համար ըմբշամարտի պարապմունքներ էին կազմակերպում: Նրանց շնորհիվ, կարճ ժամանակում, ըմբշամարտը դարձավ Գորիսի երիտասարդների ամենասիրած մարզաձևը: Ալբերտը յոթերորդ դասարանում էր, բայց արդեն երեք տարի շարունակ՝ դասերից հետո, կանոնավոր մասնակցում էր ըմբշամարտի պարապմունքներին: Արդեն առկա ըմբշամարտի մարզական ավանդույթի շնորհիվ՝ 1955 թ. Այունիքում առաջինը Գորիսում ձևավորվեց ըմբշամարտի հավաքական, որն իրավունք ստացավ մասնակցել Հայաստանի ըմբշամարտի առաջնությանը: Հավաքականում ընդգրկվեց նաև 15-ամյա Ալբերտը:

ԽՍՀՄ օրոք ըմբշամարտի հնարքների տերմինաբանությունը ռուսերեն էր՝ «Մելնիցա», «Նոժնիցա»...

– Երբեք պարապմունքներից չէի բացակայում,- պատմում է Ալբերտը: - Պարապում էի շաբաթական երեք օր՝ 2-ական ժամ: Գորիսի սպորտկոմիտեի նախագահ Արմենակ Մանգասարյանն ինձ հետ լավ էր վերաբերվում, ոգևորում էր: Ուսիս խփելով՝ ասում էր՝ պարապիր, անպայման չեմպիոն կդառնաս: Մարզիչս ըմբշամարտի նոր հնարքներն անմիջապես հասցնում էր մեզ, իսկ ինձ հետ անձամբ էր պարապում...

Գորիսում ըմբշամարտի հավաքականը ստեղծվել է 1960 թ., որի կազմում ընդգրկվեցի նաև ես: Երեք տարի մարզվելուց հետո՝ երկրի խորհրդայնացումից ի վեր առաջին անգամ, Գորիսում կայացավ Հայաստանի ըմբշամարտի առաջնություն: Գորիսի սպորտկոմիտեի նախագահ Արմենակ Մանգասարյանն ասաց. «Առաջին անգամ ես մեծ մրցման մասնակցում: Լավ մարտ կցուցադրես: Անպայման կհաղթես»: Բոլոր ջանքերը գործադրեցի մրցանակային տեղ զբաղեցնելու համար: Բարեբախտաբար հաջողվեց, գրավեցի 3-րդ տեղը:

Գորիսի ըմբշամարտի առաջնությանը մասնակցում էին Երևանի տարբեր շրջանների, Վանաձորի, Գյումրիի, Դիլիջանի, Նոյեմբերյանի հավաքականների անվանի մարզիկներ: Գորիսն ու Իջևանը մասնակցում էին առաջին անգամ:

Առաջին մենամարտս վանաձորցու հետ էր: Հանդիպումից առաջ, ձեռքսեղմման պահին նրա աչքերում տեսա քամահրական վերաբերմունք: Նա կարծես ասում էր՝ «Գորիսն ի՞նչ դարձավ, որ մարզական Վանաձորի հետ մրցի»: Որքան ճկուն և համառ էի, մրցակիցս ինձնից ուժեղ գտնվեց: Վանաձորցին ինձ հաղթեց: Հետո իրար հետևից հաղթեցի իջևանցի, դիլիջանցի և նոյեմբերյանցի մրցակիցներիս:

Երկու տարի անց՝ 1965-ին, կրկին Գորիսում անցկացվեց Հայաստանի ըմբշամարտի հերթական առաջնությունը: Այդ ժամանակ Հայաստանում արդեն ձևավորվել էր «Սևան» մարզական ընկերությունը, որը հանրապետության բոլոր քաղաքներում ուներ մասնաճյուղեր: Գորիսի մասնաճյուղի նախագահը Ռուբիկ Բակունցն էր:

Այս անգամ հաջողությունս ավելի ակնառու էր. 73 կգ քաշային կարգում դարձա Հայաստանի չեմպիոն: Պետք է մասնակցեի ԽՍՀՄ առաջնությանը, բայց որոշ մարզիչներ կարծում էին, թե այդպիսի մեծամասշտաբ առաջնությունում իմ հաղթելու հավանականությունը քիչ է: Նրանց խոսքը վճռորոշ դարձավ, որ ես բավարարվեմ Հայաստանի հաջորդ առաջնությանը մասնակցելով:

1972-74 թթ. խորհրդային բանակում ծառայել եմ Հայաստանի ներքին գործերի նախարարության համակարգում՝ Կոշի գաղութում: 1975 թվականին մասնակցեցի Երևանում անցկացված Անդրկովկասի հանրապետությունների ըմբշամարտի առաջնությանը և դարձա փոխչեմպիոն: 1980 թվականին Հայաստանի ըմբշամարտի առաջնությունը տեղի ունեցավ Նոյեմբերյանում: Զբաղեցրի չորրորդ տեղը: Նույն տարում Գորիսի «Սևան» մարզական ընկերության նախագահ Սաշիկ Գրիգորյանն ինձ նշանակեց Գորիսի ըմբշամարտի հավաքականի մարզիչ: Աշխատում էի Գորիսի պիոներ պալատի տեղում գտնվող մարզադպրոցում: Սկզբում այդտեղ պարապում էին վոլեյբոլ և բասկետբոլ: Երկար ժամանակ սպասված արդյունքներ չեղան, որի համար՝ Գորիսի մարզադպրոցի տնօրեն Միշա Միրզոյանի առաջարկությամբ, այն վերափոխվեց ըմբշամարտի Գորիսի հավաքականի պարապմունքների վայրի:

Սյունիքում, հանձին Ալբերտ Հայրապետյանի, Գորիսն առաջինը տվեց Հայաստանի չեմպիոն: Ավելի քան 30 տարվա մարզչական կյանքում մարզել է հարյուրավոր մարզիկների, որոնցից Գրավիկ Աղաբեկյանը՝ Տեղ գուղից, դարձել է Հայաստանի չեմպիոն, ապա՝ ԽՍՀՄ փոխչեմպիոն: Գրավիկը Գորիսում և հարազատ գյուղում աշխատել է ըմբշամարտի մարզիչ:

– Գրավիկի հաջողությունից հետո Հայաստանի մարզչական աշխարհը կրկին ուշադրությունը սևեռեց ինձ վրա,– շարունակում է պատմել Ալբերտ Հայրապետանը: - Նրանք մեծ սպասումներ ունեին: Երևանից ստանում էի մասնագիտական գրականություն, ըմբշամարտի մարզչի մեթոդական ձեռնարկներ: Մարզաձևում կիրառվող հնարքների փոփոխությունների մասին առաջիններից մեկն էինք իմանում, և ամեն մի նոր բան՝ խորացված, պարապում էի սաներիս: Ռուսական սպորտային ամսագրերից յուրացնում էի ազատ ոճի ըմբշամարտի հնարքները, դրանք սովորեցնում երիտասարդ խոստումնալից մարզիկներիս:

Իմ շնորհալի սաներից է նաև Գորիսի համայնքային մարզադպրոցի տնօրեն, Հայաստանի ըմբշամարտի կրկնակի չեմպիոն Տիգրան Աղաբեկյանը:

ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ Գորիսի Գետափնյա թաղամասի հնաբնակ Ալբերտը տեղափոխվեց քաղաքի մեկ այլ թաղամաս, շարունակեց մարզչական գործունեությունը: Կարճ ժամանակ անց մահացավ կինը՝ Գորիսի Սերո Խանզադյանի անվան 6-րդ դպրոցի վաստակաշատ դասվար Մարիետա Խոջաբաղյանը: Մեկնեց Ռուսաստան: Երեք տարի ապրեց Իժևսկում, որդիների՝ Աշոտի ու Արմենի մոտ: Այդտեղ շփվեց մարզչական աշխարհի ներկայացուցիչների հետ, ցանկացավ մարզիչ աշխատել, սակայն ասացին, որ տարիքը թույլ չի տալիս (Ալբերտը Ռուսաստան մեկնելուց չորս տարի առաջ էր թոշակավորվել):

Ալբերտը Ռուսաստանում ապրեց չորս տարի: Նրան հանգիստ չէր տալիս հայրենի օջախից կտրված լինելը: Անընդհատ մտածում էր՝ «պետք է վերադառնամ և հայրենիքիս օգուտ տամ»: Մոտ հինգ տարի առաջ եկավ Հայաստան: Մեկ տարի օտարի պես էր զգում հարազատ քաղաքում: «Բայց ես մարզիչ եմ, ո՞վ է ասել, որ թոշակառուի տարիքս արգելք է, կարող եմ օգուտ տալ իմ քաղաքին..»,– մտածեց ու որոշեց դիմել իր նախկին սանին՝ Գորիսի համայնքային մարզադպրոցի տնօրեն, Հայաստանի ըմբշամարտի կրկնակի չեմպիոն Տիգրան Աղաբեկյանին: Տիգրանը, տեսնելով իր մարզչին, զարմացավ, հիացավ, ասաց՝ կընդունեմ: Մոտ երեք տարի՝ արդեն մարզիչ է: Նրա պարապած երեխաներից Հայաստանի ըմբշամարտի առաջնություններում մրցանակային տեղեր են զբաղեցրել Արտակ Աղաբեկյանը, Սուրեն Հովհաննիսյանը, Արտյոմ Մարգարյանը, Արծրուն Միրզոյանը, Արտյոմ Մուսայելյանը, Սիմոն Քոչարյանը, ովքեր լավ մարզավիճակում են և նպատակասլաց մարզվում են՝ միջազգային մրցումներին մասնակցելու համար ...

Զրույցի վերջում Ալբերտը վստահեցրեց, որ առաջիկայում Գորիսն անպայման ըմշամարտի աշխարհի չեմպիոն կտա.

– Եթե մեզ մոտ այդ աշխատանքը խրախուսվի՝ շատերը չեն նախընտրի մարզիչ աշխատել արտերկրում: Կցանկանամ, որ երեխաները չեմպիոն դառնան, մասնակցեն աշխարհի առաջնություններին, հաղթեն, վերադառնան Հայաստան, աշխատեն և իրենց ընտանիքները շենացնեն: Երբ պարապում եմ սաներիս՝ նպատակ եմ դնում նրանց մասնակից դարձնել Հայաստանի առաջնության մրցումներին և այնպես անել, որ մասնակցեն աշխարհի առաջնությանն ու անպայման վերադառնան հաղթանակով:

**ՎԱՀԵ ՄԿՐՏՉՅԱՆ**

***1955 թ. Սյունիքում առաջինը Գորիսում ձևավորվեց ըմբշամարտի հավաքական, որն իրավունք ստացավ մասնակցել Հայաստանի ըմբշամարտի առաջնությանը: Հավաքականում ընդգրկվեց նաև 15-ամյա Ալբերտը:***

ԸՄԲՇԱՄԱՐՏ

# Ագարակցի ըմբիշները. դրվագներ

Աշխատանքային այցով լինելով Ագարակում՝ քաղաքապետ Մխիթար Չաքարյանից հետաքրքրվեցինք, թե վերջին ժամանակներս ինչ նոր բան է կատարվել համայնքում: Մեր զրուցակիցը որոշ գործեր թվարկեց, բայց հատկապես ընդգծեց, որ տասը ամիս է, ինչ Ագարակում ազատ ոճի ըմբշամարտի սեկցիա է գործում: Ոչ միայն այդ, նաև նշեց, որ պատանի ըմբշամարտիկները երկու անգամ մասնակցել են միջազգային մրցման՝ Բաթումիում և Գառնիում, ընդ որում՝ վերջին մրցումը կայացել է այս տարվա սեպտեմբերի 15-18-ը, և վերադարձել են մեդալով: Ճիշտ է, այդ մեդալը բրոնզի փայլ ունի, բայց քաղաքապետը շատ կարևորեց այն՝ ասելով, որ դա ապագա հաջողությունների հիմքն է: Գառնիի միջազգային մրցաշարում Տիգրան Բունիաթյանը 2001-2003 թթ. ծնվածների պայքարում (թեև ինքը 2006 թ. ծնունդ է) կանգնեց պատվո պատվանդանի երրորդ աստիճանին:

Դպրոցական ըմբշամարտիկներին մարզում է հանրապետության վաստակավոր մարզիչ, սպորտի վարպետ Յուրա Ավետիսյանը, ում մայրաքաղաքից են հրավիրել:

Մոտ 60 ըմբշամարտիկ է պարապում սեկցիայում, որ գործում է Քաջարանի մանկապատանեկան մարզադպրոցի ենթակայության ներքո: Ընդ որում՝ 6 երեխա հաճախում է Մեղրուց, չորսը՝ Կարճևանից: Փոխադրամիջոցի ծախսերը հոգում է Ագարակի կոմբինատի արհեստակցական կազմակերպությունը (նախագահ՝ Սամվել Միքայելյան): Մրցափորձ ձեռք բերելու նպատակով նախատեսվում է իրանցի պատանի ըմբշամարտիկների հետ համատեղ ուսումնամարզական հավաք անցկացնել Ագարակում, սպասում են իրանցիների այցին: Եվ ոչ միայն: Ինչպես տեղեկացրեց մարզիչ Յուրա Ավետիսյանը, իրենց հյուրն է լինելու վերջերս Տաշքենդում աշխարհի չեմպիոն հռչակված ազատ ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանը:

Պատանի ըմբշամարտիկները պարապում են Ագարակի մշակույթի պալատում, առայժմ մարզումային պայմանները բավարարում են: Բայց, համայնքապետ Մխիթար Չաքարյանի վկայությամբ, օրակարգում համայնքում մարզադահլիճ ունենալու խնդիրն է, քանզի մշակույթի պալատում հնարավոր չէ մրցումներ կազմակերպել: Քաղաքի չգործող կաթսայատունը վերակառուցումից հետո կարող է որպես մարզադահլիճ ծառայել: Առայժմ այսպիսի նպատակ ունեն: Իսկ թե ինչու են ընտրել մենապայքարային մարզաձևը, քաղաքապետը բացատրում է, որ սահմանում ապրող պատանիները առավել ևս պիտի առողջ ու ուժեղ մեծանան: «Իսկ հեռանկարային մարզիկներ կա՞ն պարապվողների մեջ» հարցին, մարզիչը, թեև թվարկեց մի քանի անուն, նաև ասաց, որ պետք չէ իրադարձություններից առաջ ընկնել, ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**
**10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2014 Թ.**

* * *

Նոյեմբերի 11-13-ը (2016թ.) Վրաստանի Հանրապետության Ամբրոլաուրի քաղաքում տեղի ունեցավ աշխարհի կրկնակի չեմպիոն և օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր Գուրամ Սահարաձեի մրցաշարը, որից Ագարակ քաղաքի պատանի ըմբշամարտիկները վերադարձան մեդալներով:

Մրցաշարին մասնակցում էին 300 մարզիկ՝ Ռուսաստանից, Վրաստանից,Ադրբեջանից և Հայաստանից:

Ագարակից մասնակցում էին 11 ըմբիշներ, նրանցից 69 կգ քաշային կարգում Էդուարդ Վարդանյանը գրավեց՝ երկրորդ, իսկ 26 կգ քաշային կարգում Տիգրան Բունիաթյանը՝ երրորդ տեղը:

Մարզիչ Յուրի Ավետիսյանը գոհ է

արդյունքներից.

– Մի քիչ փորձի պակաս ունեն, բայց ամեն ինչ անում ենք առաջ ընթանալու համար: Պատանիներն ատամները սրած սպասում էին մենամարտի:

10 ամյա Տիգրանը իր իսկ ցանկությամբ է որոշել մարզվել: Առաջինը ըմբշամարտի տղաներն են շնորհավորել, ծնողներն ու դպրոցի աշակերտները նույնպես շնորհավորանքներով են դիմավորել, բայց ինչպես ինքն է ասում՝

– Մի փոքր լավ չեմ զգում, որ 3-րդ տեղ եմ գրավել: Նպատակ ունեմ սրանից հետո միշտ հաղթող լինել:

Էդուարդը 3 տարի է ինչ մարզվում է, հենց սկզբից գիտակցել է, որ ըմբշամարտը իրենն է: Մրցումներից առաջ հաղթանակի մասին էր մտածում, հիմա ավելի վստահ է իր ուժերին: Նպատակ ունի մյուս տարի Հայաստանի առաջնությանը մասնակցելու և լավ արդյունքներ գրանցելու:

Վաստակավոր մարզիչ Յուրի Ավետիսյանը Երևանից Ագարակ է տեղափոխվել՝ այստեղ զարգացնելու ըմբշամարտը.

– Զրոյից ենք սկսել, 5-6 տարի հետո կարգին մարզիկներ են դառնալու՝ Աշխարհի և Եվրոպայի մակարդակով, աշխատում, դրան ենք ձգտում, ամեն օր պարապում ու մարզվում ենք:

Մարզչական խստությամբ է վերաբերում պատանիներին.

– Շատ խիստ եմ, եթե խիստ չլինեմ, կարգապահություն չի լինի, սպորտսմեն չեն դառնա:Ամեն ինչ անում ենք, որ մոտ ապագայում Ագարակ քաղաքից Աշխարհի ու Եվրոպայի մրցանակակիր ունենանք:

Իր խոսքում մարզիչը նշեց, որ տեղափոխվել է Ագարակ աշխատելու համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանի հրավերով, ով ամեն տեսակ աջակցություն է ցույց տալիս մինչ այսօր: Մարզիկների համար ըմբշամարտի դպրոցն անվճար է:

**18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 Թ.**

* * *

Ագարակի նախկին քաղաքապետ Մխիթար Զաքարյանի նախաձեռնությամբ 2014 թվականին Ագարակ քաղաքում բացվեց ըմբշամարտի դպրոց: 10 տարվա ընթացքում մենք պատրաստել ենք բազմաթիվ տաղանդավոր մարզիկներ: Մասնակցել ենք ՌԴ-ի Դաղստանի հանրապետության Խասաբյուրտ քաղաքում անցկացված միջազգային մրցաշարին և թիմային հաշվարկով գրավել ենք 1-ին տեղը: Մասնակցել ենք Վրաստանում, Պարսկաստանում, Ռուսաստանում և այլ շատ պետություններում անցկացվող մրցաշարերի, և ցուցադրել ենք փայլուն արդյունքներ:

2021 թվականին մարզիկ Տիգրան Բունիաթյանը, ով իմ սանն է, դառնալով Հայաստանի չեմպիոն, իրավունք ստացավ մասնակցել Եվրոպայի առաջնությանը և դարձավ բրոնզե մեդալակիր՝ Բուլղարիայի Սոմոկով քաղաքում: Որից հետո նա 2023 թվականին կրկին դարձավ Հայաստանի չեմպիոն և մասնակցեց Եվրոպայի առաջնությանը՝ Ալբանիայում, դառնալով Եվրոպայի բրոնզե մեդալակիր: Այդ նույն տարում նա մասնակցեց աշխարհի առաջնությանը Հունգարիայում և դարձավ բրոնզե մեդալակիր:

**ՅՈՒՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՀՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՄԱՐԶԻՉ**




ԸՄԲՇԱՄԱՐՏ

# Արտակ Աղաբեկյանը՝ Եվրոպայի պատանիների առաջնության մրցանակակիր

Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոցի սան Արտակ Աղաբեկյանը 2024 թ. մարտ ամսին Հայաստանի պատանիների ըմբշամարտի առաջնությունում գրավեց առաջին տեղը և իրավունք ստացավ մասնակցելու Սերբիայի Նովի Սադ քաղաքում 2024 թ. հունիսի 28-ից հուլիսի 1-ը կայանալիք Եվրոպայի պատանիների առաջնությանը:

Մարզադպրոցի տնօրեն Տիգրան Աղաբեկյանի կարծիքով՝ «Դա մեծ պատիվ է թե մարզի, թե Գորիսի տարածաշրջանի մարզադպրոցների համար, քանզի վերջին 30 տարում որևէ մարզիկի բախտ չի վիճակվել (միայն տեղում պարապելով) մասնակցել Եվրոպայի պատանիների առաջնությանը և գրավել մրցանակային տեղ»:

Եվրոպայի առաջնության ժամանակ՝ լարված պայքարի արդյունքում, Արտակ Աղաբեկյանը մտավ կիսաեզրափակիչ: Մեկ պարտությունից հետո պայքարեց 3-րդ մրցանակային տեղի համար: Եվ 4:2 հաշվով հաղթելով ուկրաինացի ըմբիշին, նվաճեց Եվրոպայի պատանիների առաջնության 3-րդ մրցանակային տեղը:

Պատանեկան մրցումներին մասնակցում էին մինչև 17 տարեկան պատանիները:

Արտակ Աղաբեկյանի մարզիչներն էին Տիգրան Աղաբեկյանը, Կարեն Հովսեփյանը և Հարություն Բարխուդարյանը:

Արտակը, ինչպես նշեցինք, Եվրոպայի պատանիների առաջնությանը մասնակցելու իրավունք էր ստացել հանրապետության համանման մրցույթում չեմպիոն դառնալուց հետո:

Եվրոպայի պատանիների առաջնությունում, 45 կգ քաշային կարգում, Արտակն էր ներկայացնում Հայաստանի Հանրապետությունը:

Եվրոպայի պատանիների առաջնությանը Արտակ Աղաբեկյանի մասնակցության ծախսերը հոգացել են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն ու Հայաստանի օլիմպիական կոմիտեն: Իսկ ահա, թե ինչպես են մարզիչները բնութագրում Արտակին՝ «Չափազանց սառնասիրտ, էմոցիաներին չտրվող, կարգապահ»:

Մարզիչները տեղեկացրին նաև, որ հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 1-ը Երևանում միջազգային մրցաշար է տեղի ունենալու, որին մասնակցելու են մի քանի պետություն: Գորիսի թիմը նույնպես մասնակցելու է այդ մրցաշարին. թիմի կազմում նաև Արտակ Աղաբեկյանն է լինելու: Այնուհետև Դաղստանում մասնակցելու են ուսումնամարզական հավաքների:

Մենք հնարավորություն ունեցանք զրուցելու Արտակ Աղաբեկյանի հետ:

– Հարգելի Արտակ, շնորհավորում ենք՝ հաղթանակի առիթով, կեցցես, որ Հայաստանի պատիվը կարողացել ես բարձր պահել միջազգային ասպարեզում: Պատմեք, խնդրեմ, մրցումների մասին:

– Եվրոպայի պատանիների առաջնությունը տեղի է ունեցել 2024 թ. հունիսի 28-ից մինչև հուլիսի 1-ը: Առաջին գոտեմարտս ռումինացի ըմբիշի հետ էր. ապահովեցի հաղթանակ: Երկրորդ գոտեմարտս Բելառուսը ներկայացնող ըմբիշի հետ էր, դարձյալ հաղթեցի: Երրորդ գոտեմարտը ՌԴ ըմբիշի հետ էր, սակայն պարտվեցի: Հաջորդը՝ երրորդ տեղի համար պայքարն էր, և հաղթանակ գրանցեցի ուկրաինացի ըմբիշի հետ գոտեմարտում:

Մի խոսքով՝ ունեցել եմ չորս գոտեմարտ, երեքում հաղթել եմ:

– Արդեն որոշակի փորձ ունես, մասնակցել ես և՛ հանրապետական, և՛ միջազգային մրցումների, ի՞նչ է պետք հաղթելու համար կամ հաղթելու ձեր բանաձևը:

– Պարապել ու պարապել...

Դե ինչ, ևս մեկ անգամ շնորհավորենք Արտակ Աղաբեկյանին՝ Եվրոպայի պատանիների առաջնությունում 3-րդ պատվավոր տեղը նվաճելու համար: Եվ, իհարկե, հաջողություններ ու նոր հաղթանակներ...

**ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

ԲՈՆՑԱՄԱՐՏ

# Բռնցքամարտի ակումբ՝ Ռազմիկ Աբելյանի նախաձեռնությամբ

Կապանցի ֆուտբոլիստները, աթլետները, մարմնամարզիկները, շախմատիստները վաղուց ի վեր համարում ունեն հանրապետությունում և նրա սահմաններից դուրս: Բայց ահա ուժեղների և ճարպիկների մրցաձև համարվող բռնցքամարտը տակավին տարածում չունի մարզկենտրոնում: 1998-ին Կապանում այդ դիտարժան մարզաձևի պրոպագանդմանն էր հետապնդում տարածաշրջանի զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշամրցաշարը, որին մասնակցում էր 33 բռնցքամարտիկ՝ հանրապետության երիտասարդական հավաքականի անդամներ, ինչպես նաև աշխարհի և Եվրոպայի առաջնությունների և աշխարհի գավաթի թիմային խաղարկության մրցանակակիրներ Արամ Ռամազյանը, Արտյոմ Սիմոնյանը, Արթուր Գևորգյանը, Վախթանգ Դարչինյանը: Վերջինս հետո տեղափոխվեց պրոֆեսիոնալ ռինգ, մեծ հաջողությունների հասավ և բռնցքամարտի աշխարհում հայտնի էր «Կատաղած ցուլ» մականունով:

Երկու օր շարունակ 11 քաշային կարգերում հանրապետության կաշվե ձեռնոցի վարպետները վիճարկեցին հաղթողի կոչումը, իսկ հանդիսականը ականատես եղավ հետաքրքիր մարտերի:

Երևանից ժամանած մասնագետները բռնցքամարտի միջազգային կարգի մրցավար Դերենիկ Գաբրիելյանը, բռնցքամարտի պետական մարզիչ Լևոն Հայրապետյանը քաղաքապետարանում կարևորեցին Կապանում բռնցքամարտի մասսայականացման անհրաժեշտությունը:

Բայց անցած 20-25 տարում սայլը տեղից չշարժվեց: Միայն 2022 թվականին Հայաստանի պետական ֆիզկուլտուրայի ինստիտուտի շրջանավարտ Ռազմիկ Աբելյանի նախաձեռնությամբ Կապանում ստեղծվեց բռնցքամարտի ակումբ, որտեղ այժմ մարզվում է մոտ 60 սան: 2024 թ. նախօրյակին ակումբի երկու սան առաջին մրցանակով են վերադարձել Պյատիգորսկ քաղաքի բաց առաջնությունից: 52 կգ քաշային Սեյրան Սաքանյանը և 70 կգ քաշային Տիգրան Աբրահամյանը, հաղթելով իրենց մրցակիցներին, կանգնել են պատվո պատվանդանի վերին հարթակին: Բայց սա եզակի դեպք է, երբ ակումբի սաները մեկնում են մրցումների: Մինչդեռ մրցափորձ ձեռք բերելու և վարպետության հասունության համար սա շատ կարևոր հանգամանք է:

Այնուամենայնիվ, թեպետ դժվարություններին, ակումբը շարունակում է մարզումները, դրված է մարզաձևի մասսայականացման հիմքը մարզկենտրոնում:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ԲՌՆՑԱՄԱՐՏ

# ԱՇՈՏ ՍԱԴԽՅԱՆ. «Բռնցքամարտի ապագան նոր սերնդի ձեռքում է»

**Աշոտ Սադխյանն ավարտել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եվ սպորտի պետական ինստիտուտի բռնցքամարտի բաժինը: 2007 թվականից աշխատում է Քաջարանի մարզահամալիրում՝ ֆիզմեթոդիստ, Քաջարանի «ՄՊՄԴ»-ում՝ բռնցքամարտի մարզիչ: Մասնակցել է բազմաթիվ միջազգային և հանրապետական կարգի մրցաշարերի՝ զբաղեցնելով մրցանակային տեղեր:**

2023 թ. ապրիլի 8-ին հիմնադրվեց Սյունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիան, որն իր շուրջը համախմբեց Սիսիանի, Գորիսի, Կապանի և Քաջարանի բռնցքամարտիկներին:

Սյունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի հիմնադրումից հետո մարզում բռնցքամարտը բուռն զարգացում ապրեց: Ֆեդերացիայի գործունեության շրջանակում՝ մարզի տարբեր քաղաքներում, անցկացվեցին մրցաշարեր, որոնք նպաստեցին մարզիկների վարպետության աճին և մարզաձևի նկատմամբ հետաքրքրության ավելացմանը:

Աշոտ Սադխյանն աշխատել է տարբեր մարզիկների հետ և նպատակ է ունեցել հաղթելու միջազգային մրցաշարերում: Վստահ է, որ յուրաքանչյուր մարզիկ պետք է ունենա անհատական մոտեցում: Մոտեցումը կենտրոնացված է տեխնիկապես զարգացման, ֆիզիկական պատրաստականության և հոգեբանական պատրաստվածության վրա: Նրան ոգեշնչում է մարզիկների առաջընթացը և նրանց հաղթանակները: Հավատում է սաների քրտնաջան աշխատանքին ու նվիրվածությանը:

**«2023-2024 թթ. գրեթե բոլոր ամիսներին մասնակցել են տարբեր մրցաշարերի, որոնց մասնակցությունը հովանավորել է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության կայուն**

# Սպորտի վարպետ Ռաֆայել (Սաքո) Շալունց

**ԽՍՀՄ սպորտի վարպետ Ռաֆայել (Սաքո) Շալունց, մարզիկ, ով թե՛ հարազատ քաղաքի, և թե՛ Հայաստանի պատիվը պաշտպանել է մի շարք պաշտոնական ու միջազգային ընկերական հանդիպումներում:**

Ծնվել է 1943 թ. մայիսի 16-ին՝ Գորիս քաղաքում, ծառայողի ընտանիքում: Բռնցքամարտում առաջին քայլերը կատարել է 1959 թվականին՝ հայրենի քաղաքում, ապա տեղափոխվել է Տաշքենդ, ուր կատարելագործել և հարստացրել է իր տեխնիկատակտիկական զինանոցը: 1960 թվականին՝ կիսաթեթև քաշում նվաճել Տաշքենդ քաղաքի չեմպիոնի

**զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը, ում մեր շնորհակալությունն ենք հայտնում՝ ցուցաբերած աջակցության և հովանավորության համար, որի շնորհիվ մեր մարզիկները հնարավորություն ունեցան մասնակցելու բազմաթիվ մրցաշարերի և արժանապատիվ ներկայացնելու Սյունիքի մարզը: Մեր մարզական համայնքն անչափ գնահատում է նրա մշտական համագործակցությունը, որն ապացուցում է՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ն շարունակում է կարևորություն տալ սպորտի և առողջ ապրելակերպի զարգացմանը: Մեր գլխավոր նպատակն է Սյունիքում զարգացնել բռնցքամարտը՝ նոր սերնդին ապահովելով մարզական բարձր մշակույթով և առողջ ապրելակերպով: Մենք ձգտում ենք երեխաների մեջ սերմանել ֆիզիկական ակտիվություն, կարգապահություն և առողջ ապրելակերպի կարևորությունը, որն օգնում է նրանց զարգանալ ինչպես մարզական, այնպես էլ անձնական կյանքում:**

**Բռնցքամարտն օլիմպիական մարզաձև է՝ լինելով երկար տարիներ օլիմպիական խաղերի ծրագրի մաս: Այն մարզիկներից պահանջում է ցուցադրել հմտություններ աշխարհի ամենաբարձր մրցաշարերում: «ՃՊՄԿ» ՓԲ ընկերության աջակցության շնորհիվ մեր գույքային ռեսուրսները լիարժեք համալրված են, և գույքի պակաս չունենք: Սյունիքում բռնցքամարտը մեծ հեռանկարներ ունի, և ես հավատում եմ՝**

**մեր համատեղ ջանքերով այս մարզաձևը կշարունակի ծաղկել՝ նոր սերունդներին հասցնելով մարզական հաջողությունների»,** – այսպիսի լավատեսությամբ է համակված Աշոտ Սադիյանը: //

կոչումը պատանիների գծով: Նույն թվականին մասնակցել է Խորհրդային Միության առաջնությանը Վիլնյուսում:

1961 թվականին Տաշքենդի և Ուզբեկստանի չեմպիոն է դարձել Նուկուս քաղաքում, այս անգամ՝ թեթև քաշում:

Նույն թվականին Օդեսայում տեղի ունեցած ԽՍՀՄ զինված ուժերի առաջնությունում Ռ. Շալունցը դարձավ երկրորդ մրցանակակիր: Հետագա տարիներին Ռ. Շալունցը Տաշքենդի չեմպիոն դարձավ արդեն մեծահասակների մրցույթում, իսկ Ուզբեկստանի առաջնությունում գրավեց երկրորդ տեղը՝ կիսաթեթև քաշային ների շարքում: Դրան հետևեց միջինասիական հանրապետությունների զինվորականների առաջնությունը Դուշանբեում, որտեղ դարձավ չեմպիոն կիսաթեթև քաշում:

1963 թվականին Ռ. Շալունցը հիանալի մարզավիճակում վերադարձավ հայրենիք, մասնակցեց Հայաստանի սպարտակիադային, որտեղից էլ սկսվեցին նրա մրցելույթներն արդեն հայկական դրոշի ներքո:

Երկու անգամ մասնակցել է Հայաստանի առաջնություններին, արժանացել երկրորդ պատվավոր մրցանակին:

1965 թ., ուկրաինացի բռնցքամարտիկ Սապլիվենկոյի անվան միջազգային հուշամրցաշար, երկրորդ տեղ թեթև քաշում: Այստեղ էլ նա լրացրեց և արժանացավ ԽՍՀՄ սպորտի վարպետի պատվավոր կոչման: Հաջորդ տարում նույն մրցաշարում չեմպիոն դարձավ Սիմֆերոպոլ քաղաքում:

1966 թվականին Ռ. Շալունցը Խորհրդային Միության երկու գոտիներում անցկացվող առաջնության Երևանի գոտու մրցաշարում դարձավ երկրորդ մրցանակակիր: Նույն տարում, Հայաստանի հավաքականի կազմում, Տաշքենդ քաղաքում, Ռ. Շալունցը Միջինասիական, Անդրկովկասյան հանրապետությունների, Ուկրաինայի և Ղազախստանի բռնցքամարտիկների միջև անցկացվող մրցաշարում նվաճեց առաջին տեղը՝ հաղթելով երեք սպորտի վարպետների:

Ռ. Շալունցը Ռիգայում երկու անգամ մասնակցել է լատվիացի նշանավոր բռնցքամարտիկ Առնոլդ Կնիսիսի միջազգային հուշամրցաշարին, դարձել երրորդ մրցանակակիր:

1967 թվականին՝ արդեն երրորդ անգամ մասնակցելով Հայաստանի առաջնությանը, նվաճեց չեմպիոնի կոչումը թեթև քաշում:

Հետագա երկու տարիներին Ռ. Շալունցը մասնակցեց Հայաստանի «Սպարտակ» ընկերության միութենական առաջնություններին, պատվով պաշտպանելով հայրենի եզերքի մարզական պատիվը:

Անվանի բռնցքամարտիկի վերջին մրցելույթը եղավ 1969 թվականին, Սևաստոպոլում՝ «Սպարտակ» ընկերության համամիութենական առաջնությանը, որից հետո Ռ. Շալունցն անցավ մարզչական աշխատանքի:

//

ԾԱՆՐԱՄԱՐՏ

# Ճանաչենք մեր վարպետներին՝ Սեյրան Ղազարյան



Օրերս կայացավ ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը, որտեղ հայ մարզիկները պատվով հանդես գալով իրենց քաշային կարգերում՝ մեդալակիրներ դարձան:

Աշխարհի և Եվրոպայի կրկնակի չեմպիոն, Օլիմպիական խաղերի փոխչեմպիոն, 109 կգ քաշային Սիմոն Մարտիրոսյանն այս առաջնությունում դարձավ փոքր ոսկե մեդալակիր՝ 190 կգ արդյունքով: 102 կգ քաշային կարգում Սամվել Գասպարյանը երկամարտի 390 կգ արդյունքով նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը, իսկ Արսեն Մարտիրոսյանը դարձավ փոխչեմպիոն:

Քաջարանում, որտեղ ևս հարգի է ծանրամարտը, զարմանալիորեն քչերը գիտեն, որ իրենց կողքին տարիներ ի վեր ապրում և աշխատում է տարածաշրջանի ծանրամարտի երախտավորներից, ՍՍՀՄ սպորտի վարպետ, բազմաթիվ հեղինակավոր մրցաշարերի հաղթող Սեյրան Ղազարյանը:

Ինքներս էլ այդ մասին տեղեկացանք շրջանային թերթի արխիվն ուսումնասիրելուց, ու ծագեց նրան հանդիպելու մտահղացումը: Դպրոցական տարիներից է նրա մոտ սեր առաջացել դեպի ծանրամարտը: Հիշում է, որ դպրոցում ֆիզկուլտուրայի ճանաչված ուսուցիչ, ծանրամարտիկ Էդիկ Ավետիսյանի խորհրդով թողեց բռնցքամարտն ու սկսեց զբաղվել ծանրամարտով:

Լինելով հենց մարզաձևի գիտակ, Ավետիսյանը նկատել էր տղայի ֆիզիկական կարողությունները և փորձել ճիշտ ուղղորդել նրան:

Ծնվել է 1963 թվականին Քաջարան քաղաքում: Քաղաքի թիվ 2 միջնակարգի 8-րդ դասարանն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի թիվ 10 մարզական թեքումով գիշերօթիկ դպրոցը:

Տղայի մասին ավագ եղբայրը՝ Անդրանիկ Ղազարյանը, մի առիթով պատմել էր Հայաստանում ծանրամարտի հայտնի մարզիչ Ժորա Հովհաննիսյանին՝ հանրաճանաչ ֆուտբոլիստ Խորեն Հովհաննիսյանի հորը: Վերջինիս առաջարկով պատանին Երևան է գալիս, հանդիպում հեղինակավոր մարզչին, ով նկատելով նրա կարողությունները, անմիջապես առաջարկում է մնալ Երևանում՝ մարզաձևով ավելի լուրջ զբաղվելու նպատակով:

Դա 1979 թվականի օգոստոսն էր: Իսկ առջևում՝ սեպտեմբերին, Լենինականում Հայաստանի ծանրամարտի պատանիների առաջնությունը պետք է կայանար, որին հաջող մասնակցելու համար անհրաժեշտ էր սկսել ինտենսիվ մարզումները:

– Դա իմ առաջին մասնակցությունն էր հեղինակավոր մրցումներին, որտեղ արժանացա Հայաստանի չեմպիոնի կոչմանը,- հիշում է Սեյրան Ղազարյանը,- անծանոթ իրավիճակ էր տասնվեցամյա պատանուս համար, չնայած շատ էի մարզվել, սակայն, բնականաբար, հուզվում էի…

Առաջին մրցությունն և միանգամից մեծ հաջողություն, չեմպիոնի տիտղոս, ինչը մարզական կարիերայում հազվադեպ է պատահում:

Իրար հաջորդում են Հայաստանում և Խորհրդային Միությունում տեղի ունեցող մրցաշարերը, պատանի ծանրամարտիկը գրեթե բոլորից ավարով է վերադառնում, պատվավոր տեղեր զբաղեցրած. Արխանգելսկ (ՍՍՀՄ պատանեկան առաջնություն, 5-րդ տեղ), Ուլյանովսկ («Սպարտակ» մարզական ընկերության առաջնություն, 1-ին տեղ), Վորոշիլովգրադ (դպրոցականների համամիութենական մրցաշար, 1-ին տեղ), Մագնիտոգորսկ (ուսանողական խաղեր, 3-րդ տեղ), Կլայպեդա (դպրոցականների համամիութենական սպարտակիադա 4-րդ տեղ): Հենց Կլայպեդայում ցուցաբերած բարձր արդյունքների համար Ս. Ղազարյանին շնորհվել է «ՍՍՀՄ սպորտի վարպետ» -ի կոչումը: Նույն թվականին Կազանում անցկացված մրցաշարում արժանացել է արծաթե մեդալի:

Իսկ արդեն Վիտեբսկում՝ ՍՍՀՄ պատանեկան անհատական – թիմային առաջնությունում թեթևագույն քաշային կարգում սահմանել է համամիութենական ռեկորդ՝ երկամարտում հավաքելով 225 կիլոգրամ, արժանանալով ոսկե մեդալի: Մարզական հաջողություններին զուգահեռ նա չի դադարել ինքնակատարելագործվել, 1981 թվականին ընդունվել և 1986 թ.-ին ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտի ծանրամարտի բաժինը:

Սեյրան Ղազարյան պատանի ծանրամարտիկի սպորտային հաջողությունները Քաջարանի պատմության նշանակալի էջերից են:

Վերոնշյալին ավելացնենք նաև, որ մարզիկը 4 անգամ արժանացել է ՀՀ չեմպիոնի կոչմանը:

– Մեր՝ իրար հաջորդող հաղթանակները ոգևորում էին: Պարտական եմ մարզիչներիս՝ Ժորա Հովհաննիսյանին, Սամվել Հակոբյանին, ամենի ակունքում կանգնած Էդիկ Ավետիսյանին: Սպորտում պահանջկոտությունը շատ կարևոր է, մարզիչներս խստապահանջ էին, ինչը հաջողություններիս գրավականներից էր:

Բազմաթիվ մցաշարերը ոչ միայն կոփել են մարզիկին, դարձրել տոկուն ու փորձված, այլ նաև ոլորտում օգտակար ծանոթություններ ստեղծել:

– Կլայպեդայում մեկամսյա մարզական հավաքի ընթացքում ծանոթացա աշխարհահռչակ ծանրորդների հետ, ինչպիսիք են՝ Դավիթ Ռիգերտ, Յուրի Վարդանյան, Վասիլի Ալեքսեև, Օլեգ Տարանենկո և ուրիշներ,– շարունակում է մարզիկը,– նրանց ծանոթ լինելն ու մարզվելը հիշողություններ են, որ անջնջելի են, հավերժ ողջ կյանքի համար: Դավիթ Ռիգերտի հետ մարզումներից հոգնած՝ հանդիպեցի մարզչիս ու անմիջապես հասկացա՝ նա էր խնդրել չեմպիոնին ինձ մի լավ չարչարել/ ժպտում է/, չեմպիոնն էլ՝ չէր մերժել...

Բարձրագույնն ավարտելուց հետո Ս. Ղազարյանը գործուղվել է Ղափանի շրջանի Եղվարդ գյուղ՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ, համատեղությամբ աշխատել է նաև Ագարակի ութամյա դպրոցում, ապա՝ Դավիթ Բեկ գյուղում: Մանկավարժական գործունեությունը սկսելուն պես՝ երեկվա մարզիկը տեղափոխվում է մարզչական դաշտ, զուգահեռաբար աշխատում նաև մարզօջախներում:

– Հիշողություններիս մեջ միշտ այն պահն է, թե ինչպես ինձ անմիջապես նկատեց էդիկ Ավետիսյանը,– պատմում է,– նույն սկզբունքով ես փորձել եմ սաներիս ընտրել, հասկանալ՝ ուր կարող է հասցնել նրանց ծանրամարտը:

1994-95 թթ. ղեկավարել է Ղափանի շրջանային, իսկ 1996-99 թթ. ՀՀ Սյունիքի մարզի սպորտկոմիտեն:

2004 թվականից ՃՊՄԿ ընկերության աշխատակից է, սկզբում կոմբինատի մեխանիկական արտադրամասի վարպետ էր, այնուհետև տեղափոխվել է արտադրական էսթետիկայի արտադրամաս, որտեղ որպես վարպետ աշխատում է մինչ օրս:

Մարդկային համեստ տեսակ է, երիտասարդ տարիների նվաճումների մասին պատմում է ոգևորությամբ, սակայն կրկին ընդգծված համեստությամբ, վայելում է շրջապատի սերն ու հարգանքը:

Նրան հանրությանը որպես մարզիկ, խորհրդային սպորտի վարպետ, քաջարանյան ծանրամարտի երախտավոր կրկին ներկայացնելու պահը հասունացել էր:

**ԼԻԼԻԹ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ**
**ՔԱՋԱՐԱՆ, ԱՊՐԻԼ, 2021Թ.**

ՃԱՆՐԱՄԱՐՏ

# «Մեդալի հակառակ կողմը». Ֆիլմի պրեմիերա՝ Քաջարանում

Քաջարանի մշակույթի կենտրոնի կինոդահլիճում հոկտեմբերի 1-ին պրեմիերա էր: Դահլիճն էլ լեցուն էր հանդիսականներով: Էկրանին «Մեդալի հակառակ կողմը» խորհրդանշական վերնագրով ֆիլմն էր, ըստ ամենայնի՝ սպորտային դրամա աշխարհի չեմպիոն, Եվրոպայի կրկնակի չեմպիոն, ծանրորդ Նազիկ Ավդալյանի կյանքի և անհավանական մարզական կարիերայի մասին: Կինոնկարի հիմքում այն փիլիսոփայությունն է, որ հզոր կամք ու չկոտրվող ոգի ունենալու դեպքում բոլոր դժվարությունները տեղի են տալիս...

Ֆիլմը հիմնված է իրական դեպքերի վրա, և նրա հիմքում ընկած է նույնքան իրական մի ցավալի իրողություն. ավտովթարի հետևանքով ծանրամարտիկ Նազիկ Ավդալյանը յոթ տարի դուրս էր մնացել մեծ սպորտից: Բայց վերադառնալով ծանրամարտի հարթակ, չնայած շրջապատի անվստահությանը, մարմնական անմարդկային ցավերին, դառնում է Եվրոպայի կրկնակի չեմպիոն: Նազիկ Ավդալյանի կերպարը մարմնավորել է Աննա Մաքսիմը (Հարությունյան), ով նաև ֆիլմի ռեժիսորն է և սցենարի հեղինակը: Դերակատարները հայտնի անուններ են՝ Աննա Մաքսիմ, Խորեն Լևոնյան, Սոս Ջանիբեկյան, Մկրտիչ Արզումանյան, Բաբկեն Չոբանյան, Արտաշես Ալեքսանյան, Անահիտ Քոչարյան, Արուսիկ Գրիգորյան, Կարեն Գիլոյան: Ֆիլմը դիտվեց հետաքրքրությամբ, նաև հուզմունքով, քանզի էկրանին տառապանքներ կրած մարզուհու անցած դժվարին ճանապարհն էր:

Նազիկ Ավդալյանի մարզչի կերպարում հանդես է եկել Հայաստանի վաստակավոր արտիստ Արտաշես Ալեքսանյանը:

Ֆիլմի ավարտին հանդիսատեսին անակնկալ էր սպասվում. դահլիճում էր ֆիլմի ռեժիսոր և գլխավոր դերակատար Աննա Մաքսիմը, ով պատասխանեց ներկաների հարցերին: Նա նշեց, որ ֆիլմը բարդ ճանապարհ է անցել, մասնավորապես, երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր եղել են ֆիլմի ստեղծման ակունքներում, հանձին Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, որ հանդես է եկել հովանավորությամբ:

*«Մարզիկի համար չկա ավելի մեծ պատիվ, քան ներկայացնել իր երկիրը և չեմպիոն դառնալիս՝ իր պատվին լսելի դարձնել հարազատ երկրի օրհներգը, իսկ այդ ամենին Նազիկ Ավդալյանը հասել է ավտովթարի պատճառով սպորտից հեռանալու և կրկին վերադառնալու դեպքում: Այս փաստը ոգեշնչման աղբյուր պիտի դառնա շատ ու շատ մարզիկների համար»,* – գնահատանքի իր խոսքում նշեց Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը, հավելելով, որ ֆիլմն ասելիքի (և ոչ միայն) առումով կայացել է:

«Քաջարան» կինոթատրոնի տնօրեն Իրինա Հովհաննիսյանի տեղեկացմամբ՝ Քաջարանի մշակույթի պալատի կինոթատրոնի էկրանին ֆիլմը կլինի ևս երկու շաբաթ:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ԿԱՐԱՏԵ

# ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «Կարատեն մատաղ սերնդին տալիս է այն ամենը, ինչն անհրաժեշտ ու կենսական է»

Արևելյան մարզաձևերից մարզկենտրոնում գործում է Սյունիքի մարզի շոտոկան կարատեի ֆեդերացիայի «Պանտերա» ակումբը (մարզիչ՝ Արմեն Գրիգորյան): Ա.Գրիգորյանը 1990-ականների կեսերից է սկսել մարզչական գործունեությունը: Այն ժամանակ կարատեն նոր-նոր էր սկսել դուրս գալ ընդհատակից: Մինչ այդ (ավելի ստույգ՝ խորհրդային տարիներին այդ մարզաձևով բացահայտ չէին պարապում), քանզի համարվում էր վտանգավոր մարզաձև: Գործունեության ընթացքում նա մշտապես տարբեր դասընթացների մասնակցելով՝ որակավորում է ստացել, նաև մարզչական գործունեության թույլտվություն Հայաստանի կարատեի ֆեդերացիայի կողմից:

«Պանտերա» ակումբի առաջին պարապմունքները սկսել են 30-35 սաներով, աստիճանաբար նորերը եկան, այժմ ավելի քան 100 սան է պարապում ակումբում, որոնցից վեցը՝ աղջիկ: Վերջիններիս թիմում կան մրցումների հաղթողներ՝ Նունե Հարությունյան (Հայաստանի քառակի չեմպիոն է): Ակումբի պատանի մարզիկների տարիքը տատանվում է հինգից մինչև 24 տարեկան: Պարապմունքներն անց են կացվում Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի մարզադահլիճում:

– Ֆիզիկական ի՞նչ պատրաստականությամբ են ներկայանում ակումբ, երբ ցանկություն են հայտնում այդ մարզաձևով զբաղվելու,– առաջին հարցս այս էր՝ ուղղված մարզիչ Արմեն Գրիգորյանին:

«Ֆիզիկապես թույլ երեխաներ էլ կան: Հեռախոսները շեղում են դեռահասների ուշադրությունը մարմնակրթությունից, ֆիզիկական աշխատանք կատարելը երկրորդ պլան է մղվում: Սերունդն ահավոր ծույլ է մեծանում, ֆիզիկապես տկար են, քաշի հետ կապված խնդիրներ ունեն: Բայց ճիշտ աշխատելու դեպքում այդ ամենը կարգավորվում է: Չի

***«Պանտերա» ակումբի սաները պարբերաբար մասնակցում են մրցումների, մրցանակային տեղեր գրավում: Օրինակ՝ Թբիլիսիում կայացած մրցումներում, որին մասնակցում էին Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի Դաշնության մարզիկներ, կապանցի կարատեիստները հինգ մրցանակային տեղ են զբաղեցրել՝ երկու առաջին, մեկ երկրորդ, երեք երրորդ:***

կարող չկարգավորվել, որովհետև կարատեն մատաղ սերնդին տալիս է այն ամենը, ինչն անհրաժեշտ ու կենսական է, ամենակարևորը՝ կամքի ուժ, կարգապահություն, պատասխանատվություն: Այս ամենը դժվար է գերագնահատել աճող սերնդի ներդաշնակ զարգացման համար, որովհետև տղաները վաղը, մյուս օրը պիտի մեկնեն զինծառայության և պաշտպանեն մեր հայրենիքը»,- մանրամասնում է մեր զրուցակիցը:

«Պանտերա» ակումբի սաները պարբերաբար մասնակցում են մրցումների, մրցանակային տեղեր գրավում: Օրինակ՝ Թբիլիսիում կայացած մրցումներում, որին մասնակցում էին Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի Դաշնության մարզիկներ, կապանցի կարատեիստները հինգ մրցանակային տեղ են զբաղեցրել՝ երկու առաջին, մեկ երկրորդ, երեք երրորդ: Ավելի ներկայացուցչական ու պատասխանատու մրցման՝ Վենետիկում միջազգային մրցաշարի են մասնակցել ակումբի չորս սան: Ճիշտ է, շուտ դուրս մնացին մրցապայքարից, բայց մրցափորձ ձեռք բերելը մի այլ կարևոր հանգամանք է:Այս համատեքստում մարզիչը նշում է, որ տարվա ընթացքում մարզիկն ութից-տասը մրցման պիտի մասնակցի՝ նորմալ կարգավիճակ ձեռք բերելու համար:

Մրցումների մասնակցությունը հովանավորում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (գլխավոր տնօրեն՝ Ռոման Խուդոլիյ):

Արդեն նշեցինք, որ ակումբի սաներն անհրաժեշտ ֆիզիկական պատրաստություն են ստանում, ինչը նրանց օգնում է՝ հաջողությամբ հաղթահարելու զինվորական կյանքի առաջին դժվարությունները: Մարզիչը նաև տեղեկացրեց, որ իր սաներից տասը ծառայում է հայոց ազգային բանակում, և ինքը միշտ հետաքրքրվում է նրանց զինվորական առօրյայով:

Կարատեն օլիմպիական մարզաձև դառնալուց հետո աշխարհում էլ ավելի մեծ մասսայականություն է վայելում: Բացի այդ՝ Հայաստանը վերջերս Եվրոպայի չեմպիոն ունեցավ: Արմեն Գրիգորյանի կարծիքով՝ այս երկու հանգամանքի շնորհիվ հանրապետությունում ավելի մեծ ուշադրություն կդարձվի մարզաձևին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**



ԿԱՐԱՏԵ

# Կարատեն Մեղրիում

Մեղրիի կարատեի դպրոցը հիմնվել է 2015 թվականին: Մասնաճյուղեր ունի Վարդանիձորում, Մեղրիում և Ագարակում, որտեղ հաճախում են գյուղական վարչական շրջանների երեխաներ Նռնաձորից, Շվանիձորից, Կարճևանից, Թխկուտից և Լեհվազից:

Ներկայումս մարզվում են տարբեր տարիքի 134 տղա և աղջիկ:

Ակումբի ձեռքբերումներն են.

- Հայաստանի չեմպիոններ,
- Վրաստանի չեմպիոններ ջիու-ջիութսու մարզաձևից,
- Ռուսաստանի առաջնության շոտոկան կարատեի մրցանակակիրներ,
- Դուբայում կայացած շոտոկան կարատեի Ասիայի և Աֆրիկայի չեմպիոններ,

- Ռումինիայում կիոկուշին կարատեի աշխարհի գավաթակիրներ և միջազգային Սև-գոտի որոկավորում ունեցող երկու մարզիկներ Գրիգորի Թումանյանը և Անդրանիկ Առաքելյանը:

Մարզիչ՝ միջազգային կարգի մասնագետ Հայաստանի «ՋԵՅ ՔԵՅ ԷՍ» ֆեդերացիայի նախագահ Կարեն Սամսոնյան:

ԿԱՐԱՏԵ

# Ճապոնական մարտարվեստի սիսիանցի վարպետը

Կարատեի ճապոնացի մեծ վարպետ, կարատե-դո ոճի հիմնադիր, ողջ աշխարհում ժամանակակից կարատեի տարածման նախաձեռնող Գիչին Ֆունակոսին (1868–1957) այսպես է նկարագրել կարատեի նշանակությունը. «Կարատեն ոչ միայն որոշակի պաշտպանական հմտությունների ձեռքբերում է, այլ նաև հասարակության արժանավոր և ազնիվ անդամ դառնալու արվեստի տիրապետում»: «Կարատեն սկսվում է հարգանքից և վերջանում հարգանքով»:

30 տարի է՝ ահա այս սկզբունքներով է առաջնորդվում Սիսիանում ճապոնական մարտարվեստի ուսուցիչ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԸ:

Նա ծնվել է 1966 թ. հուլիսի 1-ին Սիսիան ավանում՝ ինժեներ-շինարար Աշոտ Մարգարյանի և մանկավարժ Ջուլիետա Գրիգորյանի ընտանիքում: Ընտանիքի միակ զավակն է:

1973-1983թթ. սովորել է Սիսիանի N2 և N1 միջն. դպրոցներում:

Դպրոցական տարիներին Կորյունը բաս-կիթառ է նվագել Սիսիանի շրջանային կուլտուրայի տանը գործող «Այունիք» էստրադային խմբում (գեղարվեստական ղեկավար՝ Գագիկ Նավասարդյան): Խումբն այդ տարիներին բազմիցս հանդես է եկել Սիսիանի շրջանի տարբեր բեմերում:

Կարատեի նախնական հմտությունները Կորյունը ձեռք է բերել Սիսիանի շրջանային կուլտուրայի տանը 1980 թ. կազմակերպված կարատեի ուսուցման պարապմունքներին, որը վարում էր որպես պարուսույց Երևանից գործուղված Ռոբերտ անունով անձնավորությունը:

Դպրոցն ավարտելուց հետո՝ 1983-1990 թթ., սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի (այժմ՝ Գյումրի) մասնաճյուղում և ստացել ինժեներ-տեխնոլոգի մասնագիտություն:

1984-1986թթ. ծառայել է ԽՍՀՄ բանակում: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը և զուգահեռաբար զբաղվել հարազատ դարձած արևելյան մարտարվեստով:

1988թ. Լենինականում ականատես է եղել ահասարսուռ երկրաշարժին և փրկվել է երջանիկ պատահականությամբ: 1989 թ. ամուսնացել է Ռուզաննա Առաքելյանի հետ: Ունի երկու աղջիկ և մեկ թոռնիկ:

Կորյուն Մարգարյանը 1989-1999 թթ. աշխատել է Սիսիանի տրիկոտաժի ֆաբրիկայում՝ որպես արտադրամասի պետ:

2008-2013 թթ. սովորել է ՀՀ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի կարատե-դոյի բաժնում: Նա այժմ ունի 3-րդ դան՝ վարպետության աստիճան և կրում է սև գոտի:

2000-2014թթ. որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ է աշխատել Սիսիանի N 5 և Աշոտավան գյուղի միջն. դպրոցներում: 2007թվականից համատեղությամբ աշխատել է Սիսիանի ավագ դպրոցում:

Կորյուն Մարգարյանը 1990 թվականից մինչ այժմ կարատե-դո մարզաձևն է ուսուցանում սիսիանցի երեխաներին ու պատանիներին, նպաստում նրանց ներդաշնակ՝ ֆիզիկական և հոգևոր զարգացմանը: Նա կարատեի մրցումներ է կազմակերպել Սիսիան քաղաքում: Այստեղ են հրավիրվել ՀՀ կարատե-դոյի ֆեդերացիայի նախագահն ու անդամները: Մրցումներն անց են կացվել պատշաճ մակարդակով, ոգևորել են տեղացի մարզիկներին: Մրցման ավարտին ֆեդերացիայի նախագահը սաներին շնորհել է գոտիներ ու պատվոգրեր:

Կորյուն Մարգարյանի սաները մասնակցել են նաև հանրապետական մակարդակի տարատեսակ սեմինարների, դասընթացների և մրցումների: Մրցումների ընթացքում նրանք գրանցել են բազմաթիվ հաջողություններ, որակավորվել աշխարհի կարատեի ֆեդերացիայի նախագահ Հիտոշի Կասույայի կողմից: Սաներից շատերն էլ, թեև արտերկրում են ապրում, սակայն շարունակում են իրենց հարազատ ուսուցչի («սենսեյի») նվիրական գործը:

Ավելացնենք նաև, որ մարտարվեստի մեր վարպետը կամավոր և ակտիվորեն մասնակցել է Արցախյան բոլոր պատերազմներին:

https://armankhachatrian.wixsite.com/karate/biography կայքէջից:

19 մարտի 2021 թ.

ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ

# Ժորա Հակոբի Ասատրյան. հրաձիգ

Հայաստանի երեք սպարտակիադայի չեմպիոն և ԽՍՀՄ առաջնության արծաթե մեդալակիր (1960):

Ծնվել է 1925 թ. ապրիլի 10–ին՝ Գորիս քաղաքում: Մասնակցել է 1952, 1956 և 1960 թթ. ԽՍՀՄ ժողովուրդների հանրապետական և համամիութենական սպարտակիադաներին, Լվովում (Ուկրաինա) կայացած (1960) գնդակային հրաձգության ԽՍՀՄ առաջնությանը:

Ընդգրկվել է ԽՍՀՄ օլիմպիական հավաքականում, որը պետք է մասնակցեր Մելբուռնում (Ավստրալիա) կայանալիք ամառային օլիմպիական խաղերին (1960), սակայն չի մասնակցել մարզիչների մեղքով:

Ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը, աշխատել շրջանի գյուղատնտեսական տարբեր կազմակերպություններում, Գորիսի «Ավանգարդ» խորհտնտեսությունում՝ գլխավոր գյուղատնտես:

Մահացել է 1994 թ.:

ՁՐԱՅԻՆ ՍՊՈՐՏ

# Կապանյան արմատներով հանրաճանաչ ջրացատկորդը

**Հայկական սպորտի վառ աստղերից մեկն է ջրացատկորդ, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ Դավիթ Համբարձումյանը:**

Ծնվել է 1956 թվականին Կապան քաղաքում՝ մարզական ավանդույթներով հարուստ Համբարձումյանների ընտանիքում:

Հայրը՝ Գրիգոր Համբարձումյանը (առավել հայտնի՝ Գիլո անունով) եղել է հանրաճանաչ ֆուտբոլիստ, երկար տարիներ խաղացել է Կապանի «Լեռնագործ» թիմում, հետո մարզիչ եղել կապանյան թիմում: Մայրը՝ Ալիսան, զբաղվել է մարմնամարզությամբ: 1963 թվականին ընտանիքով տեղափոխվում են Երևան, որտեղ 1965 թվականին սկսում է զբաղվել լողով: Նրա առաջին լուրջ հաջողությունը 1972 թվականին էր, երբ դարձավ ԽՍՀՄ չեմպիոն: Նա հետագայում այդ կոչումը նվաճեց 15 անգամ:

1971-1984 թվականներին ընդգրկված է եղել ԽՍՀՄ հավաքականի կազմում: 1972-ին մասնակցել է Մյունխենի, 1976 թվականին՝ Մոնրեալի օլիմպիական խաղերին: 1980 թվականին Մոսկվայի օլիմպիադայում նվաճել է բրոնզե մեդալ: 1981-1983 թվականներին դարձել է Եվրոպայի չեմպիոն:

Թեպետ բնակվում էր մայրաքաղաքում, նա հաճախ էր լինում իր ծննդավայրում, Կապանի մարզադաշտի լողավազանում հանդես գալիս ցուցադրական ցատկերով, դրսևորում վարպետությունը, գեղագիտական հաճույք պատճառում կապանցիներին: Քրտնաջան աշխատանքի և համառ պարապմունքների շնորհիվ է տրվում նման անթերի, գեղեցիկ ու բարդ ցատկերը: Մեկ պարապմունքի ժամանակ ջրացատկորդը կատարում էր 100-120 ցատկ:

Դավիթ Համբարձումյանը հաջողությունների է հասել աշտարակացատկ ձևում, 10 մետր բարձրությունից բարդ պտույտներից հետո երբեմն այնպես էր ընկղմվում ջրի մեջ, որ ոչ մի կաթիլ ջուր իր հետևից օդ չէր բարձրանում:

Նոր ժամանակների հայ առաջին օլիմպիական չեմպիոն, մարմնամարզիկ Հրանտ Շահինյանը նրա մասին ասել է. *«Ինչպես աշխարհահռչակ Վիկտոր Համբարձումյանը, շախմատի աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը, այնպես էլ ջրացատկային սպորտում Դավիթ Համբարձումյանը բազմիցս տարբեր կարգի մրցումներում արտերկրում հպարտությամբ է ներկայացրել մեր ազգը»:*

«Մարզական Հայաստան» թերթի փոխանցմամբ՝ նա կարծես մարմնավորում էր մեր դյուցազնական Սասունցի Դավթին: Իսկապես, նա Դավիթ էր՝ առնական, պիրկ մկաններով, գեղեցիկ կազմվածքով:

Կարիերիայի ավարտից հետո Դավիթ Համբարձումյանը նշանակվում է «Դինամո» ուսումնամարզական համալիրի բաժնի պետ, որոշ ժամանակ անց՝ սպորտկոմիտեի նախագահի տեղակալ:

Վախճանվել է 1992 թվականի հունվարի 8-ին:

*– Դավիթ Համբարձումյանը մեր ազգի արժանավոր զավակն է: Որպես որդի, կրտսեր ընկեր, եղբայր և սպորտային պայծառ աստղ եմ հիշում նրան,* – գրել է օլիմպիական մեկ այլ չեմպիոն, մարմնամարզիկ Ալբերտ Ազարյանը:

Դավիթ Համբարձումյանի անունով է կոչվում ՀՀ օլիմպիական հերթափոխի ջրացատկի մանկապատանեկան դպրոցը և Կապանի մանկապատանեկան մարզադպրոցը, որի առջև տեղադրված է վաստակաշատ մարզիկի կիսանդրին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՇԱԽՄԱՏ

# Ռաֆայել Վահանյան

Ծնվել է 1951 թ. հոկտեմբերի 15-ին՝ Երևանում: Ծնողները Մեղրիի տարածաշրջանի Կարճևան գյուղից են: Մանկության տարիներին պարբերաբար այցելել է հայրենի գյուղ:

Գրոսմայստերի կոչմանն արժանացած հայաստանցի առաջին շախմատիստն է:

1989 թվականի ԽՍՀՄ չեմպիոն, ԽՍՀՄ հավաքականի կազմում շախմատային օլիմպիադաների (1984 և 1986 թթ.), աշխարհի թիմային երկու առաջնությունների (1985 և 1989 թթ.) և Եվրոպայի թիմային երեք առաջնությունների (1980, 1983, 1989 թթ.) հաղթող:

Երևանի պատվավոր քաղաքացի (2012 թ.) :

Շախմատ խաղալ սովորել է 5 տարեկանում: Ֆիզիկայի ուսուցիչ նրա հայրը շախմատի մոլի սիրահար էր և ողջունում էր որդու զբաղմունքը: 16 տարեկանում Ռաֆայելը դարձավ ԽՍՀՄ դպրոցականների չեմպիոն, իսկ 18-ում՝ Նիդերլանդների Գրոնինգեն քաղաքում կայացած միջազգային պատանեկան մրցաշարի հաղթողներից մեկը:

1992 թվականից բնակվում է Գերմանիայում, սակայն շարունակում է ներկայացնել Հայաստանի շախմատի ֆեդերացիան: Գերմանական «Պորց» թիմի կազմում բազմիցս դարձել է այդ երկրի չեմպիոն և գավաթակիր:

2016 թվականի մայիսից Շենգավիթի շախմատի մանկապատանեկան նորաբաց մարզադպրոցի տնօրենն է:

Աշխարհի չեմպիոնի թագի համար պայքարի հաջորդ շրջափուլի 1/8 եզրափակչում 2½:3½ հաշվով զիջել է հունգարացի Լայոշ Պորտիշին:

1988-1990 թվականներին եղել է Աշխարհի գավաթի խաղարկությունների մասնակից, լավագույն արդյունքը ցույց է տվել 1989 թ.-ին, Ռոտերդամում՝ 3-րդ տեղ:

Արժանացել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալի (2011):

# Վանիկ Զաքարյան

Ծնվել է 1936 թ. մարտի 21-ին՝ Մեղրիում:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս էր, ՖԻԴԵ-ի պատվավոր փոխնախագահ:

1959 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1962-1977 թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանում, Հայկական մանկավարժական ինստիտուտում: 1977 թվականից՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետի դեկանն էր: 1963 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ «Ֆունկցիաների տեսություն» մասնագիտությամբ և ԽՍՀՄ ԳԱ մաթեմատիկական ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն ակադեմիկոս Մխիթար Զրբաշյանի ղեկավարությամբ:

1976 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Բազմությունների վրա մերամորֆ ֆունկցիաների խնդիրների լուծման առանձնահատկությունները և միակությունը»: 1979 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 1990 թ. ընտրվել է ՀՀ ԳԱ թղթակից-անդամ, 1996 թ. - ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Ավելի քան 100 գիտական և գիտամեթոդական աշխատանքների հեղինակ է, բազմաթիվ ատենախոսությունների ղեկավար:

ՀՀ ԳԱԱ 2 ամսագրի խմբագիր: ԽՍՀՄ սպորտի վարպետ (1960): Շախմատի Հայաստանի կրկնակի չեմպիոն (1961, 1976): 1990-1994 թթ. - Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահն էր: 1994-2004 թթ. - Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահն էր:

1996 թ. Երևանում կայացած Շախմատի համաշխարհային 32-րդ օլիմպիադայի և 2001 թ. կայացած աշխարհի 5-րդ թիմային առաջնության հիմնական կազմակերպիչներից էր:

2004 թվականից - Հայաստանի շախմատի ֆեդերացիայի պատվավոր նախագահն էր:

1996-2004 թթ. - ՖԻԴԵ-ի փոխնախագահն էր: 2004 թվականից - ՖԻԴԵ-ի պատվավոր փոխնախագահն էր:

Մահացել է 2023 թ. ապրիլի 14-ին:

Պարգևներ և կոչումներ

- ՖԻԴԵ-ի միջազգային կազմակերպչի դիպլոմ (թիվ 1, 1996):
- Նշված է ՖԻԴԵ-ի ոսկե գրքում:
- Շախմատային «Օսկարի» դափնեկիր:
- Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ (2003),
- «Մովսես Խորենացի» մեդալ,
- «Անանիա Շիրակացի» մեդալ (2003),
- «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ (2011):

ՇԱԽՄԱՏ

# Տիգրան Գրիգորյանը, **ով քսան տարի գլխավորել է Գորիսի շախմատի դպրոցը**

**Սյունյաց աշխարհի մերօրյա բանաստեղծ Տիգրան Գրիգորյանը, պարզվում է, նաև որոշակի ներդրում ունի Գորիսում շախմատի զարգացման, մասսայականացման գործում. մոտ քսան տարի գլխավորել է Գորիսի շախմատի դպրոցը: Այնպես որ՝ նրա հետ զրուցելն անհրաժեշտ էր, քանի որ թերթային հատուկ համարով ներկայացվող Սյունիքի մարզաշխարհը չի կարող ամբողջական լինել, եթե լույս չսփռենք շախմատային Սյունիքի վրա:**

**– Պարոն Գրիգորյան, քչերը գիտեն, որ ճանաչված բանաստեղծ Տիգրան Գրիգորյանը շախմատի երախտավորներից է առնվազն Գորիսի տարածաշրջանում: Կուզենայինք ծանոթանալ Ձեր շախմատային կենսագրությանը՝ սկզբից ի վեր:**

– Մանկությանս տարիներին շախմատային կրթություն չեմ ստացել: Բավականին հասուն տարիքում՝ ինստիտուտում սովորելու ժամանակ եմ հրապուրվել շախմատով: Դպրոցական տարիների ընկերս՝ Խաչիկ Խաչատրյանը պատճառ դարձավ, որ տարվեցի շախմատով: Արդեն երրորդ կուրսի ուսանող էի, երբ ամառային արձակուրդների ժամանակ նա որոշակի մատային կոմբինացիաներով գեղեցիկ պարտիաներ ցուցադրեց, որն էլ առիթ հանդիսացավ շախմատային խաղի գաղտնիքների մեջ իմ խորամուխ լինելուն: Նրանից իմացա, որ այդ խաղի նրբությունները լուսաբանող գրականություն գոյություն ունի: Առաջին գիրքը, որով սկսվել է իմ մուտքը շախմատային աշխարհ, եղել է գրոսմայստեր Լեվենֆիշի հեղինակած «Սկսնակ շախմատիստի դասագիրք»-ը: Հետագայում շախմատային խաղի տեսական հարուստ ինֆորմացիա պարունակող այլ հեղինակների գրքեր էլ ձեռք բերեցի:

Մեկ տարի անց, երբ 19-րդ տարեդարձս նոր էի նշել, առաջին անգամ մասնակցեցի Գորիսի ուսուցչի տանն անցկացվող շախմատի առաջնության մրցաշարին ու կարողացա դառնալ մեր քաղաքի չեմպիոն: Նույն՝ 1975 թվականի գարնանը Գորիսի սպորտկոմիտեի նախագահ Արմենակ Մանգասարյանն ինձ առաջին անգամ ուղարկեց Հայաստանի շախմատի առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին մասնակցելու: Առաջնությունն այդ տարի անց էր կացվում Կիրովական քաղաքում: Առաջին տուրերում առաջատարների մեջ էի, բայց փորձի պակասի պատճառով Հայաստանի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր ձեռք բերել չկարողացա: Սակայն որպես նորեկ բավականին լավ արդյունք ցույց տվեցի. 33 մասնակիցների մեջ կիսեցի 8-11-րդ տեղերը: Հարկ եմ համարում նշել, որ ինձնից բացի մրցաշարի մնացած մասնակիցները վարպետության թեկնածուներ ու առաջին կարգայիններ էին: Պիտի ասեմ նաև, որ առաջին կարգայինների ու վարպետության թեկնածուների հետ առաջին անգամ այդ մրցաշարում էի խաղատախտակի առջև հանդիպում:

Մի խոսքով՝ առաջնության փակման արարողության ժամանակ մրցաշարի կազմակերպչական հարցերը կանոնակարգող Հայաստանի շախմատի ֆեդերացիայի ներկայացուցիչը, ուղեգրեր նվաճած մրցանակակիրներին շնորհավորելուց հետո անդրադառնում է նաև իմ ցուցադրած խաղին. նախ՝ շնորհավորում է ինձ առաջին կարգայինի նորմա լրացնելու կապակցությամբ, ապա հնչեցնում հետևյալ նախադասությունը. «Առաջին անգամ եմ հանրապետական կարգի մրցաշարում տեսնում Տիգրան Գրիգորյան անվամբ շախմատիստի և պիտի ասեմ, որ նրա հասուն ու գեղեցիկ խաղով հիացած եմ»:

Իմ շախմատային կենսագրության առաջին երեք տարվա ընթացքում կարողանում եմ երեք անգամ լրացնել վարպետության թեկնածուի նորմա: Խորհրդային տարիներին շախմատի վարպետության թեկնածուի կոչումը շախմատիստին շնորհվում էր պահանջվող նորման երեք անգամ լրացնելուց հետո միայն:

Հանգամանքների բերումով՝ հետագայում դադարել եմ ակտիվորեն մասնակցել հանրապետական մրցաշարերին: Միայն իմ հայրենի քաղաքում՝ Գորիսում եմ մասնակցել քաղաքային առաջնություններին և բազմակի անգամ հռչակվել մեր քաղաքի չեմպիոն:

Խորհրդային տարիներին մեր քաղաքում շախմատի դպրոց չի եղել, սակայն շախմատի խմբակներ եղել են: Հայաստանի անկախացումից հետո խմբակների գործունեությունն էլ էր դադարել: Այսինքն շախմատային խաղի պրոֆեսիոնալ ուսուցման ոչ մի կառույց այլևս չկար մեր քաղաքում: Միայն այդ խաղին սիրահարված ավագ սերնդի ներկայացուցիչներն էին ցուրտ եղանակներին Գորիսի ուսուցչի տանը, իսկ արևոտ ու տաք օրերին մեր քաղաքային զբոսայգում միմյանց հետ իրենց ուժերը շախմատային խաղատախտակի առջև չափում:

Ամռան ամիսներին մեր զբոսայգու խաղացողների խմբերին էին միանում երևանաբնակ այն գորիսեցիները, ովքեր նույնպես շախմատային խաղի սիրահարներ էին և աշխատանքային արձակուրդ-

ներն անց էին կացնում իրենց ծննդավայրում: Իր հայրենիքում աշխատանքային արձակուրդները հաճախակի վայելող շախմատասերներից մեկն էլ երջանկահիշատակ Ալբերտ Օրդյանն էր: Նա մաթեմատիկական գիտությունների թեկնածու էր, Երևանի պետական համալսարանի դասախոս, որ հասարակական հիմունքներով զբաղեցնում էր նաև Հայաստանի վետերան շախմատիստների միության նախագահի պաշտոնը: Ամառվա ընթացքում երբեմն ես ու նա էլ էինք զբոսայգում շախմատի խաղատախտակի առջև միմյանց հետ մեր ուժերը չափում: Մեր այդ հպանցիկ հանդիպումների ժամանակ նա հաճախ էր նույն մտահոգությունը բարձրաձայնում՝ ասելով, որ երբ Երևանում գնում է Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տուն՝ Հայաստանի պատանիների առաջնություններին հետևելու, ոչ մի անգամ Գորիսի պատանի ներկայացուցչի չի տեսնում այնտեղ: Եվ Գորիսը համարելով բոլոր ժամանակներում Հայաստանի ամենաշախմատասեր ու շախմատային քաղաքներից մեկը՝ առկա իրականության հետ չէր համակերպվում:

Վերջապես օրերից մի օր Ալբերտ Օրդյանը Գորիսում շախմատի դպրոց հիմնելու հարցով դիմում է և՛ Սուրեն Խաչատրյանին, ով այդ ժամանակ Գորիսի տարածաշրջանի պատգամավորն էր Հայաստանի Ազգային Ժողովում, և՛ Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանին: Նախաձեռնությունը նրանց կողմից հավանության է արժանանում: 2000 թվականի դեկտեմբերի վերջին շախմատի դպրոց բացելու հարցը դրվում է Գորիսի ավագանու տարեվերջյան նիստում և միաձայն հաստատվում ավագանու անդամների կողմից: Տնօրեն նշանակում են ինձ: Որպես մարզիչներ աշխատանքի եմ ընդունում Կարեն Պետրոսյանին և Միհեր Զաքարյանին:

Այդ ժամանակ մատաղ սերնդի մեջ շախմատ խաղալ սովորել ցանկացողները քիչ էին: Շախմատային խաղի մասսայական ընկալման համապատկերում այսօրվա իրականությունն այլ է, քանի որ այսօր շախմատը որպես առարկա հանրակրթական դպրոցներում դասավանդվում է: Այնուամենայնիվ, մեկ ամսվա ընթացքում կարողանում եմ բավականաչափ աշակերտներ հավաքագրել. սկզբնական շրջանում դպրոցում ընդգրկված սաները հիմնականում մտավորական խավի ընտանիքների երեխաներ էին: Իմ տնօրեն նշանակվելուց մեկ ամիս անց՝ 2001թ. փետրվարի 1-ից դպրոցը որպես ինքնուրույն ուսումնական կառույց սկսում է լիարժեքորեն գործել:

Այսօր առանց այլևայլությունների կարող եմ պարզապես արձանագրել, որ Գորիսում շախմատի դպրոց ունենալու նախաձեռնությունը պատկանում է Ալբերտ Օրդյանին և այն իրականություն է դարձել հենց նրա նվիրական ջանքերի շնորհիվ:

Սյունիքի քաղաքներից երկրորդը եղավ Գորիսը, որտեղ շախմատի դպրոց բացվեց: Մինչ այդ Սյունիքում միայն Սիսիան քաղաքն ուներ շախմատի դպրոց և, բնականաբար, Սյունիքի մարզից հիմնականում Սիսիանի պատանիներն էին կարողանում հանրապետական մրցաշարերում ուշագրավ արդյունքներ ցույց տալ...

Դպրոցի բացումից մեկ տարի անց մեր դպրոցի սան Արտուր Խոջաբաղյանին, ով դարձել էր դպրոցում անցկացված մրցաշարի չեմպիոն, ուղարկում ենք Երևան՝ Հայաստանի պատանիների առաջնության՝ մինչև տասնչորս տարեկանների կիսաեզրափակիչ մրցաշարին մասնակցելու: Նա այդ մրցաշարում փայլուն արդյունք է ցույց տալիս՝ նվաճելով մրցաշարի չեմպիոնի կոչումն ու Հայաստանի պատանիների եզրափակիչ առաջնությանը մասնակցելու ուղեգիր ձեռք բերում: Այդ ժամանակ ներկայիս հաղորդակցության տեխնոլոգիաները գոյություն չունեին: Արտուր Խոջաբաղյանի չեմպիոն դառնալու լուրը, վերջին տուրը դեռ չավարտված, գծային հեռախոսակապի միջոցով մայրաքաղաքից մեզ հայտնում է լուսահոգի Ալբերտ Օրդյանն ու ինքնաբավ ցնծությամբ շնորհավորում բոլորիս:

Ալբերտ Օրդյանը շախմատային աշխարհում ունեցած իր հարգանքն ու հեղինակությունն օգտագործելով՝ տարվա մեջ առնվազն երկու անգամ որևէ անվանի շախմատիստի հետ այցելում էր մեր դպրոց: Նրա հետ Գորիս են այցելել գրոսմայստերներ Աշոտ Անաստասյանը, Վլադիմիր Հակոբյանը, Սմբատ Լպուտյանը, Հայաստանի շախմատի ֆեդերացիայի այն ժամանակվա նախագահ Վանիկ Զաքարյանը, ովքեր միաժամանակյա խաղի սեանսներ են անցկացրել մեր դպրոցի սաների, մարզիչների և մեր քաղաքի շախմատասերների հետ: Նա շատ էր կարևորում խաղատախտակի առջև միաժամանակյա խաղի սեանսի միջոցով երեխաների շփումն անվանի գրոսմայստերների հետ:

Ցավոք, 2003թ.՝ մեր դպրոցի հիմնադրումից երեք տարի անց, Ալբերտ Օրդյանը հանկարծամահ եղավ: Հաշվի առնելով շախմատի դպրոցի հիմնադրման ու կայացման գործում Ա. Օրդյանի վաստակը՝ Գորիսի քաղաքապետարանի որոշմամբ մեր դպրոցն անվանակոչվեց նրա անունով:

Մեր դպրոցի գործունեությանը հարազատի ջերմությամբ հետևելու, ծագած խնդիրներին անմիջապես արձագանքելու ալբերտօրդյանական ավանդույթը նրա մահից հետո նույն սրտացավությամբ իր գործունեության օրակարգում ընդգրկեց նրա եղբորորդի՝ Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզիչ Վրեժ Օրդյանը:

Դպրոց բացելուց կարճ ժամանակ անց Գորիսը մարզում շախմատային ցուցանիշներով դարձել էր երկրորդ քաղաքը: Հետագայում՝ տարիներ կային, երբ մրցաշարերում մեր սաների ցուցադրած արդյունքներով մարզում առաջինն էինք: Մի քիչ ավելի ուշ դպրոցներ ու շախմատի խմբակներ բացվեցին

Կնաև Կապանում, Մեղրիում, Ագարակում:

Դպրոցի բացվելուց հետո շախմատային կյանքը Գորիսում սկսել էր վերստին աշխուժանալ: Դպրոցի պարապմունքները սկզբնական շրջանում անց էինք կացնում խորհրդային տարիներին մեր քաղաքի համար որպես Ուսուցչի տուն ծառայող տարածքում: Սակայն պարզվեց, որ այն սեփականաշնորհված է և արդեն քաղաքապետարանին չի պատկանում: Քաղաքապետ Նելսոն Ոսկանյանին առաջարկեցի, որ քաղաքի կենտրոնական մասերում քաղաքապետարանի բալանսում գտնվող մի հիմնական տարածք տրամադրի շախմատի դպրոցին: Առաջարկս շատ կարճ ժամանակահատվածում դրական արձագանք գտավ: Սակայն հատկացված տարածքի տանիքը վերանորոգման կարիք ուներ, իսկ տարածքի արևելյան մասում գտնվող պատշգամբը՝ լրիվ վթարային վիճակում էր գտնվում: Երբ 2004 թվականին Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր-նախագահ Սմբատ Լպուտյանը Գորիսում մասնաճյուղ բացելու նպատակով այցելեց մեր դպրոց, նրան խնդրեցինք, որ դպրոցի վերանորոգման հարցով նա, որպես Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, դիմի Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի այն տարիների գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանին, ով այդ ժամանակ նաև Սյունիքի մարզի շախմատի ֆեդերացիայի նախագահն էր. Լպուտյանի միջնորդությամբ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը մեր դպրոցը վերանորոգելու համար 14 մլն դրամ է հատկացնում, որը հնարավորություն է ընձեռում դպրոցը մասնակիորեն վերանորոգել. շենքի տանիքն ու պատշգամբը նորոգում ենք, գործող դասասենյակները նորմալ տեսքի ենք բերում ու նաև դպրոցի կոմունալ հարմարությունների խնդիրն ենք այդ գումարով կարողանում լուծել:

Տարիների ընթացքում ունեցել ենք 500-ից ավելի աշակերտ: Շատ աշակերտներ են մասնակցել հանրապետական մրցաշարերի ու գրավել պատվավոր տեղեր: Սյունիքի պատանիների առաջնություններում մեր դպրոցը տարբեր տարիքային խմբերում մեծ թվով մարզի չեմպիոններ է տվել:

Հետագայում որպես հիմնական մարզիչ դպրոցում աշխատելու հրավիրեցի շախմատային տեսական հարուստ գիտելիքներ ամբարած և մարդկային լավագույն որակներով օժտված մեր նախկին սան Վարդան Քարամյանին: Իր մարզչական հմտություններով այսօր նա Հայաստանի լավագույն մարզիչների կողքին է կանգնած: Այդ մասին են վկայում վերջին տասնամյակում թե՛ մարզային, թե՛ հանրապետական մրցաշարերում նրա սաների գրանցած արդյունքները:

Այսօր նույն պատասխանատվությամբ ու նվիրումով նա իր մարզչական գործունեությունը շարունակում է իրականացնել իմ մասնակցությամբ հիմնադրված շախմատի դպրոցում, որը ներկա պահին Գորիսի մարզադպրոցին կցված կառույցի կարգավիճակով է գործում: Ու հենց վերջերս ավարտված (10.03.2024թ.) Սյունիքի մարզի պատանի շախմատիստների առաջնությունում նրա աշակերտները տարբեր տարիքային խմբերում ձեռք են բերել Հայաստանի կիսաեզրափակիչ մրցաշարերին մասնակցելու հնարավորություն ընձեռող, այդ առաջնությունում խաղարկվող 14 ուղեգրերից 5-ը, ընդ որում՝ նրա սաներից Հենրի Սարգսյանն իր ուղեգիրը ձեռք է բերել մինչև տասը տարեկանների տարիքային խմբում չեմպիոնի կոչումը նվաճելու արդյունքում:

2021 թվականին դպրոցը լուծարեցին: Այդ ժամանակ ես թոշակի անցնելու տարիքում էի գտնվում: Փաստորեն այնպես ստացվեց, որ ես եղա նրա առաջին ու վերջին տնօրենը: Գորիսի համայնքապետարանը կանոնադրական փոփոխություններ կատարեց, դպրոցի կարգավիճակը փոխեցին՝ այն դարձնելով Գորիսի մարզադպրոցին կից կառույց:

**– Ձեր կարծիքը՝ հանրակրթական դպրոցներում շախմատի ուսուցման մասին:**

– Հանրակրթական դպրոցներում շախմատի ուսուցման հարցում ես նախընտրում եմ Ռուսաստանում կիրառվող տարբերակը: Շախմատը մասսայականացնող քայլեր Ռուսաստանի Դաշնությունն էլ իրականացնում է: Շախմատային ունակություններով օժտված շնորհալի երեխաներին հայտնաբերելու և նրանց ընդունակությունները զարգացնելու նպատակ հետամտելով՝ Ռուսաստանի հանրակրթական դպրոցներում շախմատն ընդգրկված է, բայց ոչ որպես բոլորի համար պարտադիր դասավանդվող առարկա, այլ ֆակուլտատիվ առարկայի տարբերակով է այն ներառված ուսուցման պրոցեսում: Մանկահասակ տարիքից բոլոր երեխաներին համատարած այդ լրջագույն խաղով ծանրաբեռնելը ճիշտ մոտեցում չեմ համարում: Ինձ թվում է՝ շախմատը տարրական դասարանների դպրոցական ծրագրերում ընդգրկողները միայն մեկ առաջնային նպատակ են հետապնդել. այդ ճանապարհով շախմատային ընդունակություններով օժտված բացառիկ երեխաներին փորձել վաղ տարիքում հայտնաբերել, որովհետև այսօրվա շախմատային իրականության մեջ այդ խաղի նրբությունների հետ տասնմեկ տարեկանում ծանոթանալը, կարելի է ասել, շախմատիստ դառնալու համար արդեն բավականին «ծեր» տարիք է համարվում: Ծեր բառն ավելի ընկալելի դարձնելու համար՝ պիտի պարզապես ասեմ, որ տասնմեկ տարեկանում աշխարհի նախկին չեմպիոն Գարի Կասպարովն արդեն վարպետության թեկնածու էր:

Կարճ ասած՝ տարիների փորձն ինձ բերել է հետևյալ համոզմունքին, որ երեխաների ճնշող մեծամասնության մեջ շախմատային խաղի գաղտնիքներն ավելի հասկանալի ու հրապուրիչ են դառնում մանկահասակ տարիքից դուրս գալուց հետո: Գուցե ճիշտ կլիներ հանրակրթական դպրոցներում շախմատ առարկան մի քիչ ավելի բարձր դասարաններում դասավանդվեր, որպեսզի մանկահասակ տարիքից դուրս եկած, մի քիչ ավելի գիտակից տարիքում գտնվող երեխաների ընդհանուր զարգացվածության և աշխարհընկալման վրա շախմատը կարո-

ղանար իր առավել հիմնավոր դրական ազդեցությունն ունենալ: Իսկ շախմատային եզակի ընդունակություններով օժտված մանկահասակ երեխաներին կարելի է պարզապես վաղ տարիքից շախմատի դպրոցների պարապմունքներում ընդգրկել և այդ ճանապարհով նրանց համար շախմատային աշխարհում ինքնադրսևորվելու հնարավորություն ստեղծել:

**– Մենք այդքան կադրեր ունե՞նք, որ հանրակրթական դպրոցներում շախմատ ուսուցանենք:**

– Հանրակրթական դպրոցներում շախմատը որպես առարկա մտցվելուց հետո՝ սկզբնական շրջանում, Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը, կարելի է ասել, անձամբ էր մասնակցում կադրերի ընտրության գործընթացին, քանի որ այդ ժամանակ, լրացուցիչ դասաժամեր ունենալու ակնկալիքով, շախմատ առարկան պարապելու համատարած հավակնություն էին դրսևորել հանրապետության դպրոցների երևի թե ֆիզկուլտուրայի բոլոր ուսուցիչները: Ինձ թվում է՝ կադրերի ընտրության համար ժամանակի սղություն կար, և Լպուտյանը ստիպված ընտրությունն իրականացնում էր հետևյալ կերպ. տվյալ տարածաշրջանի դպրոցներում շախմատ պարապելու հայտ ներկայացրած ուսուցիչների և ուսուցչուհիների հետ միաժամանակյա խաղի սեանս անցկացնելու միջոցով փորձում էր նրանց խաղային մակարդակի մասին պատկերացում կազմել և ըստ այդմ էլ՝ ընտրություն կատարել: Գորիսում նման կարգի, այսպես կոչված՝ «ստուգարքային» սեանսի ժամանակ բավականին զավեշտալի մի միջադեպ տեղի ունեցավ. ֆիզկուլտուրայի ուսուցիչներից մեկին նրա կատարած ընդամենը երկրորդ քայլից հետո Լպուտյանը կտրուկ շարժումով դուրս հրավիրեց՝ հայտարարելով, որ նա դպրոցում շախմատ դասավանդելու մասին պիտի առհավետ մոռանա:

Այսօր կադրեր ընտրելու հարցն ավելի կանոնակարգված հիմքերի վրա է դրված ու կադրերի սղության հարց երևի թե չկա: Հաճախակի սեմինարներ են անցկացվում: Շախմատ պարապող մանկավարժներն այդ առարկան դասավանդելու համար լիցենզավորման փուլ են անցնում: Վերջին տարում լիցենզավորվելու գործող կարգի մեջ ինչ-որ փոփոխություններ են տեղի ունեցել. կարծես հարցերի քանակն է ավելացվել: Մինչ այդ լիցենզիա ստանալու համար ուսուցիչները քսան հարցից բաղկացած թեստերի էին պատասխանում, որոնցում մասնագիտական հարցերին զուգահեռ ընդգրկված էին լինում նաև հոգեբանական հարցեր: Այնուհետև, ըստ վաստակած միավորների, նրանք որոշակի ժամկետով լիցենզավորվում էին:

**– Փորձեք շախմատը ներկայացնել որպես երևույթ, որպես մարզաձև. դրա դերը երեխայի դաստիարակության, ձևավորման գործում:**

– Շախմատը հիանալի ճանաչողական զարգացման միջոց է՝ ընդլայնում է աշխարհայացքը, սովորեցնում է մտածել, համեմատել, ընդհանրացնել, կանխատեսել սեփական գործողությունների արդյունքները, զարգացնում է տրամաբանական մտածողությունը:

Շախմատային խաղը հիանալի դաստիարակչական միջոց է: Այն երեխաների էությանը ներարկում է նպատակասլացություն, կամային որակներ, ինչպես նաև կենտրոնացվածություն և հավաքվածություն:

Շախմատը երեխաների աշխարհընկալման մեջ վաղ տարիքից պատասխանատվության զգացում է նաև արթնացնում. շախմատ խաղացող երեխան վաղ հասակից է սկսում գիտակցել, որ իր արած քայլի հետևանքով առաջացած իրավիճակի համար ոչ ոք, բացի իրենից, չի կարող պատասխանատու կամ մեղավոր համարվել:

Շախմատն այն եզակի բանական խաղն է, որը միանշանակ հարստացնում է երեխաների ներաշխարհն ու զարգացնում նրանց երևակայությունը, իսկ շախմատային հիասքանչ կոմբինացիաները կարողանում են հոգևոր գեղեցկությունն ընկալելու ունակություն ներարկել երեխաների էությանը:

Շախմատը երեխաների մեջ զարգացնում է ոչ միայն անալիտիկ մտածողությունն ու ակտիվացնում նրանց ստեղծագործական կարողությունները, այլև նպաստում է այնպիսի որակի ձևավորմանը, ինչպիսին ճանաչողական ունակությունների տրամաբանված զարգացումն է:

Շախմատով զբաղվող երեխան հետագայում ինչ գործունեությամբ էլ զբաղվի՝ ի վիճակի կլինի ըմբռնել ցանկացած բարդության հիմնախնդիր:

**ՀԱՐՈՒՅՑԸ՝ ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ**

ՇԱԽՄԱՏ

# Համահայկական առաջին խաղերի շախմատի չեմպիոնը

**Սիսիանի շախմատային կյանքում 1998 թվականից պարբերաբար հնչում է Վարդան Մովսիսյանի անունը՝ իբրև այս կամ այն մրցաշարի հաղթող: Տաղանդավոր սիսիանցին հաղթանակների շարքը սկսել է դեռևս 11 տարեկանից և շարունակում է ցայսօր:**

Վարդան Մովսեսի Մովսիսյանը ծնվել է 1987 թ. մայիսի 31-ին Սիսիան քաղաքում: 1994-2004 թթ. սովորել է Սիսիան քաղաքի № 2 միջն. դպրոցում:

Վեց տարեկանից հաճախել է մարզիչ Ալիկ Հարությունյանի ղեկավարած շախմատի խմբակի պարապմունքներին, իսկ 1997 թ. դարձել է Սիսիանի նորաստեղծ շախմատի դպրոցի անդրանիկ սաներից մեկը:

1998 թ.-ին՝ 11 տարեկանում, Հայաստանի առաջնությունում խաղալով մինչև 14 տարեկանների խմբում, բաժանեց 1-3-րդ տեղերը: 12 տարեկան Վարդանը 1999 թ. սեպտեմբերին մասնակցեց Համահայկական առաջին խաղերին և դարձավ տղամարդկանց շախմատի չեմպիոն՝ արժանանալով ոսկե մեդալի և Գարի Կասպարովի գավաթին:

2000 թ. Կապանում կայացած մեծահասակների առաջնությունում դարձավ Սյունիքի փոխչեմպիոն: Դրան հաջորդեց ևս մեկ հաջողություն. նույն թվականի ապրիլին 2-րդ տեղը գրավելով Հայաստանի 12-14 տարեկանների առաջնությունում՝ նվաճեց Հունաստանում Եվրոպայի պատանեկան առաջնությանը մասնակցելու ուղեգիր և ՀՀ տղամարդկանց առաջնության առաջին խմբի մրցաշարին մասնակցելու թույլտվություն:

Վարդան Մովսիսյանը 2000 թ. հոկտեմբերին Եվրոպայի պատանեկան առաջնության ժամանակ ցույց տվեց 50 տոկոսանոց արդյունք (9 հնարավորից վաստակեց 4,5 միավոր):

2001 թ. ապրիլին Հայաստանի 12-14 տարեկան պատանիների շախմատի առաջնությունում գրավելով 1-ին տեղը՝ կրկին նվաճեց աշխարհի պատանիների առաջնությանը մասնակցելու ուղեգիր, նաև իրավունք՝ մասնակցելու ՀՀ տղամարդկանց առաջին խմբի մրցաշարին:

Աշխարհի պատանեկան առաջնության ժամանակ, որը կայացավ Իսպանիայում 2001 թ. հոկտեմբեր-նոյեմբերին, Վարդան Մովսիսյանը կիսեց 12-22-րդ տեղերը: 2002 թ. մարտին Երևանում մասնակցեց Հայաստանի 14-18 տարեկան պատանիների առաջնությանը և կիսեց 2-4-րդ տեղերը:

2002 թ. մայիս-հունիս ամիսներին Սիսիանում կայացավ Վուրգ Ոսկանյանի հուշամրցաշարը, որտեղ Վարդանը 6,5 միավորով գրավեց 1-ին տեղը և արժանացավ փոխանցիկ գավաթին: Նույն հաջողությունը նշված հուշամրցաշարում նա կրկնեց 2008, 2016 և 2017 թվականներին:

2003 թ. փետրվար-մարտին կայացած Սյունիքի մարզի շախմատի առաջնությունում գրավեց առաջին տեղը՝ արժանանալով դրամական պարգևի, ստանալով առաջին լիգայի խաղերին մասնակցելու իրավունք: Նույն թվականի ապրիլին Վարդանը մասնակցեց ՀՀ 16-18 տարեկան պատանիների առաջնությանը և զբաղեցրեց 5-րդ տեղը:

2003 թ. օգոստոսին երրորդ համա-

հայկական խաղերում 7 հնարավորից 6,5 միավոր վաստակելով գրավեց երկրորդ տեղը՝ արժանանալով արծաթե մեդալի:

2004 թ. փետրվարին կայացած Սյունիքի մարզի շախմատի առաջնությունում գրավեց առաջին տեղը: Նշված առաջնությանը մասնակցեց նաև հաջորդ տարի՝ 2005-ին՝ դառնալով եռակի չեմպիոն: Նույն հաջողությունը գրանցել է նաև 2009-ին, 2010-ին, 2012-ին, 2013-ին, 2016-ին: 2008, 2011 թվականներին գրավել է երկրորդ տեղը, 2007-ին՝ երրորդ:

2004 թ. ապրիլին մասնակցելով Հայաստանի պատանիների շախմատի առաջնությանը՝ կիսեց 2-3-րդ տեղերը: Սեպտեմբերին Երևանում կայացած արագ շախմատի մրցաշարում գրավեց առաջին տեղը:

2004-2010 թթ. Վարդան Մովսիսյանը Երևանի պետական ագրարային համալսարանի ուսանող էր: Նա ուսանողական տարիներին մասնակցել է նաև մի շարք միջբուհական մրցաշարերի, գրանցել հաղթանակներ:

2005թ. օգոստոսին Հայաստանի մարզերի միջև անցկացված մարզական խաղերի շախմատի եզրափակիչ մրցումներում գրավել է երրորդ տեղը:

Վարդան Մովսիսյանը 2005 թ. սեպտեմբերին Մոնտենեգրոյի Հերցեգ Նովի քաղաքում կայացած Եվրոպայի շախմատի պատանեկան առաջնությունում 5 միավորով գրավեց 19-րդ տեղը, իսկ արագ շախմատում 7 միավորով զբաղեցրեց երկրորդ տեղը՝ արժանանալով արծաթե մեդալի: Լրացրեց միջազգային վարպետի նորմա:

2006 թ. հուլիսի 24-25-ը արագ շախմատի մրցաշարում գրավեց առաջին տեղը: Իսկ հուլիս-օգոստոսին պատանիների առաջնությունում գրավելով 3-րդ տեղը՝ աշխարհի առաջնությանը մասնակցելու իրավունք ստացավ: Վերջինս կայացավ Երևանում հոկտեմբերին: Արդյունքը՝ 6,5 միավոր (40-րդ տեղ):

Վարդան Մովսիսյանը 2010 թվականից մինչ օրս աշխատում է Սիսիանի շախմատի դպրոցում որպես ուսմասվար և զուգահեռաբար կատարում է մարզչական աշխատանք: Նրա աշակերտները հաջողությամբ հանդես են գալիս մարզային և հանրապետական մրցումներում:

2020 թ. փետրվարի 2-ին Շախմատի միջազգային ֆեդերացիան (ՖԻԴԵ) Վարդան Մովսիսյանին շնորհել է «ՖԻԴԵ-ի վարպետ» կոչումը:

**ՏԵՔՍՏԸ ԿԱՀՄԵՑ ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ**

**27 ԱՊՐԻԼԻ 2021 Թ.**

**ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՍԻՍԻԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՐԽԻՎԻՑ**

ՇԱԽՄԱՏ

# Կապանն ունեցավ շախմատի առաջին միջազգային վարպետը

Անմոռաց օր էր. «Այունյաց երկիր» թերթի խմբագրություն էր այցելել մինչև 18 տարեկանների արագ շախմատի չեմպիոն Ալեքս Սահակյանը մոր՝ Գեղանուշի միջնակարգ դպրոցի տնօրեն Գայանե Գրիգորյանի հետ: Հաճելի էր տեսնել չեմպիոնական ոսկե մեդալը և գավաթը, չեմպիոնությունը հավաստող վկայագիրը: Նման տպավորիչ արդյունքի Ալեքսը հասել է Չեխիայի մայրաքաղաք Պրահայում անցկացված արագ շախմատի առաջնությունում մնալով անպարտելի՝ ինը հնարավորից վաստակելով 7,5 միավոր: Շնորհալի շախմատիստը լրացրեց միջազգային վարպետի նորման և շուտով նոր կոչումը կկրի:

Պրահայում Ալեքսը կարող էր կրկնել հաջողությունը արդեն դասական շախմատի մրցաշարում: Նա եզրափակիչ տուրից առաջ 6,5 միավորով գլխավորում էր մրցաշարային աղյուսակը: Բայց վերջին պարտիան տանուլ տալով՝ միջազգային վարպետ Արսեն Դավթյանին՝ բավարարվեց 5-րդ տեղով:

Ալեքս Սահակյանը ծնվել է 2006 թ. Կապանում: 2012 թ-ին ընդունվել է Կապանի թիվ 1 հիմնական դպրոց՝ միաժամանակ հաճախելով Կապանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի շախմատի խմբակ: Առաջին մարզիչը Կամո Գևորգյանն էր, հետո պատանուն մարզել է Ստեփան Խաչատրյանը: Մշտապես մասնակցել է և մրցանակային տեղեր զբաղեցրել համայնքային և մարզային առաջնություններում: Իսկ վերջին մի քանի տարում կայուն արդյունքներ է ցուցաբերում միջազգային մրցաշարերում: Ալեքսի վկայությամբ՝ պարտական է միջազգային վարպետ Աշոտ Նադանյանին՝ հանրաճանաչ Լևոն Արոնյանի անհատական մարզչին, ում մոտ երկու տարի մարզվել է: Այժմ նրա մարզիչը գրոսմայստեր Տիգրան Հարությունյանն է:

Այս տարին հիշարժան է նրանով, որ 2024 հուլիսին արտամրցութային կարգով (մրցանակների և վարկանիշային միավորների հաշվարկման արդյունքում) անվճար հիմունքներով ընդունվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի «Շախմատ» մասնագիտության բաժինը:

Ալեքսի շախմատային կուռքը նորվեգացի հռչակավոր շախմատիստ Մագնուս Կառլսենն է, ում հանդիպել է, երբ վերջինս Լևոն Արոնյանի հետ եկել էր Տաթև: Հետաքրքրվում է շախմատային գրականությամբ և տեսությամբ, հատկապես ուսումնասիրում է հանրաճանաչ գրոսմայստերների շախմատային պարտիաների սկզբնախաղային դիրքերը:

Լիահույս ենք, որ Ալեքսը, զարգացնելով հաջողությունը, հանդես կգա միջազգային հեղինակավոր մրցաշարերում և բարձր արդյունքներ ցույց տալով՝ կնվաճի գրոսմայստերի բարձր կոչումը, ինչի համար տևական տքնաջան աշխատանք և կայուն արդյունքներ են անհրաժեշտ: Իսկ հաջորդ պատասխանատու մրցաշարը Բրազիլիայում հոկտեմբերին կայանալիք մինչև 18 տարեկանների աշխարհի շախմատի առաջնությունն է, որին լրջորեն է նախապատրաստվում:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՇԱԽՄԱՏ

# Շախմատի ակադեմիայի Մեղրու և Ագարակի մասնաճյուղերի նշանակալի արդյունքը

Հայաստանում շախմատի ակադեմիա հիմնելու գաղափարը ծնվել էր դեռևս 1996 թ.՝ միջազգային գրոսմայստեր Սմբատ Լպուտյանի կողմից: Սակայն ծրագիրն իրականացնելը դյուրին չէր: Ի հայտ էր գալիս դժվարություններ՝ կապված ֆինանսական և այլ խնդիրների հետ:

2002 թ. հիմնադրվեց Հայաստանի շախմատի ակադեմիան՝ Սմբատ Լպուտյանի ղեկավարությամբ: Այնուհետև մասնաճյուղեր ստեղծվեցին Հայաստանի շուրջ 50 քաղաքում:

2006 թ. մասնաճյուղեր ստեղծվեցին Մեղրի և Ագարակ քաղաքներում: Առաջին մարզիչներն են եղել՝ Մեղրիում՝ Էդգար Մեջինյանը, Ագարակում՝ Լյովա Խաչատրյանը: 2014 թ.-ից Ագարակի մասնաճյուղի մարզիչն է Պետրոս Մանուկյանը, իսկ 2020 թ.-ից Մեղրիի մասնաճյուղի մարզիչն է Արտյոմ Մանուկյանը:

2007 թ.-ից Մեղրու և Ագարակի պատանի շախմատիստները մասնակցում են մարզային, հանրապետական և միջազգային մրցաշարերի: Նրանցից լավագույն արդյունք է ցույց տվել Արտյոմ Մանուկյանը, ով այս օրերին մասնակցում է «Ծաղկաձոր Օփեն» շախմատի միջազգային մրցաշարին:

Արտյոմ Մանուկյանն ութ անգամ իրավունք է ստացել մասնակցելուՀայաստանի պատանիների առաջնության եզրափակչին, հինգ անգամ իրավունք է ստացել մասնակցելու աշխարհի առաջնությանը, բայց մասնակցել է երեքին, 2013 թ. դարձել է Հայաստանի պատանիների առաջնության 14 տարեկանների բրոնզե մեդալակիր, հաղթել է Անդրանիկ Մարգարյանի հուշամրցաշարում, Ստեփան Ավագյանի հուշամրցաշարում, Աբովյանի, Գյումրիի միջազգային մրցաշարերում, երեք անգամ դարձել է Սյունիքի մեծահասակների չեմպիոն: 2022 թ. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտի թիմի կազմում դարձել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի գավաթակիր, 2023 թ. նույն առաջնությունում գրավել է 3-րդ տեղը:

2024 թ. Հունգարիայում մասնակցել է Եվրոպայի համալսարանական առաջնությանը և դարձել բրոնզե մեդալակիր:

Ագարակի մասնաճյուղի մյուս սաներից՝ Արթուր Մանուկյանը 2019 թ. դարձել է Սյունիքի մարզի մինչև 14 տարեկանների չեմպիոն, Սլավիկ Սարգսյանը 2017 թ. Սյունիքի մարզի 10 տարեկան պատանիների առաջնությունում գրավել է 2-րդ տեղը, իսկ Արեն Սարգսյանը 2020 թ. Սյունիքի մարզի 14 տարեկանների առաջնությունում գրավել է 3-րդ տեղը: Ագարակի դպրոցականների հավաքականը 1-ին տեղ է գրավել ՀՀ դպրոցականների օլիմպիադայի մարզային փուլում:

Մեղրու մասնաճյուղի սան Երվանդ Մելիքսեթյանը 2022 թ. դարձել է Սյունիքի մարզի 12 տարեկանների չեմպիոն:

## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ԴՐՎԱԳՆԵՐ

# Գորիսի սպորտի տարեգիրը

**ԻՎԱՆ ԽԵՐՈՒՆՑ-ԻՎԱՆՅԱՆ**
*ՀՀ վաստակավոր մարզիչ*




Իվան Խերունց-Իվանյանը նաև Գորիսի տարածաշրջանի սպորտի տարեգիրն է: Նրա հեղինակությամբ ընթերցողի սեղանին է դրվել «Մարզական տարեգրություն» ուսումնասիրությունը երկու գրքով:

Առաջին գիրքը հրատարակվել է 1999 թվականին՝ այն ժամանակ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, Գորիսի քաղաքապետ Սուրեն Խաչատրյանի հովանավորությամբ:

«Մարզական տարեգրության» երկրորդ գրքում ամփոփվում է Սյունիքի, Վայոց ձորի և Արցախի մարզական պատմությունը՝ սկսած 1920-ական թվականներից, մարզաշխարհի մարդկանց գործունեությունը մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության, տարբեր մարզաձևերի զարգացման և մասսայականացման ուղղությամբ:

Գրքում զետեղված են հուշեր, մի շարք ավանդապատումներ, մարզական հիշարժան հանդիպումների մասին պատումներ, արդեն մոռացված մի քանի ավանդական մարզախաղեր, որոնք ավելի հետաքրքրական ու կենդանի են դարձնում տարեգրությունը:

Գիրքը նաև այն մարդկանց ճակատագրերի վավերագիրն է, ովքեր, լինելով ֆիզկուլտուրայի և սպորտի նվիրյալներ, իրենց կյանքը զոհաբերեցին Մեծ հայրենականի ռազմադաշտերում:

Երկու մասանոց գիրքը գրված է արխիվային և լուսանկարային իրական փաստերի, տարբեր մարզաձևերի մարզիկների և մարզիչների հուշերի հիման վրա:



## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ԴՐՎԱԳՆԵՐ

# Ֆիզկուլտուրայի եվ սպորտի ղեկավարումը Զանգեզուրի գավառում

1917 թ. հեղափոխությունից հետո ֆիզկուլտուրայի և սպորտի աշխատանքները ղեկավարելու համար Զանգեզուրում առանձին պետական մարմիններ չկային: Այդ աշխատանքները կազմակերպում և ղեկավարում էին Ռուսաստանի, միջինասիական հանրապետությունների, Կովկասի և խոշոր քաղաքների նոր ստեղծված սպորտային ակումբներն ու ընկերությունները, բանակը, լուսավորության նախարարությունն ու այլ կազմակերպություններ, ինչպես և այդ գործին ծանոթ, զարգացած, առաջադեմ անհատներ:

1923 թ. ՀԽՍՀ Կենտգործկոմին առընթեր կազմակերպվեց ֆիզկուլտուրայի գերագույն խորհուրդ, որով սպորտ-մարզական շարժումը բարձրացվեց պետական մակարդակի: Խորհրդի նախաձեռնությամբ հիմնադրվեցին ֆիզկուլտուրայի միջնակարգ-մասնագիտական ու բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնք մեծ դեր խաղացին ֆիզկուլտուրայի և սպորտի համար որակյալ կադրեր պատրաստելու, մարզական աշխատանքների զարգացմանը նպաստելու գործում:

Հավանական է, որ մեզ մոտ՝ Զանգեզուրում, ֆիզկուլտուրայի և սպորտի աշխատանքների պետական ղեկավարման այդ խորհուրդները ստեղծվել են 1923-1924 թթ., իսկ գավառները վերացնելուց հետո՝ 1930 թվականից, կցվել շրջսովետների գործկոմներին:

Զանգեզուրի գավառի առաջին ֆիզկուլտուրայի խորհրդի նախագահը եղել է «Յհարչի» /ձիու թամբ կարող վարպետ/ Աղալոյի տղա Միշա Յոլյանը, ով համատեղ ղեկավարել է Գորիսի, Կապանի, Մեղրու, Սիսիանի, Վայքի և Եղեգնաձորի ֆիզկուլտուրայի աշխատանքները:

Նա եղել է զարգացած, առաջադեմ մտքի տեր երիտասարդ: Նրա ջանքերով է ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ մարզաձևերը զարգացել Գորիսում և պատրաստվել համապատասխան խաղահրապարակներ: Նրա անմիջական նախաձեռնությամբ որոշ սպորտային գույք և հանդերձանք՝ ֆուտբոլի և վոլեյբոլի գնդակներ, թեթև ատլետիկայի նռնակ, գունդ, սկավառակներ և այլ գործիքներ, ձեռք են բերվել Անդրֆեդերացիայի մայրաքաղաք Թբիլիսիից: Միշա Յոլյանը դժվարին այդ տարիներին կատարել է բեղմնավոր աշխատանք, նպաստել սպորտի նոր ձևերի տարածմանն ու զարգացմանը:

Միշա Յոլյանն աշխատել է 1925-30-ական թվականներին: Ընտանիքով Երևան տեղափոխվելու կապակցությամբ ազատվել է աշխատանքից:

1930 թվականին լուծարվում են գավառները, այդ թվում՝ Զանգեզուրի գավառը, նրա շրջանները դառնում են հանրապետական ենթակայության շրջաններ:

Գորիսի շրջանի ֆիզկուլտուրայի և սպորտի գործերի կոմիտեի նախագահ է նշանակվում /Միշա Յոլյանից հետո/ բանակից նոր զորացրված պահեստի սպա, կրտսեր լեյտենանտ, Ղարաբաղի Ղարաղշլաղ գյուղից ընտանիքով Գորիս տեղափոխված Միքայել Ավանեսի Բաղրամյանը:

Բաղրամյանը բազմակողմանի զարգացած մարզիկ էր: Խաղում էր ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, հիանալի մարմնամարզիկ էր: Շատ պատանիներ մարմնամարզության վարժություններ պտտաձողի, զուգափայտի, օղակների և այլ գործիքների վրա սովորեցին նրանից:

Լավ էր հասկանում ֆիզկուլտուրայի աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման գործը: Միշա Յոլյանի և Միքայել Բաղրամյանի ջանքերով Գորիսն ուներ հանրապետությունում ճանաչում ունեցող մի շարք մարզաձևեր: Ծանրամարտից, օրինակ, հանրապետության, իսկ այնուհետև՝ 1940-1941 թվականներին, Միության «Կոլոս» ընկերության չեմպիոն դարձան Հայկ Խոջաբաղյանը, Արտաշես Խերունցը՝ նռնականետումից և գնդի հրումից: Գորիսի ֆուտբոլի հավաքականը հանդիպումներ էր ունենում անվանի թիմերի հետ:

Լավ հիշում եմ՝ 1935-40-ական թվականներին Գորիսի թատրոնի դահլիճում չի եղել հանդիսավոր կամ տոնական մի երեկո, որտեղ չկազմակերպվեին սպորտային մարմնամարզական ելույթներ հասարակության համար:

Պատերազմը սկսվելուց Բաղրամյանն առաջինների հետ մեկնեց Մեծ հայրենական՝ երիտասարդ կյանքը նվիրաբերեց հայրենիքին:

Միքայել Բաղրամյանին փոխարինում է երիտասարդ Արմենակ Թևոսի Մանգասարյանը: Նա Գորիսի ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտեի նախագահ աշխատեց 1941 թվականի հունիսից մինչև 1944 թ. հունիսը: Տարիները պատերազմական էին, երիտասարդությունը մեկնել էր ռազմաճակատ և առանձնապես այդ տարիներին կարևոր միջոցառումներ չէին կազմակերպվում:

Հետագայում էլի կհանդիպենք Արմենակ Մանգասարյանին, ում 1944 թ. փոխարինեց Սմբատ Ավանեսի Բաբայանը:

Սմբատ Բաբայանն աշխատեց մինչև 1946 թ. մայիսը, ապա, ուսման մեկնելու պատճառով, ազատվեց աշխատանքից: Այդ ժամանակաշրջանը նույնպես պատերազմական էր, բայց զգացվում էր աշխատանքի բարելավման առաջընթաց: Պատերազմը վերջանում էր, ժողովուրդը, հատկապես երիտասարդությունը, կարիք էր զգում սպորտային միջոցառումների:

1946 թ. մայիսից Գորիսի ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտեի նախագահ է նշանակվում տողերիս հեղինակը՝ Իվան Խերունց-Իվանյանը, ով աշխատեց մինչև 1962 թվականը:

Նրան փոխարինում է Միշա Հայրապետի Իսունցը:

Միշա Իսունցն այդ բնագավառում աշխատեց մինչև 1965 թվականը: Նրա աշխատած տարիներին շրջանի հավաքական թիմերի առաջընթացը դեռ պահպանվում էր մարզական շատ ձևերից, բայց որոշ ձևերից վատացավ: Միշա Իսունցը Երևան տեղափոխվելու կապակցությամբ ազատվում է աշխատանքից, նրան փոխարինում է արդեն մեզ ծանոթ Արմենակ Մանգասարյանը:

Աշխատեց 1966 թվականից մինչև 1979 թվականը: Սպորտի ընդհանուր բնութագիրը 1965 թ-ից մինչև 1980-90- ական թվականներն այն էր, որ որոշ սպորտային ձևեր զիջեցին Զանգեզուրի

*Ազատ Ասատրյան*

*Արմենակ Մանգասարյան*

*Էդիկ Ստեփանյան*


*Միշա Իսունց*

*Միշա Միրզոյան*

*Միշա Յոլյան*

*Միքայել Բաղրամյան*

*Ռուբիկ Բակունց*

*Սաշիկ Գրիգորյան*

*Սմբատ Բաբայան*

*Վալերիկ Շալունց*

փնջի մյուս շրջաններին:

Արմենակ Մանգասարյանին փոխարինեց Էդիկ Գրիգորի Ստեփանյանը՝ ֆիզկուլտ ինստիտուտի նոր շրջանավարտ, բայց չկարողացավ այդ ժամանակաշրջանում վերականգնել անկում ապրող սպորտը: Աշխատեց 1979 թվականից մինչև 1983 թվականը:

Նրան փոխարինեց բազմակողմանի փորձ ունեցող, լավագույն մարզիկ Միշա Տիգրանի Միրզոյանը:

Միրզոյանը սպորտի աշխատանքները լավ էր հասկանում և ղեկավարում: Բարելավվեցին որոշ սպորտային ձևեր, վերականգնվեց 1945- 1965 թվականների մակարդակը՝ հատկապես ֆուտբոլում:

Միշա Միրզոյանը հինգ տարի էր, ինչ աշխատում էր, երբ 1988 թվականի փետրվարին սկսվեց Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարը: Հայադրբեջանական մարտերը, Ղարաբաղի, Հայաստանի շրջափակումը, վեց տարուց ավելի տևող ծանր մարտերը վատ ներգործություն ունեցան նաև սպորտի վրա:

1952 թվականին, ԽՍՀՄ կառավարության որոշմամբ, ինչպես մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում ու նրա շրջաններում կազմակերպվեցին ու ստեղծվեցին «Ուրոժայ» սպորտ կամավոր ընկերության խորհուրդներ, որոնք հետագայում վերանվանվեցին «Կոլտնտեսական» գյուղական կամավոր ընկերության խորհուրդների: Դրա նպատակը ֆիզկուլտուրայի ու սպորտի աշխատանքների բարելավումն էր գյուղական երիտասարդության շրջանում:

Բասկետբոլի իմ սաներից հաճելի մի երիտասարդի՝ Սաշիկ Բարսեղի Գրիգորյանին, նշանակեցին Գորիսի «Ուրոժայ» կամավոր մարզական ընկերության շրջխորհրդի անդրանիկ նախագահ:

Աշխատեց 1953 թվականից մինչև 1956 թվականը, որից հետո այն վերանվանվեց որպես «Կոլտնտեսական» կամավոր մարզական ընկերություն:

Մինչև «Ուրոժայ»-ի ստեղծելը, 1950-ական թվականներից հռչակվեց կառավարական այսպիսի մի լոզունգ. «Ամեն մի գյուղում ու ավանում՝ հասարակ տիպի մարզահրապարակ»: Սաշիկ Գրիգորյանը և Արմենակ Մանգասարյանն օգնեցին շրջանի բոլոր գյուղերում մարզահրապարակներ պատրաստելու, ֆիզկուլտուրայի սկզբնական կոլեկտիվներ ստեղծելու գործին:

Գորիսի «Կոլտնտեսական» կամավոր մարզական ընկերության շրջանային խորհրդի նախագահ նշանակվեց Ազատ Հովսեփի Ասատրյանը, երբ Սաշիկ Գրիգորյանը նշանակվեց քաղժողկրթբաժնին կից մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն:

Ազատ Ասատրյանը դեռ պատանի էր, երբ խաղում էր քաղաքի դպրոցականների ֆուտբոլի հավաքականում: Տեսնելով պաշտպանական գծում նրա հաջող խաղը, ընդգրկեցինք մեծահասակների հավաքականում: Խաղում էր նաև կիսապաշտպանական գծում ու միշտ հանդես էր գալիս «5» համարի համազգեստով: Նրա կեղծանունը «Զակազ» էր: Երկար տարիներ խաղաց Գորիսի հավաքականում: Ակտիվ սպորտը թողնելուց հետո աշխատեց մարզիչ, մարզադպրոցի տնօրեն, այնուհետև քաղժողկրթբաժնի ֆիզկուլտուրայի մեթոդիստ, ապա՝ «Կոլտնտեսական» կամավոր մարզական ընկերության շրջանային խորհրդի նախագահ:

Այնուհետև Գորիսում ստեղծեցինք «Աշխատանք», «Սպարտակ» հանրապետական ընկերությունների սկզբնական կազմակերպություններ, շրջանային խորհուրդներ:

1991 թվականին, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, Գորիսում ստեղծվեց սպորտի կառավարման մեկ պետական օրգան ևս՝ Գորիս քաղաքի ֆիզկուլտուրայի ու սպորտի կոմիտե:

Նրա անդրանիկ նախագահ նշանակվեց երկար տարիներ Գորիսի բասկետբոլի հավաքականի ակտիվ խաղացող Վալերիկ Գալուստի Շալունցը: Ուներ մասնագիտական, կազմակերպչական անսպառ եռանդ, կարողանում էր կազմակերպել քաղաքային միջոցառումներ և առաջնություններ, հատկապես լավ նախաձեռնություն հանդես բերեց հանրապետության ֆուտբոլի 1991-94 թթ. առաջին ու բարձրագույն խմբերի առաջնությունների ժամանակ:

**ԻՎԱՆ ԽԵՐՈՒՆՑ–ԻՎԱՆՅԱՆ**

ՍԹՐԻԹԲՈԼ

**Օգոստոսի 24-ին առավոտից աշխուժություն էր Կապանի Գարեգին Նժդեհի հրապարակում և մշակույթի կենտրոնի հարակից տարածքում: Առաջինում բասկետբոլի հրապարակ էր ձևավորվել, երկրորդում ֆուտբոլի մինի խաղադաշտ: Կապան էր ժամանել «Սթրիթբոլ Արմենիան», որ հիմնադրել են Հայաստանի ֆուտբոլի հավաքականի նախկին ֆուտբոլիստ Դավիթ Մանոյանը և ֆրիսթայլեր Հայկ Աղաքարյանը:**

# «Սթրիթբոլը» Կապանում

Սթրիթբոլը բասկետբոլի տարատեսակ է՝ սկզբնավորված ԱՄՆ-ում: Սովորական բասկետբոլից տարբերվում է խաղացողների քանակով (խաղում են երեքը՝ երեքի դեմ) և խաղահրապարակով (բասկետբոլի սովորական խաղադաշտի կեսն է՝ մի զամբյուղով): Մարզաձևը օլիմպիական է, Փարիզի օլիմպիական խաղերում չեմպիոն դարձան Հոլանդիայի տղամարդկանց և Գերմանիայի կանանց հավաքականները:

«Փողոցային» ֆուտբոլի դեպքում ևս թիմերը հանդես են գալիս երեքական խաղացողներով:

Ինչևէ, մինչև երեկոյան ժամը 20-ը տեղի ունեցան հանդիպումներ, որ անտարբեր չթողեց ոչ ոքի: Մանուկներին առանձնապես ոգևորություն պատճառեց ֆրիսթայլեր Հայկ Աղաքարյանի ֆուտբոլային հնարքները, ում հետ յուրաքանչյուրն ուզում էր լուսանկարվել:

Ինչպես «Այունյաց երկրին» տեղեկացրեց Դավիթ Մանոյանը, Սյունիքը տասներորդ մարզն է, որտեղ «Սթրիթբոլ Արմենիան» եղել է, մնում է հյուրընկալվել Արագածոտնում: Մարզերում առաջին երեք տեղ գրավածները սեպտեմբերի վերջին Երևանում կմասնակցեն, «Սթրիթբոլ Արմենիան» մեծ եզրափակչին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՖՈՒՏԲՈԼ

«Գանձասար» ֆուտբոլային ակումբը հիմնադրվել է 2004 թվականին, որը 2015 թվականից վերանվանվել է «Գանձասար-Կապան», որի ղեկավարությունը ստանձնել է Վլադիկ Առաքելյանը:

# «Գանձասար» ֆուտբոլային ակումբ

2009 թ. մասնակցել է Թուրքմենբաշիի գավաթին:

«Գանձասար» ակումբի հովանու ներքո հանդես է գալիս համանուն ֆուտբոլային թիմը (գլխավոր մարզիչ՝ Կարեն Բարսեղյան, մարզիչ՝ Վարդան Ղազարյան): Նախորդ մրցաշրջանում «Գանձասարը» Հայաստանի ֆուտբոլի երկրորդ խմբի առաջնության ավարտից երկու տուր առաջ նվաճեց բարձրագույն խմբի ուղեգիր:

Հայաստանի Պրեմիեր լիգայի նորեկ «Գանձասարը» նոր մրցաշրջանում սեփական հարկի տակ հանդիպումները անցկացնում է «Ջունիոր սպորտ» մարզադաշտում: Բանն այն է, որ ՀՀ կառավարությունը Կապանի մարզադաշտի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշում է կայացրել: Մարզադաշտը կվերակառուցվի և կբերվի պատշաճ տեսքի՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշների: Մարզադաշտի ներկա պայմաններում այնտեղ Հայաստանի Պրեմիեր լիգայի առաջնության հանդիպումները անցկացնել հնարավոր չէ, ուստի «Գանձասարը» ստիպված կլինի ժամանակավորապես հանդես գալ Երևանում՝ առանց իր ջերմեռանդ երկրպագուների աջակցության:

ՖՈՒՏԲՈԼ

# «Սյունիք» ֆուտբոլային ակումբ

«Սյունիք» ֆուտբոլային ակումբը «Գանձասար-Կապան» ակումբի իրավահաջորդն է, այս առումով որպես նրա հիմնադրման տարեթիվ կարելի է նշել 2015 թվականը: Երկու տարի է, ինչ ակումբը հանդես է գալիս «Սյունիք» անվամբ և ունի նոր տնօրեն՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյան:

Կոմբինատի ղեկավարությունը՝ հանձին Վարդան Ջհանյանի, մարզում ֆուտբոլը մասսայականացնելու և զարգացնելու նպաստավոր պայմաններ է ստեղծել:

«Սյունիք» ակումբի նոր տնօրենը հստակ խնդիր է դրել՝ ըստ ամենայնի ընդլայնել Սյունիքում ֆուտբոլի աշխարհագրությունը՝ ակումբի հովանու ներքո ընդգրկելով մարզի բոլոր բնակավայրերի երեխաներին, այն է՝ մարզում բացել «Սյունիք» ակումբի մասնաճյուղեր, մասնավորապես՝ Մեղրի, Քաջարան, Սիսիան քաղաքներում, հետագայում՝ Գորիսում: Քանի որ Գորիսում ներկայումս մարզադաշտ չկա, պիտի հասնեն այն բանին, որ ակումբի հովանու ներքո 1000-ից ավելի երեխա պարապի (քանզի բակային ֆուտբոլը ոչ մի արդյունք չի կարող տալ):

Այժմ Հայաստանի ֆուտբոլային առաջնությանը «Սյունիք» ակումբը մասնակցում է մանկապատանեկան ինը թիմով: Եվրոպական բարձրագույն մարզական կազմակերպությունները նման պահանջ են դնում: Մասնավորապես, աղջիկների երկու ֆուտբոլային թիմ կա ակումբի կազմում, մեկը՝ Գորիսում, մյուսը՝ Կապանում:

Գարնանային խաղաշրջանին ընդառաջ Հայաստանի ֆուտբոլի առաջնության երկրորդ խմբում հանդես եկող «Սյունիք» թիմը (ավագ մարզիչ՝ Արամ Ոսկանյան) Կիպրոսում 15-օրյա ուսումնամարզական հավաք է անցկացրել, որտեղ չորս ստուգողական հանդիպում է կայացել: Ընդ որում « Սյունիք» թիմը բացառապես համալրված է հայազգի ֆուտբոլիստներով:

Ակումբն այս պահին ունի ավելի քան 400 սան, ովքեր հանդես են գալիս տարիքային ութ տարբեր խմբերում: Մի մասն արդեն

մանկապատանեկան ֆուտբոլից վստահ քայլեր է անում դեպի մեծ ֆուտբոլ:

Վերջին ժամանակներս «Այունիք» ակումբի գործունեության մեջ դրական փոփոխություններ են եղել: Արտագնա խաղերի ժամանակ Երևանում ֆուտբոլիստները, մարզիչները հյուրանոցում են բնակվում, նորմալ հանգստանում են, ուժերը վերականգնում հաջորդ խաղից առաջ: Այժմ ակումբն ունի ֆուտբոլային սրճարան, շուտով դռները կբացի սպորտային խանութը, որում կվաճառվեն «Այունիք» ակումբի լոգոյով ապրանքներ: Ակումբի ենթակառուցվածքների մեջ ևս դրական փոփոխություններ են եղել: Հիմա ակումբն ունի իր ավտոբուսը, որը պատանիներին հասցնում է քաղաքի կենտրոնից բավականին հեռու գտնվող պահեստային խաղադաշտ, որտեղ վեց հանդերձարան է կառուցվել, ստեղծվել մարզումների համար բարեհարմար այլ պայմաններ:

Մի խոսքով, «Այունիք» ֆուտբոլային ակումբը զարգացման և մարզում ֆուտբոլը մասսայականացնելու ուղի է բռնել:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՖՈՒՏԲՈԼ

# «Սյունիք» ֆուտբոլային ակումբի աղջիկների թիմը

**ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**
*«Սյունիք» ֆուտբոլային ակումբի աղջիկների թիմի մարզիչ*

Ստանկապատանեկան թիմը ստեղծվել է 2023 թվականին: Հենց սկզբից էլ մարզիչն ինքս եմ եղել: Ավարտել եմ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը, բայց մագիստրատուրան սովորել եմ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի «Մանկավարժություն և սպորտային մարզումներ» բաժնում: Նախկինում խաղացել եմ «Գանձասար», «Նորավանք», «Գորիս» աղջիկների թիմերում: Հետո ստացել եմ մարզչի C կարգի արտոնագիր, հիմա հաճախում եմ B կարգի արտոնագրի համար կազմակերպված դասընթացի:

Սկզբից մի քանի հոգի էին կամեցել մասնակցել թիմին: Հետագայում՝ հայտարարությունների, գովազդների շնորհիվ ցանկացողները շատացան: Եղել են ամիսներ, երբ երեք հոգով ենք մարզումներ անցկացրել, հետո գնացել ենք դպրոցներ, ընդունելություն կազմակերպել, և քիչ-քիչ ավելացել է մասնակիցների թիվը:

Հանրապետության մաշտաբով առաջնություններին դեռ չենք մասնակցել, որովհետև երեխաների տարիքը թույլ չի տվել: Սեպտեմբերից կմասնակցենք մանկապատանեկան թիմերի մրցումներին:

Թիմում ընդգրկված է մոտ 30 սան՝ 7-ից 16 տարեկան: Ընկերական խաղեր ենք անցկացրել «Նոա-աղջիկներ» թիմի հետ, որը ձմեռային հավաքի էր եկել Կապան: Մեկ խաղն ավարտվել է 3:3, մյուսը՝ 6:2 հօգուտ «Նոա-աղջիկներ»-ի: Այդուհանդերձ շատ գոհ եմ մեր երեխաների խաղից, մրցակից թիմն արդեն ութ տարի խաղում է առաջնությունում, իսկ մենք ընդամենը մեկ տարվա փորձ ունենք:

Մարզումներն անցկացնում ենք «Գանձասար» մարզաբազայում, թիմին թույլատրվում է մարզումներ անցկացնել նաև «Լեռնագործ» մարզադաշտում:

Ունենք նաև բարձրագույն խմբում հանդես եկող աղջիկներ՝ 16 տարեկանից բարձր:

Թիմի ստեղծման նախաձեռնողը Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան էր:

Ցավոք, կան նաև դուրս եկողներ, հիմնականում ծնողների հետ է խնդիր լինում՝ ասում են՝ աղջիկն ինչ է, ֆուտբոլն ինչ: Երբեմն մեզ են դիմում, որ զրուցենք ծնողների հետ և համոզենք նրանց:

Թիմում լավ երեխաներ կան, պատահել է՝ մարզումներ չենք արել, բայց կարողացել ենք հաղթել այն թիմին, որը մարզված էր: Մտածում եմ՝ դա կապված է մեր կապանյան բնավորության, մեր պայքարող տեսակի հետ:

Միշտ խորհուրդներ եմ հարցնում ինձնից ավելի փորձառու և հին մարզիչներից, երկար տարիներ փորձ ունեցող մարզիչների մարզումներին եմ հետևում, ինքնակրթությամբ եմ զբաղվում:

Թիմի ֆինանսական ծախսերը հոգում է ակումբը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավորությամբ:

Քաջարանից էլ երեխաներ ունենք, ակումբը նրանց տեղափոխման խնդիրն էլ է հոգում, նաև մարզահագուստով է ապահովում:

Ցանկություն կա ընդլայնել թիմի ընդգրկվածության աշխարհագրությունը՝ Գորիս, Սիսիան, Քաջարան…

Մի խոսքով՝ նորաստեղծ թիմ է, բայց լավ հեռանկարներ ունի, հուսով եմ՝ փոքր քայլերով կհասնենք բարձունքների:




# ՅԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ. «Պատրաստվում եմ 2028 թ. օլիմպիադային, որը տեղի կունենա Լոս Անջելեսում»

**– Յարգելի Յանա, Դուք ճակատագրով կապվել եք Սյունիքի հետ: Ու թեև հասցրել եք ճանաչում ունենալ, բայց Սյունիքում դեռևս Ձեզ չեն ճանաչում: Տրամաբանական կլիներ, որ նախ ներկայանայիք:**

– Ծնվել եմ Երևանում 2000 թ. հոկտեմբերի 20-ին: Սովորել եմ Վիկտոր Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոցում: Այնուհետև ընդունվել եմ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտը, ավարտել 2024-ին: Սեպտեմբերից ընդունվել եմ նաև ինստիտուտի մագիստրատուրայի աթլետիկայի բաժինը՝ հեռակա:

Ամուսնացել և տեղափոխվել եմ Կապան, այժմ սյունիքյան սպորտն եմ ներկայացնում:

**– Մի քանի խոսքով էլ, խնդրեմ, մարզական կենսագրությունդ...**

– 2010 թվականից զբաղվում եմ սպորտով: Սկսել եմ «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին մասնակցելուց: Այնուհետև հաճախում էի հանդբոլի, հայրս հանդբոլի մարզիչ է:

Մեր թիմը 2013 թ. պետք է գնար Ստեփանավան՝ հավաքի, բայց մինչ այդ՝ երկու շաբաթով, հաճախեցի աթլետիկայի պարապմունքների: Մյուսները գնացին Ստեփանավան, իսկ ես մնացի աթլետիկայի խմբակում...

Այդպես կանխորոշվեց իմ հետագա ճակատագիրը: Մինչև հիմա էլ զբաղվում եմ աթլետիկայով:

**– Մենք տեղյակ ենք, որ մասնակցել եք միջազգային մի շարք մրցումների: Փորձեք հիշել և մեզ հիշեցնել...**

– 2015 թ. առաջին անգամ Իրանում մասնակցել եմ միջազգային մրցումների՝ «Արևածագի 10 օր» մարզական փառատոնին, գրավել եմ առաջին տեղը, մարզահանդեսին մասնակցում էին 8-10 երկիր:

Հիմնականում մասնակցում եմ աթլետիկայի ձևերից հեռացատկի և եռացատկի: 2017 թվականին մասնակցել եմ մինչև 18 տարեկանների աշխարհի առաջնությանը և անցել եզրափակիչ փուլ: 2017 թ. ձմռանը՝ հունվար-

*Յանա Սարգսյան. 2020 թ. ամուսնանալով և տեղափոխվելով Կապան՝ սկսեց մարզվել ՀՀ վաստակավոր մարզիչ Արսեն Պետրոսյանի մոտ: Համահայկական խաղերի բազմակի չեմպիոն է, ՀՀ բազմակի չեմպիոն, ՀՀ ռեկորդակիր: Լավագույն արդյունքը՝ եռացատկ՝ 13.62 մետր, հեռացատկ՝ 6.30 մ: Բալկանյան խաղերի մինչև 20 տարեկանների ձմեռային առաջնությունում 12.30 մ արդյունքով գրավել է 3-րդ տեղ: 2017 թ. Աշխարհի մինչև 18 տարեկանների առաջնությունում եզրափակիչ փուլի մասնակից՝ 12.65 մ արդյունքով:*

Կ փետրվար ամիսներին, Բալկանյան երկրների ձմեռային առաջնությունում գրավել եմ 3-րդ տեղ:

2017 թ. ամռանն Արևելյան Աֆրիկայում՝ Քենիայի Հանրապետությունում մասնակցել եմ մինչև 18 տարեկանների աշխարհի առաջնությանը: 12 հոգի եզրափակիչ պետք է անցնեին, այդ 12 լավագույնների ցանկում նաև ես էի, զբաղեցրել եմ 11-րդ տեղը:

Կապանում մարզիչս ՀՀ վաստակավոր մարզիչ Արսեն Պետրոսյանն է: Նշեմ նաև, որ 2017, 2018 , 2019 թվականներին մասնակցել եմ Եվրոպայի թիմային և փոքր երկրների թիմային առաջնությանը:

Աթլետիկայում կա աշխարհի առաջնություն՝ անհատական, երբ հանրապետությունդ ներկայացնում ես անհատապես, կա թիմային առաջնություն, այսինքն՝ թիմը, որը մասնակցում է, այդ միավորները թիմինն է, և կա փոքր երկրների Եվրոպայի առաջնություն: 2023 թ. մասնակցել եմ մեծահասակների Եվրոպայի առաջնությանը, բարձր տեղ չեմ գրավել: Հայաստանը ներկայացնում էր 2 աթլետ՝ մեկ տղա, մեկ աղջիկ՝ Լևոն Աղասյանը և ես:

**– Իսկ ինչո՞վ եք ներկայումս զբաղվում:**

– 2022 թ. նոյեմբերից աշխատում եմ Կապանի աթլետիկայի մասնագիտացված դպրոցում՝ մարզիչ-մանկավարժ: Զուգընթաց պարապում և մարզվում եմ:

**– Հեռանկարային երեխաներ կա՞ն խմբում:**

– Խմբում տարբեր տարիքի տասը երեխա է, որոշները, համոզված եմ, լավ մարզիկներ կդառնան:

**– Ենթադրում ենք, որ նաև լուրջ ծրագրեր ունեք:**

– Պատրաստվում եմ 2028 թ. կայանալիք օլիմպիադային, որը տեղի կունենա Լոս Անջելես քաղաքում:

**– Ձեզ՝ հաջողություններ:**

**ԶՐՈՒՅՑԸ՝ ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

ԱԹԼԵՏԻԿԱ




# Աթլետ եղբայրների կայուն արդյունքները

Կապանի աթլետիկայի պատմության մեջ մնայուն հետք են թողել Մերուժան և Մարատ Սարգսյան եղբայրները (մարզիչ՝ ՀՀ վաստակավոր մարզիչ, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատող Արսեն Պետրոսյան): 1990-ական թվականներից սկսած նախ՝ Մարատը, ապա՝ Մերուժանը բարձր արդյունքներ են ցուցաբերել հանրապետական և միջազգային մրցումներում: Իսկ ամեն ինչ սկսվեց նրանից, որ 6-7 տարեկանից Կապանի մարզադաշտում եղբայրները աթլետիկա սկսեցին պարապել իրենց քեռու՝ Արսեն Պետրոսյանի ղեկավարությամբ: Նման պարագայում պատասխանատվությունն ավելի մեծ է լինում, իսկ բարձր արդյունքները երկար սպասել չեն տալիս...

ՀՀ աթլետիկայի ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Էմմիյանը պարգև է հանձնում Մարատ Սարգսյանին

Թերթենք եղբայրների մրցելույթների տարեգրության էջերը...

1990 թ. Կապանի մարզադպրոցի սաները վերելքով հանդես եկան դպրոցականների հանրապետական սպարտակիադայում. հեռացատկորդ Մարատ Սարգսյանն ընդգրկվեց Հայաստանի հավաքական թիմի կազմում և Եկատերինբուրգում մասնակցեց ԽՍՀՄ դպրոցականների սպարտակիադային:

1991 թ. Ձերժինսկում ԽՍՀՄ պատանեկան առաջնությունում Մարատ Սարգսյանը, հեռացատկում ցույց տալով 7 մ 29 սմ արդյունք, նվաճեց ԽՍՀՄ պատանիների չեմպիոնի կոչումը: Նույն տարում Ռոստով քաղաքում կայացած համամիութենական պատանեկան մրցաշարում Մերուժան Սարգսյանը եռացատկում գրավեց մրցանակային երկրորդ տեղը:

Երբ պատերազմ էր Կապանում, Ավստրիայի թեթև աթլետիկայի ֆեդերացիայի հրավերով, Կապանի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցի թիմը մեկնեց Վիեննա և մեծ հաջողությամբ մասնակցեց Շվեխատում կայացած միջազգային պատանեկան մրցաշարին: Մարզադպրոցի սան Մերուժան Սարգսյանը պատանի հեռացատկորդների մրցավեճում դարձավ միջազգային մրցումների հաղթող:

Նույն թվականին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում կայացած միջազգային ներկայացուցչական մրցումներում Մարատ Սարգսյանը, հեռացատկում ցույց տալով 7 մ 58 սմ արդյունք, գրավեց 4-րդ տեղը:

1992-93 թթ. մրցաշարի արդյունքներով եղբայրները տեղ են զբաղեցրել ԱՊՀ-ի և լավագույն երիտասարդ ատլետների շարքերում:

1995 թվականից սկսած՝ տարբեր մրցումներում Մերուժան Սարգսյանը կայուն արդյունքներ է ցույց տվել:

ԱՊՀ-ի սպարտակիադայի չեմպիոն, Վիեննայի և Թեհրանի միջազգային մրցումների հաղթող Մերուժան Սարգսյանը առաջին անգամ լրացրել է սպորտի վարպետի նորման՝ հեռացատկելով 7 մ 70 սմ:

1998 թ. փետրվարի 10-ին հանրապետության աթլետիկայի հավաքականը՝ Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցի ավագ մարզիչ Արկադի Ղազարյանի գլխավորությամբ մասնակցեց Իրանի Իսլամական հեղափոխության տարեդարձին նվիրված «Արևածագի տասը օր» անվանումը կրող մարզահանդեսին: Իրանի Ռաշտ քաղաքում անցկացված աթլետիկայի մրցումներում կրկին փայլեց կապանցի հեռացատկորդ Մերուժան Սարգսյանը, ով 7 մ 27 սմ արդյունքով գրավեց առաջին տեղը: Նա հաղթող ճանաչվեց նաև 100 մետր վազքում:

2001 թ. Համահայկական երկրորդ խաղերում Մերուժանը դարձել է կրկնակի հաղթող (100 մ վազք և հեռացատկ): Հեռացատկի հատվածում երկրորդ արդյունքը ցույց տվեց Մարատ Սարգսյանը:

2002 թ. հունիսի 22-23-ը Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում անցկացված աթլետիկայի Եվրոպայի գավաթի խաղարկությունում Մերուժան Սարգսյանը հեռացատկի 7 մ 48 սմ արդյունքով գրավեց երրորդ մրցանակային տեղը:

Մերուժան Սարգսյանի լավագույն արդյունքը 7 մ 92 սմ է, որը ցույց տվեց 2000 թվականին Ծաղկաձորում՝ ՀՀ առաջնությունում:

Նրա կյանքը ողբերգաբար ընդհատվեց Մոսկվայում 2006 թվականին: Կապանում պարբերաբար անցկացվում են նրա հիշատակին նվիրված մրցումներ՝ հանրապետության աթլետիկայի մասնագիտացված մարզադպրոցների սաների մասնակցությամբ:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

Մերուժան Սարգսյանի կյանքը ողբերգաբար ընդհատվեց Մոսկվայում 2006 թվականին: Կապանում պարբերաբար անցկացվում են նրա հիշատակին նվիրված մրցումներ՝ հանրապետության աթլետիկայի մասնագիտացված մարզադպրոցների սաների մասնակցությամբ:



**ԱՐՏԱՇԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ,** Առյուծաձև Միհր, քանդակ, 1983 թ.



**ԱՐՏԱՇԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ,** Չոչ Միհր, քանդակ, 1983 թ.

## Հատված Հ. Թումանյանի «Սասունցի Դավիթ» էպոսի չափածո մշակումից

– Հեյ-հեյ Դավիթ, որտեղ ես դու...
Հիշիր Խաչը քո աջ թևի,
Սուրբ Տիրամոր անունը տուր,
Ու դուրս արի լույսն արևի...

Ձենը գընաց դրմբդրմբալով՝
Դավթի ականջն ընկավ հորում.
– Հա-հայ, ասավ, հորեղբայրս է,
Սատմա սարից ինձ է գոռում:

Ո՛վ Մարութա Աստվածածին,
Ո՛վ անմահ խաչ պատարագի,
Ձեզ եմ կանչել,– հասնք Դավթին...
Կանչեց, տեղից ելավ ոտքի,

Էնպես զարկեց ջաղացքարին՝
Քարը եղավ հազար կրտոր,
Կրտորները երկինք թըռան,
Ու գընում են մինչև էսօր:

**ԳԵՏԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ,** Մեծ Միհր, քանդակ, 1972 թ.

## ՍՅՈՒՆԻՔ
### (ՕՐՀՆԵՐԳ)
### Խոսք՝ Գագիկ Դավթյանի

Հայրենի դու իմ Տուն Միսական,
Եզակի դու ընծա՝ շնորհյալ Աստրծուց,
Իմ երկիր, իմ Սյունիք դիցական,
Օրհնյալ է հավիտյան փառավոր քո ածուն:

Իմ երկիր, սրբության դու խորան,
Հիմքերդ՝ քարափներ, սյուներդ՝ քերծ ու ժայռ,
Քաջության, խենթության օրորան,
Դու՝ Հայոց աշխարհի քարակոփ ողնաշար:

Իմ հպարտ, իմ անպարտ լեռնաստան,
Իմ Սյունիք անառիկ, երկիր իմ հնամյա,
Բարեկամ – դրացուդ՝ ապաստան,
Եվ շիրիմ՝ չարափառ, անարի թշնամյաց...

Քո ամեն մի զագաթ՝ զորավար,
Աշտարթուն գնդեր են երկնամուխ լեռներդ –
Պատիվ է ապրելը քեզ համար,
Եվ փառք է հանուն քեզ մեռնելն ու հառնելը...